891.99 ව
ව-15



Ա 1542-3
Ա-16

ԱՆՈՒՇԱՒԱՆ ԱԲՈՎԵԱՆ

ԼԵՒՈՆԻ ՀԷՔԻԱԹԸ

(ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ)

800
30-ԱՓ

Տպարան
Ե. Ադամեանցի

1917

ԹԻՖԼԻՍ
Պօլից. 7.

891.99 մ
Ա-15 սր.

ԱՆՈՒՇԱՒԱՆ ԱԲՈՎԵԱՆ

30 MAY 2011

ԼԵՒՈՆԻ ՀԷՔԵԱԹԸ

214

Ա.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Կ.Ռ.Ի Պուբլիչնայա Библиотека
7/XI 1922
ԱՄԵՆՐԱ. ՄԱՇՏՈՑԱՆ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպ. Ն. Աղանեանցի Գծից. 7.
1917

- .01. 2013

16793

Գլ. I.

Լևոնի առաջաբանը. նրա մանկութիւնը պիւղում։ Լևոնը փշրում է օրօրոցի շիբեքը. նրա հէրը վախճանւում է։ Երեք տարեկան Լևոնը մօրը մխիթարում է։ Լևոնի երազը։ Լևոնը լարախաղացի պարանի վրայ. նա հիւանդանում է։ Մօր հետ խաչի աբերն են մանդալի։ Բէթևան խանումը։ Լևոնը բնութեան ծոցում. իր տպաւորութիւնները։

Ականջ արէք, սիրելի ընթերցողներ, մի պատանու պարզ պատմութեանը—նրա կեանքի հէքեաթին։

Էդ պատանին ոչ յայտնի բանաստեղծ է և ոչ էլ հռչակաւոր վիպասան. բայց նրա նմանների թիւը շատ շատ է, որոնք, հակառակ իրենց ցանկութեան, ուսումից զուրկ են մնացել։ Ուրեմն, ինչ կը լինի որ, նմանշի խաթեր, նրանցից մէկի ապրումները, տպաւորութիւնները ու մանկական յիշողութիւնները էլ երևան գան մեր նորածիլ գրականութեան մէջ։

Գուցէ մեր գաւառացի ուսանող ու ոչ-ուսանող պատանիների ու պատանեկուհիների ընթերցանութեան համար պէտք գայ էս գիրքը։ Մասամբ էլ մեր բանաստէղծների ուշադրութեանն արժանանայ, ինչպէս մի գաւառական կեանքից վերցրած հում նիւթ, որը պարունակում է իր մէջ էդ գաւառի՝ արդէն անհետացող կենդանի տիպեր, գիւղական հին տիպի դպրոցների պատմութիւններ և ազգագրական տեղեկութիւններ։

Յիշում եմ, կարծես երէկ էր, դեռ նոր էի մանգալի ու պարզ խօսել չէի կարողանում,—հացին՝ քաքա, ջրին՝ տանանա էի ասում, երբ մի օր մեր թխսի մանր ճուտերից մէկը բռնելով՝ օջաղաքարի վրայ դրեցի ու խուշուրով մորթեցի։ Մէջս թէև լաւ մխեց*) ինձ էդ մասին, բայց ճուտը մաքրեց, տապակեց և ինձ ուեց։ Ճուտը մաքրազարդելուց յետոյ շորերս հանեց, օրօրոցի մէջ պառկեցրեց ու փոկէ կապաններով պինդ կապեց։ Ո՜ւհ, թէ որքան էի ատում էդ բոպէին օրօրոցն էլ, կապաններն էլ, երևակայել չէք կարող։ Գոռում էի սրտաճաքի պէս, լեզու չկար որ դարդս հասկացնէի, իսկ իմ բարի մէջը ուշադրութիւն չէր դարձնում իմ լաց ու կոծին։ Եւ՝ օրօր էր երգում.

Նանա նանա բալիկըս
Մեծատերև ծածկոց ա,
Մանրատերև փափկոց ա.
Պախրէն կ'գայ ծիծ կ'տայ
Ջիգեար չունի քիչ կ'տայ.
Նանա, նանա բալիկս...

Շատ էի քնել թէ քիչ՝ չգիտեմ. բայց երբ օրօրոցից հանել էին ինձ, շիբէքը դուրս կորզեցի և էն օջաղաքարի վրայ, որտեղ ճուտն էի մորթել, քարով մի լաւ փըշրեցի։ Որից յետոյ, մէջս ինձ էլ էր իր ծոցում քնեցնում մեծ քոյրերիս հետ։ Նրա ասելով էն ժամանակ երկու տարեկան եմ եղել ես։ Օրօրոցի կապաններըը էնպէս էին սրտահան արել ինձ, որ փոքր ինչ խելքիս հասնելով, վճռեցի՝ որ երբ ամուսնանամ, երեխաներիս երբէք օրօրոց չդնեմ։

Երեք տարիս դեռ չէր լրացել, որ հէրս վախճանուեց։ Հիմի էլ դեռ յիշում եմ, ինչպէս գիւղի կանայք դիակը շրջապատած սգում էին։ Հօրս թաղելուց յետոյ, երկար ժամանակ կանայք սև ագռաւների նման խումբ-խումբ

*) մխել— յանդիմանել

տեսութեան էին գալի մօրս ու տատիս և ամեն անգամ լաց ու կոծ բարձրացնում։ Էդ բանը շատ վատ էր ազդել վրէս։ Ուստի երբ աչքովս էր ընկնում, որ դէպի մեր տունն կանայք են գալի, իսկոյն վազելով մօրս գիրկն էի ընկնում ու չէի թողնում որ լաց լինի։ Իրեն էլ յոյսեր էի տալի որ լաց չլինի. ասում էի, որ ես շուտով կը մեծանամ, լաւ մարդ կը դառնամ, կերթամ քաղաք և իր համար լաւ լաւ շորեր ու շատ բաներ կը բերեմ։

Հինգ տարեկան ժամանակս մի գիշեր երազումս տեսայ, որ մեր գիւղի մօտի անդնդախոր ձորի եզերքին վայր եմ ընկել ու քանի ճգնում եմ ոտքի կանգնել, սոթ եմ տալի. քիչ էր ճնում որ անդունդը գլորւէի։ Էդ միջոցին մէջս յայտնուեց արտասուքն աչքերին, ձեռքերը մեկնեց դէպի ինձ ու երկար տանջելուց յետոյ ազատեց ինձ էն նեղ ու դժուար տեղից։ Երազիս մասին մէջս շատ էր վախում։ Եւ «անուն հօր»ը սովորեցնելով, պատուիրեց, որ եթէ միւս անգամ էլ էդպիսի երազ տեսնեմ՝ երեսս խաչակնքելով երեք անգամ ասեմ։

Մի անգամ մեր գիւղը մի լարախաղաց էր եկել։ Ձարը սարքած էր մեր գիւղացի Միքէլենց կալումը. մեծ բազմութիւն էր թամաշա եկել «քեանդրբազ»ին։ Ես էլ ամբոխի արանքը մտած, արմացք կարւած, դիտում էի լարախաղացի ամեն մի շարժումը։ «Տակի մասխարան»ն ներքևում մասխարութիւններ անելով, ամբոխին կուշտ կուշտ ծիծաղեցնում էր։ Իսկ գուռնաչի Ջաքարը իր խմբի հետ զիլ նւագում էր կոխի եղանակ։ Երբ լարախաղացը իւր գործը վերջացնելով գնաց էդ տեղից ու ամբոխն էլ ցրւեց, ես՝ դէպքից օգուտ քաղելով, իսկոյն կլոր սիւնով մագլցելով բարձրացայ լարի վրայ ու սկսեցի լարախաղացի նման օյիններ անել։ Մինչև թոկի կէսը գնացի ու ճնացի տեղս ու տեղս մեխւած. էլ չէի կարողանում ոչ առաջ գնալ, ոչ ետ։ Քիչ էր ճնում հաւասարակշռութիւնս կորցնէի և վայր գլորւէի, երբ յանկարծ մի տղամարդ

վրայ հասաւ ու ցած բերեց ինձ։

Մէրս սկզբներում էս դէպքը իմ տեսած երազին էր վերագրում։

Դրանից յետոյ երկար չքաշեց մրսելուց առաջին հիւանդացայ։ Ասում են մի օր էնքան եմ նեղացել, որ իմ տէրտէր պապը գլխովս պարսաւել է, որ իբրև իմ տեղ ինքը գոհւի։ Անո էդ ժամանակ մէրս ուխտած է եղել, որ երբ ես առողջանամ, բոլլիկ ոտքերով հօթը գիւղ մանգայ խաչի սէրը։ Գարի գյողն էլ էր ասել, որ իմ պատճը*) Հախպատի Սուրբ-Նշանիցն է։ Հիմի էլ իմ երազը հիւանդանալուս դէպքին էր վերագրում։

Առողջացայ և՝ աշնանային մի գեղեցիկ օր ճամփա ընկանք։ Երբ մօտենում էինք մի գիւղի, սպիտակ սաւանով ծածկւում էր նա գլխիցը մինչև ոտքերն ու սկսում էինք տները շրջել։

«Բարի օր ձեզ, այ քիր, այ մէր,— ողջունում էր մէրս ամեն մի տուն մտնելիս—, ըէխիս համա «խաչի սէրը» ժան եմ գալի. նրա սուրբ զօրութիւնը ձեր տան ու տեղի վրայ ըլի»։ Որը մի հատ կամ մի գոյգ մոմ, որը մի պտղունց խունկ կամ մի սև կոպէկ էր տալի մեզ ու ճամփա գնում։ Կեանքիս մէջ առաջին անգամն էր, որ ես էդպիսի մի ճանապարհորդութիւն էի անում։ Սպշած նայում էի բարձր սարերին, որոնց շատերի կատարները քիչ էր մնում երկնքին հասնէին, հեռու անտառներին, լայն ու սիրուն հովիտներին, գեղատեսիլ վարելահողերին, անդնդախոր ձորերին։ Ուրախութիւնից սիրտս փորումս խաղան էր լինում, պար էի գալի ճամփէն գնալիս և ուլի պէս թռչկոտում։

Առաջինը Իկհատն էր մեր այցելած գիւղը. էստեղից անցանք Ղաչաղան, ապա վերադառնալով իրիկնապահին հասանք Արդվի գիւղը, որտեղ և գիշերեցինք մեր բարեկամուհի յայտնի Քէթևան խանումի տանը։

*) տատն — տատութիւն, տատ։

Սուրբ խաչի պատի ուրբաթ օրն էր. թէյի ժամանակ իմ բաժակը շաքարով քաղցրացրին ու մէջը հաց փշրեցին։ Էդ բրդոշը շատ դուր եկաւ ինձ։

Էն ժամանակներում Քէթևան խանումը, կամ ձալօն՝ ինչպէս մենք էինք կանչում նրան, մի արտասովոր կին էր։ Տեղական ազնուականներից մէկը Թիֆլիսում նրա հետ ամուսնանալով՝ բերել էր գիւղն ու ինքը առևտրական գործերով գնում էր Թուրքիայի խորքերում։ Քէթևան խանումը իշխանական տոհմից էր։ Գիւղում կալւածքներ ունէին, որտեղ պարապում էին երկրագործութեամբ ու անասնապահութեամբ։ Եւ էդ բոլորի կառավարիչը՝ հաւատարիմ գիւղական սովորութեան, ինքը Քէթևան խանումն էր։ Տղամարդի պէս անդրավարտիկ էր հագնում, միայն շրջագգեստի տակից ի հարկէ, կեռ դաշոյնը կապում, կայծքարով զոյգ փշտօլները թամբի առջևից կախում ու ձին հեծնում։ Եւ երկայն չիբուխը բերանը դրած՝ ձիու գլուխը բաց էր թողնում։ Էդ միջոցին գլխի քօղը—չիթէյէն քամու հոսանքի ուղղութեամբ տարածելով՝ փուրռում էր։ Առհասարակ նա միշտ լաւ հօրդա ձիաներ էր պահում հեծնելու համար։ Մի ձիաւոր ծառայ էլ միշտ հետևում էր իր խանումին։ Իսկ խանումը կամ սարն էր գնում զովութին նայելու կամ գութանի ու հնձւորների մօտ էր գնում, կամ Ջալալօղլի՝ մթերք առնելու։

Տղամարդիկ անգամ քաշւում էին նրանից։ Եւ թէպէտ նա բարկացկոտ կին էր, բայց միևնոյն ժամանակ անսահման բարի էր ու գթասիրտ։ Ջաւոր ընտանիքներին օգնութեան ձեռք էր մեկնում միշտ։ Իր ուղևորութեան միջոցներին վայն եկել էր էն գութանաւորներին, որոնք սիրտ չէին անում նրա վրայ հօրովել տալու։ Գիւղերում սովորութիւն կայ, որ երբ գութանի հօտաղները անցորդ կինարմատ են տեսնում, իսկոյն յանպատրաստից, հօտաղներից մէկը նրա մասին գիլ ձէնով հօրովել է վերջաշում և միւսները հետը երգում են։ Իսկ

Քէթևան խանումից վախելով՝ նրա վրայ հօրովել չէին ասում։ Սակայն Ք. խանումը միշտ սիրտ էր տալի, որ իրեն վրայ էլ հօրովել ասեն, ովովհետև գիւղական էդ ծէսը դուր էր գալի իրեն։ Եւ հօտաղները երգում էին.

Ենօրդա ձիաւոր Յանում,
կեռ խանջալաւոր Յանում,
Ունքերդ կեռ-կեռ
Երեսդ լիսնեակ Յանում.

հօրովել—հօ...

Եւ Յանումը սրտանց ուրախանալով, քսակից մի ռուբլիանոց դրամ էր հանում ու իր ծառայի հետ հօրովել ասող հօտաղներին նւէր ուղարկում։

Հետևեալ առաւօտը այցելեցինք փոքրիկ Ամոջ գիւղը և էնտեղից ուղղակի ճամփա ընկանք դէպի Հախպատ։ Մինչև էդ օրը մեր ճամփէն հարթ դաշտերի միջով էր տանում, իսկ հիմի միանգամայն կերպարանափոխւեց։ Նախ մտանք խոր ձորն ու սկսեցինք գնալ ծուռ մուռ կածաններով, քարքարուտ կիրճերով, անընդհատ ելևէջները բարձրանալով ու ցածրանալով։ Տեղ տեղ հարթ ճալաններ էին պատահում Դևբէթի գետի գեղատեսիլ ափերին, որտեղ գտնւում էին և մերձակայ գիւղերի այգիները։

Դևբէթը վշշալով, թշշալով, գոռիւն գոչիւնով, հնչացնելով, փնչացնելով, կոհակները իրար առաջակըռուվ անելով, տեղ-տեղ էլ դարան մտած գողի պէս տազ արած, կամ օձի պէս գալարւելով, ոլոր մոլոր սահելով, ափունքը ոռոգելով, այգիներին ու ճալաններին կենդանութիւն տալով, կանաչափթիթ դարձնելով, ահաւոր խոր ձորի ու իր ափերի ծմակների արձագանքի ներդաշնակութեամբ, ուղեկցում էր մեզ։ Դևբէթի ափերին խիտ շարքերով եալլի էին բռնել հաստաբուն դարաւոր ընկուզենիներն ու կաղնիները ու մէջ ընդ մէջ էլ լալկան ուռենին ու լօրին կտացած՝ իրենց փնջփնջնոտուն ու խուճուճ կատարները գետի վրայ կախած, էդ խոր ձորերում

պատահած դէպքերի—անց ու դարձի ահաւոր պատմութիւնն էին շշնջում գետի ականջին։

Ճամփին ուրիշ ուխտաւոր գիւղացի կանայք ու երեխաներ էլ պատահեցին մեզ։ Հատակակից նոր ընկերներիս հետ մենք մի խումբ երեխաներ, մեծերից առաջ անցնելով, ուլերի ու գառների պէս թռչկոտելով՝ մոտենում էինք հինաւուրց այգիներից ճաշատրդ ծառավազնեերի վրայ ու խաղող էինք քաղում կամ մոշ, հաւալօլոկ ու թուզն էինք քաղում ուտում, որոնց թփերը ընդարձակ տարածութեամբ վայրի այգիներ էին կազմում։ Սինձը, կոծօխուրը, բռինչը, մամուխն ու նուռը խակ էին դեռ։ Ճամփի համեմատաբար հարթ տեղերը ճիպոտներից ձիաներ էինք շինում, հեծնում ու արշաւում,—ձի էինք խաղացնում։

Մեզ սպէս պատահում էինք սարերի լանջերից հոսող կարկաչուն վտակների, որոնք արևի ճառագայթներից դեռ հեռւում փայլատակում էին մաքուր երծաթէ ժապաւէնի նման։ Կամ՝ բարձունքներից թափւող չուչրուան ջրվէժների, որոնց կաթիլները հուրհրատին էին տալի լալ ու մարջանի պէս։ Հապա երբ խմում էինք էդ սառը, անմահական ու անուշ ջրերից,—ծարաւ պապակներս էնպէս էր հովանում, ինչպէս թառամած ծաղիկները երկնային ցօղից։ Անթիւ հեղեղատներ էլ կային սարի լանջերին, որտեղով սելաւներից ահագին գետեր էին հոսել ու Դևբէթի ափերը շատ տեղ քար ու գլով լցրել։ Տեղ-տեղ էլ գետի ափերին՝ աւազուտների և գետի ափանքներում, բարձրադիրք վայրեր էին պատահում, տեբևախիտ ծառախմբերով, կանաչ խոտով ու ալուան ալուան ծաղիկներով զարդարուն, ոնց որ օազիսներ։

Ճամփին մի քանի տեղ մեզ ձկնորսներ պատահեցին։ Պաղը նոր էր բացւել, օրն էլ նաւակատիք էր. ամա մարդիկ ուռկանով ձուկն էին որսում։ Երեխաներիս խումբը վազում էինք դէպի գետափը ձկնորսներին թա-

մաշա անելու։ Նրանցից մէկը երբար եանից ուռկանը մի քանի անգամ ջուրը նետեց, բայց ձուկը չ'բռնուեց. յետոյ դառնալով դէպի ինձ՝ հարցրեց անունս։ «Լևոն ջան, ասաց, էս մինն էլ քու Թալլահիցը»։ Ուռկանը դրեց ու մի քանի րոպէից յետոյ երբ եա հանեց, ձկները խլպլտալով դուրս թափուեցին։ Կային մեծ մեծ գլխանի կապոյտներ, դնչները սուր-սուր մուրճաններ, դեղին աչքանի «սարիգեօզ»ներ և մի հատ մեծ կարմրախայտ ձուկը (գոճա)։ Երեխաները ուրախութեան ճիչ արձակեցին։ Զկնորսը մի հատ մեծ ձուկը նուիրեց ինձ, բայց ես քաղաքավարութեամբ մերժեցի, որովհետև համ երեսս բռնում չէր, համ էլ անյարմար էի գտնում, որ մենակ ինձ էր տալիս։ Իսկ եթէ ամենքիս տար՝ էն ժամանակ էլ տեղը ոչինչ չէր ճնշէ։

Արևը մէջքներս պողպացնում էր, հետն էլ թոչկոտելուց բեզարել էի և Դևբէթ գետը մագնիսի պէս քաշում էր ինձ։ Ուղեկիցներիցս ոչ ոք ինձ հետ լողանալ չէր ուզում։ Մէկ էլ երբ բաւական հեռացել էինք մեծերից, Սանահնու պատմական քարէ կամրջի մօտ երեխաներին կանգնեցրի ու ինքս շորանան եղայ—գետն ընկայ։ Փառաւորապէս լողացայ ու հովացայ։ Թէև մէրս շորերս հագնելիս վրայ հասաւ ու յանդիմանեց ինձ, բայց ես արդէն հասել էի մուրազիս։ Ջափից դուրս չրասէր էի։ Գիւղումն էլ հէնց երբ լաւ անձրև էր գալի, մօրիցս ծածուկ տրեխներս ու գուլպաներս հանում էի, պաճիճներս էլ լաւ վեր կշտում ու բոլորիկ ոտքերով անձրևաջրերի մէջ չլըփչլըփալով վազվզում։

Ճամփին տեսակ-տեսակ սիրուն ու չալպալատուրիկ փետուրներով թռչուններ էին պատահում մեզ, որոնց նմանները դիւղում չէինք տեսել։ Մոշահաւերը էնպէս արագ ու ծածուկ էին ծլկում, որ հազիւ էինք նշմարում։ Վերուհաւերը երբեմն թփերի վրայ իջնում էին, ուսլուբով*) կուզիկուզ մօտենում էինք, որ նրանց երկար ու

*) ուսլուբով—զգուշութեամբ.

սիրուն պոչերից բռնենք, բայց չէը աջողուում։ Շատ թռչունների անունն ու տեսակը չ'գիտէինք իսկի։

Ճամփի էս ու էն կողմերում հեռու կամ մօտիկ, թմբերի վրայ, անտառապատ սարերի լանջերին, ծմակների մէջ, բազմաթիւ խաչարձաններ ու քանդուած մատուռներ էին երևում,—հին հին ժամանակների յիշատակարաններ։ Կամ անմատչելի ժայռ քարափների կրծքի մէջ, տեղ-տեղ էրերի ու խոռոչների առջև մարդկային ձեռքերով պատեր էին շարուած, իբրև ժամանակաւոր ապաստարաններ հայ բնակչութիւնը պաշտպանելու թաթարների ու լեզգիների յարձակումներից։

Հախպատից մօտիկ, մի սարի կատարի վրայ, քարէ պարսպով շրջապատուած, Դսեվանցու (դրսի վանքի) կիսաւեր վանքն է կանգնած.—որին Հախպատից մի խոր ձոր է բաժանում—։ Ուխտաւորներս ճամփից թեքուեցինք դէպի էդ վանքը ուխտ անելու։

Իրիկնապահին հասանք Հախպատ։

Գլ. 2.

Լևոնը Հախպատում. վանքի նկարագրութիւնը. նրանց հիւրընկալ Տէր-Յովհաննէսը։ Լևոնը կապում է ամուլ կնոջ գօտին։ Ս. Գրիգորի և Քօրերայ վանքերը։ Լևոնն ու մէրը գնում են Սանահին։ Վանքն ու Սանահնու վանական դպրոցը։ Լևոնը մտանակցում է դպրոցական աշակերտների խաղերին. նրա բուռն սէրը դէպի դպրոցը։

Հախպատում մեր ուղեկից ուխտաւորները դիմեցին ուղղակի վանքի դաւիթը, իսկ մէրս ու ես դնացինք պապին բարեկամ Տէր-Յովհաննէսի տունը, որը մեզ շատ սիրով ընդունեց։

Հախպատը գտնուում է բարձրաւանդակի վրայ. երեք կողմից անդնդախոր ձորերով ու փոսերով, իսկ արևելեան կողմից անտառապատ սարերով շրջապատուած: Վանքը գիւղի արևելեան կողմումն է:

Հետևեալ օրը ս. Խաչի կիրակին էր. հանդիսաւոր պատարագ կար վանքում: Պատարագիչը մեր հիւրընկալ Տէր-Յովհաննէս հայրն էր, որը իմ պապի նման գեղեցիկ էր, փաշվաշա ու գլուխը ճաղատ: Բայց ճաղատութիւնը թէ պապիս, թէ նրան էնպէս էր սազում, որ կարծես մօրից հէնց էնպէս էին ծնուել: Պատարագի արարողութեան ամբողջ ընթացքում միալար արտասուում էր նա: Երբ մէջս ու ես ներս մտանք վանքը, ինձի ապշած ու զարմացած վանքի հոյակապ շինութիւններից: Բուն վանքի շինութիւնը էնքան էլ մեծ չի. վանքից մեծ է նախագաւիթը, որտեղ թաղուած են հայոց թագաւորներ, կաթողիկոսներ ու վանահայրեր: Աւելի ևս հսկայական մեծութիւն ունի «Համագասպ» անունով հոյակապ ու անսիւն շինութիւնը իր դիւանական բեմով: Վանքի արևելեան պատի վրայ, դրսից, փորագրուած են մեր Գուրգէն ու Կիւրիկէ թագաւորները ձեռքերնին վանքի մոդելը բռնած: Սիրուն խաչքարեր կան արևմտեան կողմի խցերի գլխին: Վանքի հիւսիս-արևելեան կողմում է գտնուում զանգակատունը իր ահեղ բարձրութեամբ, բայց կոպիտ ոճով մի կերտուածք: Էդ զանգակատան բարձունքից հրաշալի տեսարան է բացուում չորս կողմդ: —Պատնօրամայի պէս երևում են անտառապատ բլուրներն ու քարձր լեռները իրենց ծերպերով ու ծործորներով, անդնդախոր ձորերը, գեղատեսիլ դարաւանդներով ու մէջ ընդ մէջ գրաւիչ հովիտներով:

Բարձր արխիեպիսկոպոսական —ճարտարապետութեան կողմից՝ Լօռու վիճակում ոչ մի հին կամ նոր վանք չի կարող հասնել Դսեղ գիւղի մօտ գտնուղ Ս. Գրիգորի աւերակ վանքին: Նա մի հրաշալի, նուրբ, վսեմ, ճաշակաւոր ու գեղեցիկ կերտուած է, որը, ինչպէս ասացի՝ իր նմանը չունի:

Լաւն է և էդ վանքի մօտի՝ սառն ու անմահական աղբիւրը:

Լօռու հին վանքերի մէջ պատուաւոր տեղ են բռնում և Քօբերայ վանքերը, որոնք գտնուում են Իկհատ գիւղի ձորում: Արխիտեկտուրայի վսեմութեան ու նրբութեան տեսակէտից էլ դրանք Ս. Գրիգորի աւերակ վանքի անզուգական ոճին չեն հասնիլ, բայց դրանց տեղն ու դիրքը հրաշալի է: Դրանց դիրքի թողած սարսափեցնող, բայց միևնոյն ժամանակ և դուրեկան տպաւորութիւնը անկարելի է նկարագրել: Երկու վանքերն էլ շրջապատուած են ծմակներով:

Հախպատի վանքում պատարագը վերջանալուց յետոյ, ուխտի եկած մի ամուլ նորատի գեղջկուհու զօտին արձակեցին ու նորից լինձ կապել տուին, որպէս զի նա երեխաներ ծնէր: Յետոյ ս. Նշանի նշխարները համբուրելով, դուրս եկանք ու սկսեցինք տները ման գալ խաչի սերը: Շատ խունկ մոմ ու մի քանի գրօշներ հաւաքելով վերադարձանք վանքը և էդ բոլորը յանձնեցինք վանահօրը:

Երկրորդ գիշերն էլ Հախպատում ճալով, էքսը, մեռելոցի երկուշաբթի օրը, բոլորս ճամփա ընկանք դէպի Որնակ փոքրիկ գիւղը: Հախպատի անտառազարդ ձորն անցնելով, մեր ճամփին ուրիշ էդպիսի երկու ձորակներ էլ պատահեցին: Գնում էինք սիրուն հովտաղաշտերով: Մեր ձախ կողմից անտառազարդ սարերն էին շարքերով կանգնած, իսկ աջ կողմից մեկնուում էր մեծ՝ անդնդախոր ձորը: Որնակը հեռու չէր, շուտ հասանք և իսկոյն սկսեցինք խաչի սերը ման գալ: Միւս ուխտաւորները սպասեցին մեզ մինչև վերջացրինք և իրար հետ ուղևորեցինք դէպի Սանահին: Երբ տեղ հասանք, դեռ շատ օր կար: Սանահինը եօթներորդ գիւղն էր, որով վերջանում

էր մօրս ուխտած գիւղերի հաշիւը։ Բոլոր ուխտաւորներից մեղ աւելի վանքի սենեակներից մէկում։

Սանահնում վանքը համարեա նոյն տպաւորութիւնը թողեց վրէս, ինչ որ Հաղպատինը։

Սակայն Սանահնում մի ուրիշ բան կար, որն աւելի խոր, աւելի անուշ ու անջնջելի տպաւորութիւն թողեց իմ մատաղ սրտի վրայ։

Վանքի դպրոցն էր էդ։

Վանքի բակում, հէնց էն սենեակին կից, որտեղ ուխտաւորներս էինք գոնում, մի մեծ սենեակում շատ երեխաներ էին կարդում.—դա ինքը վանքի դպրոցն էր։ Առաջին անգամ էդ տեսակ մի դպրոց տեսնելով՝ մնացել էի ապշած ու հիացած։ Դպրոցի պատուհանի առջևից էլ պոկ չէի գալի։ Մերս մի երկու ժամի չափ ընդմիջումով պոկեց ինձ ու տարաւ խաչի սերը շրջելու։ Խաչի սերը վերջացնելուց յետոյ, ես դարձեալ դպրոցի լուսամուտի առջև մեխուած, մոռացած ինքս ինձ, հաց, ջուր և արար աշխարհ, պեպեցած ու անթարթ աչքերով միայն աշակերտների ու վարժապետների շարժուձևերն էի դիտում։ Գրել կարդալու մասին շատ ու քիչ գաղափար ունէի ես, որովհետև համ պապս քահանայ էր, համ էլ հօրեղբայրներս գրագէտ։ Միայն ինձ շատ զարմացրել էն, երբ մեծ գրատախտակի վրայ աշակերտները կաւիճով թելադրութիւններ էին գրում։ Գրատախտակն էլ, կաւիճն էլ առաջին անգամն էի տեսնում։

Երբ իրիկնամուտին ուսուցիչները աշակերտներին զոյգ զոյգ շարքերով եկեղեցի էին տանում, անսահման ուրախութիւնից բերանս բաց էր մնացել։ Ժամից յետոյ, վանքի կանաչաւէտ բակում մինչև պինդ մութը խաղում էին նրանք։ Բոլոր աշակերտները գիւղական տարազով էին հագնուած, բացի մի բարձրահասակ աշակերտից, որը հագին սև սերտուկ, եւրոպական կօշիկներ ու գլխին կարասուզ ունէր։ Նա ինձ էլ հրաւիրեց իրենց խաղերին

մասնակցելու։ Իրենից իմացայ, որ նա Ջալալօղլու քահանայի որդին էր։ Ես ճարպիկ խաղացող էի. սկզբում թէև ամաչկոտութիւնից քիչ շշկլուում էի, սակայն հետզհետէ վրայ ընկնելով, ուղղակի զարմացրի բոլորին։

«Գնդակ» ու «գերի» խաղերը հէնց էդ տեղ սովորեցի. մերը գիւղում չ'գիտէին, բայց շուտ ըմբռնեցի։ Յետոյ խաղացինք ճզալախատի, տապանուկի, փորփստ, հարամօլլայ, իծաշարուկ են։ Սրանք արդէն իմ ծանօթ խաղերն էին։

Ճզալախատի խաղալու համար, մի կլոր ճիզ են քաշում գետնի վրայ, խաղացողների քանակութեան համեմատ։ Միշտ էլ խաղացողները երկու բանակների են բաժանուում, ամեն մէկը իր մօր*) գլխաւորութեամբ և մի բանակը վիճակով մտնում է ճզի մէջ, իսկ միւս բանակի անդամները լախտիներով կամ հէնց իրենց կաշէ գօտիներով սկսում են անխնայօրէն հարուածել ճզի շրջանի մէջ գտնուողներին, որի ժամանակ, ճզի մէջ խուժելու իրաւունք չունեին։ Շրջագծի մէջ գտնուողներն էլ իրենց հերթում աշխատում են կամ աքացի տալ լախտի զարկողներին կամ լախտիներից բռնել, առանց սակայն ճզի միջից դուրս գալու։ Եւ երբ աջողւում է, խաղացողների դերերը փոխուում են։

Հարամօլլայ խաղալու համար նոյնպէս երկու բանակներից մէկը, ըստ վիճակի՝ տեղն ու տեղը քոնրում**) ծալով, վերջիններիս աչքերը պինդ կապում են, իսկ միւս բանակը քոնրից հեռանալով թագնուում է դոմերում, մարագներում կամ գիւղական փլեկներում։ Քոնրում մնացած բանակը մի որոշ ժամանակից յետոյ դուրս է գալիս և «հարամօլլայ, հարամօլլայ» կանչելով որոնում է թագնուածներին։ Իսկ թագնուածները աշխատում են աննկատելի կերպով գալ ու քոնրէն գրաւել,

*)մէր—պարապետ.

**)քոնրա—բացօթեայ խաղատեղը.

իբրև թէ բերդն առնել։ Եւ որոնողները ճգնում են կամ հէնց Թագսամի տեղը վրայ հասնել նրանց, կամ ճամփեբում բռնել, իբրև թէ գերում են. որից յետոյ հեծնում են նրանց վրայ ու բերում են բոհրէն. ևն։

Սանահնում երկրորդ գիշերը համարեա չ'կարողացայ քնել։ Երևակայում էի, որ ես էլ եմ էդ դպրոցի աշակերտ ու ինչպէս խաղալում, էնպէս էլ սովորելում ընկերներիս տալիս եմ—անցկենում։ Որ՝ դպրոցն աւարտելուց յետոյ, ինքս էլ եմ վարժապետ դառնում և գիւղերում որքան ինձ նման ուսման կարօտ երեխաներ կան, բերում եմ դպրոց լցնում ու սովորեցնում։

Է'ն առաւօտը, որ մենք ճամփա պէտք է ընկնէինք դէպի մեր գիւղը, դպրոցից պոկուել չէի ուզում։ Աղաչանք, պաղատանք էի անում մօրս, որ ինձ Թողնէր էնտեղ։ Բայց երբ նա ասաց, որ առաջինը իմ հասակը դեռ փոքր է դպրոց մտնելու համար, երկրորդ՝ ինքը առանց ինձ չի կարող գնալ պապիս մօտ և երրորդ՝ խոստացաւ պապիս մօտ խօսք անցկացնելու, որպէսզի միւս տարուց ինձ էլ ուղարկէին Սանահնու դպրոցը,—նոր յօժարեցի ու ճամփա ընկանք։

Նոր ընկերներիս «ճնաս բարով» ասելիս սիրտս փուլ եկաւ և ես արտասուքն աչքերիս հրաժեշտ տւի նրանց։

———

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ազգային Գրադարան
7/XI 1922
Ա. ՅԱՍՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գլ. 3.

Լևոնն ու մէրը վերադառնում են տուն։ Հարևան երեխաներին սովորեցնում է «գերի» ու «գնդակ» խաղերը։ Քրոջ հետ խանութ է խաղում։ Հօրեղբօրից կարդալ է սովորում. մտնում է երեանդ վարժապետի դպրոցը։ Լևոնը տեսնում է «զարագիօզի» ներկայացումը. փոխադրըւում է տիրացու Միսակի մօտ։ Ռուսերէն դաս է առնում, հայերէն գրութիւն է անում։ Նկեղեցում փոխ է ասում. նրա դասընկեր Սարգիսը Թուղթ է ցանում։ Յիմար-իմաստունի ոճնին՝ Լևոնը իմաստուն։ Կազակների հետ ռուսերէն է կոտրատում։ Լևոնի պապն ու իրենց հարևանի որդի Աւետիքը։ Պապը վախճանւում է։ Երազում տեսնում է Քրիստոսին։ Ծիծեռնակի Թաղումը։ Լևոնը՝ տէրտէր։

Տուն հասանք Թէ չէ, իսկոյն դուրս վազեցի և Թաղի երեխաներին գլխիս հաւաքելով, նոր սովորածս խաղերը նրանց էլ սովորեցրի։ Պրծաւ։ Էլ օրնի բուն խաղալու տեղից տուն չէի դառնում. ուտելու կամ քնելու ժամանակ զօրով էին տուն բերում։ Տանն էլ չէի հանդարտ մնում, էնտեղ էլ քրոջս հետ խանութ էինք խաղում։ Տան մի անկիւնում, փալասի կտորներից, ուլունքներից, կոճակներից ու հազար տեսակ չնչին բաներից խանութ էինք սարքում։ Փողի տեղ էլ ոսկեվարագ ու գոյնզգոյն տարփիկները էինք գործ ածում։ Քոյրս մնում էր խանութում, իսկ ես պապիս գաւազանը ձի շինած հեծնում էի ու գնում Պետերբուրգ, Մոսկւա, Վարանցովկայ ու Պրիվոյնի կարիդ անելու—ապրանք առնելու։ Վարանցովկէն ու Պրիվոյնին՝ առաջինը մալականի, երկրորդը ռուսաց գիւղեր էին երեսուն վերստաչափ մեր գիւղից հեռու։ Դրանց անունները տատիցս էի լսել ու կարծում էի Թէ երևելի հեռաւոր քաղաքներ են։

Բայց և այնպէս, հէնց միտքս գրել կարդալուց, Սա-

նանի դպրոցից ու աշակերտներից էի խօսում։ Մերոնց գոհ էին էնքան տարայ, որ իմ տիրացու հօրեղբայրը էն ձմեռը սկսեց ինձ կարդացնել։ Դժբախտաբար էն ժամանակները չկային մեր պաշտելի Ղազարոս Աղայեանի և ուրիշների մատչելի դասագրքերը։ Տեար էինք ասում կամ քերական, որի վրայ դաս առայ ես «այբ-բէնդը։ Շուտ վրայ ընկայ և զիրումեկն անելով կարդալուն։

Էդ ձմեռ տեարն աւարտեցի և հետևեալ աշունքին փոխանակ Սանահին ուղարկելու, մեր գիւղացի Երանդ վարժապետի դպրոցը տւին ինձ, որը նոր էր բացել։ Մինչև էդ ժամանակ մեր գիւղում կանոնաւոր դպրոց չկար. ամեն մի աէրտէր ու տիրացու իրենց գոմերի օդանոցում դասեր էին տալի։ Եւ մեր գիւղի եկեղեցական դպրոցի շէնքը փակած էր։ Երանդ վարժապետն էլ իր հօր սենեակում էր դպրոց բացել։ Նա Ներսիսեան դպրոցի սան էր։ Նրա հռչակը էնպէս էր տարածւել, որ շրջակայ բոլոր գիւղերից՝ մազով-միրուքով երիտասարդներ էին յաճախում նրա դպրոցը։ Զորս-հինգ վերստ հեռաւորութիւնից առաւօտ վաղ գալիս էին նրանք ու իրիկունը վերադառնում։

Սար, ձոր, դաշտ ծածկւած էին բամբակի նման ձիւնով։ Մի կողմից էլ ձիւնը փաթիլ փաթիլ թափւում էր։ Գիւղամիջի մեծ ճամփից սկսած մինչև մեր դպրոցը, որ մօտ երկու հարիւր քայլ մի նրբավտղոց էր,—էդ տեղից քերած ձիւնը՝ ճամփի երկու կողմերում էնպիսի բարձր պատեր էր դոյացրել, որ անցնելիս՝ մեծ աշակերտների գլուխները անգամ չէին երևում։ Վարժապետենց կալումը աշակերտները ձիւնից մարդիկ էին շինել և դասամիջոցներին գնում խաղում էինք էդ ձիւնէ մարդկանց հետ։ Ջնադնդով խփում էինք դրանց ու յետոյ էլ իրար քիթ ու պռունկ էինք ձիւնակոլոլ անում ձնագնդերով։ Էն միրուքաւոր աշակերտները փէտի կտորները մի՝ ու գրքերը միւս կռնատակին հուպ տւած՝ գալիս

էին դպրոց։ Դուրսը ձիւնակոլոլ տրեխները քերում էին, փափախները թափ տալի ու սառած մատներին փչելով ներս մտնում։ Սակայն սառուցէ կտորները մեխերի պէս ըմխերներից դեռ կախ ընկած էին լինում։

Ինձ պէս ուրիշ փոքր աշակերտ չկար մեր դպրոցում։ Ես տարեկան էի եւ։ Իմ դասագրքերը մի կանոն սաղմոսն էր, որը շատ վարժ կարդում էի։ Մեծ աշակերտներից որոնք սովորում էին ժամագրքի, որոնք՝ տէր կանոն սաղմոսի, որոնք՝ աւետարանի, որոնք՝ կատեքարանի, որոնք՝ շարականի,—Առաւածաշունչի, ճաշոցի, յայտմատուրքի, ճարտասանութեան վրայ և այլն։ Մի խօսքով, ում տանը ինչ գիրք որ գտնում էր։ Չնայելով որ ուսուցիչը Ներսիսեան դպրոցի սան էր, բայց և այնպէս դասագրքերի միատեսակութիւն չկար. չգիտեմ էն ժամանակ դեռ կանոնաւոր դասագրքեր չկային, թէ միայն մեր գիւղում չկար։ Հիմի էլ դեռ ականջումս են աշակերտների ձէնները, երբ դասները սերտելիս՝ մէկը շարական էր երգում բարձր ձէնով, միւսը՝ փոխ ասում, երրորդը աւետարան կարդում աէրտէրի պէս և այլն։ Մի խօսքով՝ կատարեալ շիլափլաւ։ Մեծ աշակերտները գրութիւններ էլ էին անում վարժապետի տւած ս. գրքից վերցրած օրինակներից։ Բացի էդ, Սանահնեցի մի տիրացուի գրած նամակագրութեան մի օրինակ կար մեծ աշակերտների ձեռքին, որից ամենքն էլ արտագրում էին։ Ես էլ մեր մի ազգական մեծ աշակերտի աղաչելով՝ արտագրել տւի էն նամակից մի օրինակ ու գտած անգին քարի պէս պահեցի մօտս ապագայում օգտւելու մտքով։

Աշակերտների թւում, երեք աշակերտուհիներ էլ էին սովորում մեր դպրոցում,—նրանք գիւղի երեք քահանաների աղջիկներն էին։ Մի հանգամանք՝ որ էն ժամանակներում եզակի երևոյթ էր։ Իսկ էդ՝ մօտաւորապէս 1869—70 թւականներին էր։

Երեանդ վարժապետը դասը չգիտցող աշակերտին դպրոցի մի անկիւնում չոքեցնում էր—երբեմն աւազ ածելով ծնկների տակը—ու դասագիրքը ձեռքը դնում։ Ինպէս չոքած մնում էր աշակերտը, մինչև դասի սերտելը։ Իսկ ուրիշ չարաճիւնների համար՝ քանոնի հարուածներով էր պատժում։ Պատիժներից ազատ էինք ես ու երեք աշակերտուհիները։

Էդ ձմեռ մի քանի անգամ մեր գիւղը «դարագեօզ» պարածողները եկան։ Սրտով էի ուզում «դարագեօզ» տեսնել, որի մասին հրաշքներ էին պատմում տեսնողները, բայց մերս միշտ արգելում էր։ Սակայն մի անգամ մօրս մի կերպ (մղուբ*) բերինք ու ես մեր հարևան պատանիների հետ գնացինք «դարագեօզ»ին Թամաշա։ «Դարագեօզ»ի ու «հաջէյվազ»ի խաղերը հայիլ-մայիլ արին ինձ, վարագուրի քամակից ցոյց էին տալի տղամարդկանց ու կանանց խօսող ու խեղկատակութիւններ անող ֆիգուրաներ։ Դրանց տեղ թուրքերէն խօսում էր դարագեօզ պար ածողը։ Վարագոյրի եռւում լոյս էր վառած, իսկ օդայի մէջ մութն էր։

Երեանդ վարժապետի դպրոցում միայն մի ձմեռ մընացի ես, աւարտելով մի կանոն սաղմոսը։ Հետևեալ տարին՝ մեր հարևաններց Աւետքի յորդորանքով, նրա հետ գնացի մեր գիւղացի տիրացու Միսակի մօտ սովորելու։ Էդպիսի միջոցներով ամեն մի դաստառ՝ աշխատում էր մի ուրիշից աշակերտներ կորզել։ Տիրացու Միսակը մեծ Ղարաքիլիսի ծխական դպրոցն աւարտելով, նոր էր վերադարձել և գիւղում խանութ բացել։ Էնենց խանութում էլ կարդացնում էր մի քանիսին։ Երբեմն մեզ իր խանութից քիշմիշ էլ էր տալի։ Բայց էդ ի հարկէ շահասիրական նպատակով չէր, քանի որ նա իր աշակերտներից դասագին չէր վերցնում։ Տիրացու Միսակը ռուսերէն էլ էր սովորեցնում իր՝ ուշերնիկ գրքի վրայ։ Ինձ

*)մղուբ բերել—համոզել։

նոյնպէս էդ գրքի վրայ դաս տւեց ռուսերէն և ժամագրքի վրայ էլ՝ հայերէն։ Միաժամանակ և հայերէն գրելու օրինակ տւեց, միայն սկզբի երեք տառերը։ Տետրակի մի ամբողջ երեսը ագռաւի ճանկերի նման լցրել էի ա. բ. գ. տառերով։ Թւում էր որ ինձանից լաւ ոչ ոք չի կարող գրել։ Էնպէս էի սիրում էդ խզբզանքները, որ էլ աչքերս տետրակից չէի հեռացնում. մի-մին էլ համբուրում էի ու երեսիս կպցնում։

Իրիկունը ուրախ ուրախ տուն գալով, գրածս ցոյց տալի մերոնց։ Մերոնք բոլորովին լուրջ ասացին, որ՝ իբրև էնքան լաւ է գրած, որ դա ոչ թէ իմ, այլ անշուշտ վարժապետի գրածը կը լինի։ Չ'հասկացայ որ հանաք էին անում ու սկսեցի երդումներով հաւատացնել, բայց նրանք ձևացնում էին, որ իբրև չեն հաւատում. մինչև ես մի լաւ լաց եղայ։ Բայց դրա փոխարէն յետոյ ինչքան ուրախացայ, երբ առաջին անգամ եկեղեցում փոխ ասացի։ Ժամը դուրս գալուց յետոյ, մի քանի քեռնգխուդա մարդիկ պապիս շնորհաւորեցին իմ փոխ ասելու մասին. պապս էլ նրանց տուն հրաւիրելով՝ պատւեց թէյով ու ռոմի փունջով։ Դրանից յետոյ, միշտ մեր ժամում փոխ էի ասում։ Տիրացու Միսակը իր աշակերտներին բերան սովորեցրել էր «հայր մերը», ասելով որ աղօթքի համար ամեն բան կայ դրա մէջ։

Մեր տանը առհասարակ գրելու թուղթ շատ կար ու ես լիուլի օգտւում էի։ Իմ դասընկեր գալլաքի տղայ Սարգիսը էդ մասին շատ էր նախանձում ինձ։ Իսկ ես մի անգամ նրան խաբեցի, ասելով որ իբրև ամեն իրիկու մի թերթ թուղթ եմ ցանում մեր պարտիզում, վրէն ջուր ածում ու էքսի օրը պարտէզը թղթով լցւում է...։ Տեսայ միւս օրը էս քո Սարգիսը խիստ փքւած է վրէս։

—Տնաշէն, ես քի մի կարգին մարդ գիտէի, համա դու խաբեցիր ինձ, կենդ մի թաբախա թուղթ ունէի, էն էլ փչացրի,—ասաց նա լացակնքած։ Նրա խօսքերը էն-

պէս փոշմանեցրին ինձ, որ քիչ էր մնում լաց լինէի ու հարիւր անգամ մեզայ գալով՝ մի թերթի տեղ՝ վեց թերթ թուղթ տալ իրենց։

Մեծ պատի աւազ երեքշաբթի իրիկունը եկեղեցում կատարելու էր տասը չիմար իմաստուն կոյսերի ծօնը։ Որոնցից, աւետարանի առակով հինգն իմաստուն են հանդիսացել վառած լապտերներով փեսին ու հարսին ընդառաջ գնալուց, իսկ հինգը չիմար, որոնք հետները ձէթ չէին վերցրել ու մինչ ետ էին դարձել ձէթ առնելու, փեսէն եկել էր և իմաստուն կոյսերը մրտել էին հարսանքատուն, իսկ չիմար կոյսերի առաջ դռները փակուել էր։

Տասը կոյսերի թուով, տասը պատանիները ժամաշապիկներ հագած, մի մի վառած մոմ ձեռքներիս բռնած, կանգնած էինք ժողովրդի առաջ, որտեղ քահանան գրաւկալի վրայ օրհնյ պառաղ աւետարանն էր կարդում։ Եդ միջոցին՝ ուրարակիը տիրացու Միսակը—մեր վարժապետը—մի պղնձէ տախտի վրայ մեզ մատուցեց տասը հատ միաչափ ծալած եռանկիւնի մանր թղթեր։ Թակարդն ընկած թռչունի պէս սիրտս որբփում էր։ Ցետոյ թերթիկները կենտ կենտ բաց արին ու՝ որի մէջ գրուած էր «չիմար», մոմերը ձեռքներից առան հանգցրին ու ժամաշապիկները հանել տալով հետացրին։ Երեխաները հետանում էին լաց լինելով։ Իսկ որոնց մէջ գրուած էր «իմաստուն», նոյն դրութեամբ թողին մինչև վերջը։ Բարեբախտաբար «իմաստուն»ների թուումն էի և ես։ Մի կողմից անսահման ուրախ էի իմաստուն դուրս գալուս համար, իսկ միւս կողմից սիրտս շատ ցաւում էր դրախտից արտաքսուած մեր հինգ ընկերակիցների մասին։ Իմաստունների թուումն էր և իմ դասընկեր Սարգիսը, որի համար ես նոյնչափ ուրախ էի, որքան որ ինձ համար։ Եդ օրն էլ մեր քեռանդխուզանները պապիս շնորհաւորեցին «իմաստուն» դառնալս ու տուն գալով՝ մի լաւ կերան

խմեցին։ Իմ իմաստուն դառնալն իհարկէ կասկածելի էր, բայց որ մեր քեռանդխուզանների քէֆը շատ տեղն եկաւ՝ եդ արդէն կասկածից դուրս էր։

Շատ սիրեցի ես մանաւանդ ռուսերէնը։ Երբ մի անգամ պրիստաւը մեր գիւղն էր եկել, նրա հետ կազակների հետ անկապ բառերով ռուսերէն էի կոտրատում՝ что, братъ, отецъ, сестра, мать, хлѣбъ, вода... Կազակները բարեսրտօրէն ծիծաղում էին։

Մի օր խաղալու ժամանակ իմ դասընկեր Աւետիքը, որն ինձանից տարիքով էր, չ'գիտեմ ինչի խաթեր՝ խրփեց ինձ։ Շատ վիրաւորուեցի ու վճռեցի վրէժս առնել նրանից։ Շատ չանցաւ, մէկ էլ դես հետս էր՝ նկատեցի որ պապս գիւղամիջից դէպի մեզ էր գալի։ Երբ մօտեցաւ՝ առաջը կարեցի ու լացակումած՝ Աւետիքիցը գանգատուեցի, հետն էլ աչքի պոչով նկատում էի, որ Աւետիքը վախից ցամքել էր։

—Ա՛յ լաւ տարել Աւետիքը որ քի ծեծել ա՛, հալբաթ մեղաւոր ես որ ծեծել ա.—յետոյ նրան դառնալով աւելացրեց՝—այ դու գէշ Աւետիք խի՛ ես էլխես կամաց տալ։

Ինչպէս տաք ջրին չանկարծ տառը չուր ածեն, էնպէս զարձայ։ Դրանից յետոյ, Աւետիքն ու ես շատ մտերիմ ընկերներ դարձանք։ Որովհետև նա չքաւոր ծնողների զաւակ էր, ես միշտ իմ բաժին հաց ու պանիրը, երբեմն նաև գաթա-բլիթները նրա հետ էի կիսում։ Աւետիքի ծնողները թէև չքաւոր էին, բայց շատ ազնիւ մարդիկ էին և ինձ էլ իրենց որդիների բարեբար սիրում էին։

Գաս պահելում ես շատ խիստ էի։ Մի մեծ պատի աւազ ուրբաթ օր՝ մէրս գաթա-նազուք ու փոքրերիս համար փլիթներ էր թխել։ Բլիթները մեզ տալով պատուիրեց որ պահենք և էքսը թաթախման իրիկուն ուտենք։ Անուշ հոտով տաք-տաք բլիթը ծոցումս, ամբողջ մեծ պատը պահած երեխայ,—ասրի ու դիմացի։ Թէև բլիթը շուտ շուտ ծոցիցս հանում էի հոտ քաշում ու ետ տեղը դնում,

բայց դիմանում էի, չէի ուզում։ Պապս ուրբաթ օրւայ ի-րիկնաժամից վերադառնալուց յետոյ, էդ բանը նկատել էր։ Ինձ մօտը կանչեց և մօրս պատւէրն իմանալուց յետոյ, դաստուր*) տւեց բլիթն ուտելու։ «Ծեռնում եմ, ասաց, որ էդ բլիթը քի խալ**) ա տալի»։

Դժբախտաբար էն տարին պապս վախճանուեց։

Թէպէտ տանեցիների լաց ու կոծը վատ էր ազդում իմ մանկական սրտի վրայ, բայց տակաւին լաւ չէի գիտակցում մեր օջախին հասած էդ մեծ կորստի չափը։ Բայց երբ նրա մահից յետոյ հօրեղբայրներիս մէջ երկպառակութիւն ընկաւ և էդ առթիւ հետզհետէ մեր մեծ դովլաթը սկսեց սպառւել ու հօրեղբայրներս սկսեցին սաէպ սաէպ անարգել, ճնշել ու ծեծել իմ այրի մօրը, —էն ժամանակ արդէն շատ խոր զգացի իմ անդին պապի անփոխարինելի կորուստը։ Նոյն չափ զգալի էր պապիս կորուստը թէ՛ մեր եկեղեցուց և թէ՛ իր ժողովրդից։

Ժամագիրքը արդէն աւարտել էի և տիրացու Միսակը իր աւետարանն էր տւել ձեռքս, որը սովորեցնում էր մեկնութիւնով։ Յիսուս-Քրիստոսին շատ սիրեցի։ Մի գիշեր երազումս տեսայ, որ Քրիստոսը իր տասներկու աշակերտների հետ բազմած են մեր ձորում գտնուող ուխտատեղում։ Նրանք էն տարազով էին, ինչպէս որ նկարւած էին մեր եկեղեցու բեմի առաջ։ Ի հարկէ երազումս կենդանի մարդիկ էին երևում նրանք. մանաւանդ ինքը Յիսուսը մի աննկարագրելի գեղեցկութիւն ունէր ու հրմայիչ սիրուն աչքեր։ Ես քաշւելով ու սիրով Նրա առաջն էի գնում, աչքս համբուրում և խնդրում, որ ինձ էլ աշակերտ ընդունի։ Նա՝ լուսաճաճանչ ժպիտը դէմքին՝ ձեռքը գլխիս է գնում և աշակերտ ընդունում։ Լիառատ ուրախութիւնից իսկոյն զարթնեցի...։ Աւաղ, ամբողջ կեանքումս էլ էնպիսի անուշ երազ չեմ տեսել։

*) դաստուր—թոյլատրութիւն
**) խալ տալ—խանգարել

Գարուն էր։

Ամեն ինչ կենդանութիւն էր առել, բնութիւնը միանգամայն կերպարանափոխւել էր. սար, ձոր, դաշտ ու հովիտ կանաչել էին ու ծաղկել։ Դեռ լոյսը չ'բացւած՝ մի կողմից ծաղերն ու ծիծեռնակներն էին իրենց զւարթ ձլվլոցով օդը լցնում, միւս կողմից էլ վարդ-մանուշակն ու սուսամբարն էին իրենց անուշ բուրմունքը տարածում։ Պլպլան արևի ծագման հետ, շարժումը էլ աւելի էր կենդանութիւն տալի արար աշխարհին. ինս, ջինս, ժրաջան մրջիւնների նման բռնում էին դաշտ ու ձոր մշակութիւնի ու աշխատանքի։ Իրիկունները՝ սարերից շնկշնկան հով քամին էր փչում և տուն վերադարձող ոռնչպար բանւորի ջանը հովացնում։ Լսւում էին ծղրիտների, ճռեկների ու տեսակ տեսակ զեռունների դուրեկան ճրճրոցները և գորտերի կռկռոցը—հրաշալի համերգ։

Դաշտային գործերի առթիւ տիրացու Միսակի ընդամենը մի ջուխտ ու կենտ աշակերտները ցրւել էին. ինքը Միսակն էլ իր խանութը փակել էր ու դաշտային գործերով էր զբաղւած։ Միայն ես էի դեռ յաճախում նրանց տուն, որպէս զի գոնէ մի-մին կարդանայի դաս առնել։ Երբեմն էլ զրքերս նրանց տանը թողնելով, մօտակայ արտերն էի գնում և բհրօչիով*) առուլ ու բօհունաի տակռի հանում կամ քաթմաթ**) հաւաքում—ուտում։

Մի օր էլ, երբ նրանց տանեցիք դաշտն ու այգին էին գնացել,—տանը մնացել էինք ես, վարժապետիս մի քոյրը և նրա քեռու աղջիկը, երկուսն էլ ինձ հասակակիցներ։ Կարան վրայ խաղում էինք. մէկ էլ տեսանք մի ծիծեռնակ եկաւ և գլխատան երդիկից ներս թռաւ. իսկոյն գլուխներիս փչեց, որ էդ ծիծեռնակին կենդանի բռնենք։ Ասած ու կատարած։ Վարժապետի քոյրն ու ես երդիկը պահեցինք, քեռու աղջիկը վազեց, դուռը նեբսից

*) բհրօչի—պստիկ թիակ
**) քաթմաթ, առուլ—բուսեղէնի արմատներ

վակեց ու սկսեց ծիծեռնակին ձողով դէպի մեզ քշել։ Քանի քանի անգամ խեղճ թռչնակը վեր սլացաւ, բայց մեր չար նպատակը զգալով՝ ետ ցած իջաւ, մինչև որ ձողու հարուածների տակ սառակեց, բոլորովին մեր կամքին հակառակ։ Կոտրած սրտերով կատրից ներքև եկանք։ աղջիկները նահատակած թռչնակին պատանեցին ու մեռելին սազական*) տուք արին։

«Ա՛յ սիրուն ծիծեռնակ, քու ձլոցին մեռնեմ. ես քու չահիլ չիւան չանին մեռնեմ, քու պլպլան մալ քիներին մեռնեմ, քու սիրուն սիրուն աչքերին մեռնեմ։ Ա՛յ իմ դարիը դուշ, այ բեմուրազ, ինչ ասեմ, բալքամ կուռը կոտրի քի սպանողի...»

Յետոյ ես սէրտէր դարձայ։ Շուրջառի տեղ մի մէզար գոեցի վրէս, սաղաւարտի տեղ մի խան**) դրեցի գլխս, վահասի տեղ էլ մի կէչըքու կլեպ կապրի ծոծրակիցս. ձախ ձեռքումս ժամագիրքը, աջ ձեռքումս էլ մի փետէ խաչ բռնած՝ «Աշխարհ ամենայն»ը երգելով առաջ ընկայ։ Աղջիկներից մէկը մի աւել բուռւարի տեղ, միւսն էլ մի կոտրած թիակ խաչվառի տեղ բռնած, մի ձեռքով էլ ծիծեռնակի դագաղը վերցրին ու տարանք գլխատան կարան վրայ առաք փառաք թաղեցինք։

Էս դէպքի մասին երբ մէրս իմացաւ՝ ինձ շատ նախատեց։ Նա շատ էր դարդ անում էդ մասին, որովհետև ասում էին, որ ծիծեռնակի լեզուն կարող երեխաները համր ու խուլ են ծնւում։

*) սազական—վայել
**) խան—հացահատիկի չափիչ

Գլ. 4.

Լևոնը դուքանում։ Հօտաղների խաղերը, պկուն, պատրեն ու կոխը։ Լևոնը յալթում է ամենքին։ Մաճկալի առած անեկդօտը։ Ինչո՞ւ է մաճկալը հեզդի ժամանակ խոփն ու ձևիչը ծածկում։ Կաքաւը. Մեղուների իմաստութիւնը։ Խոտերի ու արտերի հունձը։ Գիւղերի լաւ սովորութիւնները։ Լևոնը հղնարած։ Նախնական ձևով կրակ են վառում ու գողացած կարտօֆիլը խորովում։ «Ղուրուղչի» Մուղին։ Եղջերուն։ Լևոնի մօրը ուզում են մարդու տալ։ Լևոնի յուզմունքը։

Գուքանների լծելու ժամանակն էր։ Գրքերս ծալեցի մի կողմ դրեցի։ Հօտաղ էի գնալու։ Մի կիրակի իրիկնադէմին, տատներկու լուծ եզն ու գոմեշից բաղկացած մեր գուքանը դռնից ուղևորւեց դէպի հանդը։ Մօրս պատւէրով, հէնց գուքանը շարժւեց թէ չէ՝ մի հում ձու շրջխկացրի հօրիքի եզան ճակատին, որպէս զի չար աչքն էլ էնպէս տրաքւէր։ Լծների վրայ նստատած հօտաղներս գուքանը քշեցինք տարանք մեր վարելահողերից մէկը։ Երկու ակօս միայն վարելով, ինչպէս ասում են՝ «գործ դրինք» ու լծկանն արձակեցինք։ Գիշերաթաղնարածները լծկանը հանդը քշեցին արածացնելու, իսկ մնացող հօտաղներս մեզ նպարները*) տւինք մորի քաղելու։ Մորու անուշ բուրմունքը տարածւել էր օդի մէջ։ Նոր վարած ակոսներից ճանդուկ**) էինք հաւաքում ուտում։ Մը լսելի ժամանակ էլ արթուրմա խաղացինք ու յետոյ լուսնակի ճրքճրքան լուսի տակ նստեցինք՝ հէքեաթներ, առակներ, առասպելներ ու անեկդօտներ պատ-

*) նպար— արտերի արանքի անջրպետը։
**) ճանդուկ— բոյսի արմատ։

մեցին գիտցողները մինչև ուշ գիշեր։ Վերջում կանաչ մախմուրէ խոտերի վրայ պառկելով, կարպետների տակ մուշ մուշ քուն մտանք, ներշնչելով հովիտի ալւան ալւան ծաղիկների անուշահոտ բուրմունքը։ Ցերեկները ամբողջ հովիտը վարդանման պուտ ծաղկի առատութիւնից էնպէս էր կարմրին տալի, ինչպէս արիւնով ներկւած։ Ասում են պտի առատութիւնը հացի բերքի առատութիւն է դուշակում։

Երբեմն էլ արտի ցօղուններից պկու էինք շինում, ածում ու պարում։ Երևակայական հարսանիքներ էինք սարքում, զովի տալի, կենտապար պարում կամ կոխ բռնում։ Իմ բոլոր հասակակիցներին, դեռ քիչ էլ ինձանից մեծ հօտաղներին գետնովն էի տալի ես։ Ամեն գիշեր էապէս ուրախութիւններ էինք անում։ Երբեմն էլ մեր մանկական էր մեր բէֆերին մասնակցում ու ինքն էլ ծիծաղաշարժ անեկդոտներ էր պատմում։ Նմուշի համար նրա պատմած անեկդոտներից մէկը մէջ եմ բերում էս տեղ, իր իսկ բառերով։

«Ասըմա, մի գիւղում մի հետ մի տէրտէր ա ըլում. էն ա հլէ եվ մեռելը ժամն են բերում հա, խալխին ասելիս ա ըլում որ ժամիցը դուս գնան ու եվ ինքը կարգը կատարում ա պրծնում, խալխին էտ կանչում ա, որ գան տանեն թաղեն։ Էս գեղըմը մի հետ մի խելօք քեօխւայ ա բնամ գալի. սա ասըմ ա՝ «այ էլիդ, էս մեր տէրտէրը խիլ ա ըսէնց անըմ, հալբաթ զաղ չի գիդի, բէրէք ես սուտ կ՚մեռնեմ ասըմա, ըժում տենամ պա ինչ ա ասըմ։ Ըթէնց էլ անում են. քեօխւէն սուտ մեռնում ա. պատանում են, գնում են նաշափէտերի վրայ ու տանում եգեզեցի։ Տէրտէրին իմացում են տալի, գալիս ա. ըժու թէ՝ «սիրելի ժողովուրդ, ասըմա, դէ դուս գնացէք, որ կարգը կատարեմ»։ Ժողովուրդը դուս ա գնում։

Էս տէրտէրս կրակով լիքը բուռւաբը վեր ա ունում մէջը խունկ գցում ու էդ քու քեօխւի տանների տակին

կանգնում։ Բուռւաբ ա անում ու հետն էլ ձէնով ասըմ —«տիրոջը գլուխ ալէլուեա», ըժու գնում ա գլխաւորները կանգնում, բուռւաբ ա անում ու ասըմ՝ «գլխիցը ոտը ալէլուեա», անց ա կենում մի կողքն ու ասըմ՝ «էս կողքից էն կողքը ալէլուեա»։ Մին էլ ալարը գալիս ա որ էն կողքն անց կենայ, բուռւաբը հլէ ընէնց թարս դրա իրան գցելով ասըմա՝ «էն կողքիցը էս կողքը ալէլուեա»։

Բուռւաբի թարս գցելուց, մէջիցը պէչեր են թափւում քեօխւի ըրեսին. խեղճը տակիցը բղաւում ա թէ՝ «ա տէրտէր, էդ ինչ ես անըմ»։ Հէնց էդ ասելն ա ըլում ըլի. զարհուրած տէրտէրս գաւազանը մնի տակից վեր ա ունում ու ուռւը թէ կ՚տաս պատանած քեօխւի գլխին ու գլխին,—մին, հինգ, տասը, մինչկլու սպանում ա խեղճ ողորմելուն...։ Ըժու դուս ա գալի խալխին չըրացած կանչում թէ՝ «եկէք տարէք էս գեօրագեօրին թաղեցէք ու էլ՝ էս թաւուր մեռել չ՚բերէք, ասըմա, խորթ լամիշ էլաւ էնա ինձ ուտէր՝ գօռով եմ սպանել»։

Ցերեկւայ եղնարածների հետ ամեն օր ես էլ էի գնում հանդերը լծկանն արածացնելու կամ ջուր տալու։ Քէֆս գալիս էր բնութեան տեսարաններից. սիրտս փառւորւում էր, երբ նայում էի անեզը ծովի նման ծփող կանաչ ալիքաւոր արտերին, ալւան ալւան ծաղիկներով զարդարուն կանաչ դաշտերին, անտառապատ բլուրներին ու հպարտ սարերի սիրուն հեռանկարներին։ Բլուրների ստորոտում, արտերի վերին սահմանում, էնտեղ՝ որտեղ գիւղի արօտամարգերն են, անթիւ ու անհամար վայրի վարդենու թփեր էին տարածւել ու բացւած սպիտակ վարդի գունեկան հոտով օդը լցրել։ Սպիտակ վարդի թանձր բոյրին էր խառնւել և մանուշակի քնքուշ բուրմունքը։

Գութան վարելիս երբ մի օր մեծ անձրև եկաւ, ստիպւած էինք գործը դադարեցնելու։ Հօտաղներս մեր կապերտների տակ պատսպարւեցինք սելաւից պաշտպանւե-

լու համար: Անձրևն էնպես էր տեղում, որ կարծես երկընքից կժերով ջուր էր թափւում շռռալէն: Հետն էլ միալար որոտում էր ու փայլատակում.—օձի պես կեռ ու մեռ ծովեանն էր խաղում: Մէկ էլ կապերաի տակից նկատեցի, որ մաճկալը իր կապերտով ծածկում էր խոփն ու ձևիչը: Էդ բանը ինձ շատ հետաքրքրեց, ուստի անձրևը դադարելուց յետոյ՝ էդ մասին հարց ուեցի մաճկալին: Նա ժպտալով պատասխանեց, որ կայծակը պօղատի հետ ներհակ է, եթէ խոփն ու ձևիչը չ'ծածկեն՝ կայծակը պօղատի վրայ գալով՝ կտայ համ մեզ կսպանի համ լծկանը:

Մի օր, ուրուն մի կաքաւի հալածում էր, կաքաւը երկիւղից ցած գալով՝ պատսպարւեց դուքանի թևի տակ: Մաճկալը իսկոյն բռնեց կաքաւին և կերակուր ուտելու լագանի տակը պահեց: Իրիկունը դուքանը արձակելուց յետոյ, հօտաղներս հերթով խաղացնում էինք սիրուն կաքաւին: Գատրաստւում էինք որ մորթենք ու մաճկալի համար խորովենք: Սակայն մաճկալը յանկարծ ձեռքերս նիցս առաւ, փոքր ինչ մտածեց ու բաց թողեց կուչ եկած կաքաւին: Շատ չ'անցած, մօտակայ բլուրի ժայռոտ կատարից լսում էինք ագռաւած կաքաւի երգի դուրեկան ձէնը:

Անձրևի մասին խօսելով, միտքս եկաւ երբ մի անգամ գնացել էինք մեր մեղւանոցը մեղը կտրելու, մի պայծառ արևոտ օր էր: Մին էլ յանկարծ մեզ թւաց թէ երկինքը սև ամպերով պատւեց, որովհետև արևի լոյսը ծածկւեց մեր աչքերից: Սակայն էդ մեղուների խմբերն էին, որ արագ թռած գալիս էին և իրար հրելով ու առաջակարուկ անելով մտնում փեթակները: Օրը դարձեալ պայծառ էր ու արևոտ, իսկ բաց մաւի երկինքը բոլորովին ազատ մի կտոր ամպից անգամ: Մեր հարիւրաւոր փեթակները իրար վրայ դարսած էին «Աղեկի» կոչւող ձորում՝ մի մեծ էրի մէջ: Մենք մի քանի հոգի, դուրան

էինք: Մեղուները փեթակները մտան թէ չէ՝ իմ մեծ հօրեղբայրը առաջարկեց շուտով էրը մտնել, որովհետև «հիմի որտեղից որ է, մեծ սելաւ է գալու» ասաց նա: Իսկապէս նոր էինք էրի մէջ տեղաւորւել, որ մի ակնթարթում սև սև ամպեր պատեցին երկինքն ու շշմեցնող ամպրոպները գոռալով, ճարճատելով՝ կարկտախառը հեղեղ տեղացին. հեղեղ եմ ասում, որ կարծես երկնքից գետեր էին ջրվիժում:

Գուքանները վերջանալուն պէս, սկսւեց խոտի հունձը: Մեծերը գերանդիներով հնձում էին խոտը, իսկ փոքրերս եղանով ժողովում էինք բլուրները անում ու փոցխում: Կանաչ խոտի ու թարմ ծաղիկների անուշ բուրմունքը աւելի սուր կերպով էր տարածւում օդի մէջ: Հնձած խոտը չորանալուց յետոյ, դրա բուրմունքը մի տեսակ խտանում է և թէյի բուրմունքի պէս դուրեկան դառնում: Յետոյ խոտը կրեցինք դուռը: Մեծերը սէլերը բարձում, թոկերով կապում էին ու ճախարակներով պնդացնում, իսկ փոքրերս սէլերի գլխին նստած, հօրօվել երգելով լծկանն էինք քշում: Նոյն պատկերն էր և արտերը հնձելու կամ խուրձը կրելու ժամանակ:

Յիշում եմ էն օրհնած հին ժամանակներում գիւղացիք մի գեղեցիկ սովորութիւն ունէին—: Կիրակի օրերով, երբ իրենց գործերին դադար էին տալի, գիւղի կարիճ երիտասարդները խմբեր էին կազմում և գնում իրենց համագիւղացի քեռասիր-քիւսուբի, անձամբ որբերի ու այրիների արտերն էին հնձում ձրի: Եթէ գիւղից մօտիկ էր լինում, փոքրերս թամաշա էինք գնում: Մեր կարիճները թռչկոտալով, երգելով, հանաքներ անելով, ծափ ու ծիծաղով էին հնձում արտը:

Կալի ժամանակ ցերեկները ես կամն էի քշում, իսկ իրիկնապահին կալից արձակած լծկանը հանդն էի տանում արածացնելու՝ հարևան երեխաների հետ: Մենք լծկանը արածացնում էինք մինչև ուշ գիշեր, յետոյ մե-

ծերը կալի գործը վերջացնելով՝ գալիս էին գիշերը պահելու, իսկ ցոքրերս վերադառնում էինք տուն։ Մի մին գիղի մօտերքից կարտոփ էինք հանում և անտառների մօտ կրակ անելով՝ խորովում էինք։ Երաբ աշխարքումը խորոված կարտոփից էլ համով կերակուր կը լինի։ Մենք ոչ լուցկի ունէինք, ոչ էլ կայծքար, կայծհան ու աբէթ, ուստի մի պինդ փէտի կտոր անցկացնելով մի համեմատաբար փխրուն ու չոր փէտի մէջ, էնքան էինք արագ արագ պտրտում, որ փէտերի իրար քսելուց կրակ էր առաջանում։

Յաճախ շնաճանճերի բուն էինք գտնում ու նրանց շինած մեղրը անուշ անում, բայց երբեմն չարաչար կծում էին մեզ գազազած շնաճանճերը։ Պատահում էր, որ ծմակների խորքերում իսկական մեղուների ածած մեղր էր գտնում։ Մեղուների փախած ձագը անտառում փչակ ծառի մէջ պատսպարելով, հէնց էնտեղ էլ մեղր է պատրաստում, որին «ծառատ» են ասում։

Փոքրիկ եղնարածներս երբեմն մեր լծկանը գողունի Արդւինցիների ղօրուղն*) էինք տանում արածացնելու։ Մի անգամ սակայն անյաջողութեան հանդիպեցինք։ Պահապան Մուղին՝ մահակը ձեռքին անսպասելի կերպով առաջներս բուսաւ։ «Օհօ, բաններս բուրդ ա, տղերք»—ասացինք իրար։ Իրիկնապահ էր։ Բախտի բերմունքով մեր եղները էնտեղից բաւական հեռու էին ու առանձին և մինչդեռ Մուղին մահակով սպառնալիքներ էր տալիս եզնարածներին, ես աննկատելի ետ-ետ գնացի և մեր եզները փախցրի դէպի մօտակայ անտառի խորքը։ Իսկ Մուղին հնացող լծկանը քշեց տարաւ տուն անելու**)։ Լսում էի ինչպէս եղնարածները մռնում էին ինձ Մուղնի առաջ, բայց նա չէր հաւատում.—ասում էր որ ես իրենց պէս աներես չեմ, որ ուրիշի ղօրուղը արածացնեմ։

*) ղօրուղ—խոթհարք

**) տուն անել—բանտարկել

Ուղիղն ասած, շատ ամաչեցի ու էն օրից դէնը էլ երբէք մեր լծկանը ղօրուղը չէի տանում, երէս չէր բռնում։

Մեր եղները անտառը մտան թէ չէ, մի ահաւոր ծառի հաստ բնի մօտ ինչ որ կենդանի ընկաւ աչքովս. մի բոպէ ինձ թւաց թէ մեր եղներից են ետ մնացել։ Սակայն որքան եղաւ հիացմունքս, որ մի չաղլիկ ու սիրուն էգ եղջերու՝ առաջովս արագ սլացաւ։ Փախչելիս եղջերուի սիրուն աչքերը նկատեցի ջրակալած ու թախծոտ։ «Ա՜խ եթէ հրացան ունենայի»—մտքովս անցաւ։ Սրտով ցանկանում էի գիշերները հանդերում մնալ, բացօթեայ։ Մի երկու գիշեր էլ ետ ընկայ եղնարածների մօտ գիշերը լուսացնելու նպատակով, բայց գիշերւայ կէսին, մերս մեր ազգականներից մի տղամարդու ուղեկցութեամբ լալով ու կանչելով՝ գալիս գտնում էր ու ետ տուն տանում։

Գիւղի այրի կնոջ դրութիւնը շատ է երերուն և արկածներով լի. մանաւանդ եթէ այրին գեղեցկուհու կամ լաւ տանտիկնոջ համբաւ ունի։ Պապիս մահից յետոյ, էստեղից էնտեղից պարբերաբար մօրս ձեռքը խնդրողներ էին յայտնւում, բայց միշտ էլ մերժում էին ստանում։ Մերս թէև տակաւին ջահիլ կին էր, բայց վճռել էր երկրորդ ամուսին չուզել և միշտ էլ անդրդեւելի էր։

Մի անգամ էլ մեր հարևան գիւղացի մի կալւածատէր այրի մարդ գլուխ էր բարձրացրել և ոչ մի խոչընդոտի առաջ չընկճւելով, ուզում էր ինչ գնով էլ լինի, մօրս կին առնի։ Էլ սրան նրան արբեցնել, պատիւներ ու կաշառներ տալ. մի խօսքով ահագին ծախքեր ու ջանքեր չէր խնայում, բայց և էնպէս միշտ էլ մօրից կատական մերժում էր ստանում։

Բայց դուք մի բոպէ իմ դրութիւնը մտէք։ Բոլոր ժամանակ ես ելեքտրացած էի։ Ամեն մի միջնորդ, կին կամ տղամարդ, մօրս հետ առանձին խօսելիս՝ սիրտս կըտոր կտոր էր լինում։ Ամբողջ էդ ժամանակամիջոցում

մօրս փեշը բաց չէի թողնում, վախենում էի որ ձեռքից կ՚ելնեն տանեն։ Մի անգամ մինչև իսկ լուր էին տարածել, թէ իբրև գիշերով ծածուկ պսակւել են մէրս ու էն աղնւականը։ Քիչ էր մնում, որ ես էլ հաւատ ընծայէի էդ անհեթեթ լուրին։ Եւ մաքուռմս միջոցներ էի ձեռակերպում, որ իմ հօրացուին սպանեմ։ Գիւղի երեխաները ծաղրանքով էին վերաբերւում դէպի ինձ,—հեգնօրէն «պուճուր կնեազ» էին կանչում։ Միշտ ճգնում էի խուսափել երեխաների խմբերից ու ծածուկ տեղերը դառն արտասուքներ էի թափում ...։

Փառք Աստուծոյ, որ վերջ ի վերջոյ իրականութիւն չդարձաւ էդ մղձաւանջը։

Գլ. 5

Լևոնը սարում. լեռների կատարներն է բարձրանում։ Փոքրիկ խանումը։ Լևոնը գրպանով մէրգ է բերում խանումի համար. Լևոնի սրտառուքթիւնը. Նրանց մոխրագոյն էշը և Թորլան անունով շունը։ Տաւարած ընկերակիցները ուզում են Լևոնին ծնծել։ Մի անգամ գիշերով սարը գնալիս վախում է Լևոնը։ Լուսատու-նիկներն ու ծղրիտները։ Ջախջախում է օձի գլուխը։ Գառն ու ոչխարը։ Սրինգը։ Սարւորների լաւ սովորութիւնները։

Ամբողջ ամառւայ ընթացքում, երբ մեր տաւար ոչխարը սարուայն էր լինում, ամեն շաբաթ օր, կէս օրերից յետոյ գնում էի մեր ձորի այգուց կողոշներով ծիրան, դամբիլ, տանձ ու խնձոր քաղում բերում և հետն էլ հաց, աղիւր, աղ և այլն բարձում էի մեր մոխրագոյն էշին ու տանում սարը։ Կիրակի օրն էլ ճնում էի սարում ու երկուշաբթի առաւօտը վերադառնում էի գիւղը. իսկ սարից թան, մածուն, կարագ ու ազդակ էի բերում տուն։

Եթէ եղանակը անձրևային էր լինում, մի քանի օր ճնում էի սարում։ Էդ միջոցներին երբ արանք արանք անձրևը կտրւում էր ու արևի փայլուն դէմքը երևում, սիրում էի տաւարի ետևից գնալ։ Բարձրանում էի աւելի բարձր սարերի կատարներն ու երբ մտիկ էի տալի աշխարհիս չորս կողմը պանօրամայի պէս բացւող մէկը միւսից սիրուն ու համայիլ տեսարաններին և միրաժի նման երևացող հեռանկարներին՝ սիրտս փառաւորւում էր։

Գեղեցիկ են մեր հպարտ լեռները։ «Ղարաուլթափա» կոչւող լերան գագաթից, որի բարձրութիւնը 8600 ոտնաչափ է, երբ շուրջդ դիտում ես՝ անվերջ լեռների բարձր ու ցածր շարանները կարծես շուրջպար լինին բռնած։ Կանաչ մախմուրէ ու ապրեշումէ խոտերի, ալւան ալւան նարգիսների, սարի սմբուլի, կովի աչքի, ծտի աչքի, իւղածաղկի, բոժոժի, զանգակի, մեխակի, խնկի ծաղկի, հովտաշուշանի, յասմիկի, դանթափու, հօշօշի, լաւծաղկի և ուրիշ տեսակ տեսակ սիրուն ու բուրալից ծաղիկների հետ խաղում են արևի լուսաճաճանչ ճառագայթները ու սարի շնկշնկան հովերը։ Կարկաչահոս առւակների փոքրիկ ջրվէժների վրայ ծիածանի մանրանկար կամարն է կազմւում։ Հապա սառն ու անուշ աղբիւրները՞։ «Գեօլուրթ» լեռան ճակատի վրայ գտնւող մի մեծ ժայռի տակից հոչակաւոր «Գուրուրան» աղբիւրն է բղխում։ Համից ու ձէնից չես կշտանում, կարծես երգելիս լինի՝ գուր-գուր։

Մեծ էր մեր բինէն սարում, շատ ալաչուխ ու դաւաններ կային։ Մեր ալաչուխի կողքին էր փոքրիկ խանումենց դագէն։ Ամանումին ես շատ էի սիրում. սարում միշտ նրա հետ էի խաղում. ամեն անգամ գիւղից նրա համար գրպանով մէրգ էի բերում։ Երբեմն բեռներով մէրգ էին բերում սարերը և պանրի, իւղի հետ փոխում։ Բայց ովքեր որ այգի ունէին՝ չէին առնում։ Բայց մեր սարերում քեղ ու ղանձիլ չկար, էն էլ Փամբակի սարե-

բից էին ծախ բերում մեր սարերը։ Որովհետև քեղը*) ես շատ էի սիրում, տատս միշտ առնում էր։

Լաւն էր խանութը, սաթի պէս թուխ ու թել թել մազեր ունէր. սև սև խոհուն աչքեր ու լխտիկ հասակ։ Երբ հանդիպելիս՝ նրա սիրուն աչքերը ժպտում էին ու վառվռուն դառնում։ Միշտ ճարպիկ խաղեր էի խաղում խանութի հետ ու քաղցր երգեր էի երգում նրա համար։ Գիւղից սարը գնալիս, դիտմամբ ճամփին մլօլ-փսոս էի անում և ուշ դիշերներին էի տեղ հասնում, որպէս զի խանութին զարմացնէի։ Եւ նա շատ էր զարմանում իմ արտառութեան վրայ, թէ ես դիշերներով ինչ եմ անցնում էն անվերվերի ծմակներով։ Թէև իսկապէս բաւական սրտոտ էի ես, բայց և էնպէս անտառում աւետակների խոխոջը, թռչունների խշխշոցը խաշամներից**) ծառերի տերևների սօսափիւնը, երբեմն էլ երկչոտ, նապաստակների թփերի տակից յանկարծակի խրտնելն ու փախչելը, մարմինս սառսռեցնում էին ու գլխիս մազերը բիզ բիզ անում։

Բայց իմ անվեհերութիւնը անսասան պահողը մեր ազգիլ ու հզօր Թորլան շունն էր, որը թէ սարը գնալ-գալիս, թէ տաւարն ու եղներն արածացնելիս, միշտ հետևում էր ինձ։ Դա մի էնպիսի քաջ շուն էր, որ ինչպէս ասում են, ձիաւորին ձիուց ցած էր իջեցնում։ Մի անգամ սարում տաւարն արածացնելիս, չեմ յիշում ինչու՞ իմ ընկերակից պատանի տաւարածների հետ կռւեցինք, ուստի նրանցից բաժանուեցի ու մեր տաւարը սկսեցի մենակ արածացնել։ Թորլանը մօտս էր. ընկերներս էլ շներ ունէին, բայց Թորլանը միաժամանակ բոլորին յաղթում էր։ Մեր տաւարը լերան բաց լանջում արածում էր, իսկ ես բաւական ներքև, անտառի վերին եզրում մի ծառի տակ նստած ճաշում էի։ Իսկ իմ հաւատարիմ ու

*) քեղ — բոյս ինչ։

**) խաշամ — ծառի տակ թափած չոր տերև։

խելացի Թորլանը արածող անասուններից չէր հեռանում, աչալուրջ պահապանի պէս հսկում էր։ Էդպէս էր նրա բնաւորութիւնը։ Մինչդեռ ուրիշների շները տիրոջ ուտելու ժամանակ առաջից չէին հեռանում ու միայար պոչները բուլի-բուլի անելով քծնում էին մի պատառ հաց կամ ոսկորի կտոր ստանալու համար։

Ճաշս դեռ չէի վերջացրել, որ տաւարած հակառակորդներս թուով չորս պատանի յանկարծ վրէս յարձակուեցին։ Կենտ կենտ նրանց չորսին էլ յաղթում էի ես կռիս բռնելիս։ Եւ թէպէտ չորսը մի անգամից յարձակուեցին, բայց ինքս ինձ չկորցրի,—տեղիցս ցոպ կանգնելն ու «Թորլան հա» կանչելս մէկ եղաւ։ Նրանք արդէն բռնել էիս ինձ ու դէս ու դէն էին քաշքշում։ Մի ակնթարթում Թորլանը նի հասաւ ու սրանց կենտ-կենտ բզռնելն ու ձեռքով նետած քարերի պէս շպրտելը մէկ ա-րաւ։ Ես քո չորս տաւարածն էլ իրար վրայ կիտուեցին։ Եւ իսկոյն վրայ ընկաւ, որ սրանց թիքա թիքա անի, բայց նրանց լաց ու կոծը գութս շարժեցին ու ես հազիւ կարողացայ հեռացնել զազազած Թորլանին։

Մի շաբաթ իրիկուս էլ՝ բարձած էշը առաջս արած գիւղից դէպի սարը ճամփա ընկնելով՝ նկատեցի, որ Թորլանը չկար, շատ ձէն տուի, շատ կանչեցի, բայց շունը չեկաւ. պատճառը չկարողացայ իմանալ։ Յուրջինում սիմինտներ կային, հանեցի և ծիլերից ինձ համար բեխեր սարքեցի որ մեծ երևամ։ Բայց և էնպէս Թորլանի բացակայութիւնը շատ էր զգալի, ու սիրտս արդէն ահ էր ընկել։

Մերձակայ լեռների հսկայական տաւերները իրենց երկայն շղարշը տարածել էին ստորոտի հովիտների վրայ մինչև գիւղափը։ Էդ տաւերները արագ արագ խտանում էին ու մգնում։ Գիւղից մինչև անտառը երեք վերստաչափ տարածութիւն կար, դրանից քիչ էլ աւել անտառի տարածութիւնը կը լինէր. նորից էդ բոլորի չափ բաց

ըից էին ծաք բերում մեր սարերը։ Որովհետև քեղը*) ես շատ էի սիրում, տատս միշտ առնում էր։

Լաւն էր խանութը, սաթի պէս թուխ ու թել թել մազեր ունէր. սև սև խոհուն աչքեր ու լխտիկ հասակ։ Իրար հանդիպելիս՝ նրա սիրուն աչքերը ժպտում էին ու վառվռուն դառնում։ Միշտ ճարպիկ խաղեր էի խաղում խանութի հետ ու քաղցր երգեր էի երգում նրա համար։ Գիւղից սարը գնալիս, պիտամբ ճամփին մլօլ-փսոս էի անում և ուշ գիշերներին էի տեղ հասնում, որպէս զի Յանութին զարմացնէի։ Եւ նա շատ էր զարմանում իմ արտաուքեան վրայ, թէ ես գիշերներով ճնց եմ անցնում էն անվերվերի ծմակներով։ Թէև իսկապէս բաւական սրտոտ էի ես, բայց և էնպէս անտառում առւաւկնեբի խոխոջը, թռչունների խշխշոցը խաշամներից**) ծառերի տերևների սօսափիւնը, երբեմն էլ երկչոտ, նապաստակների թփերի տակից յանկարծակի խրտնելն ու փախչելը, մարմինս սառսռեցնում էին ու գլխիս մազերը բիզ բիզ անում։

Բայց իմ անվեհերութիւնը անսասան պահողը մեր ազգիլ ու հզօր Թօրլան շունն էր, որը թէ սարը գնալգալիս, թէ տաւարն ու եղներն արածացնելիս, միշտ հետևում էր ինձ։ Դա մի էնպիսի քաջ շուն էր, որ ինչպէս ասում են, ձիաւորին ձիուց ցած էր իջեցնում։ Մի անգամ սարում տաւարն արածացնելիս, չեմ յիշում ինչու՞ իմ ընկերակից պատանի տաւարածների հետ կռւեցինք, ուսաի նրանցից բաժանուեցի ու մեր տաւարը սկսեցի մենակ արածացնել։ Թօրլանը մօտս էր. ընկերներս էլ շներ ունէին, բայց Թօրլանը միաժամանակ բոլորին յաղթում էր։ Մեր տաւարը լերան բաց լանջում արածում էր, իսկ ես բաւական ներքև, անտառի վերին եղրում մի ծառի տակ նստած ճաշում էի։ Իսկ իմ հաւատարիմ ու

*) քեղ — բոյս ինչ։

**) խաշամ — ծառի տակ թափւած չոր տերև։

խելացի Թօրլանը արածող անասուններից չէր հեռանում, աչալուրջ պահապանի պէս հսկում էր։ Էդպէս էր նրա բնաւորութիւնը։ Մինչդեռ ուրիշների շները տիրոջ ուտելու ժամանակ առաջից չէին հեռանում ու միայար պոչները բուլի-բուլի անելով քծնում էին մի պատառ հաց կամ ոսկորի կտոր ստանալու համար։

Ճաշս դեռ չէի վերջացրել, որ տաւարած հակառակորդներս թուով չորս պատանի յանկարծ վրէս յարձակեցին։ Կենտ կենտ նրանց չորսին էլ յաղթում էի ես կռիւ բռնելիս։ Եւ թէպէտ չորսը մի անգամից յարձակեցին, բայց ինքս ինձ չկորցրի,—տեղիցս ցոպ կանգնելն ու «Թօրլան հա» կանչելս մէկ եղաւ։ Նրանք արդէն բռնել էին ինձ ու դէս ու դէն էին քաշքշում։ Մի ակնթարթում Թօրլանը նի հասաւ ու սրանց կենտ-կենտ բռնելն ու ձեռքով նետած քարերի պէս շպրտելը մէկ արաւ։ Ես քո չորս տաւարածն էլ իրար վրայ կիտեցին։ Եւ իսկոյն վրայ ընկաւ, որ սրանց թիքա թիքա անի, բայց նրանց լաց ու կոծը գութս շարժեցին ու ես հազիւ կարողացայ հետացնել գազազած Թօրլանին։

Մի շաբաթ իրիկուս էլ՝ բարձած էշը առաջս արած գիւղից դէպի սարը ճամփա ընկնելով՝ նկատեցի, որ Թօրլանը չկար, շատ ձէն տւի, շատ կանչեցի, բայց շունը չեկաւ. պատճառը չկարողացայ իմանալ։ Յուրջինում սիմինտներ կային, հանեցի և ծիլերից ինձ համար բեխեր սարքեցի որ մեծ երևամ։ Բայց և էնպէս Թօրլանի բացակայութիւնը շատ էր զգալի, ու սիրտս արդէն ահ էր ընկել։

Մերձակայ լեռների հակայական տաւերները իրենց երկայն շղարշը տարածել էին ստորոտի հովիտների վրայ մինչև գիւղափը։ Էդ տաւերները արագ արագ խտանում էին ու մգւում։ Գիւղից մինչև անտառը երեք վերստաչափ տարածութիւն կար, դրանից քիչ էլ աւել անտառի տարածութիւնը կը լինէր. նորից էդ բոլորի չափ բաց

լեռները, հովտաձորեր և մէջ ընդ մէջ դարձեալ փոքրիկ անտառներ կային մինչև մեր ուրթը։ Արդէն մութ գիշեր էր, որ հասայ անտառի խորքը։ Մի փոսից անցնելով, երբ «քարկապ» կոչւող ժայռոտ կրճի վերելքով բարձրանում էի, ճամփի մօտ մի սև զանգւած երևաց աչքիս։ Թուաց թէ գայլ էր։ Գլխիս մազերը բիզ բիզ կանգնեցին, գլխարկս երկինք համբարձւեց ու ջանս փշաքաղւեց... Երեսս խաչակնքելով վրայ վրայ «Անուն հօրն„էի մրմնջում։ Վախից հեծայ էշին և գայլից հնարաւոր չափով հեռու անցնելու համար ուղիղ ճամփից շեղւեցի. հետն էլ ղչրղու եմ տալի—բարձր ձէնով Թոբլանին եմ կանչում։ Դժբախտաբար երևոյթը կպել էր գետնին, տեղից իսկի չէր շարժւում։ Մեր էշի անպիտան քուռակը մի վատ բնաւորութիւն ունէր. հէնց մօրը հեծնում էի թէ չէ, տեղն ու տեղը գիրդ կանգնում էր։ Մի գլուխ էշից իջնում էի, քուռակը առաջ քշում ու նորից հեծնում։ Վերջապէս քրտնամխած մի կերպ մօտեցայ հրէշին և... ուշի ուշով դիտելով, տեսայ որ էդ գայլի աեղ դրած մի ծառի փչակ*) էր։

Հազիւ մի աղատ շունչ քաշեցի։

Կարծես աչքերս կոյր էին, ականջներս էլ խուլ ու հիմի բացւեցին։ Ես նոր նկատեցի ճամփի ափերում ոստոստող, լոյս արձակող լուսատանիկների խմբերը և նոր լսեցի հազարաւոր ծղրիտների, ճռեկների ու ճպուռների ախորժալի ճրճրոցը։—Էդ ծղրիտների ու ճռեկների գիշերային համերգը էնպիսի խոր ու ազդու տպաւորութիւն է թողել իմ հոգու խորքում, որ ես ուղղակի կարօտում եմ նրանց դուրեկան ձէնին։ Գիւղում եղածս միջոցներին երբ լսում եմ նրանց ձէնը, հոգիս փառաւորւում է և մանկութիւնս եմ վերյիշում իր բոլոր քաղցրութիւններով։ Եւ ամեուայ էն մեծ պասից երկար գիշերներն եմ յիշում, երբ տնային ճռեկը բուխարու պատի միջից իր

*) Ծառի փչակ—ծառի խանձւած բուն։

դուրեկան ձէնով անընդհատ ճրճրեցնում էր։ Իսկ իմ այրի մէրը ձէթով վառած երկաթէ ճրագը երկաթէ մաշխալայից*) կախ տւած, առջևը նստած, թախծալից աչքերով և մտորուն դէմքով տանեցիների շորերն էր կարում ու կարկատնում...։

Օդն էլ իր առանձնայատուկ դուրեկան ու կազդուրիչ բուրմունքն ունի՝ գլուղի հանդերում—արտերի մէջ ուրիշ, անտառում ուրիշ, բաց լեռների կատարներին ուրիշ հոտով։ Որքան մօտենում էի ուրթին, էնքան աւելի թանկ գին էր ստանում Թոբլանն իմ աչքում։ Բինի բոլոր շները յարձակւեցին վրէս։ Ուրիշ անգամներ Թոբլանը էդ շներին մէկ մէկ դէն էր շպրտում և ես իմ էշի ետևից ազատ գնում էի։ Իսկ հիմի էշի պոչից բռնած, մահակս պտրտելով հազիւ հազ էի պաշտպանում շների կծելուց։ Վերջապէս, մի կողմից էլ էշի շնորհիւ, որը ինձ դիրքի տեղ էր ծառայում, շներից ազատւելով մեր ալաչուխը հասայ։ Էքսը Յանուարին աշխուժով պատմում էի, որ իբրև գայլը յարձակւել էր վրէս, բայց ես մահակով գայլի գլուխը ճղել էի փախցրել ու ազատել ինձ էլ, էշին էլ։

Իսկապէս էնպիսի դէպքեր են պատահել, որ ես հասակաւոր տղամարդից սրտոտ եմ գտնւել։ Օրինակ. մի անգամ իմ մի ամուսնացած հօրեղբայրն ու ես ձորի մեր այգում խոտ էինք հաւաքում.—հօրեղբայրս երբ մի անգամ էլ եղանով խոտ բարձրացրեց, եղանի մատների արանքից մի ահագին սև պլպլան օձ կախւեց։ Հօրեղբայրս սուր ճիչ արձակելով՝ եղանը ձեռքից բաց թողնելն ու փախչելը մէկ արեց։ Ահից լեզուն կապւել էր. համ արագ արագ փախչում էր, համ էլ անխօս ու առանց ետ նայելու ձեռքով ինձ էր կանչում, որ հետևիմ իրեն։ Բայց ես, ընդհակառակը, առանց ժամանակ կորցնելու յարձակւեցի օձի վրայ և ձեռքիս եղանով գլուխը ջախ-

*) մաշխալա—մեծ մոմակալ

ջախելով սպանեցի։ Սրա նման դէպքեր ուրիշ անգամներ էլ շատ են պատահել ինձ։

Սարում երբ Յանումի հետ գնում էինք մօտիկ անտառից փէտ, կպչանի համար կէչըքու կլեպ և գոմշի ձագի համար ծառի տերև բերելու, կամ՝ սարերի կատարներն էինք բարձրանում զանթափի, ուրցը, փիփերթ ու թրթնջուկ քաղելու, ծաղիկներ փնջելու—կամ արխալա տեղերից սունկ հաւաքելու,—միշտ երևակայում էի, որ էն տեղերում էլ օձ կամ գայլ պատահէր Յանումի վրայ յարձակւելիս ու ես մահակով գլուխները ջախջախելով սպանէի, Յանումին ազատէի։ Գնալ գալիս էլ օդի մէջից պախրի փրփուր*) էինք բռնում. թէ ինչի էր պէտք ինքներս չգիտէինք։

Երբեմն իրիկնապահերին, երբ երկնքի մի մասում բամբակի քուլաների նման սպիտակ ամպեր էին գոյանում, մի՛շտ իմ ու Յանումի ուշքը գրաւում էին կարօտով։ Ամպի էգ բլուրը զանազան ձևերի պատւանդաններ, դարաւանդներ ու տերրասները էր ներկայացնում իրենից։ Եւ երբ մանաւանդ լեռների հետևում արևը թագնելուց յետոյ իր վերջին ճառագայթները գցում էր էն սպիտակ ամպի քուլաների վրայ, մի հրաշալի տեսք էր ստանում ամպաբլուրը, որի հակառակ կողմի վրայ սուերն էր լինում սփռւած։ Էդ մոմենտներին Յանումն ու ես ցանկանում էինք ծիտ դառնալ թռչել էնտեղ ու նորից մարդ դառնալով կողք կողքի բազմել ոսկեզօծ սպիտակ փափուկ քուլաների պատւանդանի վրայ ու մէջքներս դէմ տալով ամպե պատին՝ անվերջ զրուցել։ Յաճախ սպիտակ ամպերի երևալու օրերին յաջորդում էր անձրևային եղանակ։

Ոչխարները կթելիս ես ու Յանումը ուրիշ երեխաների հետ ուրախ ուրախ «ըերաձն*) էինք քշում։ Մեզ համար հարսանիք էր դառնում, երբ ոչխարի հօտը կթելուց յետոյ, հովիւները բարձր ձէնով «գեալ հա» (արի) էին կանչում։ Իսկոյն սարի ետևից գառները մայելով, ուլերը մկրկալով դուրս էին գալի և թռչկոտելով, իրար առաջակարուկ անելով, դմակներն ու պոչերը ծուլ անելով վազում հօտին էին խառնւում։ Մաքին ու գառը ձէն ձէնի տւած՝ բա, բռւ անելով՝ որը ծնողին, որը զաւակին էր շտապ շտապ որոնում։ Նրանց տեղ ես էլ էի ուրախանում երբ գառն ու մէրը գտնում էին իրար։ Գառն ու ուլը սկսում էին մօր ծիծը ագահաբար ծծել, իսկ մէրը իր կարօտն առնելու համար, զաւակի մէջքն էր լիզում։ Յետոյ նորից գառն ու մէրը չոկում էինք իրարից և իրիկնապահին հովիւները քշում էին դէպի սարերի բարձունքները արածացնելու։

Գիշերները երբ հովիւները սարալանջերում թիկնած սրինգ էին նւագում ոչխարի թախծոտ ու անուշ եղանակը,—«չոբան բայաթի»ն, սրտներս աղեխորով էր լինում ու լացներս գալիս էր։ Սրնգի անուշ ձէնը սարալանջերից ծոր տալով իջնում էր ու ձորերի խորքում հանգչում։

Էն ժամանակ սարերում մի քանի լաւ սովորութիւններ կային։ Դրանցից մէկն էն էր, որ ոչխարի կաթը փոխ էին տալի իրար. էնպէս որ 10—20 ոչխարի տէրն էլ իր հերթին էնքան կաթն էր վերցնում, որ հարիւր ոչխար ունեցողի պէս կարողանում էր պանիր մէրել։ Միւսը՝ որ հարևան կամ նոյնիսկ պատահական անճարների, չքաւորների, այրիների ու որբերի համար մի մի նշանակւած օր ամբողջ հօտի կաթը պանիր էին շինում ու ձրի իրենց տալիս։ Երրորդն էլ «տամազլըղ» ժողովելու սովորութիւնն էր։ Զքաւոր գիւղացու մէկը ցանկանում էր ոչխարի հօտի տէր դառնալ և ահա մի գեղեցիկ օր

*) պախրի փրփուր—ասում են եղջերուն որոճալիս՝ բերանից փրփուր է դուրս գալի և օդում տարածւելով քամու հոսանքի հետ թռչում։

*) ըերա—կթւող ոչխարների շարքը։

տկճորով օղին վերցնելով, իր մի հեղինակաւոր դրացու ուղեկցութեամբ դիմում էր բինանները։ Ոչխարակթի միջոցին մօտենում էին բերաններին ու սովորական ողջոյնից յետոյ դրացին յայտնում էր իրենց նպատակը և ազդու խօսքերով յորդորում էր տամազլուղի նէէրներ տալ։ Մարդիկ օղին խմելով ուրախութեամբ մի մի էգ գառն էին խոստանում, իսկ գեալլաղարները*) մինչև անգամ էգ ոչխարներ։ Եւ էսպիսով երեկւայ աղքատ գիւղացին յանկարծ հարիւր ոչխարի տէր էր դառնում։

Գլ. 6

Մշուշապատ եղանակը սարում։Խնոցի հարելը։ Լևոնն ու Խանումը հղապատառ են ուտում։ Աշնանամտին սարից չէում են սաորոտները։ Ղօրուղ փողդի։ Լևոնը՝ իրենց ու Խանումենց տաւարը տանում է ղօրուղը։ Գիշերը հանդում ՃՈւում է մենակ, բարձրանում է լեռների կատարները։ Դրքիր է կարդում։ Օլաջաղների ժամանցը, որտեղ հովիւները հեքեաթներ ու առակներ են պատմում։ Աշնանացանը. այգեքաղը. այգում աղջիկները երգում են։ Ծլատ պառաւ կնոջ աւանդութիւնը։ Լևոնին տալիս են Ջալալօղլու դպրոցը։

Մի մշուշապատ ու չանկ առաւօտ էր։

Նախընթաց գիշերը անձրև էր եկել։ Մշուշը էնպէս էր պատել սարերը, որ թւում էր թէ ոտքերիդ տակ հող չը կայ, ամեն ինչ մշուշի մէջ էր պարփակւած։ Սրտամաշ կոթաշաղը**) էնպէս էր հանդարտ մաղում, որ կարծես ամբողջ երկինքն էր արտասուում։ Սարւորներից շատերը խնոցի էին գցում՝ իւղ հարում երգելով՝

*) գեալլաղար—շատ ոչխար ունեցող։

**) կոթաշաղ—աննկատելի բարակ մաղող անձրև։ Շուլաւէրցիք «կաթնաշաղ» են ասում, որովհետև կաթնագոյն է։

Հարի՛ հարի՛ ա խնոցի,
Մէջդ բարի՛ ա խնոցի.
Մեր խնոցին եղի՛ ա.
Ձեր խնոցին թեղի՛ ա։
Փեսէն կ՛գայ եղ չ՛կայ,
Բաչալ գլխին դեղ չ՛կայ։

Տատս նոր հանած կարաքը հացի վրայ քսելով եղապատառ էր շինում ինձ տալի. ես էլ տանում էի Խանումի հետ կիսում ու անուշ անուշ ուտում էինք։ Մանաւանդ եթէ հացն էլ նոր էր թխած լինում հէնց բինում շինած ակուռքի*) մէջ կամ երկաթէ սաջի**) վրայ։

—Լևոն, տենուս թագաւորն ամեն օր ինչ ա ուտում։

—Եղապատառ ա ուտում ինչ ա ուտում, վճռաբար պատասխանում էի ես Խանումի հարցին,—կարծես թագաւորի պալատից նոր էի վերադարձած։

Մառախուղը գոյնը փոխեց—պայծառացաւ։ Ամպշող երկինքը չքնաղ երեխի պէս ժպտում էր։ Արևը ծագել էր ու մշուշը հետզհետէ տեղի էր տալի արևի ճառագայթներին։ Մշուշը աւելի ևս նօսրանալով և ուղտի քայլւածքով բարձրանալով՝ ելաւ աւելի բարձր սարերի գագաթները. իսկ ետևից դեռ մխում էր գետինը, կարծես հողի տակից ծուխ էր դուրս գալիս։

Կէս օրին երբ ոչխարի հօտը բերա էր քշւում, հովիւները համ կթում էին, համ մի առանձին հրճւանքով պատմում թէ՝ իբրև նախընթաց գիշերը մի ակնակիր գիշեր էր ու անձրևի ժամանակ հրոգմունքի ձէնից հօտը խրտնելով ցրւել էր, թէ ինչպէս իբրև թէ գողերը իրենց վրայ քարեր էին գցել ևն. ևն։ Ասւած է թէ՝ «եթէ գայլը ոչխարի հօտը մտաւ՝ վայ մէկատիրոջը»։ Էդ պատմութիւնից իմ մէջ կասկած ծագեց, ուստի մեր ոչխարները անմիջապէս ականեցի***) ու տեսայ, որ մեր մի

*) ակուռք—ձեռնէձեռը քարից շինած փոքրիկ թոնիր։

**) սաջ—երկաթէ թաւա, որը կրակով տաքացնում ու վրէն հաց են թխում։

***) ականել—ստուգել։

լաւ չաղ ոչխարը չկար... Իսկոյն վնասատուբարձրացրի, բայց նրանք խօսքը կտուր էին գցում ու միաժամանակ շշնջում էին թէ «էս լակոտը ինչ իմացաւ»։ Բանից պարզեց որ իրենք էին լափել։

Գիշերը ատաղերը երկնքում մի առանձին գեղեցկութեամբ էին փայլում, կարծես թէ անձրևը լուացել էր դրանց։ Անհամեմատ սիրուն էր մանաւանդ «քարւանղըռան»ը*)։

Աշնանամուին բարձր սարերից չէեցինք-եկանք ներքև-Թալէնին, որտեղ կատարւելու էր ոչխարի «Թիթրաբանդ»ը**)։ Էնտեղի անտառներում անչափ վայրի տանձ, խնձոր ու մոշ կար։ Յանուամն ու ես մոշուտը մասերի էինք բաժանել ու ամեն մէկս մեզ համար այգի դարձրել։ Ամեն օր գնում էինք էդ պատուղներից համ ուտում համ քաղում բերում։ Բայց օրի մեծ մասը գոյնզգոյն ու էն հանդերի ծաղիկների նման սիրուն թիթեռնիկների եսուից էինք վազվզում, բռնում-ես արձակում։ կամ կարմիր ու սև սև բծերով չալափկ բզեզն էինք որսում, որ «զատիկ» է կոչւում — դնում էինք մատներուս ծէրին ու հարցնում, «զատիկ, զատիկ, մեր կովը սարումը պէտք ա ծնի, թէ դաշտումը»։ Զատիկը թռչում էր ու նայելով թէ ինչ ուղղութեամբ է թռչում, ըստ այնմ էլ որոշում էինք մեր կովի ծնելու տեղը։

Արդէն աշուն էր. ծառերի դեղնած տերևները պոկւելով օդի մէջ ծանր պատյաններ էին անում ու վայր թափւում։

*) քարւանղռան — Արուսեակի նման մոլորակ է (չնիկը) որ արևելքից է ծագում հէնց իրիկւանից։ Աւանդութիւնը ասում է, որ ոմն հարուստ վաճառականի ուղտերի կարաւան, էդ ատաղը սխալմամբ լուսաստղի տեղ դնելով, դիշերւան բացօթեայ իջևանից ճամփայ է ընկնում. սակայն նորից մութը վրայ է հասնում և կարաւանը ճամփէն կորցնելով քարափից վայր է թափւում ջարդւում։

**) Թիթրաբանդ — ոչխարի հօտի բաժանումը տէրերի միջև։

Մի օր էլ լուր եկաւ, որ գոմահանդերի խոտհարքները ղօրուղփողդի*) են արել։ Ամենքն իրենց տաւարը քշեցին խոտհարքները։ Սիրտս ճաքում էր, որովհետև թէ մեզանից, թէ Յանուամնից տնից հասակաւոր տղամարդ չկար բինում։ Ամենքը քոչեցին տարան իրենց ալաչուխն ու գագէն, իսկ մեր ալաչուխն ու խանումենց գագէն մընացին մեն-մինակ որբերի պէս տխուր-մղկուր իրար կողքի կուչ եկած։ Էլ համբերել չկարողացայ. մեր ու խանումենց տաւարը քշեցի դէպի խոտհարքները։ Մեր ալաչուխում ինձ մենակ տատս, խանումենց գագում էլ՝ ինքն ու իր մերը։

Տաւարը քշեցի առանց ուղիղ ճամփի, հէնց էնպէս անտառներով, սարալանջերի գառիվերներով, մինչև սարի գլուխն ու էնտեղից գառիվարով ներքև դէպի խոտհարքների գեղատեսիլ հովիտը։ Լեռնային աղբիւրներից գոյացած գուլալ վտակը կարկաչելով հոսում էր հովտի միջով։ Կէս օրին տեղ հասայ և մինչև իրիկուն ապրանքը մուշ մուշ արածում էր։ Հետո էլ համ ան, գիրա և ուրցն էի քաղում ձմեռը կերակուրն ու կազամբի թթուն համեմելու համար։ Նաև դանթափու ծաղիկներ էի հաւաքում չորացնելու համար, որպէս զի մրսած ժամանակ, հիւանդը թէյի տեղ խմելով՝ քրանէր ու առողջանար։

Երբ մթնեց ու մերոնցից ոչ ոք չեկաւ, փոքր ինչ տխրեցի, որովհետև ամենքն էլ քաշւեցին իրենց ալաչուխները, իսկ գաշտում ես ինձ՝ մէն մենակ։ Մի ծառի տակ մէջքիս վրայ պառկած, երկինքն էի դիտում. ճրքճրքան աստղերի արանքից երևում էր «Դարմանագողի ճամփէն» — սպիտակաւուն ու կամարաձև։ Անզգոյշ գողի շաղ ւաած յարդի էտ ճամփին, փափագում էի հանդիպել Յանուամին հէնց նոյն պահին... Տեղս ու տեղս կուչ գալով, մի կերպ լուսացրի։ Քունքանը մօտս էր. ոչ մի բանից չէի վախենում։

*) ղօրուղփողդի — խոտհարքների հակադրութիւնից ազատ յայտարարելը։

Լուսաբացին քունս տարել էր։ Մէկ էլ յանկարծ արթնացրեց ինձ Յանուսմի եղբայրը. ուրախանաս՝ ինչ ուրախացայ։ Նա ասաց, որ հօրեղբայրս գիւղից եկել էր և էսօր կը քոչեն մեզ մօտ։ Յետոյ, տաւարն արածացնելիս՝ տաւարը հովտում թողնելով, ինքս բարձրանում էի լեռների կատարներն ու հրճանքով դիտում էի չորս կողմը։ Մեր սարերից երևում են Արագածը իր վայրենի վեհութեամբ և Մասիսի ամպամած սպիտակ գագաթը երկնքի մէջ մեխուած։ Մեր պատմական Զատինդաղն ու Լալւարը, որոնք գիւղից էնքան էլ բարձր չեն երևում, լեռների բարձունքից աւելի գրաւիչ են ու հսկայ։

Հիասքանչ տեսարան է ներկայացնում բարձր լեռների գագաթներից երկնքին ու երկրին նայելը լուսնեակ գիշերներով։ Չորս կողմից Լօռու մեծ ու փոքր լեռների անվերջ շարանները կարծես կրկնակի ու քառակի շուրջ պար լինեն բռնած, իսկ լուսնի շողերը ոնց որ կաթի մեղմ անձրև լինեն մաղելիս երկնքից։ Նայելով ժամանակին, վառվռուն Արուսեակը լուսնեակից մօտիկ կամ հեռու, ուղեկցում է նրան ինչպէս թիկնապահ։ Միլիոնաւոր մեծ ու փոքր աստղերը ինչպէս սիրահարի աչքեր, անկուշտ նայում են երկրին—քնութեան էն սքանչելիքներին։ Զքնաղ տեսարան է ներկայացնում և էն, երբ անտառով գնալիս, ծառերի տերևակօլոլ սաղարթների արանքներից աչքիդ են ընկնում լուսնի բեկբեկուն շողերը։ Մէկ տեսնում ես լուսնի կտորը կրծքիդ ընկաւ, մէկ դէմքիդ, մէկ էլ էստեղից թռաւ մէջքիդ ընկաւ։

Լեռների բարձունքից նայելիս, դուր էր գալի ինձ նաև իր կարմիր կղմինդրէ յարկերով Ջալալօղլի աւանը, պօլիցիական պրիստաւի կամ, ինչպէս գիւղացիք էին ասում, «Մովրով» ի պաշտօնավայրը։ Որովհետև ես կարգացող էի, Յանուսմի եղբօրը թւում էր թէ ժամանակով ես մեծ մարդ եմ դառնալու և նրա երևակայութեան մէջ պրիստաւն էր ամենամեծ մարդը։

—Լաւն չկան, ասաց նա մի անգամ, որ դու մովրով դառնաս ու ինձանից մինը քու կուշտը գանգատ գայ, ինչ կանես։

—Փեշիդ կամաց դամշով *) կտամ ու թաքուն աչքով կանեմ դու փախի,—պատասխանեցի ես։ Իսկ ինքս երևակայում էի որ պրիստաւից էլ մեծ մարդ էի դառնալու և գիւղացիներին անհամար բարիքներ անելու։ Եւ տաւարն արածացնելու միջոցին անգամ, ժամագիրքն ու учебникъ-ը ձեռքիցս չէի դնում։ ամեն մի յարմար միջոցի նստում—կարդում էի։

Իրիկունը ժողովւում էինք օլաջաղներից մէկը, որտեղ որ մեծ խարոյկ էր լինում վառած։ Գոմաճանդ էր մեր ուրթի տեղը, Զիգրաշէն անունով։ Ինչպէս որ սարաւորների մեծ մասը օլաջաղներում էին ապրում։ Գիշերները բաւական ցուրտ էր։ Տաւարի նախիրը արդէն աղալներն**) էին անում, իսկ ոչխարի հօտերը գոմերի դռանն էին արխաջ տալի։ Եւ հէնց խարոյկը մի տեղ վառւում էր թէ չէ, բոլոր հովիւներն ու տաւարածները հաւաքւելով, խարոյկի չորս բոլորը ծալապատիկ շարւում էին։ Նստում էին ու սկսում հէքեաթներ պատմել։ «Էլել ա չի ըլել մի թքաւոր. էս թքաւորը մենծ ըմարաթնու, դովլաթի ու անհատնելի խազնի տէր ա ըլել. ունեցել ա իրեք տղա ու մի ըրամադան աղչիկ, ընթաւուր մի սիրուն ա ըլել որ լուսնեակին ու արեքնակին ասելիս ա ըլել, դուք դուս մինք գալ ես եմ դուս եկել եւն։» Ծւար արած ճուտերի պէս բոլորս հաւաքւում էինք հէքեաթասողի շուրջը և շունչներս մեզ քաշած՝ հետաքրքրութեամբ լսում էինք։

Որքան դուրեկան էին ինձ համար էդ հէքեաթներն էլ ու պատմողներն էլ։ Երբ մի հէքեաթը վերջանում էր ու պատմողը փակում էր էս խոսքերով՝ «բարին ըսաի,

*) Դամշի—մտրակ։

**) Աղալ—ցանկապատ բացօթեայ։

չարին լեզգու ըշխարումը, ասած է իրեք խնձոր վեր ընկաւ, մինն ասողին, մինը լսողին, մինն էլ ալամ աշխարին»—,փոշմանում էի ես, կարծես իմ սեփական կեանքի թեղն էր կտրւում։ Ամբողջապէս լսողութիւն դարձած, ես ոչ թէ լսում, այլ ծծում էի էդ հրաշապատում հէքեաթների.—էդ «հազարան բլբուլ»ը, «զմռուխտ ղուշ»ը, «Ղասաբ օղլին», «Արաբիւզանգին», «Դունեա գեօզալ»ը, «Ադի գեօզալ»ը ևն. ևն։ Հէքեաթների հերոսների հետ իմ հոգին սլանում էր աշխարհի ծէրն ու անհունի սահմանները, կամ անդնդի խորքերն ու տարտարոսները, զգում էի նրանց հոգիներն ու ապրում էի նրանց ապրումներով։

Հէքեաթ պատմողներից մէկը, ի միջի այլոց, մի փոքրիկ աւանդութիւն պատմեց սոխակի ու վարդի կեանքից։

Երբեմն էլ սրինգ էին նւագում քաղցր չորան բայաթի ու հետն էլ խաղ կանչում։ Կամ պար էին գալի ու զոփի տալի։

Աշունն էր։

Սարերից արդէն գիւղն էինք իջել։ Ցանքի ժամանակն էր. ցելերն էինք ցանում, փոցխում ու տափում։ Տափանի վրայ նստելն էլ ինձ մեծ հաճոյք էր պատճառում։ Սերմնացանը իմ աւագ հօրեղբայրն էր։ Նա մեզարի տոները վզովը կապած, փէշը ցորեն էր լցնում, երեսը խաչակնքում։ «Օրհնեալ ես Տէր, ասում էր, դու Թափես-ազատես իմ արտը ամեն չուռա հարամուց, անանումից (կարկտից), մկնից, մորեխից, չորէյնից ու եկից»։ Եւ սկսում էր բուռնէ բուռը շաղ տալ. վերջում՝ մի քանի բուռն էլ աւելի էր շպրտում ու աւելացնում՝ «Աստուծ չան, ես էլ երկնքի թռչունների փայը»։Զար-

չի գիւղացիք դէպքից օգուտ քաղելու ձևերը գիտեն.—ձիանների և էշերի բեռներով խաղող ու դեղձ էին բերում ցելերը և ցորենի հետ փոխում։

Էդ աշունք ինձ համար մի մեծ դժբախտութիւն պատահեց,—մեծ հօրեղբօրս կարպադրութեամբ մեր հարևան Դիդիկօն հրացանով սպանեց մեր Թոթլանին պատաւութեան պատճառով։ Ծեղճ անասունը մինչև սատակելը էնպէս ապիոդորմ կոխկռնձում էր, որ իմ լացն էլ եկաւ։ Ցետոյ շուտով երկու թուլաններ ձեռք բերի և Թոթլանի տեղ նրանց սիրեցի, մանաւանդ որ նրանք էլ Թոթլանի պէս մուգ դեղին գոյն ունէին։

Վրայ հասաւ այգեքաղը, խաղողը հասել էր արդէն։ Մի գեղեցիկ օր հրաւիրեցինք մեր ազգականների ու խնամիների հարսներին-աղջիկներին և գնացինք մեր այգու խաղողը քաղելու։ Մեզ հետ էր և խանումը. ես ու նա միշտ միասին էինք խաղողը փոքրիկ կողովների մէջ քաղում ու ածում մեծ կթոցը, որը հօրեղբայրներս կրում-ածում էին հնձանը գինի շինելու համար։ Մի կողմից էլ Թոխլին էին մորթում, մաշկում, ղաւրմա կամ չորան-բուզաղթմա ու խորոված շինում։

Երկու գիշեր մնացինք այգում։ Երբ մեծերը քնում էին, ջահիլներս նրանցից հեռու մի մեծ խարոյկ էինք վառում, էնպէս որ բոցը երկնքին էր հասնում՝ աստղերը խանձում ու պարով, երգով մի լաւ քէֆ սարքում։Հարսն ու աղջիկը երգում էին ժողովրդական երգեր. դրանցից մի-երկուսը մէջ եմ բերում էստեղ։

Ուռի ծառին բար չի ՚լիլ,
Առանց քէօնգիլ եար չի ՚լիլ.
Սիրտը որ կայ շուշայ ա,
Կոտրած սրտին ճար չի ՚լիլ.

Շիմշիրի գդալ շիրւանի
Թելթելդ քամին տանի,

Իմ եարը սարում ձորում
Իմ քունը ոնց կտանի։

Լիսնեակ գիշեր ինչ ցերեկ,
Շիրանայ քարւան բերէք,
Աղլուխս կտամ կաշառք
Իմ եարէն խաբար բերէք։

Հարս ու աղջկայ անուշ ձէնի հետ ձէն էր պահում ծեր Դևբէթը։ Գետը հրաշալի էր մանաւանդ լուսնեակ գիշերներին, երբ նրա վճիտ հայելու մէջ երևալով անդրադառնում էր լուսնակով ու անհամար աստղերով զարդարւած բաց մաւի երկինքը։ Մեր ձորի ահագին գորշագոյն ժայռերն ու քարաթմբերը ի մի ձուլւած՝ երկրի անդընդից բարձրանում են դէպի վեր ու նօթերը կիտած, անթիւ էրերի ու խոռոչների աչքերով դարեր շարունակ անթարթ նայում են հանդիպակաց Զաթինատաղին։

Էտ քարաժայռի տակ՝ մեր այգիները տանող կածանի մօտ՝ մի դարաւանդի վրայ կլոր ու երկայնաւուն քարերի մի կիտուկ կայ ու էտ քարերը շատ նման են հրնանաձև փեթակների։ Աւանդութիւնը ասում է, որ իբրև էդտեղ մի պառաւ ժլատ կնոջ մեղւանոցն է եղել։ Մի օր Աստւած աղքատի կերպարանքով եկել է և մի կտոր մեղրն ուզել, բայց պառաւից մերժուաւ է ստացել ու... անիծելով տեղն ու տեղը քար է դարձրել պառաւին իր փեթակներով հանդերձ։

Սեպտեմբեր ամիսը վերջանալուն մօտ էր։ Որտեղ որ դպրոց կար, արդէն կամաց կամաց ուսումը սկսւում էր։ Ես էլ սրտով դպրոց գնալ էի ուզում, որի համար մէրս հօրեղբայրներիս միշտ ստիպում էր։ Էդ միջոցներին ասում էին, որ Զալալօղլում լաւ դպրոց կար ու վերջ ի վերջոյ վճռեցին ինձ տալ էնտեղի դպրոցը։

Գլ. 7.

Լևոնին տանում են Զալալօղլու դպրոցը։ Աշակերտները ծաղրում են նրան։ Ռոզգին և միւս պատիժները։ Բաղնիքը։ Լևոնը դերասանուհու դերում։ Առաջին անգամ ուղտ է տեսնում։ Տիգրան վարժապետի և հոգաբարձուի կռիւը. դպրոցը փակւում է։ Մի քանի աշակերտներ մտադրւում են փախչել Թիֆլիս։ Միքայէլ աղէն։ Դպրոցը վերաբացւում է։ Լևոնը քաղցած. մօրը նամակ է գրում։ Նրան տանում են իրենց գիւղը։

Վերջապէս սեպտեմբերի վերջերին, աշնանային մի դրախտ առաւօտ, ես ու իմ կրտսեր հօրեղբայրը, որը Թիֆլիսում պահող չունենալու պատճառով գիմնազիայի հինգերորդ դասարանից դուրս էր պրծել գիւղն եկել,— ոտքով ճամփայ ընկանք դէպի Զալալօղլի։ Թէև մենք հեծնելու ձիաներ ունէինք, բայց աւազ հօրեղբայրս չըտւեց որ նստէինք։ Կրտսեր հօրեղբայրս էդ մասին շատ էր յուզւած։ Մեր գիւղից մինչև Զալալօղլի մօտաւորապէս երեսուն վերստ է. իրիկնապահին տեղ հասանք։

Ճամփի կէսից աւելի էինք գնացել, որ «Աչքուհանք» կոչւող ձորակում մի սառն աղբիւրի մօտ ճաշեցինք։ Մէրս մի եփած հաւ ու մի քանի ձու էր պաշար դրել մեզ հետ։—Միայն մի ձու և մի կտոր հաւի միս հազիւ կերայ ես. մէրս իմ արխալուղի գրպանները էնպէս էր տոզացրել չրով, չուչխելով, խնձորով, սերկևիլով ու կակալով, որ մի գլուխ չարազ անելով, ախորժակս փակւել էր։

Զալալօղլում գնացինք ուղղակի մեծ հօրեղբօրս աներանց տունը, որտեղ որ ապրելու էի ես։ Դժբախտաբար նրանց աղջիկը—հօրեղբօրս կինը դեռ մի տարուց առաջ վախճանւել էր։ Հետևեալ առաւօտը հօրեղբայրս ինձ տարաւ Տիգրան վարժապետի բնակարանը և նրան յանձնեց,

վճարելով երեք ռուբլի, երեք ամսւայ ուսման վարձը։ Տ. վարժապետը աչա միրուքով մի բարի ու թէև դեղնած, բայց համակրելի դէմքով մարդ էր. խելքը հօ, աչքերից կաթում էր։ Ասում էին աւարտած էր Ծալիպեան դպրոցը։ Էն օրն և եթ հօրեղբայրս ուղևորւեց մեր գիւղը, իսկ մեր խնամիներից մէկը առաջնորդեց ինձ դպրոցը։

Ուսուցիչները չկային, իսկ աշակերտների մեծ մասը արդէն եկել էին, որոնք էլ մի կողմից գալիս էին։ Սկզբում, ինչպէս քար գցելուց լճի մէջ կոկոցող գորտերը իսկոյն լռում են, էնպէս էլ նրանք նոր դէմք տեսնելով՝ սոսները փորները գցեցին, ապա նորից սկսեցին իրենց հարայ-հրոցը։ Ես փշերի վրայ նստածի պէս կանգնած էի խնամու կողքին. աշակերտները մօտենալով հետաքրքիր դիտում էին ինձ, երբեմն էլ գաղտուկ բզկտում էին։ Փոքրահասակ աշակերտների հետ կային և հասակաւոր, մազով միրուքով երիտասարդներ։ Ես՝ ամբողջապէս հետաքրքրութիւն կտրած, դիտում էի աշակերտներին ու դպրոցի սարք ու կարգին։ Էդ դպրոցի փէտէ շինութիւնը աւելի բարեկարգ էր քան թէ մեր գիւղի քարաշէն դպրոցինը։ Դա՝ մեծ-մեծ լուսամտեր ու մեծ դռներ ունէր. տախտակած յատակով, սպիտակներկ առաստաղով և պատերին գունաւոր պաստառներ կպցրած։ Լուսամտերի առջև շարած էին աշակերտական կանոնաւոր նստարանները և նստարանների առաջ յարմարեցրած տախտակների վրայ դասագրքերն ու տետրակներն էին դարսած։ Մեր գիւղում էդպէս չէր, այլ պարզ նստարաններ էին դրած. էնպէս որ թէ դասագրքերն էինք մեր ծնկների վրայ պահում և թէ գրութիւնները ծնկներիս վրայ կատարում։ Բացի էդ՝ Ջալալօղլու դպրոցում նստարանների հանդէպ դրած էին մի սեղան ու աթոռներ ուսուցիչների համար, իսկ դիմացի պատի առաջ մեծ գրատախտակն էր դրած կաւիճը վրէն։ Իսկոյն Սանահնու դպրոցը յիշեցի և սիրտս թունդ եկաւ։

Ուսուցիչների գալուց յետոյ, խնամին ինձ թողեց գնաց։ Տիգրան վարժապետը ճանաչում էր ի հարկէ, կանչեց մօտը և մի ռուսերէն գիրք դրեց ձեռքս։ Սկսեցի վարժ-վարժ կարդալ, բայց առոգանութիւնս ի հարկէ մաքուր ռուսական չէր. —хорошо բառը, հէնց էնպէս էլ արտասանեցի՝ «խօրօշօ», աշակերտները փռռկացին։ Էն չարաճճիները անունս «խօրօշօ» կպցրին ու միշտ աւելս անում էին։ Երկրորդ դասին եկաւ հայերէնի ուսուցիչը, Մկրտիչ անունով մի նիհար, դեղնած ու կղաւարած մարդ էր, սառուցի պատուկի նման քթով և միալար հազում էր։ Սա էլ հայերէն կարդալ տւեց։ Հայերէնը աւելի լաւ կարդացի. բայց դարձեալ էն անպիտան չարաճճիները վրէս ծիծաղեցին։ Օրինակ՝ ես ասում էի «գնաց», նրանք դրա համար ծաղրում էին ինձ, մինչդեռ իրենք ասում էին «քնաց»։ Սակայն շուտ ընտելացանք իրար ու համարեա բոլոր մեծ ու փոքր աշակերտները սիրեցին ինձ։

Ռուսերէն «родное слово», իսկ հայերէն «Ընթերցարան» անուններով դասագրքեր տւին ձեռքս։ Հայերէն դասագրքիս մէջ ինչ որ աղէսի, նապաստակի և էդտեսակ կարճ պատմութիւններ կային, որոնք աւելի էին գրաւում ինձ, քան թէ սաղմոսն ու ժամագիրքը։ Էնպէս լաւ էի սովորում ես, որ մի ամսից յետոյ կողքիս նրբատող ինձանից մեծ աշակերտի դասերն էի սովորեցնում։ Միայն էն անպիտան թւաբանութիւնը քիչ լաւ չէր գլուխս մանում։ Բանն էն է, որ առաջարկւած խնդիրները մտքով հեշտ լուծում էի, իսկ գործողութեամբ չէի կարողանում։ Զգիտեմ ուսուցիչը չէր լաւ բացատրում, թէ ես չէի ըմբռնում։ Մէկ էլ շատ անշնորհք էի նկարչութեան մէջ,—թէև շատ էի սիրում— միմիայն կարտուզ նկարել էի սովորել և եկեղեցիներ, էն էլ ծուռ մուռ կաթողիկէներով ու անհամաչափ գմբէթներով։ Ջի նկարըն էի սիրում, բայց չէր աղում։

Առհասարակ շրջակայ գիւղերից եկած աշակերտներս

համեստ էինք ու խոնարհ, իսկ ինչ վերաբերում է տեղացիներին, մանաւանդ հարուստների զաւակներին,— Աստուած հեռու տանի.—էնքան գժութիւններ էին անում ու մինչև անգամ դասաւանդութիւնը խանգարում, որ ուսուցիչներին ուղղակի զզուեցնում էին։ Տիգրան վարժապետից էլի կասկարուում*) էին, բայց խեղճ Մկրտիչ վարժապետի հոգին հանում էին։

Էն ժամանակ ռոզգին առաջնակարգ դեր էր խաղում։ Միքայել աղենց պարտիզի ստւար ուռենիների ճիւղերը մեր դպրոցի աշակերտների ռոզգու համար էին հատնում։ Մեղադրւած աշակերտներին ուսուցչական սեղանի վրայ երեսնիվայր մէկ մէկ պառկեցնում էր Տ. վարժապետն ու դեռ մեծ աշակերտներից մէկին հրամայում էր ռոզգի անել, բայց երբ նկատում էր որ աշակերտը իր ընկերին սրտանց չի խփում,—բարկացած խլում էր ռոզգին և ինքն էր հարւածում։ Տէր իմ Աստւած, էդ մոմենտին որքան էր փոխւում էն բարի մարդու դէմքը։ Նրա գանգուր մազերը գզգզւելով աչքերի վրայ էին թափւում, դէմքը բոլորովին սպրդնում էր և հայհոյքը էնպէս էր դաժանանում, որ մարդ զարզանդում էր։

Աշակերտները պատմում էին, որ նախընթաց տարիներում, նոյն էդ դպրոցի ոմն քահանայ ուսուցիչը ռոզգով մի աշակերտի սպանել էր։ Ռոզգի տալու միջոցներին ես ուղղակի ցամաքում էի։ Բարեբախտաբար ոչ մի անգամ ռոզգի ուտելու չարժանացայ ես։ Ռոզգին պատիժների առաջին տեսակն էր, քանոնը-վերջին, իսկ միջին տեսակը բանտն էր։ Եկեղեցու և դպրոցի միացեալ բակում մի կրատուն կար. մեղաւոր աշակերտներին էդտեղ էր բանտարկում Տ. վարժապետը անհաց ու անջուր։

Դասաւանդութեան կարգն էնպէս էր, որ առաւօտից՝ դաս էինք առնում մինչև կէս օրը,—կէս օրին մի ժամով գնում էինք ճաշի և նորից դպրոց գալով շարունակում էինք մինչև իրիկուն։

Ժամերի մասին ես ճիշտ գաղափար չունէի։ Զալալօղլում զօրք լինելու պատճառով, ռուսաց եկեղեցու զանգը լուր օրերին միշտ զարկում էին ժամերի թիւով։ Բայց կիրակի օրերին, տօնի առթիւ, ամբողջ օրը զանգահարութիւն լինելով, ժամերի հաշիւը բաց էր ձգում։ Իսկ ես բանի էութիւնը չգիտենալով, երբ առաջին կիրակի օրը զանգահարութիւնն սկսւեց, մտքումս մինչև քառասունը համարեցի,—զանգահարութիւնը տակաւին շարունակւում էր։ «Պա՛, սհաթի քառասունն անց ա կացել», բացականչեցի ես. խնամիքը խիստ իշտահով ծիծաղեցին ու բացատրեցին իմ սխալը։

Մի շաբաթ իրիկուն, մեր խնամոնց կանայքն ու երեխաները բաղնիք գնալիս՝ ինձ էլ հետները տարան։ Մեր գիւղում բաղնիք չկար։ Ներս մտայ թէ չէ, գոլորշու գարշահոտը գլուխս ընկաւ, ուզում էի ետ փախչել, բայց խնամոնց հարսները մասխարա արին ինձ։ Սափլաճ՝ ներս մտայ և բարձրանալով երրորդ ամենավերջին դարակի գլուխը, սկսեցի կէչքու աւելով իրանս ծեծել, կիզող շոգին ներս ընդունելու համար, ինչպէս ուրիշներն էին անում։ Բաղնիքը ռուսական էր, տաքացնովի։ Սակայն ուշաթափւելով վերևից գլորւել էի ներքև ու էն պահին ուշքի եկայ, երբ արդէն դուրսը ձիւնի մէջ մերկ պառկեցրած, ինձ ձիւնով շփում էին...։ Յետոյ շորերս հագցնելով տուն տարան. էքսի օրը սաղ-սալամաթ ետ վերադարձայ։

Շատ լաւ տպաւորութիւն թողեց վրէս էն հանգամանքը, որ Տ. վարժապետի նախաձեռնութեամբ տեղացի մի խումբ երիտասարդներ ներկայացում կազմակերպեցին։ Իսկոյն մեր գիւղի «զարագեօզ» ի ներկայացումը յիշեցի։ Երկու պիեսաներ էին դրւած, որոնց անունները չեմ յիշում։ Երկու կանացի դերերը կային դրանց մէջ։

*) կասկարւել—քաշւել։

Որովհետև էն ժամանակ գաւառներում քնքուշ սեռի մասնակցութիւնը անկարելի էր բեմի վրայ, ուստի Իսրայէլեան Արշակին, իբրև սիրուն տղայի, կնոջ դեր յանձնեցին, ինձ էլ ինչ որ աննշան դեր տւին: Կրկնութիւնները կատարում էինք իրիկուները, դպրոցի շէնքում:

Մկրտիչ վարժապետը էնպիսի դեր ունէր, որ մի կախարդական գլխարկ ծածկելով և տեղն ու տեղը անշարժ մնալով, մօտը գտնուղների աչքերից իբրև թէ աներևութանում էր: Էդ միջոցին մի ուրիշ դերակատար— Սաղաթելանց Արտեմը ինչ որ պատմութիւն անելով տարածութեան մէջ աքացի էր խփում դէպի աներևութացնող գլխարկ կրողի կողմը և... իբրև թէ անգիտակցաբար աքացին դիպչում էր նրան: Բայց նա դիտմամբ էնպէս պինդ էր խփում, որ Մ. վարժապետը տեղն ու տեղը կծկւում էր ու գալարւում: Ու խեղճ Արտեմը փորը բռնում էր ծիծաղից, իսկ Մ. վարժապետը խիստ բախտաւոր էր զգում իրեն, որ նրան չեն նկատում:

Վերջապէս եկաւ ներկայացման օրը: Ջալալօղլում մի գունդ հեռւակ զօրք կար, որի սպաները իրենց ժողովարանի դահլիճում բեմ ունէին սարքած: Ահա էդ բեմի վրայ էլ տալու էինք մեր ներկայացումը: Յուշարարը՝ Տ. վարժապետն էր: Էս թատերախաղը ինձ համար մի չտեսնւած, արտասովոր երևոյթ էր. ուստի շատ էի ապշած ու հիացած: Շատ էի զարմանում ես նաև վառւող լամպանների վրայ, որոնց առաջին անգամն էի տեսնում: Էն ժամանակ գիւղում միմիայն ձէթով վառւող ճրագները գոյութիւն ունէին,—թէև մեր տանը իբրև բացառութիւն, հիւրեր եկած միջոցներին ճրագուի մոմ էինք վառում:—Իսկ Ջալալօղլում, մեր խնամոնց տանը նաւթով վառւող թիթեղի ճրագներ էի տեսել միայն: Եւ ահա ներկայացման ժամանակ դահլիճի ինձ համար արտասովոր պարագաներին ապշած դիտելիս՝ չէի նկատել, որ բեմի վարագոյրն իջնում է, որն բնկաւ ուղիղ ծոծրակիս ու տեսնողներին մի կուշտ ծիծաղացրեց: Ներկայացումը կատարեցինք և հասարակութիւնից վարձատրեցինք բուռն ծափահարութեամբ: Ապա վերջում մի քանի ազգային երգեր երգելով, ուրախ տրամադրութեան տակ ցրւեցինք:

Ես ուղտ էլ չէի տեսել. մի օր դասի ժամանակ զգացի որ իմ քամակի լուսամուտի վրայ ինչ որ ստւեր ընկաւ. մեքենաբար ետ նայեցի ու սարսափեցի...: Կողքիս նստած ընկիկ աշակերտները ծիծաղեցին վրէս: Բեռնած ուղտ էր, որը լուսամուտի առջևի ճամփով գնացող ուղտերի շարքից թեքւելով պատուհանին էր նայում:

Սահակեան ազգանունով երեք հասակաւոր եղբայրներ էին սովորում մեր դպրոցում, ամենամեծը մինչև անգամ մօրուք ունէր: Ամեն ասածու առաւօտ, ժամը տասնին, հէնց դասի ժամանակ, ծառան գալիս էր և նրանց թէյի հրաւիրում: Ուսուցիչները սոիպուած էին լինում դասն ընդհատել մինչ նրանց վերադարձը: Մի օր էլ Տ. վարժապետը համբերութիւնից դուրս գալով բարկացած՝ ասաց «գնացէք ու էլ ետ չ'գաք. մինչև ձրը պէտք ես դասարանը ձեր խաթեր առանց դաս տալու թողնեմ:» Բայց նրանց հէրը աւանի ազդեցիկներից էր, հոգաբարձուներին գանգատւել էր: Նոյն օրը հոգաբարձութեան անդամ Մ. Իսրայէլեանը չռած աչքերով ներս խուժեց դպրոց ու գոռաց Տ. վարժապետի վրայ:

—Տօ դու ո՞վ ես, ընչարած ես, որ առանց մեր կամքի աշակերտները ես վռնդում. դու որ կաս, էսօր իմ նօքարն ես, ինչպէս որ պրիկազաո անեմ, էնպէս էլ պէտք է անես:

Սակայն Տ. վարժապետը վախկոտներից չէր: Խեղճ Մկրտիչ վարժապետը ուրուի յարձակման ենթարկուած հաւի ճուտի նման ճնացել էր մի անկիւնում սառած կուչ եկած: Բայց Տ. վարժապետը հոգաբարձուի առաջ չընկճւեց, այլ խրոխտաբար ասաց, որ ինքը էդպէս ծառայել

չի կարող էլ՝ և դպրոցի դռները կը փակի—կը հեռանայ։ Ու դառնալով դէպի մեզ ասաց՝—«գնացէք որդիք, գնացէք ձեր տները, ես էլ ձեր վարժապետը չեմ», ու սիրտը փուլ եկաւ, սկսեց հոնգուր հոնգուր լաց լինել։ Մենք, էլ ամբողջ դասարանով սուգ ու շիւան բարձրացրինք ու դուրս եկանք դպրոցից։

Ութ հոգուց բաղկացած մի խումբ աշակերտներ, որոնց թւում և ես, մի քանի անգամ խորհրդակցութիւն ունենալով որոշեցինք մեր մեծերից ծածուկ փախչել Թիֆլիս մարդ դառնալու։ Սակայն մի քանի օրից յետոյ դպրոցը վերաբացւեց և մենք սկսեցինք դպրոց յաճախել։ Ասում էին գործին միջամտել էր Միքայէլ աղէն։ Դպրոցը վերաբացւելուց յետոյ էլ, էն ութ աշակերտներս մեր մտադրութիւնը չէինք մոռանում, միշտ դասամիջոցներին խորհրդակցութիւններ էինք ունենում և զանազան ծրագիրներ էինք կազմում թէ ինչպէս մի օր իրագործենք մեր իղէալը։

Միքայէլ աղի անունը վերևում մի քանի անգամ յիշելով, ուզումեմ առայժմ համառօտակի ծանօթացնել նրա անձնաւորութեան հետ։ Նա ժամանակակից նահանգապետի հետ սերտ կապ ունենալով—որի դասընկերն էր եղած—, դէպքից լի ու լի օգտւում էր։ Տեղական իրար յաջորդող պրիստաւները հօ նրա հլու հպատակներն էին, գաւառապետները նոյնպէս նրա խնդիրը երբեք անկատար չէին թողնում։ Ռուսերէն լեզուին կատարելապէս տիրապետում էր ու բնական հարուստ խելքի տէր մարդ էր։ Իր արտասովոր խելքի շնորհիւ կարողացաւ դատարանական կարգով ահագին կալուածքների տիրապետել։ Լաւ եկամուտ էր ստանում գիւղական կնճռոտ գործերից։ Շաքարի գլուխներին ու գառների փէշ-քէշներին հօ հաշիւ չկար։ Մ. աղի մասին յետոյ էլ եմ խօսելու իր տեղում։

Էն տարին հացը շատ թանկ էր։ Ալէքսանդրապոլցի ոմն Քեանդարով ցորենի շտեմարաններ ունէր և թանկ

գնով վաճած ու հոտած ցորեն էր ծախում։ «Քեանդարովի տարի» էր կոչւում էդ տարին։ Ամբողջ երեք ամիս մեր խնամոնց տանը ես շատ քիչ էի հացի երես տեսել։ Միմիայն կիրակի, տօներին և հիւր եկած միջոցներին էին հաց դնում սեղանին։ Կարտոփ շատ ունէին, էն էլ մանրուքն էին ջոկում եփում և որպէս զի շուտ յագենայինք, հէնց էնպէս առանց կճպելու և իր ջուրն էլ հետը ուտում էինք, անհաց։ Զգւել էի ուղղակի և կոկորդս միշտ խանձւում էր. սակայն ոչ ոքի բան չէի ասում, իլլալս ինչ «անճարն է կերել բանջարը»։ Դպրոցական հարուստ ընկերներս դասամիջոցին միշտ սպիտակ լաւաշ ու պանիր, երբեմն գաթա էին ուտում. թէպէտ միշտ ինձ էլ էին հրաւիրում, բայց չէի ընդունում, որովհետև գլուխս չէր վերցնում որ նրանք իմանային իմ քաղցած լինելը, չ'նայելով որ սրտիս ջուրը գնում էր։ Է՞հ, թող էլի «սերն ուտի սովորը, թանը՝ մոլորը»։ Բացի էն, որ յարատև քաղցած էի լինում իմ խնամոնց տանը, գիշերներն էլ իրենց մեծ երեխաների հետ քնեցնում էին բաց երդկով հացատանը. էնպէս որ ամբողջ գիշերը ցրտից դողում էինք։

Դեկտեմբեր ամիսն էր. մի իրիկու դպրոցից տուն գալով, տեսայ որ քեռիս եկել էր, մերս էր ուղարկել ինձ տեսութեան։ Անչափ ուրախացայ։ Ընթրիքին մեր խնամոնք քեռուս խաթրու ձէթով ձաւարի սպաս էին եփել, իմ բաժինը մեծ ախորժակով վայելեցի։ Ահա որ ամբողջ երեք ամսուայ ընթացքում մի անգամ կշտացայ։

Արդէն քանի օր էր ինչ Տ. վարժապետը աշակերտներիս ասել էր, որ ամսի վերջին իւրաքանչիւրս անպատճառ հնգական ռուբլի պէտք է վճարէինք առաջիկայ ամիսների ուսման վճարը։ Էդ բանը քեռուս ասացի. նա էլ ասաց, որ նամակով յայտնեմ մօրս, բայց ես քեռ նամակ գրած չէի, տատանւում էի, երբ յանկարծ յիշեցի որ դաշահաբկի մէջ պահած մի նամակի օրինակ ունիմ,

մեր գիւղի դպրոցի ժամանակից։ Էդ օրինակը հանեցի և արտագրեցի հետևեալը։

«Գորովագութ մայր իմ (իսկականում հայր էր գրած)

Նախ և յառաջ, յոյժ կարօտով որդիական սիրոյ ողջոյնս մատուցանեմ ձերդ հրամանոցը և եթէ կամիք ի մէնջ մերմէ հարցուցանել, փառք Ամենակարող Արարչին, զի կամք ողջ և առողջ, միայն ի Տեառնէ մերմէ կ'բարեմաղթեմք զձեզ կեանս, ամմէն։

Տակը ինձանից աւելացրի։ «Էլ շատ շատ բարով կ'ըմատուցանեմ իմ սիրելի քոյրերին, իմ բիձենուն, քեռենուն, համ իրանց կողակիցներին, համ Յանուսին շատ շատ բարով, ամմէն։ Համ մեր թուլէնին ինց են։ Եւ էլ մեր վարժապետը ասումա ըշկօլի փողը որ բերէք ոչ հա, տարեմուտի էքսը գաք ոչ ասումա։ Եւ ըշկօլի փողը հինգ մանէթա։ Համ մեր խնամոնք ինձ շատ լաւ պահում են ամմէն։ Մնամ քրիստոսի ծառայ քո խոնարհ որդի Լևոն։»

Քեռիս գնաց։ Նրա գնալուց երկու շաբաթ հազիւ էր անցել, որ մեր փեսայ Միսակը եկաւ ինձ մեր գիւղը տանելու։ Միսակը իմ նախկին ուսուցիչն էր, որ իմ մեծ քրոջ հետ ամուսնացել էր։ Սկզբում գնալ չէի ուզում. բայց երբ ասաց, որ իբրև տարեմուտի պատճառով է տանում ու կրկին ետ է բերելու, ուրախութեամբ հետևեցի իրեն։ Դեկտեմբերի 31 ն էր, որ մենք ոտքով ճամփայ ընկանք։ Ճամփէն ձիւնով ծածկւած էր ու սառած, ուստի շատ էինք դժւարութիւն քաշում, Թէպէտ մենք ուղիղ ճամփից շեղւեցինք և կարճ կտրելու համար լեռներով գնացինք, բայց և էնպէս մութը շուտ վրայ հասաւ։ Գիւղից արդէն մօտեցել էինք, բայց ճամփի էս ու էն կողմերում գայլերը ոռնում էին. գիւղամիջում էլ շները գայլահաչ էին տալի։ Վախից քայլերնիս արագացնում էինք։

Իրիկունը էն պահին տուն հասանք, երբ մերոնք ընթրիք էին ուտում։

«Բազուկ»-ը արդէն գութանի առաւօտւայ նախաճաշիկի տեղն էր, իսկ «շամփուր քշերք»-ը*) Զաթինդաղի եաևից նոր էր պոչը հանել։

Գլ. 8

Լևոնը նորից իրենց գիւղում. նրա հօրեղբօր նոր կինը։ Գոզինաղը, դովլաթբաշին ու տարեմուտի ծէսերը։ Լևոնի մէրն ու հօրեղբայրները բաժանւում են։ Լևոնը ու մի ուրիշ պատանի «Աւետիս» են մանգալիս։ Լևոնին առաջարկում են հիւրի մօտ երգել,— նա մերժում է։ Մտնում է Տէր-Սիմոնի դպրոցը։ Ս. Սարգսի ծումը, աղաբլէթն ու խաչիլը։

Մեր ընտանիքի մէջ խոշոր փոփոխութիւն էր կատարւել։ Բացակայութեանս միջոցին իմ այրի աւագ հօրեղբայրը նոր կին էր ուզել։ Թէև ուշ էր, բայց հօրեղբօրս նոր կինը իմ ու փեսայ Միսակի համար թէյ պատրաստեց։ Նա մոռացաւ ինձ շաքար տալ, իսկ ես ամաչելուցս անշաքար խմեցի։ Յետոյ բանը պարզւեց ու ես աւելի շատ ամաչեցի։

Տարեմուտի նախօրեակի գիշերն էր, ըստ գիւղական սովորութեան մերոնք երկու հատ դովլաթբլիթ թխեցին որպէս զի գուշակէին թէ մեր տան դովլաթը ուժ ճակատին է գրած։ Հարսները ալիւրից խմոր անելով երկու բլիթ շինեցին ու ամեն մէկի մէջ մի մի հատ լոբի գնելով շեղջում թաղեցին։ Ապա թխւած բլիթներից մէկը մեր ընտանիքի բոլոր անդամների, իսկ միւսը մեր մի քանի աչքի ընկնող անասունների անուններով բաժանեցին։ Լոբիներից մէկը իմ բաժին կտորումը դուրս եկաւ, միւսը մեր մոխրագոյն էշի։ Քնելուց առաջ, մէրս մեզ-

*) «Բազուկ»-ը և «շամփուր կշերք»-ը համաստեղութիւններ են։

րով ու ընկուզով գոզինաղ եփեց։ Դեռ խոր քնով քնած էինք, որ նա բոլոր ախեգիներիս արթնացրեց։ Մատուցարանի չորս անկիւնում մեղրամոմեր վառած, մէջն էլ մի քանի տեսակ մրգեղէն ու մի ափսէով էլ մանր կըտըրտած գոզինաղ դրած, մօտենալով մեր անկողիններին սկսեց նախ համբուրել ու մի մի կտոր գոզինաղ բերաններս դնելով շնորհաւոր տարի բարեմաղթել։ Նա՝ վաղ վաղ տնից դուրս գալով սկզբում դռանը կարմիր շոր էր փռել, բոլոր դռներին խաչաձև մեղր քսել, անխօս մտել գոմը և լծկանի պոզերին նոյնպէս խաչաձև մեղր քսել ու վառած մոմեր կպցրել։

Ապա անխօս վառելափէտի կտորներ առնելով բերեց, որպէս զի նոր տարին բարի ու արգասաւոր լինի։

Դժբախտաբար մեր դովլաթը արդէն ծախին էր բարձել,—ամեն ինչ վերջացել էր և հէնց էդ պատճառով մերոնք շատ սառն էին վերաբերւում իրար։ Տարեմուտ օրնևեթ իմացել էի, որ էքսը բաժանւելու էին մերոնք։ Բանից երևաց որ ինձ էլ հէնց էդ առիթով էին բերել ու ետ դպրոց չէին տալու։ Վերջին հանգամանքը աւելի կոտրեց իմ սիրտը, քան թէ բաժանքի լուրը։ Եւ իսկապէս տարեմուտի էքսը մերոնք հրաւիրեցին մեր ծխատէր քահանային ու երկու ուրիշ մարդու, որոնք բաժանեցին մօրս ու երեք հօրեղբայրներիս։

Պապիս թողած անագին կարողութիւնից գրեթէ ոչինչ չէր մնացել։ Բացի մեր ունեցած պղնձկալքից ու փալաս-փուլուսից, ամեն մի եղբօրը բաժին հասաւ մի մի եզն ու կով ու կարծեմ մէկական թաղար էլ ցորեն։ Իւղ, պանիր—Աստւած տար։

Լսում էինք որ հարևանները անազ էին անում մեզ էն պատճառով, որ մեր հարստութիւնը կորցնելով, աղքատ էինք ապրում հիմի։ Մինչև անգամ էն մարդիկ, որոնք առաջներում մեզանով էին ապրում ու էն ժամանակ սրտացաւ բարեկամներ ձևանում, նրանք էլ էին ուրախանում ու պար էին գալի մեր աղքատանալու համար։ Էլ ոչ ոքի մօտ երեսատեղ չունէինք։

Բնակարաննիս էլ բաժանեցինք և ամեն մէկս քաշւեցինք մի անկիւն։ Ծրագալոյցի ընթրիքից յետոյ, որ տակաւին օր կար, ես ու Դարչնանց Սմբատը ժամաշապիկները հագած, մի մի հաբգայ և մի փոքրիկ զանգուլակ վերցրած՝ գիւղի տները «այսօր տօն է» ման եկանք։ Էն ժամանակ երկուսիս ձէնն էլ լաւն էր. ամենքը հաւանում էին։ Հաւաքածներս ընդամէնը մի քանի ձու էր, մի քանի կտոր պանիր, քիչ ձաւար, քօլի տանձի չիր, բռինչ և երկու կտոր եփած թազա ձուկը։ Զկան կտորները հօլօլենց ձկնորս Սահակի տանից ստացանք։ Մի կոպէկանոց սև գրօշ էլ Բօշանց դալլաք Օսէփը տւեց, բայց ինչ սրտով տւեց, էնպէս էլ կորաւ։—Համարեա մի ամբողջ ժամ կանգնեցրին. ոչինչ չէին խօսում, ոչ ասում էին «գնացէք» ոչ էլ՝—«մնացէք»։ Մենք էլ երեսներս իրենցից վատթար բոշի երես շինած, լուռ-մունջ սպասում էինք։ Վերջ ի վերջոյ դալլաք Օսէփը մեծ հարսին ասաց՝ «ադջի, դուխումը մի կապեկ փող կայ, գնա՝ բէր իրանց սևգրու», հենց էդպէս էլ ասաց —«իրանց սևգրու»։ Մի ժանգոտ երշնած կոպէկանոց էր։ Նրանց չէմքից դեռ մի քանի քայլ էինք հեռացել, որ էն նաֆս կոպէկանոցը ձեռքներիցս վայր ընկաւ—կորաւ։ Մի ակնակիր ցուրտ, քամոտ գիշեր էր։ Երկու հատ մեղրամոմ էրեցինք, բայց էն կորչելն էր՝ ինչ կորաւ։

Իրիկունն և եթ վճռել էինք, որ ուրիշ գիւղեր էլ չմտնք «Աւետիս» ասելու։ Եւ հետևեալ օրը, նախ գնացինք Արդւի գիւղը։ Սկզբում մտանք մեր բարեկամուհի յայտնի Բէթիւան ձալօի մօտ, «այսօր տօն է»ն երգեցինք. շատ հաւանեց ու մի սպիտակ քսան կոպէկանոց տւեց։ Էնտեղից մտանք նրա տէքրակին Սաշօ ձալօի տունն։ Սաշօ ձալօն սենեակն էր աւելում, էնպէս եռանդով ու զգացմունքով երգեցինք, որ աւելը ձեռքին

արձան կտրեց։ Մեզ գովելով մի սպիտակ տատնուհինգ կօպէկանոց էլ նա ընծայեց։ Ջիլիզ *) Ջօշաի **) էլանք։ Մի քանի տներ էլ մտնելով, որտեղից սև փողեր, որտեղից էլ իւղ ու ձու ստացանք։ Արդէն անցանք Ամոլ փոքրիկ գիւղը, ընդամէնը երեք տուն ազնւականներ էին, մի քանի սև ու սպիտակ փող էլ էդտեղ վաստակեցինք ու գնացինք Հագւի։ Հազւեցիք բոլորն էլ հարկատու գիւղացիները են։ Էնտեղ փողի երես չ'տեսանք. նրանց տւածն էր՝—լոբի, ձաւար, չիր, կակալ, թուքթուն ևլն։ Իծարատանց տանը, որը գիւղի դովլաթաշատ օջաղն էր, երբ «այսօր տօն է»ն վերջացրինք, պատրոնը հարսին մօտիկ կանչեց ու լսեցինք որ ականջում ասաց՝—«գնա քսան փուչ կակալ ջոկի. բի իրանց տուս»։

Նոյն օրը—իրիկնապահին վերադարձանք մեր գիւղը։ Նախ գնացինք ընկերոջս տունը, նրա մէրը մեր բերած իւղն ու ձուն ձւածեղ շինեց կերանք, ապա միւս բաները կխսեցինք։ Երբ իմ բաժինը տարայ մեր տուն, մէրս շատ ուրախացաւ։

Հետևեալ օրը Քէթևան ձալօն և մի Երևանցի տղամարդ հիւր եկան մեր տուն։ Ճաշի ժամանակ հրաւիրեցինք և իմ կրտսեր հօրեղբօրը։ Հիւրին հաճոյք տալու համար, Քէթևան ձալօն առաջարկեց ինձ «Այսօր տօն է» երգել. բայց ես ամաչելուցս դեռ նազ ու տուզ էի անում թէև, սակայն մտքումս կար որ երգեմ։ Երկար չըսպասեցնով, Քէթևան ձալօն մի սպիտակ փող դրեց սփռոցի վրայ. նրա օրինակին հետևեց հիւրը։ Ես տակաւին լուռ էի։ Նորից փող հանեցին երկուսն էլ և էդպէս շարունակելով համարեա թէ երեք ռուբլու չափ սպիտակ ու սև փող դիզեցին։ Ուրեմն բանից դուրս էր գալի որ իբրև թէ ես էն պատճառով չէի երգում, որ աւելի շատ փող էի ուզում ստանալ։

Սրտիս ճաքելուց քիչ էր պակաս որ լաց լինէի, մինչդեռ

*) Ջիլիզ—անչափ շատ

**) Ջոշաի լինել—ոգեւորել

նրանք իրար հետևից փողեր էին շպրտում։ Կարծես մուրացիկ էի և մեր տանը, Աստծու հիւրի առջև փողով պէտք է երգէի։ Ի հարկէ էն բոլորովին ուրիշ բան էր, որ մենք տնէ ի տուն «Աւետիս» էինք շրջում.—դա էլ իր տեսակում, ըստ մեր հասկացողութեան, մի սրբազան առաքելութիւն էր իբրև, որ կատարում էինք շատ սիրով։

Քանի նրանք փողերը աւելացնում էին, կարծելով որ դրանով կարող էին ինձ հրապուրել, ես՝ ընդհակառակը աւելի վիրաւորւում էի ու խպռնւում*), որ նրանք ինձ չէին գգում։ Սակայն եթէ նրանք փողը հրապարակ չէին բերել, ես անշուշտ կերգէի։ Փողի շեղջը դիտելով՝ իմ ընչաքաղց հօրեղբօր աչքերը փայլատակում էին։ Մէկ էլ յանկարծ բոլորովին անսպասելի կերպով, հօրեղբայրս իր հուժկու ձէնով «Այսօր տօն է»ն վեր քաշեց։ Երկու տուն երգելով, փողերը բուռն արաւ, թաշկինակում կապեց ու սուս ու փուս դրպանը դրեց։

Օրերը մինը միւսի հետևից գլորւում էին առանց մի զգալի փոփոխութիւն մացնելու մեր կեանքի մէջ։ Երբ խորը գիտակցեցի գպրոցից զրկւելս, կծուն դլուխս տւեց։ Համարեա ամեն անգամ մտաբերելիս լացս գալիս էր։ Մէրս ճնացել էր շւարած։ Վերջ ի վերջոյ վճռեց տալ ինձ մեր գիւղի Տէր-Սիմոնի գպրոցը։ Էն ձմեռ վախճանւել էր երիտասարդ երէանդ վարժապետը։ Որովհետև Տէր-Սիմոնը ռուսերէն էլ էր դաս տալի, ես համաձայնւեցի նրա մօտ սովորելու։ Մէրս խոստացաւ որ սրա նրա համար կար ու ձև անելով կհայթայթի իմ ուսման վարձը, որը՝ ամսական յիսուն կոպէկ էր։ Եւ մի օր, գրքերս վերցնելով, գնացի Տէր-Սիմոնի գպրոցը. տէրտէրն ինձ շատ սիրով ընդունեց։ Նա՝ ռուսերէնում բաւարար էր միայն, բայց

*) խպռնւել—յամառել, թարուել։

հմուտ հայագէտի հռչակ ունէր։ Իսկապէս գրաբառ հայերէնին լաւ էր տիրապետում։

Առաջաւորաց շաբաթապատն էր, որին գիւղում Սուրբ-Սարգսի պաս են ասում։ Էդ պասի ուրբաթ իրիկունը, ըստ գիւղական ծէսի, շատ աղի խմորից բլիթ թխեցին մերոնք, որն ասւում է՝ «աղաբլիթ»։ Եւ իրիկւայ ժամերգութիւնը վերջանալուց յետոյ կերանք մեղրով շաղախած փոխինձ, ապա ընթրիքից յետոյ՝ ամուրի տղաներս ու աղջիկները էդ աղաբլիթից մի մի կտոր ուտելով՝ առանց ջուր խմելու անկողին մտանք։ Իբրև թէ էդ գիշեր երազում մեզ խմելու ջուր պէտք է տային մեր ապագայ ամուսնացուները։ Սակայն ես՝ բացի գանագան լաւ ու վատ ջրերից, ուրիշ ոչ մի բան չտեսայ երազում։ Իսկ հետեւեալ օրւայ խաշիլ եփելու փոխինձը բաղիայի մէջ ածած, դրեցին սրահի թարեքին, որպէս զի Ս. Սագրիս զօրավարը իր սպիտակ նժոյգը հեծած գայ և փոխինձը տրորելով անցնի...

Թաթախման շաբաթ առաւօտը վաղ վաղ փոխինձէ խաշիլը եփած պատրաստ էր, սխտորած թանն էլ հետը։ Տան չահիլներս համաձայն ծէսի՝ խաշլի առաջին պատառը դուրս տարանք և պատերի վրայ ու աչանների ծէրերին դնելով՝ սկսեցինք ծածուկ դիտել թէ՝ էդ պատառները դէպի ո՞ր կողմն են թռցնում ագռաւներն ու կաչաղակները։—Ուրեմն էն կողմում կամ թաղումն էին ապրում մեր ամուսնացուները։

Գլ. 9

Տէր-Սիմոնի դպրոցը. Լևոնը գրաբառից մեկնութիւն է անում։ Տէր-Սիմոնը ջուլհակ։ Գրչածայր գողանող աշակերտը։ Տէր-Սիմոնի յարգանքը դէպի Լևոնը։ Տէր-Սիմոնի պատմած առակը։ Լևոնը աղօթք է անում։ Երկրաշարժը։ Տէր-Սիմոնը պատարագիչ։ Լևոնն ու իր մի ընկերակիցը նոր լեզու են հնարում։ Հասան-Յանի զօրապետ Շահալու և լեզգիների արշաւանքներից։ Լօռու քաջերը։ Ճիլիմատանանց Մարգարը։ Լևոնը որսորդ։ Նոր է սպանում։ Գիւղացիք զէնք չեն սիրում։

Առանձին սիրով էի սովորում ես Տէր-Սիմոնի դպրոցում։ Հայերէն դասերս էին՝ «Գործք առաքելոց»ը մեկնութեամբ, Զամչեանի քերականութիւնը, սրբազան պատմութիւն, երգեցողութիւն, թուաբանութիւն և հայերէն ու ռուսերէն գեղագրութիւն.—գեղագրութեանը էն ժամանակ «շարադրութիւն» էինք ասում։ Իսկ ռուսերէնը դարձեալ Տէր-Յակոբեանի ռչեբնիկի վրայ էի սովորում, որը էս անգամ նւիրել էր ինձ Քէթևան ձալօն։ Երգեցողութիւնը շարականն էր և Սարգիս եպիսկոպոս Ջալալեանի հնարած երգերից, որոնք երգւում էին նոյնպէս շարականի եղանակով։ Շարականի երկրորդ ձայնը ես շատ լաւ երգում էի։ Մանաւանդ որ դեռ առաջ էդ եղանակը, երբ մեծ հօրեղբայրս մեր տանը սովորեցնում էր իր կրտսեր եղբօրը, ես էնպէս, ղրաղից-պուճախից սովորել էի և ծածուկ տեղերը միշտ երգում էի։

Իմ լաւ սովորելու հռչակը տարածւել էր ամբողջ գիւղում։ Մի օր փողոցում առաջս կտրեց մեր գիւղացի Շէկ-Վարդանանց Եսային և մի գրաբառ գրած թուղթ

տւեց ինձ, առաջարկելով որ աշխարհաբար մեկնէի։ Գըրւած էր տէր-ողորմեայի հետևեալ տունը։ «Զի գիտացաք մեք հաւատաեաւ, որչափ մեղաց մերոց լցաւ. ուստի տէրըն մեր բարկացաւ»։ Փորձելու համար, տէր-ողորմեայի էդ տունը մեր գիւղացի հայագէտ Գ. Խարազեանն էր ուղարկել մօտս։ Իսկոյն մատիտով նոյն թղթի վրայ աջող մեկնեցի ու ետ դարձրի։

Տէր-Սիմոնը արդէն ալևոր, պատկառելի, լուրջ, ծանրախոհ և գեղեցկադէմ մարդ էր։ Նրա դպրոց-օդէն, իր լոյսը սառնում էր կտրան երդկից, որտեղից ներս էր խուժում երկայն հինածի նման արևի շողքը։ Երեսնաչափ աշակերտներս նստած էինք երկու պարզ նստարանների վրայ, որոնցից մէկը արևելեան, միւսը՝ հիւսիսային պատերի առջևն էին դրւած։ Իսկ հարաւային կողմի պատի առջև դրւած էր տէրհօր իր իսկ ձեռակերտ փէտէ հաստարակ բազկաթոռը։ Արևմտեան կողմից բացւում էր դուռը դէպի գրատունների գոմը, որտեղից որ ջերմութիւն էր ներս գալի...

Տէր-Սիմոնը չուլհակութեան արհեստ էլ գիտէր.— ազատ մի ջոջներին, իր գլխատանը սարքած հորի մօտ նստում էր ու կտաւ կամ չուխացու շալ էր գործում։ Նրա աշակերտների մեծ մասը մազով մօրուքով երիտասարդներ էին։ Աշակերտներին պատժելու համար մի գըրեմատէ փափուկ ճիպոտ էր պահում միշտ, որը՝ սակայն, հազւադէպ էր գործադրում։ Ես գոնէ ոչ մի անդամ էլ ճիպոտ ուտելու չարժանացայ։ Պէտք է ասած, որ տէր-հայրը էնպիսի յարգանքով էր վերաբերւում ինձ, ինչպէս մի հասակաւոր մարդու։ Իր ասելով, նա իմ պապին էլ է շատ յարգելիս եղել նրա՝ խելացի և քաջ մարդ լինելու պատճառով, չնայելով որ երկու տէր-տէրները ախոյեաններ են եղել իր ժամանակին։

Տէր-Սիմոնը բոլոր աշակերտներիս յորդորում էր, որ միշտ քնելուց առաջ «հաւատով խոստովանիմ»ի ամբողջ քսանուչորս տունը ծնկաչոք ազօթենք։ Ու էդ ազօթքի հրաշագործութեան մասին հետևեալ առակը պատմեց մի օր.

«Ժամանակով մի հարուստ սովդաքար է լինում. մի խումբ աւազակներ էդ սովդաքարին հետապնդելիս են լինում կողոպտելու նպատակով։ Սակայն ինչ եաբանա չօլում էլ որ իջնում է եղել էդ սովդաքարը, աւազակները մօտենում-տեսնում են, որ մի ամբաւ անդուռը քարաշէն մատուռի մէջ է պատսպարւած նա ու՝ ճարահատեալ դատարկաձեռն ետ են դառնում։ Օրերից մի օրն էլ, էս աւազակները նկատում են, որ մատուռի մի պատի մէջ բաց տեղ կայ, որով ներս են խուժում ու սովդաքարին կողոպտում։ Սակայն իրենց հետաքրքրութեանը գոհացում տալու համար, սովդաքարին հարց ու փորձի են ենթարկում էս պատահած հրաշքի մասին։ Սովդաքարը որ իակէ չգիտէր էլ թէ ինքը մատուռի մէջ է եղել միշտ պատսպարւած,—պատմում է որ ինքը քնելուց առաջ միշտ «հաւատով խոստովանիմ»ը չերմեռանդ սրըտով, ծնկաչոք, ամբողջապէս ազօթելիս է եղել, սակայն հիմի յիշում է որ նախընթաց գիշերը արբած լինելով՝ մի տունը բաց էր թողել։ Աւազակները էդ պատմութիւնից ազդելով՝ աւարը լրիւ ետ տիրոջն են տալի ու իրենք էլ աւազակութիւնից ձեռք վերցնելով, դառնում են աստուածավախ ու բարեպաշտ մարդիկ»։

Մեծ պատին երբ ես պատրաստւում էի ճաշակելու, մի ամբողջ շաբաթ ճաշի չէի գնում, այլ ծոմ պահելով, տէրտէրենց գոմի մի անկիւնում չոքած՝ չերմեռանդօրէն «Հաւատով խոստովանիմ» ու «Տէր ամենակալն» էի մրմնջում։ Տէր-Սիմոնը էս բանը լսելով, իր յարգանքը կրկնապատկել էր դէպի ինձ։

Էն ժամանակներում մեծամասնութիւնը դեռ փե-

տուրէ գրիչ էր գործածում. ինքը տէրտէրն էլ էր փետուրէ գրիչ բանեցնում: Մի երկու երեք հոգի միայն երկաթէ գրչով էինք գրում: Մի անգամ աշակերտներիցս մէկի երկաթէ գրչածայրը կորաւ, սա գանգատեց վարժապետին: Տէրտէրը բոլոր աշակերտներին ոտքի կանգնեցնելով խիստ շեշտով հարցրեց՝ «ասացէք, ով է վերցրել սրա գրիչը»: Տակաւին ամենքս լուռ էինք, երբ մեծ աշակերտներից մէկը, որին զրաբառ Գէվո էին կոչում, պատասխանեց՝ —Տէրտէր, ասաց, Աստուած վկայ է, որ ես չեմ վեր առել:

—Հէնց դու ինքդ ես վերցրել, անպիտան, մօտիկ արի, ասաց տէրտէրն ու զրաբառ Գէվոյի գրպանները ոտքոնելով գրչածայրը հանեց տիրոջը տւեց: Ընդհանուր քրքիջ բարձրացաւ:

Մի դէպք՝ որ էդ միջոցներին պատահեց, չեմ մոռանում:—Մեծ պասի նշանաւոր կիրակի օրերից մէկն էր. մեր գիւղի մեծ եկեղեցին երկսեռ բազմութեամբ լիքն էր. հանդիսաւոր պատարագ կար. պատարագիչը մեր ուսուցիչ Տէր-Սիմոնն էր: Մէկ էլ յանկարծ գետնի տակից մի զարհուրելի դղրդոց լսւեց,—երկրաշարժ էր. որտեղ իրար հետից մի քանի անգամ կրկնւելով՝ եկեղեցու առաստաղից մի ահագին քար ընկաւ կանանց դասը, ճիչն ու աղաղակը ականջ էր խլացնում: Բարեբախտաբար կանայք վրայ հասցրին, խուսափելով ազատւեցին: Շփոթ ու իրարանցում ընկաւ ժողովրդի մէջ, մարդիկ իրար տրորելով դուրս էին փախչում եկեղեցուց: Տիրացուները գլուխները էնպէս էին կորցրել, որ սանդուղքները չգտնելով բեմից ուղղակի ցած թռան ու դուրս փախան: Կաթողիկէի վրից անհամար աղաւնիների երամներ թևերը ուժգին թափահարելով թռան հեռացան: Բեմի վրայ, սեղանի առջև մենակ անասան կանգնած մնաց հայր պատարագիչը. մինչև անգամ գլուխը ետ չէր թեքում տեսնելու թէ՝ ինչ էր կատարւում եկեղեցում: Այլ ձեռքերը առ Աստուած կարկառած, ջերմեռանդ սրտով աղօթք

էր մրմնջում: Մի քանի վայրկեանից յետոյ, երկիրը հանդարտւեց, ժողովուրդը նորից սկսեց լցնել գատարկւած եկեղեցին: Զարմանքով ու կատարեալ հիացմունքով տեսանք, որ հ. պատարագիչը նոյն դիրքով իր աղօթքն էր շարունակում: Կիսատ մնացած պատարագի արարողութիւնը վերսկսւեց:

Ես ու իմ դասընկերը՝ Աւետանց Դարչոն մեզ ու մեզ նոր լեզու էինք հնարել. բառարաններ կազմել և իրար հետ մեր նորահնար լեզուով էինք խօսում, որով միւս աշակերտների նախանձն էինք շարժում:

Իմ աւագ հօրեղբայրը ձմեռւայ գիշերները, երբ ամենում գրքեր էր կարդում ի լուր, և մօտիկ հարևաններն ժողովւելով լսում էինք: Սկզբներում պապիս յայտմաւուրքն էր կարդում, ապա մի անգամ էլ Թիֆլիսուց երկու նոր գրքեր էր բերել, Ղ. Աբովեանի «Վէրք Հայաստանի»ն ու Պռօշեանի «Սօսն ու Վարդիթեր»ը: Դրանց հետ բերել էր և մի հոլանի բազուկներով աղջկայ իւղաներկ պատկեր գառն առաջին: Ասում էին երբև Պռօշեանի հերոսուհի Վարդիթերի պատկերն է: Էդ պատկերը կախել էին պատից, Լօռու վիճակի հայերէն քարտէզի կողքին:

«Վէրք Հայաստանիս»ն աւելի էր գրաւում իմ ուշքը և ես հօրեղբօրիցս խնդրելով՝ ինքս էի կարդում: Աղասու քաջագործութիւնները սաստիկ ոգևորում էին ինձ: Սահասարակ ինձ շատ էին հետաքրքրում մերայինների քաջագործութիւնների պատմութիւնը Հասան-Ջանի և Լէզգիների ասպատակութիւնների օրերում: Տատս էդ մասին պատմութիւններ շատ էր անում:

Ի միջի այլոց նա պատմում էր որ՝ Հասան-Ջանի զօրապետ Շահալին, Փամբակու մեծ Ղարաքիլիսէն աւերելով՝ առաջ է խաղում դէպի Լօռու կողմերը: Էդ լուրն իմանալով Արդվեցի Լեկօենց Պետրոսը (Լէզգի Պետին) և Ռէվազ Քալանթարեանցը, Գիւլլաղազեան կոչւող տեղում դարան են մտնում և երբ Շահալին իր զօրքերով

մերձենում է, իրեն հրացանազարկ են անում—սպանում ու նրա զօրքը ցիր ու ցան անելով Լօռին ազատում։ Էն զօրապետի անունով է, որ հիմի էնտեղի գիւղը կոչւում է Շահալի։ Լեզգիների արշաւանքի ժամանակ էլ՝ Ճոճկանեցի Խուդին և Գիւլլուբաղցի Դօնդուզդռանը ի միջի այլոց մի անգամ Լեզգիներին հետապնդելով տեսնում են, որ Ախտալայի անտառում սարում, «Կօշաբերդ» կոչւող մատուռի մօտ՝ շատուր լեզգիներ են քնած ու իրենց հրացանները մի ծառի բնի վրայ ցից քաղած։ Սրտոտ Խուդին կամաց կամաց մօտենալով լեզգիների հրացաններից մի լաւ խոխա գրկում է ու վախչում։ Լեզգիները հրազէնների զրնգզրնգոցից զարթնելով՝ հէնց ուզում են Խուդնի վրայ յարձակւել, բայց լեզգու արիւն խմող Դօնդուզդռանի գնդակները մէկը միւսի հաւից գետին են տապալում լեզգիներից մի քանիսին, մինչև Խուդին էլ է հասնում և երկու քաջերը ամենքին կոտորում են։

Մեր յայտնի բանաստեղծ Յովհ. Թումանեանը «Հոբիզոն» ժողովածուի մէջ էսպէս է որակում Լօռու քաջերին՝ «Ճոճկանեցի Խուդին, որ ասլանի սիրտ ունէր, Գիւլլուբաղցի Դօնդուզդռանը որ լեզգու արիւն էր խմում, Արդվեցի Լեզգի Պետօն, որ մազը մազից ջոկում էր գիւլլով, Սանահնեցի Արութիւնը որ ձին աստղերի հետ էր խաղացնում, Շնօղնեցի վիթխարի Վերանը, Հաղբատեցի աժդահա Պրանը» ևն։

«Վէրք Հայաստանի»ի մէջ էլ հօ Աբովեանը գովաբանում է Քանաքեռցի Ազատու, Դսեղեցի Յովակիմի, Շուլավէրցի Սօսնի և այլոց քաջութիւնները։ Մի՞թէ բոլոր գիւղերն էլ անւանի հռչակաւոր քաջեր են ունեցել, իսկ մեր գիւղը, որ Լօռու վիճակում ամենամեծն ու ամենահինն է, գոնէ մի հատիկ քաջ մարդ չի ունեցել,—էսպէս էի մտածում ես էն ժամանակ։

Էս բանը վերին աստիճանի շահադրգռում էր ինձ։ Շատ հարց ու փորձեր անելով, վերջապէս մի անգամ լսեցի, որ իբրև մեր գիւղացի Ճիլիմատանից Մարգարը

լեզգիների ասպատակութիւնների օրերում նշանաւոր դեր ունի կատարած։ Լուրը դրական համարելով, անչափ ուրախացայ։ Սակայն բանից ինչ դուրս եկաւ։—Էդ Մարգար ասած հրէշը դու մի ասիլ, գիշերով գնում է լեզգիների մօտ լրտեսութեան և նրանց օրդուների առաջնընկած՝ ճամփա ցոյց տալով՝ բերում է իր հայրենի գիւղը և բոլոր թագսաի տեղերն ու թագնւած ընտանիքներին աւերածութեան ու սրածութեան մատնում...։ Էս պատմութիւնը լսելով՝ մտքումս վճռեցի զինամարզութեան մէջ լաւ վարժւել, որպէս զի ապագայում եթէ էդպիսի դէպքեր պատահեն, կարողանամ Մարգարի մեղքը քաւել։

Հնուց ճեացած՝ մենք մի կեռ թուր ու մի փոքրիկ չախմախաւոր հրացան ունէինք։ Երբ գարունքին Տէր-Սիմոնը աշակերտներիս արձակեց, էդ հրացանը վերցնում էի և հօրեղբօրս ուռկանի գնդակներից մէկ մէկ պոկելով ու վառօդամանից էլ վառօդ ծալըպելով*), հանդերն էի գնում ու ագռաւների, դոլոնների, տատրակների ու լորերի վրայ նշան բռնում, հրացանն արձակում, սակայն միշտ էլ վրիպում էի։ Երբեմն էլ մօտակայ անտառն էի գնում եղնիկ ու եղջերու որսալու։ Դրանց փոխարէն նապաստակներ ու աղւէսներ էին պատահում և դարձեալ աջողութիւն չէի ունենում։ Սանրը գլխին սիրուն նորահարս ու յարգելոր յօպօպին խնայում էի, կկուների կըտկտոցն էլ լսում էի, բայց երեսները չէի տեսնում։ Գայլից ու արջից էլ վախում էի։ Ասում էին դէպք է պատահել, որ արջը որսորդներից հրացանը խլել—ջարդել է և տիրոջ երեսին էլ թքել։ Մի՞թամ թէ՝ «թո՛ւ էդ երեսիդ, ամօթ չի՞ քեզ համար, որ լինձպէս անշատ մարդին սպանում ես»։

Մօրաքրոջս տղէն մի անգամ ինձ ասաց, որ գնդակով թռչուն որսալը դժւար է, ուստի հարկաւոր է կոտորակ բանեցնել։ Մի օր էլ ուռկանի գնդակներից դանա-

*) ծալըպել—գողունի թռցնել։

կով կոտորակներ չինեցի և հրացանը լցրի։ Իսկապէս էն օրը աշողութիւն ունեցայ,— մի լոր սպանեցի։ Մէրս լուրը մաքրեց ու խորովեց, շատ չաղ ու համեղ էր։ Դրժբախտաբար մէրս շատ էր զայրանում իմ որսորդութեան վրայ, բայց ես չէի լսում։ Ու՝ մի օր էլ հրացանը ձեռքիցս խլելով, խփեց քարերին-ջարդեց։

Առհասարակ մեր գիւղացիք զէնք գործ ածելուն դէմ էին։ Մինչդեռ շրջակայ գիւղացիք հրացաններով ու դաշոյններով էին շրջում ամենուրեք,— մեր գիւղացիները հեռու տեղեր կերթային, հովուութիւն, չորվադարուութիւն, վաճառականութիւն ու քրեհ-քարւան կանէին առանց զէնք կրելու։ Եթէ հարիւրից մինը պատահմամբ մի դառապա դաշոյն կը կապէր կամ Աղամամմադ խանի ժամանակից մնացած մի չախմախով հրացան կը կրէր, նրան էլ անազ կանէին՝ «ճուտամէր կլի ած, սպանես ոչ մեղք ա»։

Մէկ էլ կը լսէինք որ միմիայն երկու զինուած թուրքեր էս ինչ անտառում, էն ինչ սարում տասը տասներկու մարդ են թալանել մեր գիւղացիներից։ Տօ անաշէններ. թող էդ տասը մարդի մէջ գոնէ երկուսդ հրացան ունենայիք էլի։ Ի հարկէ էն ժամանակ թուրքերը ինչպէս կը համարձակուէին մերձենալ ձեզ։ Եւ էդպէս տարիներ շարունակ ոչխարների պէս մորթում էին ու քերթում թուրքերի ձեռքով։



Գլ. 10

Ծաղկաքաղն ու համբարձումը գիւղում։ Վիճակախաղը։ Հարսն ու աղջիկը ջան գիւղում են երգում, ճաշում են, նիհրի տալով պարում են։ Ճղալախաթ են խաղում։ Ճլորթի են ընկնում։ Զանազան ծիսակատարութիւններ։

Ծաղկաքաղ չորեքշաբթի օրն էր. համբարձման նախօրեակը։ Գարնանային պայծառ ու ջինջ մի հրաշալի օր էր։ Գիւղի հանդերն ու մօտակայ բլուրների լանջերը մի առանձին կենդանութիւն էին ստացել։ Ջահել հարսն ու աղջիկը անթիւ խմբեր կազմած, ուրախ-ուրախ երգելով ու իրար ուսի տալով ծաղիկ էին քաղում, գոգնոցներն ածում։ Սև սև ու չալ չալ աչքերով, թուխ ու խարտեաշ մազերով, քնքուշ ու անուշ հարսն ու աղջիկ և ալևան ալևան անուշահոտ ու շաղակօղոլ ծաղիկներ իրար էին խառնւել ու մի հիասքանչ ներդաշնակութիւն կազմել։

Երկնքի թռչուններն էլ էին զարթացել էդ օրը և իրենց դուրեկան երգերով ու թռիչքներով օդը լցրել։ Կենսախինդ ծառերի ուրախ ծլըլոցն ու սիրուն ծիծեռնակների սրնթաց սուրալը մարդուս հենց քիթ ու բերանի առջևից, արտուտների վզզալով պատյաններ անելն ու «վոտ պլիւտ, վոտ պլիւտ» կանչելը, դուզդուների և ագռաւների շարան շարան անց ու դարձը, ժեռի, աղաւնիների, դոլոնների ու տատրակների գրաւիչ երաժշտը, կաքաւների, թութակների ու մանաւանդ սոխակների հմայիչ երգերի ձէնը,— մի խօսքով էս ամենը օրւայ հանդիսաւորութեանը մի առանձին փայլ ու հմայք էին տւել։

Բաւական օր կար տակաւին, որ հարսն ու աղջիկ գոգնոցները ծաղիկներով լցրած վերադարձան տները։ Ամեն մի խումբ անմիջապէս ժողովւեց մի մի տուն և հարսն ու աղջիկը սկսեցին ծաղիկներից խաչաձև փնջեր հիւսել։ Մեր թաղի հարսն ու աղջիկը մեր տունն էին հաւաքւել։

Մեր պարտէզից էլ կարմիր ու դեղին վարդեր քաղելով, պակասը լրացրին և ծաղկի փնջերը տալով մի քանի փոքրիկ աղջիկների—որոնց թուում էր և Խանումը—ուղարկեցին թաղի տներում ցրելու։

Լոյսը համբարձման գիշերը, երբ գիւղի բոլոր բնակիչները խաղաղ քնով քնած էին, խմբի մեծ աղջիկներից մի քանիսը մի աւազագոյն հարսի դեկավարութեամբ, մի դեռ չբանեցրած կճուճ վերցնելով, լուռ ու մունջ գնացին աղբիւրը։ Եօթ բուռ աղբիւրի վճիտ ջրից, եօթ բուռն էլ աւազանի յատակի աւազից ածեցին կճուճի մէջ։ Էդ խորհրդաւոր ծէսը պատկառանքով կատարելուց յետոյ, նոյնպէս անխօս վերադարձան։ Յետոյ խմբի բոլոր անդամուհիներից ամեն մինը մի քանի իրեր՝—մատանի, գըրչահատ, բանալի, մատնոց, քօրօցաման, ուլունքներ ևն. գցեցին կճուճի մէջ ու խառնեցին։ Էդ իրերից իւրաքանչիւրը նախօրօք վիճակ էին նշանակում ինքն իրեն, եղբօր, նշանածի, քրոջ, ազգականների ու ծանօթների անուններով։ Դրանից յետոյ մէջը (կառավարչուհին) ծաղիկներից ու վարդերից կազմած խաչաձև մի փունջ դրեց կճուճի բերանին, կարմիր շորով վերևից կապեց ու տարաւ բացօթեայ մի ծածուկ տեղ աստղալիս դրեց։ Աստղալիս դրեց ու աստղերին խնդիրք արեց, որ բարեխօս լինեն իրենց համար և բոլոր վիճակ հանողների սրտի մուրազները էլ կատարուեն։

Պատահում է, որ երբեմն չարաճճի պատանիները գողտուկ հետամտելով՝ վիճակի կճուճը գողանում են ու աղջիկներից մի քանի ձու կամ մի գոյգ գուլպայ կաշառք տանելով ետ են տալի։

Համբարձման առաւօտը վաղ, լուսաստղը դեռ նոր էր ծագել լազուր երկնքում, որ վիճակ խաղացող բոլոր հարսն ու աղջիկը վեր կացան, կրակ ճրագ արին ու կաթսաներով ջուր դրին կրակին։ Կատուների կամ կալերի կանաչ խոտերից, քօլերից ու ծաղիկներից էլ փոքրիկ ծո-

ցաթասերով ցօղ վերցրին—բերին ածեցին տաքացող ջրերի մէջ ու էդ սրբազան ջրերով գլուխները մաքուր լուացին, մազերը սանրեցին ու հիւսեցին։

Արևածագին խումբն արդէն պատրաստ էր։

Սկզբում ծաղկեփնջերը ցրող փոքրիկ աղջիկները գընացին և ցրած ծաղիկների տրիտուրը բերին՝ ձու, իւղ, բրինձ, վառելիներ ևն.։ Մթերքեղէնը տանը թողնելով, խումբը վիճակի կճուճը վերցրեց և դիմեց դէպի գիւղի մօտակայ հանդում գտնուող Հոռոմայրի կիսաւեր մատուռը։ Տեղ հասնելուն պէս, նախ կանաչ խոտերից գլխարկներ հիւսեցին ծաղկէ թագերով և բոլոր օրիորդ աղջիկները էտ տարօրինակ գլխարկներով գլուխները զարդարեցին։

Ապա հուրի փերիների էդ խումբը կճուճը գետնի վրայ դնելով՝ չորս բոլորքը շրջան կազմեցին ու եալլի տալով՝ խմբապետուհին կամ, ինչպէս իրենք են ասում՝ ծաղկամէրը, սովորական ջանգիւլումը աղաւաղած թիւրքերէնով երգեց՝

Վիճակը վիճակ լինի
Ամեն վիճակ վարդ լինի,
Ով որ վիճակ է գցել,
Մուրազին հասու լինի։

Յետոյ՝ մատուռի արևմտեան կողմի սուերում, կանաչ խոտերի վրայ հարսն ու աղջիկը շրջանաձև շարքով ծալապատիկ նստոտեցին։ Նստեցին ու փոքրիկ աղջիկներին հարց ու փորձի ենթարկելով՝ դրանց միջից ներսը իր միամտութեամբ չգիտէր թէ արևը ո՞ր կողմից է ծագում, շրջանի մէջ տեղը նստեցրին, գլուխը քողով ծածկեցին ու վիճակի կճուճը առջևը դրին։ Ապա փոքրիկ աղջիկը կճուճի բերանից վերցրեց ծաղկեփունջը։ Էս ծիսակատարութիւնից յետոյ ամենքը սկսեցին հերթով ջանգիւլում երգել։ Ամեն մի քառեակ երգելուց յետոյ փոքրիկ աղջիկը մի իր էր հանում կճուճի միջից։

Եւ խումբը երգում էր։

Ալ քաթիպէս կարել եմ, Ջան ջիւլում Ջան Ջան.
Ոսկէ կոճակ շարել եմ, Ջան ջիւլում Ջան Ջան.
Նանի Ջան դարդ մի անիլ,
Սիրած եարս ճարել եմ։

Աղջիկ աղջիկ ալ աղջիկ,
Աչքերդ չալ չալ աղջիկ,
Դու մեր տանը հարս պիտը
Իմ քիրը քի տալ աղջիկ։

Ծիտը թռաւ մեր արտէն
Կարել ա սրտիս փարդէն,
Աշուղ չի աշուղ դառայ,
Բէմուրեաթ եարի դարդէն։

Ըսօր ամպ ա պարզում չի
Ղալամ բռնեմ սազում չի.
Իմ անիծած սև սիրտը
Մի օր էլ ա պարզում չի։

Եւ ամեն մի վիճակ հանելուց յետոյ եթէ լաւն էր լինում, ուրախանում էին ու տիրոջ մասին հանաքներ, սրախօսութիւններ էին անում. իսկ եթէ ախուր վիճակ էր դուրս գալիս, մխիթարում էին տիրոջը, որ սուտ է վիճակը, բանը բախան է ու Աստուած կեն. կեն.։

Վիճակահանութիւնը վերջանալուց յետոյ, կճուճի ջրից ածին մի փոքրիկ ամանի մէջ և ձեռքներում պահելով, գուշակութիւններ էին անում։ Եթէ ամանի միջի ջուրը դէպի աջ էր շարժւում, նշանակում էր որ ընթացիկ տարին լաւն էր լինելու, իսկ եթէ ձախ՝ ուրեմն վատ կեն.։ Էդ էլ վերջացնելուց յետոյ, հանաք անելով, բունգլը—հանելուկ ասելով, թևանցուկ արած՝ թռւռալով

վերադարձան տուն և ժողոված մթերքից, կաթնով սպաս, ձւածեղ, տապակած ճուտեր պատրաստելով, նստեցին ուրախ ուրախ ճաշեցին։ Ճաշից յետոյ պարի եղանակները նիհնրի տալով հերթով պարեցին։ Մի քիչ ժամանակ էլ ճղալախտի խաղացին, իրար մէջք ու թիկունք պօղացրին ու յետոյ մեր պարտիզի վիթխարի ընկուզենիներից մէկի ճիւղից թոկ կախեցին ճլորթու համար։

Ճլորթու թոկի ներքևի ծէրում մի տախտակի կտոր ամրացրին և հերթով՝ երբեմն զոյգ զոյգ կամ կենտ կենտ տախտակի վրայ կանգնում կամ նստում էին ու թոկերից բռնում։ Իսկ միւսները ներքևից սկզբում թոյլ՝ ապա աստիճանաբար աւելի ու աւելի ուժեղ էին հրում ճլորթին։ Եւ ճլորթին օդի մէջ ճօճւելով՝ վերջում էնքան էր բարձրանում, որ քիչ էր ճում վիթխարի ծառի կատարին հասնէր։ Երբ ճօճւողների աչքերը մթնում էին ու գլուխները պտտւում, նրանք նշան էին տալի ճլորթին կանգնեցնելու։ Սակայն դու ոչ մեռնիս, ներքևում կանգնած աղջիկներից մէկը սկսում էր ճլորթու վրի աղջիկների ոտքերին ճիպոտով հարւածներ տալ ու հարցնել՝

—Նշանածիդ անունն ինչ ա։

—Ես նշանած չունիմ, պատասխանում էր ճլորթու վրից աղջիկը։

—Չէ, պէտք ա ասես, կրկնում էր իր հարցը ներքևի աղջիկը, հարւածները շարունակելով։

—Թորոս ա։

—Չէ։

—Մաթոս ա, Մարկոս ա, Ղուկաս ա, Փիլիպոս ա։

—Չէ, չէ, գրուսան ասա։

—Դէ Զիպո, հը՞։

—Չէ, չէ, չէ։

Եւ հարւածները շարունակւում էին մինչև որ հարւածւող աղջիկը—եթէ նշանուած էր—իր նշանածի իսկական անունն էր յայտնում կամ եթէ նշանուած չէր, մի

էնպիսի անուն էր տալի, որ հարուածողին հաւանական էր թուում և նա դադարեցնում էր իր գործողութիւնը։

Ճլորթին տևեց մինչև արևի մուտքը, որից յետոյ հարսն ու աղջիկը ուրախ ուրախ ցրուեցին իրենց տները։

Գլ. 11

Լևոնի կրտսեր հօրեղբայրը Շուլաւէրի հաշտարար դատարանում քարտուղար։ Նա իր կնոջն ու Լևոնին տանում է իր մօտը։ Լևոնը հօրեղբօր գաւակին։ Ձիու տէրը Լևոնին իջեցնում է ձիուց։ Ադամամութը։ Արշալոյսը ճամփին։ Ճամփի նկարագրութիւնը։ Վերջալոյսը։ Լևոնը «մնաս բարև» է ուղղում իր ծննդավայրին։ Նրա հօրեղբօր վախը։

Մեր բաժանքից յետոյ, իմ կրտսեր հօրեղբայրը կնոջը իր աներանց տանը թողնելով, գնաց և Շուլավէրի հաշտարար դատարանում առանց ոճիկի գրագիր մտաւ։ Սակայն իր անբասիր ու շիտակ ծառայութեան համար, մի քանի ամսից յետոյ, քարտուղարի պաշտօն տւին իրեն։ Եւ հէնց էդ աշունքին երբ կնոջը մօտն էր տանում, տարաւ և ինձ ուսում տալու խոստումով։

Գիւղում մեզ էլ էր ռանչպարութիւն անում քեռենուս և բաժան հօրեղբայրներիս օգնութեամբ։ Մեր միակ մի օրաւար արտը արդէն հնձել կասել լինք, ստացած ցորենը մի տարի բաւական էր մեզ. մի կերպ քիչ էլ իւղ ու պանիր էինք իրար գցել։ Փողը հօ մեզ համար սև աղէտ էր դարձել։

Մեզ իմ ուսելու համար մի բեռը ալիւր, քիչ էլ իւղ ու պանիր դրեց և մենք աշնանային մի ցուրտ առաւօտ ճամփա ընկանք դէպի Շուլաւէր։ Աքաղաղը առաջին բերանը կանչեց թէ չէ, իմ քրեհդար Առաքելը մեր բը-

դկից մօրս ձէն տւեց, որ պատրաստուենք։ Մէրս աթալ փաթալ տեղից վեր թռաւ, հագնուեց, ճրագ կրակ արեց և իմ նախաճաշիկի համար համ մխլով շինեց, համ ձւաններ թերախորով արեց։ Ես էլ հագնուեցի, լուացւեցի և նստեցի ուտելու։ Շատ կանուխ լինելու պատճառով, ախորժակ չունէի, ծեղծամ էի տալի, իսկ մէրս ստիպում էր, որ անպատճառ ուտէի իր բոլոր պատրաստած կերակուրները։ Դեռ իրիկնանից վառիկները էլ էր տապակել ճամփի պաշարի համար, դրանց լաւրդ ու քարճիկներն էլ էր ստիպում, որ մենակ ես ուտեմ։ Գրպաններս էլ հօ՝ չրով, չուչխելով, կակալով, սերկևիլով և տանձ ու խնձորով տոպացրել էր։

Տակաւին բաւական գիշեր կար, որ Առաքէլը ձին քաշելով մեր դուռն եկաւ. բեռը բարձեցինք ձիուն, բայց ինձ համար հեծնելու տեղ ու հնարաւորութիւն չկար։ Առաքէլը ձին քաշելով ես ու մէրս էլ նրա հետևից գնացինք հօրեղբօրս աներանց տուն։ Հօրեղբայրս իրըև հաշտարար դատաւորի քարտուղար, գիւղից երեք ձի էր վերցրել կոռով. մէկին բեռն էր բարձած, իս միւսներին ինքն ու կինն էին նստել։ Մօրս հետ համբուրւելով, հօրեղբօրս առաջարկութեամբ հեծայ իր գաւակին։ Մէկ էլ ես մտիկ տալով, նկատեցի որ մէրս ունգլուկի*) փեշով աչքերը սրբում էր...։ Սիրտս թախիծով ծածկւեց։ Գիւղից մի վերստաչափ հազիւ էինք հեռացել, որ ձիու տէրը բողոք յայտնեց իմ թարքին նստելու մասին։ Հօրեղբայրս խնդրում էր, որ գոնէ մինչև ձորի գլուխ թողնի ինձ համ, բայց նա չէր յօժարւում։ Իսկոյն ձիուց ցած թռայ և խառնւեցի ձիատէր հետևակներին։ Միայն մի բանից էի գոհ, որ ձիու տէրը մօրս ներկայութեամբ չի վայր բերեց ինձ. որ մէրս համոզւած լինելով թէ իբրև ես միշտ հօրեղբօրս թարքին կը լինեմ, հանգիստ կը լինէր գոնէ։ Ճորաբաշին ձիաւորներն էլ ձիաներից իջան և մեր խոր ձորը ամենքս էլ ոտքով ցածրացանք։ Դեռ մութն էր.

*) ունգլուկ—գոգնոց։

կարծես լուսանալու միտք չունէր. սակայն երկինքը աստղազարդ էր։ Դևբէթի գետին հասնելով, ճամփէն հատ մեմատաբար լաւ էր, էնպէս որ ձիաւորները հեծան, իսկ հետևակներս գնում էինք գետի հոսանքի ուղղութեամբ։ Դևբեթի վշշոցն ու թշշոցը խորհրդաւոր էր գիշերւայ էդ պահին. կարծես իմ թախծալից սրտի արտայայտութիւնը լինէր։ Ոտքով քայլելուցն էր թէ դարդից՝ չգիտեմ,—բայց ցուրտն էլ էնպէս զգալի չէր ինձ համար։ Գնում էինք հա գնում, լոյսը չէր բացւում։

Սանահնի պատմական քարէ կամրջին հասնելով, թեքւեցինք դէպի ձորը. զառիվերով բարձրանալով մըտանք Ալլահվերդու պղնձահանքի յունական գիւղը։ Հանքերի ծուխը ամպի նման չոքել էր ամբողջ գիւղի վրայ։ Գիւղից բարձրանալով ճամփէն մերթ ձախ թեքւելով, մերթ աջ՝ սարալանջերով, անտառներով, տեղ-տեղ բաց հովիտներով, ձորակներով, զառիվերներով, զառիվայրներով գնում էինք ու գնում։ Ճրքճրքան լուսաստղը թէև արդէն ծագել էր, սակայն լոյսը դեռ հեռու էր։

Յետոյ մի պահ էնպէս մթնեց, որ կողք կողքի գնալով՝ հազիւ էինք նշմարում իրար։ «Ադամամութն ա, հրէս կը ծէգի, ասացին գիւղացի ուղեկիցներս։ «Ադամամութը ո՞րն ա», հարցրի ես։ Գիւղացիներից մէկը հազաց, կոկորդը մաքրեց ու սկսեց ծանր բարակ պատմել հետևեալը՝

«Էյ գիդի հա, ըղորմի քի Տէր-Աբութին, հմա առակախօս մարդ էր հա. մի հետ քշերհանայ սարն ինք գընում մի թաբուն մարդ, ես ի, նա էր, Փարսադան քեօխուէն էր, Մուկուչ քեօխուէն էր, Շօլի քեօխուէն էր, Աթին էր, Մադին էր, հմա աւինդն էլ մի խիսա չեր ու անոշ աւինդ էր. Ասծու դարգահը շէն կենայ, տարին էլ մի լի ու առատ տարի էր. բոլ հաց էր եկել, խոզի կերը խուշմբլանա էր, մասիլը հէնց էր, ոնց որ տէր ինքը մէջը նստած ըլի։ Ախէլի խոռը աշմիշ ըլելիս՝ էլ ըսէնց յաթամամութը կոխեց, ըղորմածիքի տէրտէրը ասաւ գիտէք խի են ըստուր յաթամամութն ասում. ասինք դէ մենք խի ենք, գեղըցի, ռամիտ մարդ ենք տէրտէր չանի, ինչ տենք գիտենալ, էն ա, ասինք, իք արա, ասա իմանանք, հլըաթ ճին էլ մենք կասենք ու փոքուդ ըղորմի կը տանք։ Էն ա ըժու ըքեց թէ, եվ երգնէյին թագաւորը յաթամին դրախտիցը դուս արաւ հա, չունքի նա տիրոնջ հրամանը լսել չէը, ըռեխը կրակւածի պէս արքելած խնձորը ըքել էր—լափել էր,—ասենք նրան եւէն էր ըքել, եւին էլ օցի ղըղը մտած ատանէն էր ըքել,—հա էն ի ասըմ, ծէրքի քշերը յաթամին շատ երգէն թւաց, չունքի դէ դրախտումը ըսկի իք չէր արել—քշեր չէր տեհել։ Էն ա եվ ըռաւօտւայ էս չախին ըսէնց գէշ մթնում ա հա, յաթամի սիրտը չլիզ փորն ա ընգնում վախիցը։ Էնց գիտում ա թէ էնա ինչ յաւիտենական ըսէնց մութը պտի մնայ։ Էմա դէ գիտնուկ ատանէն ընդի հազրումը կար ըլի՛. էն սհաթնևեթ էս քու յաթամի ըղաքին բհամ եկաւ ու թէ՝ «յաթամ, ասաւ, բի փոքիդ ինձ վրայ ըքի, իք արա, լիսը բաց անեմ» ասաւ։ Լաւ, ասաւ յաթամն ու ձեռացաը բաց տուց, փոքին ատանի վրայ ըքեց—ծախեց։ Դէ էնա լիսը իրան իրան բաց էլաւ. յաթամը հէնց իմացաւ թէ՝ ատանէն բաց արաւ։ Էմա տունը չքանդի յաթամի, ընդուցէ եղը մարդկային փոքիքը դժոխքի փայ դառան ու անշէջ կրակի միջումը էրւեցին մչանց տէր մեր Յիսուս Քրիստոսի գալուստը։ Ըստեղ ըղորմած փոքին երեսը ըքեց—խչակնքեց, չիմա էլ իմանակ արինք նրան, երեսնուս խչակնքեցինք ոնց որ հմի։ Ըժու Քրիստոսն եկաւ, գնաց դժողքը մտաւ, ատանէքին իք արաւ, կործանեց, դժողքը քար ու քանդ արաւ, յաթամի ձեռագիրը ջնջեց ու մարդկային փոքիքը ըքեց—ըղատեց։ Էն ա, էն օրից դէսը էս բանի անումը յաթամամութ կպաւ»։

Մեր քայլածքի արձագանքից ու խօսելու ձէնից երևում էր, որ լոյսը մօտիկ է.—որովհետև գիշերը մեր

ոտքերի թմփթմփոցի արձագանքը և մեր ձէնը խուլ էին հնչւում, իսկ հիմի լուսաբացի շեմքում արդէն աւելի պարզ էին հնչւում։ Եւ իսկապէս շուտով նկատեցինք թէ ինչպէս երկնքում, արևելեան կողմը, մի փոքրիկ տեղ փայլատակեց ու մի ակնթարթում անհետացաւ։ «Ծէքը գցեց», ասացին գիւղացիք։

Ծառերի սաղարթների վրայ պատսպարւած թռչունները արթնացան, ջներից դուրս եկան ու ճիւղերի վրայ թառ ելան։ Դրանք նախ ցածը, ապա հետզհետէ բարձր ձէնով սկսեցին իրենց ախորժալուր ծլըւըլոցը։

Արշալոյս էր։ Ժաւարը տեղի տւեց լոյսին։ Արևելեան կողմը երկինքը հեռւում գորշ՝ իսկ մօտիկում բաց մաւի գոյն ստացաւ, նման էն գոյնին, ինչպէս յոյսն են պատկերացնում։ Հարաւային ու հիւսիսային կողմերի ծէրերում երկինքը Թոզախառը-ծիրանեգոյն էր, իսկ արևմուտքում աղջամուղջն էր տիրում տակաւին։

Լօռու և Ղազախի հսկայ լեռների շարքերը ցոյց տւին իրենց հպարտ կատարները։ Ծառերը տեղ տեղ հատ ու կենտ, տեղ տեղ խմբերով կարծես մի սրբազան զգացմունքով աղօթք լինէին մրմնջալիս «Արշալոյսին»։ Սարերը հակառակ կողմի վրայ աղօտ ստւեր էին գցել։ Շողշողուն Արուսեակը երկնակամարի վրայ թառ ելած՝ վառվռին էր տալի իր դեղին փայլով և կարծես արևի ճառագայթներից քարշելիս լինէր, որպէս զի արևին էլ իր եռանից դուրս բերի։ Միւս աստղերը նսեմացել էին արդէն։ Միայն արևմտեան կողմում երևում էր գունատած ու մանգաղի պէս կեռ կիսալուսինը։ Երկինքը հետզհետէ աւելի նոր նոր հիասքանչ գոյներ էր ստանում։

Արևելեան կողմում, երկնքի բաց մաւի գոյնի հետ միախառնւեց և վառ ծիրանագոյն արտին, ինչպէս հրդեհի բոցի արտացոլում։—Էդ նշանակում է, որ եղանակը

փոխւելու է անձրևայնի—։ Իսկ հարաւային ու հիւսիսային ծէրերում, լեռների կիսամթին ֆօնի վրայ ծիրանին աւելի թանձր էր ու խաւուտ։ Արուսեակը կամաց կամաց նսեմանում էր։

Արևմուտքից էլ աղջամուղջը չքացաւ։ Լեռները երևացին իրենց գորշ գոյնով, իսկ երկինքը պայծառ բաց մաւի գոյն ստացաւ ինչպէս ծովի ջուրը։ Որքան արևելքում արշալոյսը պարզւում էր ծիրանին կաթնանման ապիտակի փոխելով,—էնքան արևմուտքում բաց մաւին մգւում էր։

Թէև ցուրտ էր, բայց և էնպէս առաւօտւայ զեփիւռի դէմքիս շոյելը դուր էր գալի։ Արևը ծագեց ու իր փայլուն ճառագայթներով լուսաւորեց արար-աշխարհը։ Սակայն նրա ջերմութիւնը տակաւին մուտք չէր գործել ձորերի խորքը, էնտեղ ստւերն էր թագաւորում դեռ. ներքևից յուսահատ կռիւ մղելով արևի ճառագայթների դէմ։ Իսկ արևմտեան կողմի լեռների կատարներին էին հասել արդէն արևի շողերը։

Արշալոյսից պակաս տպաւորութիւն չի թողնում և վերջալոյսը։ Վերջալոյսը նոյնպէս լինում է և՛ բաց մաւի և՛ ծիրանեգոյն, երբեմն նաև պղնձագոյն։ Վերջին դէպքում՝ արևային եղանակ է գուշակում։ Շատ դեղեցիկ է լինում վերջալոյսը, մանաւանդ երբ երկնքի վրայ քարակաշերտ կտոր կտոր ամպեր են լինում, իսկ արանքներից բաց մաւի երկինքն է երևում, կարծես ալիքաւոր ծովն է ծփում առաջիդ, տեղ տեղ փրփուրի շերտն երեսին։ Սակայն մի տարբերութիւն կայ արշալոյսի և վերջալոյսի միջև։—Արշալոյսը վերջանալով և տեղի տալով արևի ծագելուն, մարդուս մէջ մեծ յոյս է ամրապնդում, ասես կեանքի գարունն է աւետում։ Իսկ վերջալոյսը վերջանալով և խաւարին տեղի տալով, ընդհակառակը մարդուս մահն է յիշեցնում և ստրջանք ազդում։

Յունական Ալլահվերդի գիւղի վերևից մէկ էլ ետ

նայեցի դէպի մեր լեռները ու ձորերը, սիրտս փուլ եկաւ ու մաքումս մրմնջացի։ «Մնաք բարով ով հպարտ ու սիրուն լեռներ, Գեօլուրթ, Զաթինդաղ ու Լալւար, զուլալ ու անուշ Գուրուրան. մնաք բարով էյ ձորեր, փոսեր ու ապառաժներ. թմբեր ու բլուրներ, սաւերաշատ ծերպեր ու ծործորներ. սիրուն դաշտեր ու հովիտներ, հովաշունչ ու բուրալից անտառներ, ծմակներ, սիրունիկ ծլլլան թռչնակներ, սառն աղբիւրներ և դու՝ հռչակաւորդ «կենդանարար*)», կարկաչահոս վտակներ և դարդոտ ու վշտոտ Դևբէյթ։ Մնաք բարով բոլորդ, բոլորդ էյ իմ մանկական անուշ ու քնքուշ յուշեր։ Ես ձեր շնկշնկան հովերին մեռնեմ, ձեր անուշ ջրին ու հողին մեռնեմ, ձեր ծառին ու թփին մեռնեմ, ձեր քարին ու ժայռին մեռնեմ, ես ձեր վարդ-մանուշակին մեռնեմ։ Մնաք բարով և դուք իմ հարազատներ,—իմ բազմատանջ մերիկ, սիրասուն քոյրեր, անուշիկ Ջանում, ազգականներ ու դրացիներ, մտերիմ ընկերներ ու հայրենակիցներ»։

Արևը բաւական բարձրացել էր դէպի հորիզոնը, որ մենք Ալլահվերդի գիւղից դէնը առաջին մեծ սարը իջնելով, հասանք էսպէս կոչւող «Մեխակի աղբիւր»ին։ Աղբիւրի մօտ հանգստանալով, նախաճաշեցինք և սառն ու անուշ ջրով ծարաւներս յագեցրինք։ Ճաշն էլ «Ուչքիլիսա» կոչւող աւերակ եկեղեցիների սահմանի անտառում կերանք՝ նոյնպէս մի սառն աղբիւրի մօտ։ Էնտեղ էլ շատ քօլի տանձ ու խնձոր ժողովեցինք, համ կերանք համ հետներս վերցրինք։

Արևամտին հասանք Դամիա կոչւող փոքրիկ հայաբնակ գիւղը։ Հօրեղբայրս աւազակներից երկիւղ կրելով, գիւղից մի հրացանակիր մարդ վարձեց, որ մինչև Շուլաւէր ուղեկցի մեզ։ Երբ գիւղի մօտի բլուրի բաց գլուխը հասանք տեսանք որ էնտեղ խոտի պէս վայրի քօնդար էր բուսած։

*) «կենդանարար—կոչւում է մեր գիւղի աղբիւրի ակը։

հօրեղբայրս սկսեց ագահ ագահ քօնդար փետել ու ինձ էլ ստիպեց էնպէս անել։ Մինչդեռ մենք սուաց եզների պէս քօնդար էինք փետում, մեր ուղեկիցները բաւականաչափ հեռացել էին մեզանից։

Հօրեղբօրից անկատելի՝ մտել էի մօտակայ անտառի խորքը. իսկ նա կարծելով որ ես ճամփէս եմ շարունակում, ինքն էլ սկսեց արագ արագ առաջ գնալ։ Անտառից դուրս գալով՝ երբ տեսայ որ հօրեղբայրս բաւականին հեռացել էր, ետևից վազեցի։ Բայց նա ոտքերիս արձագանքից ահ առած՝ փախսահարեց, երևի կարծելով թէ աւազակներն են հետապնդում։ Միալար ձէն տալով, հազիւ հազ կարողացայ համոզել որ ես էի։ Երբ ետևից հասայ, տեսայ որ քիչ էր մնացել, որ խեղճի շունչը կտրւէր ահից ու փախից։ «Տէս, տանը բան չասես հա», սպառնալով նախազգուշացրեց նա ինձ։

Պինդ մուրճն էր, որ հասանք Շուլաւէր։

Գլ. 12.

Լեռնը Շուլաւերում ա. անգամ. հօրեղբօրից դասեր է առնում. նրա հետ աղօթք է անում. կարօտով դրպրոցի աշակերտներին է նայում. թղթեր է արտագրում ռուսերէնից. ծեր մօրաքրոջից թուրքերէն և քննչի թարգմանից ռուսերէն խօսել է սովորում։ Կանանց համար բախտի կուշակութիւններ է անում։ Նաւասարդի ութը, «քաշկա»ն։ Լեռնը դպրութիւն է անում. անայլին վարժապետ է դառնում. աշակերտուհին վախճանւում է։ Իրենց տանտիրուհու փոքրիկ քոյրը։

Շուլաւերը մեծ գիւղ է, մեր գիւղից շատ մեծ։ Դեռ հեռուից անհամար ճրագների լոյսը տեսնելով, ուրախութիւնից սիրտս ծուլ ի ծուլ ելաւ։ Գիւղի այդինների միջով անցնելն էլ երկար ժամանակ տևեց։ Թէև մութն էր, բայց տեղ տեղ երևում էին երկյարկանի քաղաքաս-

տուրի տներ ապակէ լուսամուտներով, որոնց միջով լոյսը փողոցին էր հասնում։ Ին ժամանակ մեր գիւղում էպպիսի տներ չկային և Շուլաւերի երկյարկանի ու պատըշգամբաւոր տները լաւ տպաւորութիւն էին անում վրէս։

Մենք իջանք հօրս հօրաքրոջ տանը։ Պառաւ մօրաքոյրը դեռ կենդանի էր, մի ամուսնացած որդի ունէր և մի տղայ թոռը։ Վերջինս ինձանից փոքր էր։ Ես արդէն տասնումէկ տարեկան էի։ Մենք էլ նրանց ընտանիքին միանալով, ամենքս ապրում էինք մի մեծ սենեակում։ Մօրաքրոջ հարսը ինձ շատ լաւ էր նայում։ Սակայն օրերս շատ տխուր էին անցնում։

Հօրեղբայրս վաղ առաւօտից գնում էր դատարան և ճաշելու համար շատ ուշ էր վերադառնում։ Ճաշերից յետոյ մի ժամի չափ հետս պարապում էր միայն ռուսերէնից ու թուաբանութիւնից և դարձեալ գնում էր դատարան մինչև ուշ գիշեր։ Մինչև նրա վերադարձը անկողին մտնելու իրաւունք չունէի ես. գիրքն առջևս դրած միալար նընջում էի ու ճակատս գրքին խփում. էդ բաւական չէր, նրա գալուց յետոյ էլ, էնքան տպաստում էի, որ ընթրիքը վերջացնում էր ու սկսում էինք միասին աղօթքներ կարդալ։ Ամբողջ «Հաւատով խոստովանիմք»ն ու «Եկեսցէ»ն վերջանալուց յետոյ միայն իրաւունք ունէի քնելու։ Մեծ պասին հալա «Տէր Ամենակալ»ն էլ աւելացրինք։

Իմ դասագիրքը դարձեալ Տէր-Յակովբեանի էն չաբաթաստիկ учебникъ-ն էր։ Էդ «ուչեբնիկ»ի մէջ «հազար ու մի գիշերներ»ից արտատպած մի շարք հէքեաթներ կային։ Որովհետև հիմի էդ հէքեաթներն էի սովորում գրաւոր մեկնութեամբ, ուստի դասերս շատ-քիչ հետաքրքիր էին։ Բայց և էնպէս տանը մենակ ձանձրանում։ Իմ միակ հոգեկան մխիթարութիւնը առաւօտն ու կէս օրից յետոյ էն պահերին էր լինում, երբ դուրսը մեր տան պատի առջև կանգնած, դպրոցական աշակերտների երթևեկն էի դիտում։ Էդ րոպէներում խսպառ մոռանում էի և՛ կարօտ, և՛ ձանձրութիւն, և՛ վիշտ ու թախիծ։ Անսահման սիրով սիրում էի ես դպրոցական աշակերտներին անխտիր և նրանց հեռանալուց յետոյ միայն սիրտս երբեմն փուլ էր գալի ու գաղտուկ լալիս էի։ Երբ ռուսերէն գրելում բաւական վարժուել էի, հօրեղբայրս դատարանից գործի թղթեր էր բերում, որոնցից պատճէններ էի արտագրում։

Մեր ծեր մօրաքոյրը թուրքերէն լաւ խօսել գիտէր. միշտ նրա հետ թուրքերէն էի խօսում։ Մի բառ-գիրք էլ կազմել էի, որի մէջ մեկնութեամբ գրի էի առնում չըհասկացածս բառերը։ Նոյն ձևով նաև, ազատ միջոցներիս ռուսերէն խօսել էի սովորում դատական քննչի ռուս թարգմանչից, որը պաշտօնաթող գինուոր էր հայախօս ու մի բարեսիրտ մարդ։ Մի ամբողջ ձմեռ ես էր իմ զբաղմունքը։

Միայն մի հանգամանք, երբեմն այլակերպութիւն էր մտցնում իմ աղքատիկ կեանքի մէջ։ Հօրեղբայրս մի հին էֆեմերդի ունէր, որի մէջ բացի երազների մեկնաբանութիւնից ու մարմնակազմի մասերի խաղալու մասին բացատրութիւններից, կար նաև բախտի գուշակութիւն և «Պղնձէ քաղաքի պատմութիւն» անունով մի ուրիշ գրքոյկ։ Երազահանով երբեմն ես մեր տանեցոնց համար գուշակութիւններ էի անում։ Հուրը հարևան կանանց էր հասել ու նրանք հօրեղբօրս բացակայութեան միջոցին յաճախ հաւաքւում էին գլխիս ու իրենց համար ֆալ բանալ տալի կամ երազների ու աչքի-հօնքի խաղալու մասին մեկնութիւններ խնդրում։ Ես տրիտուրը ինձ համար բերում էին չուչխել, սերկևիլ, ձու ևն.։

Մի դեռատի, սևաչեայ սիրուն հարևանուհի ունէինք, որը համարեա ամեն օր կամ բախտն էր գուշակել տալի կամ երազների ու մարմնամասերի խաղալու մասին մեկնութիւններ պահանջում։ Միշտ էլ առատօրէն վարձատրում էր։ Մի քանի անգամ էլ երազահանը ձեռքիս ի-

բենց տուն հրաւիրեց, երբ ինքը մինակ էր լինում։ Առաջս էր լցնում խաղողի քանդաղ, չուչխել, սերկևիլ, թեւով շարած տանու չամիչ, ընկոյզ ու չիր. մի երկու անգամ էլ ձւածեղ ուտեցրեց։ Յետոյ ինձ ամուր փարում էր իր կրծքին ու ցաւեցնելու չափ պինդ պինդ համբոյրները տեղում թշերիս, շրթունքներիս, աչքերիս։ Սկզբում էնքան ոչինչ, բայց յետոյ չգիտեմ ինչու՝ շատ վատ էր ազդում ինձ վրայ էդ բանը և մի քանի այցելութիւններից յետոյ դադար ուի։ Դրանից յետոյ ինքն էր յաճախում մեզ մօտ առաջւայ պէս։ Երբեմն էլ պղնձէ քաղաքի պատմութիւնն էի կարդում կանանց համար, որոնք շատ էին զարմանում ու շնորհակալ լինում։ Բայց և էնպէս շատ էի կարօտել մերոնց ու մեր երկրին։

Երբեմն երկնակամարի տակ կռունկների ուշացած երամներ էին պտըտւում ու իրենց թախծոտ ձէնով ուշքըս գրաւում։ Հայրենիք էին վերադառնում։

«Կռունկ ուսոտի կուգաս ծառայ եմ ձայնիդ,
Կռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունիս,—

Երգում էի ես կամացուկ և երբեմն էլ դաղտուկ լալիս։

Նոյեմբեր ամսին, ս. Յակոբի պատի թաթախման շաբաթ օրը, Շուլաւերում մեծ շքով կատարւեց հին հայոց նաւասարդի տօնը (ամանոր)։ Էդ ծիսակատարութիւնը մեր գիւղում չկայ, մենք տօնում էինք միայն յունւարի մէկի նոր տարին։ Դեռ ուրբաթ օրը սկսեցին շուկայում ու թաղերում չաղ չաղ կովեր ու եղներ մորթել։ Միսը շուտով գնւեց։ Իրիկունը ամբողջ գիւղը հրավառւած էր։ Ամեն մի տուն իր առանձին հացատունն ունէր և ահա ամենքը չոր ցախով վառել էին թոնիրները։ Բոցը թոնիրներից ալիքաձև բարձրանալով ու օդի մէջ ամեն ուղղութեամբ տարածւելով, ներկայացնում էր մի հսկայ հրաւառութեան պատկեր։ Տեսարանը թէև մի կողմից աւելի ուշագրաւ դարձաւ, սակայն միւս կողմից էլ շատ ցաւալի էր, երբ կրակը բռնկելով՝ երեց մի ողորմելի այրի կնոջ հացատունը...։

Երբ մեր թոնրի բոցը մարեց և թոնրի մէջ շեղջը կիսաւեց, մերոնք մի մեծ կաթսայի մէջ կարտաճ միս ու արանքներում էլ ցորենի ձաւար ածելով, լցրին ու թոնիրի մէջ շեղջում թաղեցին, նախապէս կաթսայի բերանին խմորով մի սինի ամրացնելով։ Թոնրի բերանն էլ՝ սընդուն էլ ամուր փակեցին, որպէսզի օդ չը մտնէր ներս։ Կերակուրը, որին «քաղկա» են ասում, թոնրի մէջ ճնաց մինչև միւս առաւօտ։ Էքսի առաւօտից սկսեցին փոխադարձ շնորհաւորանքները կեր ու խումով և մրգեղէնով։ Ամեն բանից լաւը «քաղկա»ն էր։

Եկեղեցի գնալը իմնւիրական ցանկութիւններից մէկն էր.—իրիկու առաւօտ անթերի յաճախում էի և ըստ իմ գիտութեան ժամասացութեանը մասնակցում։ Քահանաների թիւը վեցն էր. երեքը աւագ, երեքը նորընծաներ. բոլոր ատրէներն էլ սիրում էին իրենց։ Ես էլ իմ կզմից բոլորին էլ յարգանքով էի վերաբերւում, իսկ Յովհաննէս և Սահակ նորընծաներին աւելի էի սիրում, ինքս էլ նրանց դասում էի դպրութիւն անում։ Տէր-Գրիգոր նորընծան տիրացու չունէր, էնպէս որ հարկաւոր դէպքերում տիրացուի տեղ ինձ էր տանում։ Ծննդեան տօնին նոյնպէս, տներն օրհնելիս՝ ես էի նրա տիրացուն։ Թաթախման իրիկունը երեք նորընծաներն ու Տէր-Գէորգը իրենց տիրացուներով հանդերձ, միասին գնացինք տեղական կալւածատէր երեք եղբայրների տները։ Նրանց տները օրհնելուց յետոյ, աւագ եղբօր տանը պատրաստած ճոխ ընթրիքը վայելեցինք և ապա ամեն մի քահանայ իր տիրացի հետ առանձին առանձին սկսեցին իրենց ծխականների տները շրջել։ Ընթրիքի միջոցին երգելիս, կալւածատէր եղբայրները շատ հաւանեցին իմ ձէնը։

Տնօրհնէքից ստացածս փողի գումարը հասնում էր մօտ երկու ռուբլու։ Սրտով ցանկանում էի էդ փողերով չուստեր առնել ինձ համար, հագիններս արդէն մաշւել

էին, իսկ ճնացողը ուզում էի մօրս համար «խարջլուխ» ուղարկել։ Որքան կուրախանար այրի կինը մինուճար որդու առաջին վաստակից։ Սակայն ամաչում էի հօրեղբօրից թոյտուրիւն խնդրելու, մինչև նա ինքը ձեռքից առաւ վաստակածս կոպէկները։

Ծննդեան տօներից անմիջապէս յետոյ, կալւածատէր աւագ եղբայրը հօրեղբօրս խնդրել էր, որ ես նրա դասերը հայերէն կարդալ սովորեցնեմ։ Հօրեղբօրս կարգադրութեամբ սկսեցի յաճախել կալւածատիրոջ տուն ու դաս տալ աշակերտուհուս։ Դասագիրքը մի կանոն սաղմոսն էր։ Գոնէ ինձ համար շատ տաղտուկ էին անցնում պարապմունքիս ժամերը։ Աշակերտուհիս տասը տարեկան մի նիհար, թուլակազմ ու դալուկ դէմքով երեխայ էր, չալ չալ, բայց ապակու նման սառած աչքերով։ Վախվախելով էի մտնում նրանց մեծ դահլիճն ու դժւարութեամբ էի քայլում մոմած յատակի վրով։ Էնտեղի օդը կապարի պէս ճնշում էր ինձ։ Մինչև պարապմունքս վերջացնում էի ու դուրս գալի,—իմն ինձ էր հասնում։ Երբեմն աշակերտուհուս բարի մէրը չուչխելով ու մրգով հիւրասիրում էր ինձ, բայց ամաչելուց էնքան էի նեղասնում, որ կերածս քթովս էր գալի։

Դժբախտաբար մեծ պասին հիւանդացաւ խեղճ աշակերտուհիս ու... մեռաւ։ Թաղմանը ես էլ էի ներկայ եղբօ տիրացու։ Կարգ կատարելու ամբողջ ընթացքում անընդհատ լալիս էի ու հեկեկում. էնպէս որ, ոչ մի բան չկարողացայ արտասանել։ Վերջ ի վերջոյ նորընծայ Տէր-Յովհաննէսը ստիպեց ինձ ժամաշապիկս հանել և անմիջապէս մեր տուն գնալ։ Մի քանի օրից յետոյ էլ հօրեղբայրս խստիւ պատուիրեց, որ երբէք մեռելի վրայ չերգնամ։ Մի կողմից դարդ էի անում վաղամեռիկ աշակերտուհուս մահուան մասին, միւս կողմից էլ մի տեսակ թեթևութիւն էի զգում որ ազատւած էի անայլին ուսուցչի ձանձրալի պաշտօնից։

Մեծ պասին մի իրիկուն միւս դասից Տէր-Գէորգ հայրը «ի քէն հայցեմք»ը էնքան դիլ ձէնով սկսեց, որ մեր դասում ոչ ոքի ձէնը հետը չդրնեց։ Թէև Յ. և Ս. նորընծաներն էլ լաւ ձէն ունէին, բայց տէր Գ.-ի ձէնը շատ էր ուժեղ։ Էն ժամանակ ես էլ շատ դիլ ձէն ունէի ու մենակ ես կարողացայ մեր դասի բաժին տները երգել նրա հետ։ Թէ քահանաները և թէ եկեղեցու բազմութիւնը ճնացել էին զարմացած։ Մտքումս ասում էի «եթէ Յանուամը էստեղ լինէր»։

Վերջ ի վերջոյ հօրեղբայրս իր մօրաքրոջ ընտանիքի հետ մի սենեակում ապրիլը անյարմար գտաւ և նոյն թաղի տներից մէկի երկրորդ յարկում մի պատշգամբով սենեակ վարձեց։ Ներքևի յարկում ապրում էին տան տէրերը, որոնք երեք եղբայրներ էին, երկուսն ամուսնացած, կրտսերը ամուրի։ Ունէին մի ժրաջան և առոյգ մայր, որը մի սրտացաւ մօր պէս էր վերաբերւում նաև դէպի մեզ։ Նրանց տունը երբեմն այցելում էր ինձ հասակակից մի սիրուն էշխով աղջիկ։ Նրանց կրտսեր հարսի քոյրն էր, անունը՝ Նազլու։ Նրան տեսնելով ես միշտ Յանուամին էի յիշում անձկանօք ու մտքովս անցնում էր մօտենալ էդ աղջկան, գուցէ թէ կամենար նա Յանուամի տեղը բռնել և ինձ համար սիրելի ընկերուհի լինէր։

Զնայելով որ նրանց արտաքին նմանութիւնների մէջ ակնբախ հակադրութիւն կար, բայց Նազլուն կարծես աւելի էր գրաւում ինձ։ Սա Յանուամին հակառակ նախշուն աչքեր ու ոսկեգոյն մազեր ունէր։ Յանուամի թշերը կարմիր էին, իսկ Նազլուինը՝ դեղձի նման։ Առհասարակ սիրուն աչքերը միշտ էլ գրաւում են ինձ, լինին սև սև թէ՝ նախշուն։ Մի բանի մէջ սակայն շատ նմանութիւն ունէին էդ երկու սիրուհիները,—նրանց երկուսի արտահայտութիւնքներն էլ խիտ էին, երկայն ու ծոպերը դէպի վեր ցցած։ Սակայն վերջինիս նախշուն աչքերը, որոնք իմ տեսած եղնիկի աչքերի նման ջրակալած էին ու թախծոտ, գերում էին ինձ։

Դժբախտաբար տակաւին դէպքը չէր բերում, որ ես Նազլուի հետ մօտիկից ծանօթանայի։

Գլ. 13.

Լևոնի մի հօրեղբայրն ու կինը Թիֆլիսից հիւր են գալի։ Լևոնը նորեկ հօրեղբօրից նոր երգեր է սովորում. քարտուղար հօրեղբայրը հրաւէր է սարքում։ Լևոնը երգում է. Թաղի երեխաների հետ այգիներն է գնում. մայիսի վերջին իրենց գիւղն են գնում. գիշերը հիւում են անտառում։ Լևոնի կօշիկը էրւում է. նրա քոյրը նշանուած։ Լևոնը մօր հետ գնում են սարը. տեսնում է Յանուամին. հօրեղբօր հետ գնում են Վարանցովկայ։ Հաշտարար դատարանը տեղափոխւում է ամարանոց։

Զատկի տօներին Թիֆլիսից հիւր եկան մեզ մօտ իմ մեծ հօրեղբայրն իր կնոջ հետ։ Նրանց գալուստը մի նոր բերկրալից հոսանք մտցրեց մեր միապաղաղ կեանքի մէջ, ինչպէս ամառւայ տապին անսպասելի հովն է փչում մարդու երեսին։ Նրանք մի ամսի չափ հիւր մնացին։ Նորեկ հօրեղբայրս մի զւարճախօս ու կենսախինդ մարդ էր. ուստի էն մի ամիսը շատ ուրախ անցաւ ամենքիս համար էլ։ Մանաւանդ ինձ համար, որ զատկի անօրհնէքից ստացած փողերով քարտուղար հօրեղբայրս ինձ համար նոր կօշիկներ էր գնել։ Ի միջի այլոց մեծ հօրեղբօրիցս սովորեցի «Ազնիւ ընկեր» և «Հանգիստ իմ անուշ» երգերը։ Տանըցոց բացակայութեան միջոցներին, մանաւանդ եթէ Նազլուն էլ եկած էր լինում իր քրոջ մօտ, մեր պատշգամբի վրայ եռանդով ու զգացմունքով երգում էի ես էդ նոր երգերը։ Երգելիս ծածուկ նայելով՝

նկատում էի որ Նազլուն պատշգամբի տակից միւս տնեցիների հետ հետաքրքրութեամբ լսում է։

Մի կիրակի օր կրասեր հօրեղբայրս մի համեստ ճաշկերոյթ սարքեց։ Հրաւիրւած էին Յովհաննէս և Սահակ նորընծայ հայրերը և մեր տան տէր միջնակ եղբայրը,—Նազլուի քրոջ ամուսինը։ Ճաշի միջոցին սեղանակիցները սկզբում լամբովին, ապա կենտ կենտ երգելով ինձ էլ առաջարկեցին երգել։ Յ. հայրը նոր էր պրծել իր մին երգ «երկու ձեռին երկու մոմ»ը։ Զգացմունքով երգած էդ երգը էնքան էր տպաւորիչ ու ազդու, որ եթէ չառաջարկէին էլ, գուցէ ես ինքնաբերաբար երգէի։ Սկզբում յանկարծակի գալուց՝ սիրտս սկսեց տրոփալ, բայց հետզհետէ հանդարտւելով տիրապետեցի ինձ և յորդոր եղանակով ու խորին զգացմունքով սկսեցի «հանգիստ իմ անուշ»ը։ Էլ չեմ յիշում թէ ինչ պատահեց։ Երգը վերջացնելով՝ ճնացել էի շւարած ու ընդարմացած, ականջներս թշշում էին ու կարծես ոտքերս գետնից կտրւել էին։ Իսկ հիւրերը մոռացած իրենք իրենց, մոռացած առջևնու կեր ու խումը, որոնք սպրդնած, որոնք կարմրած, մին ինձ էին նայում ակնապիշ, մէկ իրար—խորհրդաւոր։ Րոպէներ անցնելուց յետոյ, երբ ամենքն էլ էդ շշմեցնող տպաւորութիւնից դուրս եկան, հիացմունքով գովեստի կարծիքներ էին յայտնում իմ «սրտառուչ» երգածի մասին։ Ու հէնց էդ առիթով էլ քարտուղար հօրեղբօրս պարտաւորեցրին, որ առաջիկայ աշունքին անպատճառ ինձ ծխական դպրոցը տար, որտեղ ուսուցչական պաշտօն էին վարում երկու նորընծաներն էլ։

Մեծ հօրեղբօրս ու իր կնոջ Թիֆլիս գնալուց յետոյ, շատ տխրեցի ես։ Հիմի էլ երբեմն էն հանգամանքի մէջ էի հաճոյք զգում, երբ հօրեղբօրիցս ծածուկ Թաղի երեխաների հետ գնում էինք այգիները, ալուչա, շլոր, կեռաս ու թութը քաղում-ուտում։ Ճարպիկ ծառագնաց էի ես, կատւ պէս մագլցելով ամենադժւարին լերկ ու

բարձր ծառերի կատարներն էի վերլուում։

Մայիս ամիսն էր. շոգը արդէն զգալի էր ինձ համար և Շուլաւէրի վտակի տաքացած ջուրը ծարաւս չէր յագեցնում։ Մեր սառն աղբիւրներն ու հովաշունչ օդը մտաբերելիս՝ խելքս գլխիցս թռչում էր։ Բարեբախտաբար մայիսը վերջանալուն պէս, հաշտարար դատարանի գործերը տեղափոխեցին Լօռու մալականների Վարանցովկայ գիւղը ամարանոց։ Իսկ մենք մեր գիւղի վրով էինք գնալու Վարանցովկայ։

Որովհետև ձիանները դժւար ճարելու պատճառով ուշ ճամփայ ընկանք Շուլաւէրից, ուստի գեռ կէս ճամփին էինք որ մթնեց։ Իրիկնադէմին էլ երկինքն ամպեց, որոտաց ու սկսեց վարար անձրևը. ահռելած, «Ուչքիլիսա» կոչւող անտառում գիշերեցինք։ Մի սաղարթախիտ ծառի տակ թէժ խարոյկ վառեցինք ու կրակի շուրջը բոլորած մինչև լոյսը հնացինք։ Գրեթէ ամբողջ գիշերը լսելի էր ամպերի որոտը, անտառի ճիչն ու աղաղակը։ Անձրևի խոշոր կաթիլների հետ տեղ տեղ կայծակից կրակի կատորներ էին թափւում...։ Իսկ մեր խարոյկը իր բոցերէն հրսկայական լեզուները հեռուն տարածելով ծառերի ճիւղերն էր խանձում։

Միւս առաւօտը անձրևի ջրով լւացած արևը ուրախ ուրախ փայլում էր։ Դժբախտաբար գիշերը քնած ժամանակ ոտքս մօտեցրել էի կրակին, որից մի հատ կօշիկս էրւել էր։ Հէնց էնպէս մի հատ կօշիկով էլ մտայ մեր գիւղը։ Տակաւին բաւական օր կար։ Թէև շատ էի ամաչում հատ կօշիկանի լինելուս համար, բայց ինչ կարող էի անել։

Գիւղը հասնելով, ուրախ ուրախ վազեցի մեր տուն և սրա գիրկն ընկնելով, նրան փարւելով ու համբուրւելով, կարօտ-կարօտ բարևում էի ամենքին։ Մինչև մեր տուն հասնելն էլ, ցանկանում էի ամեն մի պատահողի հետ գրկւել ու համբուրւել, բայց շատերը չէին ճանաչում ինձ։ Ճանաչողներն էլ էնպէս սառն էին բարևում, որ կարծես երէկ էինք բաժանւել իրարից։ Գիւղի տները աչքիս էնպէս էին երևում, որ կարծես գլխներին չմփած երեխաներ լինէին կուչ եկած. միայն մեր եկեղեցին էր, որ իր առաջւայ դիրքով, վեհապանծ կանգնած էր գիւղի արևմտեան կողմում, Բացակայութեանս միջոցին օրիորդ քրոջս նշանել էին։

Գիւղում մենք մնալու էինք միայն մի շաբաթ ու հօրեղբօրս հետ գնալու էինք Վարանցովկայ։ Լաւ էր որ էդպէս էր, որովհետև Յանուումը սարումն էր ու ես սաստիկ տենչում էի նրան տեսնելու։ Մէկ էլ՝ գոնէ ժամանակ կունենայինք էրւած կօշիկս կարկատնել տալու։

Յանուումենք սարում իմ պապոնց հետ մի ուրթում էին և ահա մի գեղեցիկ առաւօտ մերս ու ես ճամփա ընկանք դէպի նրանց քինէն։ Գիւղից դուրս գալուն պէս հէնց որ ինքս ինձ բնութեան ազատ ծոցում զգացի, սիրտս փառաւորւեց։ Հրաշալի բան է միշտ բնութեան ծոցում լինելը։ Սիրուն տեսարան էին ներկայացնում արևի տակ փայլող, կանաչ մախմուրէ գորգերի նման փռւած արտերը, բուրալից ծաղկաւէտ մարգագետինները, տեսակ տեսակ սիրուն փետուրներով զարդարուն ծլլան թռչունները։ Երեսներս շոյող զեփիւռի սլալան հոտն էլ մի կողմից էր պակասը լրացնում։

Որովհետև արևը նոր էր ծագել, ուստի դրա ճառագայթների ջերմութիւնն էլ դուրեկան էր։ Մինչև արևը կը տաքանար, արդէն մտել էինք տերևազարդ ու սառնաշատ անտառը։ Կանաչ տերևների քնքուշ բուրմունքը, սառն աղբիւրների անմահական ջրերը, իրար յաջորդող կարկաչուն ու վճիտ վտակները, սիրտս լցնում էին մի անհման հաճոյքով։—Լեռնային պաղպաջուն վտակների տեսքը՝ մանկան ժպիտի նման համայիլ է ու կարկաչի ձէնը կարօտի պէս անուշ։

Կէս օրին մօտ էր, որ սարերի գլուխը հասանք։ Լեռների բարձունքներում, մէկը միւսի հետ մրցում էին սառն օդը և արևի միջօրէի կէզը։ Արևի տաքութեան աս-

տիճանը օդի սառնութեան հետ խառնելով, դիւրեկան ջերմութիւն էր տալի օդին, իսկ հովաշունչ օդի սառնութիւնը թուլացնում էր արևի տաքութեան աստիճանը։ Էսպէս երկուսն էլ դառնում էին միաժամանակ բարեխառն ու դուրալի։

Բինին մօտենալով դեռ հեռուից տեսայ, որ Յանումը կուժն ուսին աղբիւրից էր գալիս. ուզում էի առաջը վազել ու փարուել, բայց երեսս չբռնեց։ Նա իրենց դագին հասնելով՝ նկատեց ինձ։ Նկատեց, ամաչելուց շփոթուեց, կարմրեց ու շտապով ներս ընկաւ դագէն։ Երկար ժամանակ դուրս չէր գալի։ Սակայն կամաց կամաց նորից ընտելացանք իրար և ես ոգևորուած պատմում էի նրան Շուլաւէրում անցրածս կեանքի մասին. իսկ նա աշխուժով լսում էր։ Մէրս ու ես միայն երկու օր մնացինք սարում և վերադարձանք դիւղը։

Հասաւ հրաժեշտի ժամը և մի օր հօրեղբայրս ու ես մի ձիու հեծած, նա թամքին, իսկ ես նրա թարքին, երկրորդ ձիու վրայ էլ իւղ, պանիր, թան, մածուն, փոխինձ, ձու ևն. բարձած, ձիատէր գիւղացիների ուղեկցութեամբ ճամփա ընկանք դէպի Վարանցովկայ։ Դեռ բաւական օր կար, որ տեղ հասանք։

Մեծ գիւղ էր Վարանցովկան։ Գիւղամիջի միակ երկայն փողոցով անցնելու միջոցին, նրանց երկյարկանի քարաշէն մեծ-մեծ տների փոքրիկ պատշգամբների վրայ դարսած ծաղկամաններում շարանները գրաւում էին իմ ուշադրութիւնը։ Տեսակ տեսակ սիրուն ծաղիկների թերթիկները արևի վերջալոյսի ճառագայթներով լուսաւորուած, ուրախ ուրախ խաղում էին իրիկնապահի փաղաքշող հովերի հետ։ Արևի ճառագայթներից լուսամուտների ապակիները փայլատակում էին։

Ահա թէ ո՞րն էր Վարանցովկան,—որտեղից ես՝ իբրև թէ խանութի խորհդ էի անում իմ ու քրոջս մանկական խաղերի ժամանակ։

Գլ. 14

Լևոնը Վարանցովկում, խոհարարութիւն է անում. նրա կօշիկը խրում է ցեխի մէջ. գործերի պատճէններ է արտագրում։ Լևոնը դատաւոր. հօրեղբօրը դայրացնում է չայնիկի մէջ թէյը շատ կամ քիչ գցելով։ Փոխարքայի գալուստը։ Հաշտ. դատաւորը ֆրակով, քարտուղարը սերտուկով դատարանում սպասում են փոխարքային։

Վարանցովկէն դեռ էն ժամանակ էլ մի մեծ շէն էր։ Գիւղի միջով միմիայն մի փողոց էր ձգւում երեք վերստաչափ երկարութեամբ, որի երկու կողմերում գիւղական տների շարքերն էին տարածւած։ Ամեն մի տան բակում գտնւում էին տիրոջ հացահատիկների շտեմարանները, պահեստը և պատշգամբի տակ-հաւանոցը։ Իսկ տների քամակին գտնւում էին կալը, խոտի և յարդի տեղերը, գոմերն ու բաղանիքները։ Բաւական երկյարկանի քարաշէն տներ կային, ունեւոր դասակարգին պատկանող, իսկ մնացող տները միայարկ էին ու փէտաշէն, բայց կաւիճով մաքուր սպիտակեցրած, թէ արտաքուստ թէ ներքուստ։

Երկարատև ու հոգդահոս անձրևներից սարսափելի ցեխ էր գոյացել գիւղամիջի փողոցում, էնպէս որ ոտքով երթևեկութիւնը անհնար էր դարձնում։ Իրենք գիւղացիները ձիերով էին իրար մօտ գնալ-գալ անում, իսկ կողմնակի մարդիկ, եթէ չէին ուզում ցեխի մէջ խրւել, տների եռևներով էին երթևեկում։ Հաշտարար դատաւորն ինքն էլ էր տների եռևներով գնալ-գալ անում դատարան։ Հօրեղբայրս, դատաւորի թարգմանն ու ես դատարանի շինութեան մէջ էինք ապրում, որը բաղկացած էր մի դահլիճից ու մի փոքրիկ սենեակից 2-րորդ յարկում։

Հօրեղբայրս հեշտաեռի համար ածուխ գնելը շռայլութիւն էր համարում, ուստի ստիպւած, թղթի կտորներով ու խուշուրներով էի եփ տալի հեշտաեռը։ Խուշուր ճարելն էլ հեշտ բան չէր — անելանելի ցեխը շատ էր խանգարում ինձ բակից խուշուր ժողովելիս։ Մի անգամ էլ էնքան խոր թաղուեցի ցեխի մէջ, որ կողմնակի մարդիկ եկան և հանեցին ինձ։ Ինձ հանեցին, բայց խարազի կարկատնած կօշիկս ձեաց ցեխի մէջ վայ տէր կանչելով։ Դրանից յետոյ հօրեղբօրս հին կրկնակօշիկներն էի հագնում։ Մեր ճաշն էլ ես էի պատրաստում։ Պատշգամբի ծէրին աղիւսներից իմ ձեռքով մի փոքրիկ օճախ էի սարքել և հեշտաեռի պէս՝ թղթի կտորտանքով ու խուշուրներով էի ձու, խաշիլ եփում կամ թան տաքացնում։ Ջրւանները երեք հատ էի եփում, երկուսը հօրեղբօրս համար՝ մէկն իմ։

Կէս օրից յետոյ միայն հօրեղբայրս հետս պարապում էր ռուսերէնից և զանազան գործի թղթեր էր տալի պատճէններ արտագրելու։ Առաւօտները հօրեղբօրից կանուխ վեր կենալով, մանում էի դահլիճն ու սկսում սեղանի վրայ դրած հաստ օրինագիրքը թերթել, որի մէջ ինձ համար հասկանալի կտորներ էին պատահում։ Հետևեալ օրւայ քննելիք գործերը՝ հօրեբայրս նախօրեկի իրիկունն էր դարսում դատաւորի սեղանի վրայ։ Արանք արանք էլ էդ գործերն էի կարդում և իմ հաւանած խընդրագրերից կամ ուրիշ դիւանական թղթերից պատճէններ էի արտագրում, մօտս պահում։

Մի առաւօտ էլ՝ սովորականի պէս երբ էդ օրւայ գործերն էի թերթում, լուսամուտից մարդկային սիլուէտներ երևացին աչքիս։ Դուրս եկայ տեսայ-գառգառեցի հայ գիւղացիներ էին, զուգադիպօրէն նրանք, որոնց գործը ձեռքիս կարդում էի — ։ Անտառապետը տասնեակ մարդկանց վրայ արձանագրութիւն էր կազմել երկու հազար ռուբլու չափ մի գումարի և տւել դատարան։ Անմիջապէս գլխումս մի խիզախ միտք ծագեց և ես գառգառեցոնց կանչեցի դահլիճ։ Ներս եկան, խոնարհ գլուխ տւին ու գրասեղանի առջև կիսաշրջանաձև կանգնեցին։ Իսկ ես դատաւորի բազկաթոռի վրայ առօք փառօք բազմելով, նրա ոսկեգոյն հաստ շղթան էլ վիզս գցելով՝ բաց արի նրանց գործն ու անուններն կարդացի։ Դատաւորն ինքը երբէք շղթան վիզը չէր գցում դատավարութեան միջոցին։ Բացի անտառապետից բոլորն եկել էին, որոնց թւում և անտառապետի վկաները՝ — անտառապահն ու գիւղական տանուտէրի օգնականը։ Վերջիններս՝ իբրև վկաներ՝ իմ առաջարկութեամբ դուրս գնացին պատշգամբ։ Սկսւեց դատավարութիւնը։

— Պարոն անտառապետը ահա էսքան գումարի արձանագրութիւն է ներկայացրել դատարանին, որ դուք թագաւորական անտառից առանց թոյլտւութեան ծառեր էք կտրել, — մեղաւոր էք համարում ձեզ թէ ոչ, հարցրի ես գառգառեցիներին։

— Ո՛չ, աղա ջան, մենք քեռսիբ ըռահաթներ ենք ու ոչ մի ժամանակ անիրաւունք ծառ չենք կտրել. էդ պըրօտօկօլը սուտ են գրել. աբէշչիկն էլ ա մեզ հետ դիւշման, լէսնիչն էլ, մեր քեօխւին էլ իրանց կուռն են քաշել։ Ասծու սէրը աղա ջան, մեզ էդ կրակից թափի, որ դուր տեղն ենք էրւում։

Կանչեցի անտառապահին. — ներս մտաւ մի յաղթանդամ մարդ, աչքերի տակն ուռած, դէմքը գորշ ու աչքերը արիւնըկոխած, ըստ երևոյթին օղու թունդ երկրպագու։

— Ասա խնդրեմ, ինքդ քու աչքով ես տեսե՞լ, թէ ուրիշներից ես լսել, որ սրանք անտառից փէտ են զողացել։

— Ինչպէս չէ, պարոն սուդիա, դրանց կացիններն ու շղթաներն եմ խլել, — լէսնիչ աղին անձնել։

— Ինչ դուրս եկաւ. դու կարող էիր սրանց կացիններն անմեղ տեղը խլել, ասացի ես, ուղիղ նրա աչքերի

Հօրեղբայրս հեշտաեռի համար ածուխ գնելը շռայլութիւն էր համարում, ուստի ստիպւած, թղթի կտորներով ու խուշուրներով էի եփ տալի հեշտաեռը։ Խուշուր ճարելն էլ հեշտ բան չէր — .անելանելի ցեխը շատ էր խանգարում ինձ բակից խուշուր ժողովելիս։ Մի անգամ էլ էնքան խոր թաղւեցի ցեխի մէջ, որ կողմնակի մարդիկ եկան և հանեցին ինձ։ Ինձ հանեցին, բայց խարազի կարկատանած կօշիկս մնաց ցեխի մէջ վայ տէր կանչելով։ Դրբանից յետոյ հօրեղբօրս հին կրկնակօշիկներն էի հագնում։ Մեր ճաշն էլ ես էի պատրաստում։ Պատշգամբի ծէրին աղիւսներից իմ ձեռքով մի փոքրիկ օճախ էի սարքել և հեշտաեռի պէս՝ թղթի կտորտանքով ու խուշուրներով էի ձու, խաշիլ եփում կամ թան տաքացնում։ Ջրւանները երեք հատ էի եփում, երկուսը հօրեղբօրս համար՝ մէկն իմ։

Կէս օրից յետոյ միայն հօրեղբայրս հետս պարապում էր ռուսերէնից և զանազան գործի թղթեր էր տալի պատճէններ արտագրելու։ Առաւօտները հօրեղբօրիցս կանուխ վեր կենալով, մանում էի դահլիճն ու սկսում սեղանի վրայ դրած հաստ օրինագիրքը թերթել, որի մէջ ինձ համար հասկանալի կտորներ էին պատահում։ Հետևեալ օրւայ քննելիք գործերը՝ հօրեբայրս նախօրեկի իրիկունն էր դարսում դատաւորի սեղանի վրայ։ Արանք արանք էլ էդ գործերն էի կարդում և իմ հաւանած խընդրագրերից կամ ուրիշ դիւանական թղթերից պատճէններ էի արտագրում, մօտս պահում։

Մի առաւօտ էլ՝ սովորականի պէս երբ էդ օրւայ գործերն էի թերթում, լուսամտից մարդկային սիլուէտներ երևացին աչքիս։ Դուրս եկայ տեսայ-գառգառեցի հայ գիւղացիներ էին, զուգադիպօրէն նրանք, որոնց գործը ձեռքիս կարդում էի — ։ Անտառապետը տասնեակ մարդկանց վրայ արձանագրութիւն էր կազմել երկու հազար ռուբլու չափ մի գումարի և տւել դատարան։ Անմիջապէս գլխումս մի խիզախ միտք ծագեց և ես գառգառեցոնց կանչեցի դահլիճ։ Ներս եկան, խոնարհ գլուխ տւին ու դրասեղանի առջև կիսաշրջանաձև կանգնեցին։ Իսկ ես դատաւորի բազկաթոռի վրայ առօք փառօք բազմելով, նրա ոսկեգոյն հաստ շղթան էլ վիզս գցելով՝ բաց արի նրանց գործն ու անուններըկարդացի։ Դատաւորն ինքը երբէք շղթան վիզը չէր գցում դատավարութեան միջոցին։ Բացի անտառապետից բոլորն եկել էին, որոնց թւում և անտառապետի վկաները՝ — անտառապահն ու գիւղական տանուտէրի օգնականը։ Վերջիններս՝ իբրև վկաներ՝ իմ առաջարկութեամբ դուրս գնացին պատշգամբ։ Սկսւեց դատավարութիւնը։

— Պարոն անտառապետը ահա էսքան գումարի արձանագրութիւն է ներկայացրել դատարանին, որ դուք թագաւորական անտառից առանց թոյլտւութեան ծառեր էք կտրել, — մեղաւոր էք համարում ձեզ թէ ոչ, հարցրի ես գառգառեցիներին։

— Ո՛չ, աղա Ջան, մենք քեռսիբ ըռահաթներ ենք ու ոչ մի ժամանակ անիրաւունք ծառ չենք կտրել. էդ պըրօտոկօլը սուտ են գրել. աբէշէիկն էլ ա մեզ հետ դիւշման, լէոնիչն էլ, մեր քեօխւին էլ իրանց կուռն են քաշել։ Ասծու սէրը աղա Ջան, մեզ էդ կրակիցը թափի, որ դուր տեղն ենք էրւում։

Կանչեցի անտառապահին. — ներս մտաւ մի յաղթանդամ մարդ, աչքերի տակն ուռած, դէմքը գորշ ու աչքերը արիւնըկոխած, ըստ երևոյթին օղու թունդ երկըպադու։

— Ասա խնդրեմ, ինքդ քու աչքով ես տեսել, թէ ուրիշներից ես լսել, որ սրանք անտառից փէտ են զողացել։

— Ինչպէս չէ, պարոն սուդիա, դրանց կացիններն ու շղթաներն եմ իլել, — լէոնիչ աղին անձնել։

— Ինչ դուրս եկաւ. դու կարող էիր սրանց կացիններըանմեղ տեղը իլել, ասացի ես, ուղիղ նրա աչքերի

մէջ տեղը նայելով։

—Դէ էն ա պրօտօկօլումը գրած ա ըլէ, մ'իթէ ինձ հետաքրքիր չէս, ախր ես թագաւորին դուլլուղ անող մարդ եմ սուտ ոնց կխօսեմ. էն ա ոնց որ ասում եմ՝ հլէ ընէնց ա։

—Լաւ. ինչպէս որ քո լէգենդին արձանագրութիւն է կազմել, դու կարող ես էն համբարքով ու չափսերով գողացած ծառերի արմատները ցոյց տալ ինձ անտառում։

—Գիտեմ ոչ, քիչ մտածելուց յետոյ պատասխանեց անտառապահը։ Ներս հրաւիրեցի տանուտէրի օգնականին։

—Էս պրօտօկօլը դո՞ւ ես կազմել ու ո՞րտեղ։

—Հրաման քեզ, աղա, ես եմ գրել տւել լէգենդու կանոնալարումը։

—Իսկ էս մեղադրող գիւղացիները անձամբ ներկա՞ են եղել արձանագրութիւնը կազմելիս։

—Ոչ։

—Բաւական է, նստեցէք։

Գրիչը վերցրի ու սկսեցի թղթի վրայ արագ արագ խազմզորել, սուտ սուտ։ Մի մին էլ օրինագիրքն էի բաց անում, թերթում ու պատահական յօդւածների թւեր արտագրում։ Իբրև վերջացրի ու տեղից կանգնեցի, ամենքն էլ կանգնեցին, սովորական ձևով կարդացի՝ «по указу его императорскаго Величества» եւն. եւն. ու վերջում հատ հատ աւելացրի.—էս ինչ էն ինչ յօդւածների հիման վրայ, որոշեցի անտառապետի պահանջը մերժել։ Էս էր որ ասացի։ Գիւղացիք իսկոյն ոտքերս ընկան, ուզում էին համբուրել, բայց ես չթողի։ Անտառապահն ու օգնականը մահապարտի նման սկացած՝ քաշւել էին մի անկիւն ու գլխիկոր քարացել։

Յանկարծ դուրսը ձիու սմբակների թմփթմփոց լսուեց.—անտառապետն էր ձիով եկողը,բայց ոչ էն,որը արձանագրութիւնը կազմել էր, այլ նրա յաջորդն էր, որ

եկել էր իր նախորդի գործը պաշտպանելու։

—Աղա Ջան, հմի խում մենք մուրաֆխաս ենք,—չը-գիտեմ լուրջ, թէ կատակով հարցրին գիւղացիք։

—Ձէ, սպասեցէք մինչև դատաւորը կգայ, մի վախէք, անշուշտ նա էլ կարդարացնի ձեզ, յուսադրեցի նրանց։

Բանն էն է, որ դատաւորն ինքն էլ վճռեց մերժել անտառապետի պահանջը։ Գիւղացիք մեկնելիս, կրկին դիմեցին ինձ և իրենց սրտաբուղխ շնորհակալիքն արտայայտեցին։ Իմ ուրախութեանը չափ ու սահման չկար, ինքս էլ էի հաւատում, որ էն խեղճ մարդկանց վիճակը իբրև թէ իմ ձեռքով էր թեթևացել։

Էդ օրւայ իմ սխրագործութիւնն էր երևի պատճառը որ չայնիկի մէջ սովորականից փոքր ինչ առատ էի թէյ գցել։ Էդ հանգամանքը ի հարկէ չվրիպեց իմ տնտեսագէտ հօրեղբօր ուշադրութիւնից։ Նա շատ զայրացաւ և պատւիրեց որ էդպէս շատ թէյ չդցեմ. «չորս չայ գըցի էլի, կենտ չորս չայ» աւելացրեց նա։ Թէև ես շատ լաւ ըմբռնեցի թէ «չորս չայ» ասելով ինչ էր ուզում ասած լինէր նա, բայց դիտմամբ միւս առաւօտ նրա սլատւէրը բառացի կատարեցի։ Հակառակի պէս էդ օրն էլ ուշ էինք զարթնել։ Դատաւորի դալու ժամանակը մօտենում էր, բայց մեր թէյի գոյնը գետի ջրից չէր տարբերւում։ Երբ թէյով լիք բաժակը դրեցի հօրեղբօրս առաջ, բացականչեց, «էս ինչ ես արել տօ»։

—Դուք չասիք որ կենտ չորս չայ գցե՞մ, պատասխանեցի ես։ Ուսերքը վեր քաշեց ու գլուխը պտըտելով թէյի կապոցը պահանջեց և օղու ըմպանակի մէջ թէյ լցնելով հեշտաեռից ջուր ածեց վրէն ու շուտ շուտ խառնելով՝ աւելացրեց իր թէյի բաժակին։

Մի օր լուր տարածւեց, որ փոխարքայ մեծ-իշխան Միխայիլ Նիկոլայևիչը վարանցովկի վրայով անցնելու է Ջալալօղլի, զօրահանդէսները դիտելու։ Ամենուրեք ի-

բարանցում էր տիրում։ Դատաւորը հօրեղբօրս պատւիրեց դատարանի բոլոր գործերը կարգի բերել։ Ցոյս էին տածում, որ փոխարքան դատարան կը մտնէր։ Հօրեղբայրս գիշեր ցերեկ անդադար հին ու նոր գործերն էր արտագրում ու ամեն բան կարգի բերում։

Փոխարքայի ժամանման նախօրեակին, առաջուց նրա բազմաթիւ ծառաներն եկան, հետները բերելով Փոխարքայի անթիւ բարակները—որսորդական շները։ Երկու վիթխարի դէր եղներ գնեցին, մորթեցին-մաշկեցին ու միսը յոշոտելով շներին տւին։ Էդ միջոցին Թամաշայի ամբոխի մէջ մերձակայ գիւղերից ի միջի այլոց մի հայկաթոլիկ տղամարդ կար, որ էսպէս բացականչեց «ախ երանի իդա շներէն մին ես եղնէիքը»։

Էքսի օրը դատաւորը սև փրակը հագին եկաւ դատարան և ոսկեզօյն շղթան վիզը գցեց,—մի բան որ դատավարութեան միջոցներին երբէք չէր անում,—ու լուրջ դէմքով նստեց բազկաթոռի վրայ։ Նա՝ բարձրահասակ, գէր, մեծ-մեծ սև աչքերով, երկայն բեխերով, թրաշած խալաւոր դէմքով ու կանոնաւոր դիմագծերով մի գեղեցիկ մարդ էր. ազգով վրացի, սրտով՝ անսահման բարի։ Հօրեղբայրս էլ իր բանեցրած սև սերթուկը հագաւ, որը իր Թիֆլիսի վաճառական եղբայրն էր նւիրել,—ու նըստեց քարտուղարական աթոռի վրայ, նոյնպէս լուրջ ու խոհուն դէմքով։ Սա իր պատրոնի հակապատկերն էր—լղար էր. նոյնպէս բարձրահասակ, սև մօրուքով մեծ մեծ բեխերով, դեղնած դէմքով, քիթը մեծ, բայց խելացի սև սև աչքերով ու աղեղնաձև սիրուն յօնքերով։

Վերջապէս փոխարքան ժամանեց և իր շքախմբով սրճթաց անցաւ—գնաց նշանակւած տեղն իջաւ։ Նախ հասարակութեան մատուցած աղ ու հացն ընդունեց, ապա գաղութատէր գերմանացի բարոն Կուչենբախի հրաւէրով՝ դիմեց դէպի գիւղափի դաշտը, որտեղ բարոնը իր գեղեցիկ տոհմիկ ցուլերն ու կովերն էր բերել ցուցադրելու։

Փոխարքան երկար ժամանակ, ըստ երևութին հրճւանքով դիտում էր սիրուն անասուններին։ Ապա բարոնի ձեռքը սեղմեց, մալական հասարակութեանն էլ շնորհակալութիւն յայտնեց ու իր շքախմբով ուղևորւեց դէպի Ջալալօղլի։

Հաշտարար դատաւորն ու իմ հօրեղբայրը դեռ մինչև հիմի էլ աթոռների վրայ նստած՝ սպասում են փոխարքային...։ Սակայն ինձ գոնէ մեծ հաճոյք պատճառեցին նրանք իրենց տարօրինակ հագուստներով։ Առաջին անգամն էի տեսնում դատաւորին ֆրակով ու շղթայով և իմ հօրեղբօրը սերթուկով։

Գլ. 15.

Խոտի հունձը։ Մալականների աղօթատները, նրանց բաղնիքները։ Մեր տան տիրոջ նախաճաշը։ Լևոնը խոբոված է անում. ուզում է իրենց գիւղը գնալ. կեղծ հրամանագիր է կազմում։ Իր նոր փեսի հետ գնում են Լօռու ս. Սարգիս։ Ուխտագնացութիւնը։ Գնում են Լևոնենց գիւղը։ Լևոնը վերադառնում է Վարանցովկայ։ Ձամփին բաղ են որսում։

Խոտի հունձն էր. մալականները կին ու տղամարդ, տղայ ու աղջիկ-բոլորն էլ հանդն էին գնացել։ Տներում մնացել էին իբրև պահապաններ, միայն մի ջին տարիքով մէկական կին և բոլորովին զառամեալները։ Ամեն երկուշաբթի վաղ առաւօտից փուրգօնները լծելով, իրենց ամբողջ շաբթւայ պաշարը վերցնում ու հանդն էին գնում։ Տղամարդիկ գերանդիներով հնձում էին խոտը, իսկ կանայք, ջահել աղջիկներն ու տղերքն էլ եղաններով ժողովում բլուրներ էին դնում ու փոցխում։ Եւ հէնց հանդեսին էլ գիշերում էին—լաւ եղանակներին բացօթեայ,

իսկ անձրևային եղանակներին վրաններում։ Իսկ շաբաթ իրիկունները ֆուրգոնները կանաչ խոտով լցնելով՝ իրենք էլ մէջը նստած՝ վերադառնում էին տները։ Տներում ճնացած տանտիկինները դեռ շաբաթ առաւօտից դոյլերով ջուր էին կրում գիւղի կողքով հոսող վտակից ու բաղնիքները վառում տաքացնում։ Հանդից եկողները նախ բաղնիքներում լողանում-մաքրւում, սպիտակեղէնը փոխում, ապա ամբողջ ընտանիքով սեղանի շուրջը բոլորած յոտնկայս տան մեծի աղօթքն էին լսում ակնածութեամբ, բայց առանց երեսները խաչահանելու, ապա նստում էին թէյ խմում ու ընթրում։

Մալականները օրական երեք անգամ էին թէյ խըմում, էն էլ բաժակակալներից։ Մենք մի յաղթանդամ տան տէր ունէինք, որը 12—14 բաժակ թէյ էր խմում ամեն մի հերթին։ Կիրակի առաւօտները տեսնում էի որ նա մենակ հէնց երեսուն թերխաշ ձու էր խպշտում, էդ հալա նրա «զակուսկա»ն էր։—Ուղիղ հօրեղբօրս ու իմ ամբողջ տան օրւայ ճաշի պաշարը—։ Կիրակի օրերը բոլոր մալականները զուգւում էին և շարան շարան դիմում իրենց աղօթատները։ Ես մեծ հաճոյք էի զգում դիտելով խայտաճամուկ շորերով զուգած էդ երկսեռ բազմութիւնը, մանաւանդ աղջիկներին։ Նրանց աղօթատները մի քանի անգամ այցելեցի, որոնց իրենք ժողովարան են ասում։ Որքան մալականների մեծ ժողովրանը դուր եկաւ ինձ,—որտեղ կանայք ու աղջիկները խմբովին երգում էին ախորժալուր,—էնքան վատ ազդեց վրէս պրիգուճների փոքրիկ աղօթատունը։ Էդտեղ տղամարդիկ գզգզած մազերով, վայրենի հայեացքները առաստաղին սևեռած, ձեռքներն էլ դէպի վեր կարկառած, ինչ որ անբնական շարժուձեր էին անում-լուռ։ Պրիգուճ աղանդաւորների մէջ կային և երկու՝ Ալեքսանդրապոլցի կրօնափոխ հայ ընտանիքներ։ Հաշտարար դատաւորի ուսւս թարգմանը, էդ հայերից մէկին բերել բանտարկել

էր և օրէնքի հիման վրայ դանգատ էր գրել դատաւորին։ Սակայն դատաւորը բարկացաւ թարգմանի վրայ և հրամայեց իսկոյն արձակել կրօնափոխ հային։ Բացի վերեւում յիշւած երկու տեսակ աղանդներից, նրանց մէջ կային և Բապտիսցներ ու Սուբբօցնիկ կոչւող աղանդաւորներ։ Սուբբօտնիկները հրէաների պէս շաբաթ օրն էին կիրակի պահում և միւս բոլոր աղանդաւորներից խորշում էին։

Մեր ուտեստի պաշարը մեծ մասամբ արդէն սպառւել էր ու մենք հաց ու պանիրով էինք կերակրւում։ Մի կիրակի օր, չգիտեմ ինչպէս էր պատահել, հօրեղբայրս «պարզիմանդացել—մի գրւանքայ տաւարի փափուկ միս էր գնել։ Միսը՝ պատւիրեց խորովել։ Ածուխ չկար, շամփուր չկար, ինչպէս խորովել։ Ճարս կտրած՝ իջայ ներքև, մի կերպ խուշուրներից բակում կրակ վառեցի, փէտից երկու շամփուր շինեցի ու միսը խորովեցի։ Ութ սովորական կտոր էր բոլորը։ Երբ շամփուրները ձեռքիս ներս մտայ, հօրեղբայրս, որ էդ րոպէին հաց ու պանիրը ծամում էր, հարցրեց՝

—Միսը չիմ էդ ա՞։

—Հա՛, էս ա, ասացի։

—Վա՛, ինչ խարար ա, կէսն էլ կը պահէիր իրիկունը կը խորովէիր էլի։ Ու շամփուրները ձեռքիցս առնելով, մէկի խորովածը վերարեց ափսէի մէջ, իսկ միւսը հէնց էնպէս շամփուրով դրեց պատում ցցած մեխերի վրայ։ Խորովածի մի կտորն ինձ տւեց, երեքն ինքը կերաւ։ Ընթրիքի ժամանակ էլ, պահած շամփուրից սառած խորովածը հանելով՝ նոյն կարգով բաժանեց։ Բարեբախտաբար իսկոյն նկատելով որ ճանճերը ծեռւուկ էին դրել, դդւանքով եռ հրեց առջևից ու հրամայեց դուրս շպրտել։ Ընդհակառակը ես շատ ուրախացայ էդ բանից։ Խորովածի կտորները վերցնելով, թղթով մաքրեցի ու լաւ ախորժակով մաքրազարդեցի, մաքուման ճանճերի հօրն ու մօրը ողորմի տալով։ Թունդ մասալիտել էի*)։

*) մասալիտել—սուր կարիք զգալ միս ուտելու։

Ինչ որ սիրտս մեր գիւղը գնալ էր ուզում և մի օր համարձակութիւն ունեցայ էդ մասին հօրեղբօրս յայտնելու։ Նա դեռ չը յօժարւեց. բայց երբ բացատրեցի որ էստեղից կարող էի գնալ մեր էն գիւղացիների հետ, որոնք կիրակի օրերով ձիու բեռներով միրգ են բերում Վարանցովկայ ծախելու և մեր գիւղից կը վերադառնայի քեռուս ձիով,—նա ասաց՝

—Լաւ, ինչ դուրս եկաւ, որ դատարկ կը գնաս ու դատարկ էլ ետ կը գաս։

—Ինչո՞ւ դատարկ, ասացի ես, մեր դովլաթատէր ազգականներից կը ժողովեմ՝ թան, մածուն, պանիր, իւղ. մեր տանից էլ փոխինձ, հաց, ձու ևն։ «Էհ՛մ»... արեց նա ու լռեց։ Նրա լռութիւնը համաձայնութեան նըշան համարելով, սրտատրոփ սպասում էի եկող կիրակուն։ Մի հանգամանք միայն կոտրում էր իմ սիրտը, որ կօշիկներ չունէի։

Մի օր էլ յանկարծ գլխումս մի խարդախ միտք ծագեց։ Վերցրի ու յամենայն դէպս ռուսերէն մի հրամանագիր գրեցի մեր շրջանի բոլոր տանուտէրերին, որ՝ Լևոն Մելիքեանին կոռով ձի տրւի Օձուն գիւղից մինչև Վարանցովկայ, առանց պրագօն կոչւող վճարի։ Հրամանաթղթի տակ հաշտարար դատաւորի ազգանունը ստորագրեցի և դատարանի կնիքով դրոշմեցի։—Պէտք է ասած, որ դատաւորի ձեռագրին բոլորովին նման էի ստորագրում։—

Զուգադիպօրէն էդ օրերում մի քաղաքացի իշխանի համար պատճէններ էի արտագրել, որի համար իշխանը երկու ռուբլի տւեց ինձ։ Ուրախութիւնիցս պար էի գալի։ Տուն գնալս վճռած էր. կօշիկներ չունէի և ահա կօշիկների փողն էլ վաստակեցի.—ինձ թւում էր, որ մի քիչ փող էլ մօրս համար կաւելանար։ Մի անգամ էլ էսպէս քաղցր երազներով տարւած, ապագայի երջանկաբեր հեռանկարով զմայլւած դրութեան մէջ էի, որ հօրեղ-

բայրս էն չարաբաստիկ երկու ռուբլին պահանջեց...։ Ընդվեցի ես ու վճռեցի առանց կօշիկների մեր գիւղը չը գնալ։ Եւ առաջիկայ կիրակի օրը դիտմամբ տնից հեռացայ, որպէս զի յետաձգւի իմ գիւղ գնալը։

Վարդավառի պատ շաբաթն էր։ Յանկարծ մի օր յայտնւեց իմ նոր փէսէն, որը սուրհանդակի պաշտօնով էր եկած։ Եւ որ ամենագլխաւորն էր, մի զոյգ երկայնավիզ կօշիկներ էր ընծայ բերել ինձ համար։ Իմ գիւղ գընալու մասին լսելով, հօրեղբօրս խնդրեց, որ թոյլ տար ինձ իր հետ տանելու նախ՝ Լօռու ս. Սարգիս ուխտատեղին, ապա էնտեղից էլ մեր գիւղը։ Հօրեղբայրս համաձայնւեց։ Դժբախտաբար կօշիկները փոքր էին, ոտքս չը մտան։ Գնացի խանութից ճրագու բերի, քսեցի, արևի առաջ փափկեցրի, չարչարւեցի, տանջւեցի, ամբողջ մարմինս քրտնքումը ողողւեց, մինչև անգամ քթիցս աղբիւրի պէս արիւն սկսեց հոսել, բայց էն անպիտան կօշիկները ոտքս չը մտան։ Վերջ ի վերջոյ ստիպւած երեսնեբը դանակով ճղեցի ու էնպէս հագայ։

Շաբաթ առաւօտը փեսիս թարքին նստելով, ճամփա ընկանք դէպի ս. Սարգիս։ Կէս օրից առաջ հասանք Ջալալօղլի. էնտեղ ճաշելուց ու ձիուն հանգստութիւն տալուց յետոյ, շարունակեցինք մեր ճամփէն։ Ջալալօղլուց ու շրջակայ գիւղերից շարան շարան փուրգօններ ու գըլուխները փուրգօնի նման ծածկած սայլեր էին գնում դէպի ուխտատեղին կանանց ու աղջիկների գեղեցիկ բեռներով։ Մէջ ընդ մէջ էլ գեղջկուհիները՝ դալարիներով, ասեղնագործ ապրեշումէ սիրուն «շիրազի»ներով ու «ծիշի»ներով զուգած ձիերին հեծած, իրենց ամուսինների կամ ազգակից հատւակ տղամարդկանց ուղեկցութեամբ արնգորնգալով նոյնպէս ուխտ էին գնում։ Մի կողմից էլ երիտասարդ ձիաւորների խմբերն էին ճամփի թոզը ծուլ անելով, ձի խաղացնելով, ուրախ և զւարթ, հանաքներ ու մասխարութիւններ անելով արշաւում դէպի ուխտավայ-

ըը։ Օրը պայծառ էր և արևի կիզող ճառագայթների տակ ծովի նման ծփում էին կանաչ ու դեղնաւուն արտերը։

Իրիկնապահին տեղ հասանք և հէնց ս. Սարգսի մատուռի շուրջը, որը գտնւում է տափարակի կիսում բարձրացող մի սարի ծառազարդ ու տեղ-տեղ ժայռոտ կատարին, միացանք վեսխս համազիւղացի մի խումբ ուխտաւորների։ Անթիւ ուխտաւորները առանձին-առանձին խմբեր կազմած, քէֆ էին անում։ Զուռնի զիլ ձէնը թընդացնում էր օդը և խառնւելով քարանձաւների արձագանքին, ականջ էր խլացնում։ Պինդ մթնելու հետ, տեսարանը աւելի խորհրդաւոր դարձաւ։ Լեռան բարձունքից երևում էին ստորոտի ընդարձակ դաշտերում, արտերի ծէրերին ըռաւելներում*) և հեռու տարածւող անտառում անթիւ ու անհամար թէժ խարոյկների բոսորագոյն բոցերը։ Հորիզոնում գծագրւում էին բարձրուղէշ ծառերի տերևազարդ սաղարթների սուերանկարները։

Լուսաբացին կանաչ դաշտերի ընդարձակ տարածութեան մէջ էլի երևում էին ուխտ եկողների ձիարշաւ ու ոտ սայլերով կարաւանների շարքերը։ Ուխտատեղու փոքրիկ մատուռում, ուր պատարագ էր մատուցւում, ասեղ գցելու տեղ չկար։ Մի կողմից էլ մատաղներն էին մորթում-եփում։ Կաթսաներից բարձրացող գոլորշին ծխի հետ միախառնւելով, բուրալից մշուշով տարածւել էր օդի մէջ։ Թարմ մատաղների էդ դուրեկան հոտը միակերպ գրգռում էր թէ՝ աղքատի և թէ՝ հարստի ախորժակը։ Ուխտաւորների մէջ Զալալօղլու դպրոցական ընկերներից շատերը պատահեցին.— կարօտով բարևում էինք իրար ու անչափ ուրախանում։ Նրանցից շատերը ինձ տանձ ու խնձոր էին նւիրում, իսկ ես ամաչում էի, որ փող չունենալուս պատճառով չէի կարողանում նրանց հիւրասիրել։

Մատաղներն ուտելուց յետոյ, հեռու տեղերից եկած ուխտաւորները սկսեցին ցրւել։ Սակայն շարժման հէնց

*) ըռաւել—(առաւել) արտերի ծայրի բաց տեղը։

էն թունդ միջոցին, արևմտեան կողմից—«Ղարախաչ»ի սարերից մի երկայն սև ամպ սիւն—մի հրոգմունք՝ գըլուխը դէք բռնած և պոչը վիշապի պէս գալարելով, ահագին տարածութիւնը մի քանի րոպէի մէջ կարեց-եկաւ մեզ հասաւ և նախ անձրևի խոշոր կաթիլներով, ապա կարկուտի տխլաչափ գնդակների տարափով էնպէսի մի իրարանցում ու շփոթ գցեց ուխտաւորների մէջ, որ ամենքն էլ գլուխները կորցրին ու մի լաւ, փառաւոր մոռացին*)։ Բարեբախտաբար էնքան էլ երկար չտևեց ու նորից արևը ցոյց տւեց իր վառ դէմքը և տաք ճառագայթներով ցամաքեցրեց թրջւած շորերը։

Մենք էլ, ուրիշ ուխտաւորների հետ ուղևորւեցինք և իրիկունը բաւական մթնով հասանք մեր գիւղը։ Միւս օրը փեսէս վերադարձաւ իր պաշտօնատեղին, իսկ ես մի քանի օր մնացի։

Վերադարձիս օրը, երբ արդէն բեռս պատրաստ էր, իմ սարքած հրամանաթուղթը ձեռքիս ներկայացայ մեր տանուտէրին։ Մի ժամից յետոյ մի գիւղացի համեստով ձին քաշելով՝ եկաւ մեր դուռը։ Բեռը բարձեցինք ձիուն, ես էլ հեծայ ու ճամփա ընկանք։ Առաջինը Մղարթ գիւղն էր, որտեղ ձին պէտք է փոխարինւէր։ Զի չէր ճարւում, բաւական ուշացանք։ Վերջապէս ձին փոխեցին ու շարունակեցինք մեր ճամփէն մինչև հերթական Ագարակ գիւղը։ Էստեղ թէև շուտ փոխեցին ձին, բայց օրը արդէն թեքւել էր դէպի իրիկնապահ։ Երբ էնտեղից էլ դէպի Վրանցովկայ ուղևորւեցինք, ճամփին, ձիու տէրը սկսեց երկիւղ ներշնչելով համոզել ինձ, որպէս զի Զալալօղլի գնայինք գիշերելու, առարկելով որ Վարանցովկէն հեռու լինելով, դեռ տեղ չը հասած կը մթնէր ու իրրև թէ աւազակ թուրքերը ինձ էլ կըսպանէին, իրեն էլ։

Շատ դիմադրեցի, բայց ձիատիրոջ երեսումը չմտաւ. ստիպւած՝ տեղի տւի ես ու գնացինք Զալալօղլի։ Մի

*) մոռնալ—թրջւել։

միտք ինձ չափազանց տանջում էր,—կարծում էի թէ Զալալօղլու պէս մի աւանի տանուտէրը կարող էր զարգացած մարդ լինել և հրամանաթղթիս կեղծիքը երևան հանելով, ինձ խաղք ու խայտառակ շինել։ Բանն էն է, որ ինքը հաշտարար դատաւորն էլ իրաւունք չունէր էդպիսի հրաման արձակելու։ Բախտս բանեց. էնտեղի տանուտէրը մի անգրագէտ մարդ էր։ Նա իր հացի փռնում ինձ գիշերելու օթևան տալով, էքսը ձիով ճամփու դրեց դէպի Վարանցովկայ։

Ձիու տէրը ըստ երևութին որսորդ մարդ էր. նա իր պիստոնաւոր զոյգ-փողանի հրացանը հետը վերցրել էր։ Վարանցովկայից մօտիկ մի լիճ կար, որի մէջ անթիւ բադեր էին վխտում։ Նա մի քանի անգամ հրացանը կրակելով, բադերը սպանեց։ Ես էլ ձիուց իջայ և եղեգնուտ ճահճանուտից երեք-չորս սպանած՝ արնակօլոլ բադեր հաւաքեցինք ու հօրեղբօրս համար ընծայ տարանք։

Գլ. 16.

Դատարանը փոխադրում են Շուլաւէր։ Լևոնը Շուլաւէրում 2-րդ անգամ։ Պատանի Ալէքսին ճամփին ծեծում է հրէայ պատանուն։ Ճամփի կարճ նկարագրութիւնը։ Բարի Լայիշը։ Լևոնին պատահում է Նազլուն, Հօրեղբայրը Լևոնին ու Ալէքսուն դպրոց է տալիս։ Վերատեսչի գալուստը։ Շուլաւէրի դպրոցի պատիժները։

Աշնան սկզբներին հաշտարար դատարանը նորից տեղափոխեցին Շուլաւէր։ Հօրեղբայրս ու ես նախ գնացինք մեր գիւղը, որտեղ մի երկու օր ճամփուց յետոյ ուղևորուեցինք Շուլաւէր։ Որովհետև ճամփի նկարագրութիւնը որչափ կարողացել եմ, գրել եմ յուշատետրիս 11-րդ գլխում, ուստի նորից չեմ կրկնիլ, այլ հիմի կը գրեմ

նոր բաները միայն։ Էս անգամ հօրեղբայրս իր աներոջ որդուն էլ էր գիւղից տանում ուսում տալու։ Ես շատ էի ուրախ, որ էլ մենակ չէի լինելու, մանաւանդ որ նրա հետ մենք սովորել էինք Տէր-Սիմոնի դպրոցում։ Հիմի ես տասներկու տարեկան էի, իսկ նա մի-երկու տարով ինձանից մեծ էր։ Մի ծայրահեղ ցելք պատանի էր, էդ պատճառով գիւղում նրա անունը «աքլոր» էին դրել։ Ալէքսէ էր նրա անունը։

Հօրեղբայրս կօռով երեք ձի էր վերցրել, երկուսին ինքն ու կինն էին հեծած, երրորդին էլ բեռն էր բարձած։ Մի ձի էլ քեռունս էր, որին իմ աթիլ*) պաշարն էր բեռնած։ Ալէքսին ու ես հետևակ էինք։ Ճամփին մեզ ընկերացան և երկու հրէայ, մէկը չահիլ տղամարդ, միւսը 16-17 տարեկան մի պատանի—ճօթավաճառներ։ Տղամարդը ձիաւոր էր, իսկ պատանին մեզ պէս հետևակ։ Երեք պատանիներս միւսներից բաւական ետ էինք մնացել։ Ալէքսին հրէայ պատանուն միալար քեօռլուղ**) էր տալիս,—բզկտում, կշմտում, տնազ էր անում ևն.։ Խեղճը անտրտունջ տանում էր Ալէքսու բոլոր կոպտութիւնները։ Անչափ խղճահարւում էի ես անլեզու հրէայի վրայ ու Ալէքսուն էլ նախատատում***) էի, բայց իսկի երեսումը չէր մտնում։

—Էհ, ես սրանց հաւատն ու հոգին... բա էս անօրէնները մեր քրիստոսին խի սպանեցին, ասում էր Ալէքսին ու էլի իր ուզածն անում։ Հերիք չէր որ Ալէքսին ինձ չէր լսում, այլ յանդիմանում էլ էր ինձ, թէ ինչու իրեն չեմ միանում ու «չհուդի լամուկին» մի լաւ վերհատում****)։ Երես դարձրի ու առաջ գնացի։ Մին էլ յանկարծ մի աղեկտուր ճիչ հասաւ ականջիս. միաժամանակ ձիաւոր հրէան ձիու գլուխը ետ տւեց և քշեց, ես էլ ետ

*) աթիլ—պահանակ։
**) քեօռլուղ տալ—նեղացնել։
***) նախատատել—յանդիմանել։
****) վերհատել—ծեծել։

դարձայ։ Գնացինք տեսանք՝ էս մեր չարաճճի «Աքլոր»ը հրէայ պատանուն գետին է գլորել ու կրծքին չոքել, հետո էլ միալար հայհոյում է։ Հրէայ պատանին լալիս էր ու օգնութեան կանչում։ Միւս հրէան հէնց ձիու վրից աղաչում էր Ալէքսուն որ բաց թողնի։ Բայց Ալէքսու երեսումը իսկի չէր մանում։

Ուղղակի կծուն գլուխս տւեց ու իսկոյն Ալէքսուն պինդ հրելով մի կողմ գցեցի։ Հրէայ պատանին տեղից կանգնեց և զարմացած ու արտասւակալած աչքերը վրէս սևեռեց. հետո էլ երկիւղից կուչ էր գալի։ Կանգնել էի երկուսի արանքում և Ալէքսուն չէի թողնում իր գործիւնները վերսկսելու։

—Յմա ինչ ընկեր, ինձ օգնելու տեղ՝ հարամ ջհուտին ես օգնում, բարկացած երեսովս տւեց Ալէքսին։ «Տօ թող մի էս անօրէնին խիշիպօլի*) անեմ ջ...

—Ես ձշմարտութեան կողմն եմ և եթէ դու էլի կսկսես քո յիմարութիւնները, իմացած լինիս, որ երբէք էլ քեզ հետ ընկերութիւն չեմ անիլ։ Նկատեցի որ խօսքերս տպաւորութիւն արին։ Ու իսկոյն բոլորս էլ ճամփայ ընկանք։ Ալէքսին գնում էր գլխիկոր ու փոշմանած. նրա դէմքին իսկի մտիկ չէի տալի։ Զգում էի որ շատ էր ղղջացել։ Մի-մին մօտենում էր ինձ, ուզում էր խօսել, բայց չէր համարձակւում։ Վերջ ի վերջոյ «մեղայ» եկաւ ու խօսք տւեց իրեն կարգին պահել։

Շատ էի բեզարել ու թաթամել**) ես, ոտքերս էնպէս էին թմրել, որ կարծես փետ լինէին։ Զառիվերներով համեմատաբար հեշտ էի բարձրանում, քան թէ գառիվայրներով իջնում։ Երբ հասանք Յուժոռնի գիւղի անծէը զառիվայրին, սիրտս սևացաւ։ Բարեբախտաբար մի ձիաւոր լայիշ, որը ճամփին մեր կարաւանին էր խառնւել, ինքը ձիուց իջաւ և ինձ համեցէք արեց հեծնել մինչև զառիվայրի ստորոտը։ Ձիու համեմի առջևի մասը աւելի բարձր էր ու յարմար և ձին էնպիսի մի սահուն քայլւածքով էր գնում, որ ինձ շատ հանգիստ էի զգում։

Ես միմիայն ճամփի երկու կողմերի ծառերին էի նայում հրճւանքով. կարծես ծանօթ դէմքեր լինէին։ Ահա մի շարք աճարի վիթխարի և ուղղաձիգ ծառեր, որոնցից եթէ միայն մինը մեր դռանը լինէր, ամբողջ տարին հերիք էր երելու համար։ Ահա մէկը միւսին յաջորդող ուրիշ ծառաշարքեր,—փնջվինջնուտ տաղարթներով ու ծլծլուտ մամուռով պատւած բոխի, մանրատերև թեղի, տուերաշատ լենատերևի ու լօրի.թխկի ու կոզնենի, բարատու. խնծորի ու տանձի, վայրի կեռասենի,—արանք արանք էլ՝ ալաժահրու, անձնի, հոնի, մոշի, գկուի, մամխի, սպիտակ վարդի, ճապկի և քթթկենու թփախմբեր։

Հետզհետէ թմրում էի ու քաղցը նիրհը ցանցի պէս պատում էր հոգիս ու մարմինս, ինչպէս բեզարած մարդը տաք լողարանի մէջ ընկղմւած պահին։ Աչքերս մին կիսաբացւում էին, մի խփւում։ Էդ մոմենտներին ծառերը փոխում էին իրենց կերպարանքը։ Մերթ անճոռնի անճոռնի գազաններ լինէին կարծես վրէս յարձակւելիս, մերթ կենդանի մարդիկ լինէին կարծես զոփի տալիս։ Ինչ որ անվերջ ֆանտաստիք երազներ էի տեսնում։ Մէրս էր երևում աչքիս, ուշգլուխի փեշով արտասուքը սրբելիս, քոյրերս էին երևում աղօթ կերպով, Յանումին էի տեսնում, որը խռովածի պէս երես էր դարձնում ինձանից ու հեռանում. եահից նայելով՝ նրա շնորհալի թիկունքների վրայ թառ տւած՝ փողփողին տւող ծամերն էի տեսնում։ Մի երկու անգամ էլ Նազլուին տեսայ. վերջին անգամ նոյնիսկ ձեռք տւինք իրար ու ես իսկոյն զարթնեցի...։

Զը նայելով որ լայիշի հետ մեր պայմանը մինչև զառիվայրի ստորոտն էր, սակայն նա էնքան բարի եղաւ, որ մինչև իր բաժանւելու կէտը—ստորոտից շատ գէնը,

*) խիշիպօլի անել—մորթել։
**) թաթամել—ջնջասպառ։

ձիուց վայր չբերեց ինձ։ Ջը գիտէի ինչպէս արտայայտեմ իմ սրտագին շնորհակալիքը բարի Թուրքին։ Մինչև հիմի էլ մտքիս մէջ պրպտում է նրա արած էն մեծ լաւութիւնը ու ես սրտանց ցանկանում եմ էդ պատւական մարդուն գոնէ մի անգամ պատահել և արժանապէս երախտահատոյց լինել նրան։

Արևը նոր էր լալւարի եռևում թագնւել, որ մենք Շուլաւէր հասանք։ Էս անգամ գնում էինք գիւղի վտակի հոսանքի ուղղութեամբ, որը հոսում էր հիւսիսային կողմի փոսով։ Վտակի ձախ կողմի ափին այգինների երկար ու ընդարձակ շարքերն էին տարածւում։ Մի տեղ, վտակի ափին մի աղբիւր էր բղխում, որից թաղի հարսն ու աղջիկը պղնձէ կժերով ջուր էին կրում։ Միւս հեռաւոր թաղերը վտակից էին օգտւում։ Ծարաւ էի. թեքւեցի դէպի աղբիւրը. խմբւած գեղջկուհիները տեղ տւին անցնելու։ Իսկոյն մի սիրուն աղջիկ սառը ջրով լիքը փայլուն տոլչէն համեստութեամբ դէպի ինձ մեկնեց։ Յանկարծակի եկայ ես. էտ աղջիկը ինքը Նազլուն էր. ուրախութիւնից նրա չալ չալ աչքերը ժպտում էին ու ամաչելուց նրա դեղձի նման թաւ այտերը վարդագոյն էին դարձել։ Ես էլ շփոթւեցի, երեսս տաքացաւ, սիրտս սկսեց ալանց-գուլանց*) անել ու երակներիս միջով մի դուրեկան ջերմուխիւն անցաւ։ Ջուրը խմելով, տոլչէն շնորհակալութեամբ ետ տւի և ուրախ ուրախ վազեցի առաջ։ Ճամփից ետ մտիկ տալով տեսայ, որ բոլոր հարսն ու աղջիկը Նազլուի գլխին հաւաքւած՝ հարց ու փորձ էին անում։

Էքսի առաւօտն ևեթ հօրեղբայրս ինձ ու Ալէքսուն տարաւ տւեց գիւղի ծխական դպրոցը։ Տեսչի պաշտօնակատար հ. Տէր-Պողոսը մի քանի գրաւոր ու բանաւոր առարկաններից քննելով, ասաց՝ «Վահոնը պատիկ է բայց ճատիկ է, իսկ Ալէքսու զարգացումը կազում է»։

Ծխական դպրոցը երկու դասարանից էր բաղկացած,

*) ալանց-գուլանց անել—այլայլւել, յուզւել։

պատրաստական և ա. դասարան։ Մենք ընդունւեցինք առաջին դասարանում։ Առաջին աշակերտը ես էի համարւում։ Մեր դասատանը ինձանից մեծ մեծ տղաներ շատ կային, որոնց դասերն էի սովորեցնում։ Ուսուցիչները գիւղի երեք քահանաներն էին, երկուսը իմ նախածանօթ Յովհաննէս և Սահակ նորընծաները և երրորդը տեառչ՝ Տէր-Պողոսը։ Հ. Տէր-Պողոսը հայագէտ համբաւ ունէր։ Կէս օրերից յետոյ մեծ մասը նրան կը տեսնէիք հրէայ ճոթավաճառների խանութում, աստւածաշունչը ձեռքին նստած՝ խախամների հետ կրօնական վէճի բռնւած։

Ուսումը տակաւին նոր էր սկսւել, որ Թիֆլիսից եկաւ ժողովրդական դպրոցների ռուս վերատեսուչը։ Էն օրը, երբ նա մեր դպրոցն էր գալու, աշակերտներս տենդային դրութեան մէջ էինք.—ռուսերէն կարդալում վարժութիւններ էինք անում։ Ուսուցչի կարգադրութեամբ բոլորիս առջև բաց դրւած էին ռուսերէն դասագրքերը։ Շուտով մի քանի առաջաւոր մարդկանց ուղեկցութեամբ ներս մտաւ վերատեսուչը։ Ոտքի ելանք, ողջունեց և խնդրեց կարդալ։ Ուսուցիչների կողմից ինձ առաջարկւեց կարդալը։ Տեղիցս ցոյլ կանգնեցի և լաւ առոգանութեամբ կարդացի վաղօրօք պատրաստած դասը։ Վերատեսուչը հաւանութիւն աւեց և մի քանի տարրական բաներ էլ հարցնելուց յետոյ՝ գոհ սրտով գնաց։

Շուլաւէրի դպրոցում պատիժները հազւագէպ էին ու թեթև։ Նորընծայ հայրերը երբէք չէին պատժում ոչ ոքի. իսկ հայր տեսուչն էլ դաս չգիտցող կամ չարութիւն արած փոքրերի ականջներից կը բռնէր միայն, առանց ցաւացնելու և մեծերին մի կամ երկու ժամով ճաշից կը զրկէր։ Մեծ մասը խօսքով էր ազդում, այլ ոչ ֆիզիքապէս։

Գլ. 17.

Լևոնը աշակերտների հետ բաս է մտնում: Սարգիս եպ. Ջալալեանը ու Շիրակեցի գիտուն տիրացուն: Այգեքաղը Շուլաւերում: Լևոնն ու Նազլուն միասին խաղող են քաղում: Սոխակի և վարդի աւանդութիւնը: Լևոնն ու Նազլուն լաց են լինում: Լևոնի բաղչէն: Սբժիլը: Լևոնը Նազլուի կարօտն է քաշում:

Արտակարգ ընդունակութեամբ էի օժտուած ես սովորելում և անսահման սէր ունէի դէպի ուսումը: Ուսուցիչներս էլ մեծ ազատայ էին գուշակում ինձ համար:

Մեր դպրոցում բացի Ալէքսուց ու ինձանից մի քանի աշակերտներ էլ ուրիշ գիւղերից կային: Սկզբներում տեղացի աշակերտները օտարականներիս խորթ աչքով էին նայում, բայց շուտ մտերմացան: Դասամիջոցներին պնդակ էինք խաղում, ըմբշամարտում ու երբեմն էլ աշուղների պէս բաս մտնում: Թէ պնդակ խաղալում և թէ կոխ բռնելում ես գրեթէ բոլորին էլ գերազանցում էի: Ինչ վերաբերում է աշուղական հարց ու պատասխաններին, բացի մէկից, ամենքին էլ կապում էի: «Պղնձէ քաղաքի պատմութիւն» գրքի յայտնի տղի ու աղջկայ հարց ու պատասխանները բերան գիտէի և դրանով մեծ հեղինակութիւն էի ձեռք բերել: Էն մէկն էլ Շնողնեցի մի պատանի էր, որը ինձ պէս անգիր գիտէր «Պղնձէ քաղաքի բովանդակութիւնը: Սակայն որպէս զի նրան էլ կապած լինէի, ես մի սուտ հնարեցի և Շնողնեցի աշակերտին հարց տուի՝

—Էն ձվ էր, ասացի, որ Թագաւորի հրամանով գլուխը կտրեցին, բայց նա գլուխը կտրած՝ մի ամբողջ ամիս խօսեց...:

—Էդ մինը գիտեմ ոչ, պատասխանեց նա խղճացած:

Եւ էն օրից՝ աւելի բարձրացաւ իմ հեղինակութիւնը աշակերտութեան աչքում ու ես մի գիտնական վարդապետի հռչակ ստացայ: Շնողնեցի աշակերտը ծածուկ կաշառք էր խոստանում ինձ, որպէս զի գաղտնիքը միայն իրեն յայտնէի:

Էս առթիւ տեղին եմ համարում մէջ բերել Սարգիս եպ. Ջալալեանի կեանքից մի դէպք: Ճանապարհորդելիս՝ նա մի անգամ իջած է լինում Շիրակի գիւղերից մէկում: Էդ գիւղացիները խնդրում են որ սրբազանը իրենց «գիտնուկ» տիրացուի հետ բաս մտնի: Սրբազանի յօժարութեամբ տիրացուն գալիս է ու հարց տալի՝

—«Որ բնակեալի էն որ տունն է, որի մէջ այբ չկայ»:—Սրբազանը էդ բանը գիտենալով տալիս է ուղիղ պատասխանը:

—Հապա սաղմոսի այն ինչ կանոնում, այնինչ գըլխում և այնինչ տան մէջ քանի՞ այբ կայ, ինքնավստահ հարց է տալի նորից տիրացուն, աչքի պոչով ներկայ գանուող գիւղացիների վրայ խորամանկօրէն նայելով.— իբրև տեսէք թէ՝ եպիսկոպոսին ինց կը կապի հիմի մի գիւղական հասարակ տիրացուն:

Սակայն սրբազանը պատասխանի տեղ գաւազանը վերցնում է ու՝ տուր թէ կտաս էս քո «գիտնուկ» տիրացուի թիկունքին, ասելով՝ «էս մի այբ, էս երկու այբ, էս երեք, էս չորս, հինգ՝» ու մի լաւ ջարդելով դուրս վռնդում: Հիմի տեղն էր, որ մէկն էլ իմ լաչն) էր վառել թէ՝ «ձվ էր որ գլուխը կտրած խօսում էր»:*

Հոկտեմբեր ամիսն էր.—Շուլաւէրի այգեքաղի աներեսթունդ ժամանակը: Էդ պատճառով դպրոցական աշակերտներիս մի ամբողջ շաբթով արձակուրդ տուին: Կեանքի փոփոխութիւնները միշտ լաւ են ազդում առաւելապէս մանուկների ու պատանիների վրայ: Եւ իսկապէս

*) լաչը-երանը:

էդ մի շաբաթը ուշնական ժամանց էր մանաւանդ ինձ համար։ Մենք հրաւիրուած էինք մեր տան տիրոջ այգին, էնտեղ էր և Նազլուն։ Ես ու նա մի մի փոքրիկ կալաթ վերցրած, միշտ իրար հետ էինք խաղողը քաղում ու տանում հնձանն ածում։ Սկզբում Ալէքսին էլ էր մեզ հետ քաղում, բայց նկատելով մեր մտերմութիւնը,—յետոյ մենակ թողեց մեզ։ Էսպէս մի ամբողջ շաբաթ շարունակ ես ու Նազլուն միասին լինելով, աւելի էինք մտերմացել։ Ես գոնէ կարօտում էի նրան մեր անջատման իրիկունից մինչև էքսի առաւօտը։ Թւում էր, որ նա էլ ինձ էր կարօտում, որովհետև առաւօտները նա միշտ ինձանից վաղ էր գալի այգին ու ինձ էլ նկատողութիւն էր անում ուշանալուս համար։

Այգու արևելեան ծէրին, արհեստական տերրասի նման մի գեղատեսիլ բնական դարաւանդ կար։ Էնտեղ, ցանկապատի առջև՝ վարդի թփերի, դեղձի, տանձի, ալուբալի, կեռասի, թթենու և խնձորենիների դեղեցիկ շարքերն էին եզրած, իսկ դէպի ներսը՝ խաղողի որթերի տեսակ-տեսակ խմբերն էին դեղին քահրուբարի ու սև սաթի պէս պլպլող ճթերով ծանրաբեռնուած։ Դարաւանդի աքանչելութիւնը կատարեալ անելու համար, կարկաչուն առուակը՝ իր վճիտ հայելու մէջ անդրադարձնելով ծառերի պտղակալած ու կանաչ սաղարթները և խաղողի գրաւիչ ճթերը, դրանց արանքով հոսելով՝ դահավիժում էր բարձրավանդակից, ներկայացնելով մի հաճելի ջրվէժ։ Էդ վայրը ես շատ էի սիրում ու միշտ Նազլուի հետ էնտեղ էինք զբօսնում։ Առաւօտներն էլ ինձ կանխելով, Նազլուն էն տեղ էր սպասում ինձ։ Էդ դարաւանդի անունը կպաւ «Հևոնի բաղչա»։

Իմ բաղչում վտակի դալար ափերին երեք թերանի «սիրի-սիրի» քօլերից շատ կային։ Ես ու Նազլուն շուտ շուտ սիրի-սիրի էինք խաղում։ Մի անհիմանալի զուգադիպութեամբ «սիրի-սիրի»ի գուշակութիւնը միշտ էնպէս էր

գուրս գալի, որ ես նրան էի սիրում, նա ինձ։ Եւ էդ անմեղ խաղը մի քնքուշ ու անուշ հաճոյք էր պատճառում մեզ։ Նազլուն մի օր ինձ պատուիրեց, որ գոնէ մի առաւօտ շատ վաղ գայի այգին, որպէս զի միասին լսէինք սոխակի քաղցր դայլայլիկը, որը իբրև վաղ-վաղ երգում էր վարդի թփերի վրայ։ Զգիտեմ որքան ճիշտ էր Նազլուի ասածը, որովհետև ես լսել էի, որ սոխակը միմիայն մայիսին է երգում վարդը բացելիս։ Եւ մի օր Նազլուին պատմեցի իմ լսած աւանդութիւնը սոխակի ու վարդի սիրոյ մասին։

«Ասում են սոխակը սիրահարուած է լինում վարդի վրայ և ամբողջ գիշերը վարդենու վրայ նստած՝ դեռ լոյսը չը բացուած սկսում է երգել, տենչալով որ վարդի կոկոնը բացուելիս տեսնի ու մուրազն առնի։ Ժամերով նա իր անուշ ձէնով կլկլացնելով՝ սէր է երգում, աղերսանք է անում, բայց վարդի չքնաղ կոկոնը իր կարմիր ու բուրալից սիրտը չի բանում սոխակի առաջ։ Անդադար երգելուց ու աղերսելուց յոգնելով, սոխակը երգը բերանին նղլղելով մի պահ նիրհում է, ու... հէնց էդ մոմենտին բացւում է վարդի կոկոնը։

Սոխակը զարթնելով, երբ տեսնում է արդէն վարդի կոկոնը բացած, վշտից քիչ է մնում խելագարւի։ Բայց կամաց կամաց ուշքի գալով, նորից սկսում է երգել, էս անգամ աւելի աղէկտուր է լինում նրա եղանակն ու ցաւագինօրէն ողբալի։ Եւ էսպէս անընդհատ սոխակը մի շարք գիշերներ վարդի թփի վրայ էնքան է երգում, լալիս, որ աչքերը կուրանում են ու ձէնը կտրւում է իսպառ։ Վերջ ի վերջոյ ուժասպառ ընկնում է նա թերթիկները արդէն թափւած վարդի փշի վրայ։ Փուշը ցցւում է սոխակի սրտի մէջ. նրա սրտից մի կաթիլ արիւն է ցայտում ու ընկնում վարդի մասուրի վրայ։—Սոխակը վարդից սէր էր աղերսում, իսկ վոխարէնը փուշ է առնում։—

Սոխակը մեռնում է... Սակայն նրա սրտից ցայտած

էն մի կաթիլ արիւնից՝ մասուրի մէջ գոյութիւն է ստանում մի պտիկ ոգի։ Դա սոխակի անհուն վիշտն է, որ մխում է յաւերժ»։

Պատմութեան ամբողջ ընթացքում երկուսս էլ զբաղուրթ էինք. սակայն վերջանալուց յետոյ Նազլուի սիրտը փուլ եկաւ։ Նա սկսեց արտասուել։ Մենք կողք կողքի նստած էինք ծառի տակ։ Նրա լացը ինձ վրայ էլ ազդեց, լացս եկաւ։ Լացներս հեռզհեռ փոխուեց հեկեկանքի։ Լալով ու հեկեկալով ողբացինք մենք թշուառ սոխակի մահը և թեթևացած սրտերով վեր կացանք տեղներից, աչքերնիս սրբեցինք ու գնացինք միացանք մեծերին։

Այգեքաղը վերջանալուց անմիջապէս յետոյ, դասերս պրծնելուն պէս, հապճեպ ճաշում էինք և Ալէքսին ու ես տեղացի աշակերտների հետ մեզ այգիներն էինք տալիս խժիլ անելու, կամ ինչպէս Շուլաւէրցիք էին ասում՝ «գանելահոբս»։ Տեղ-տեղ վազների տերևախիտ ճիւղերի վրայ խաղողի ծանրացած ճթեր էին պատահում, հրճւանքով պոկում ուտում էինք։

Այգիները գնալիս կամ վերադառնալիս՝ բանն էնպէս էր սարքում, որ մեր տանտիրոջ այգին էլ էի մտնում։ Այգին էի մտնում ու թուշ գնում իմ բաղչէն։ «Ահա էն ծառի տակ էինք նստած ես ու Նազլուն։ Ո՞նց էր նայում նա ինձ, ինչքան լաւն էին էն մոմենտին նրա չալ չալ աչքերը, ինչպէս զրաւիչ էր հայեացքը։ Ո՞նց էր նազիճեմ մանգալի։ Ինչու՞ լաց եղաւ նա սոխակի ու վարդի պատմութիւնը լսելիս։ Ի՞նչ լաւ կը լինէր, որ հիմի էլ էստեղ էր եղել Նազլուն, կողքիս նստած, որ հիմի էլ «սիրի-սիրի էինք խաղ արել»։ Էսպիսի մտքերով ու երազներով էի տարուում ես։

Այգեքաղից յետոյ մի քանի շաբաթ էր անցել, բայց ես Նազլուին չէի տեսել ու անչափ կարօտել էի։ Մի քանի անգամ հարսն ու աղչկայ իրիկւայ ջուրը գնալու պահին փոսի աղբիւրի մօտ գնացի, բայց Նազլուն չպա-

տահեց։ Զգիտեմ պատճառն ինչ էր. մտքովս անցնում էր որ գուցէ հիւանդ է ու լուրջ դարդ էի անում։ Սակայն մի կիրակի օր, մեր պատշգամբից նկատեցի որ Նազլուն գալիս էր։ Մօտեցաւ, անցողակի գլուխ տւեց ու շառագունած մտաւ քրոջ տունն։ Մին էլ երբ քիչ յետոյ մեր պատշգամբի վրայ ես ցածր ձէնով «հանդիստ իմ անուշն էի երգում, յատակի տախտակամածի արանքից մտիկ տալով, նկատեցի որ պատշգամբի տակից Նազլուն լսում էր։ Իրիկնապահին նա մեկնեց դէպի իրենց տունն։ Պատշգամբից անթարթ աչքերով նայում էի նրա եռևից։ Նա առանց ետ մտիկ տալու, ոսկէ հարուստ ծամերը գեղատեսիլ թիկունքի վրայ թափ տւած. սօրօլ տալով գնում էր։

Երբ Նազլուն աչքիցս չքացաւ, սիրտս սև ամպերով պատւեց ու արտասուեցի ես...

Թէ ինչու՞ արտասուեցի,— էն բաղի բլբուլին հարցրէք, վարդին ու իր թփին հարցրէք։

Գլ. 18

Լևոնի դպրոցական կեանքը. հօրեղբայրն ու կինը թագուն ճաշում են։ Լևոնը երփիչ. ինքն ու իր դասընկերները երգելու մէջ անաջողութիւն են կրում։ Լևոնը տենչում է բանաստեղծ դառնալ։ Զատկի տնօրհնէքը. հօրեղբօրիցը ծածուկ հ. տեսչին գառն է ընծայում։ Նազլուի ներկայութեամբ շարականն է երգում։ Լևոնը պխտօնաւոր փշտով է առնում։ Աշակերտական գարնանային զբօսանքը։

Թէև դպրոցական կեանքս շատ ուրախ էր անցնում, բայց էստեղ էլ Զալալօղլու նման մի պակասութիւն էի զգում,—ստամոքսի հարց էր դա։ Ասենք էդ պակասութիւնը էնքան էլ չէր ազդում վրէս, որովհետև ինձ համար էականը դա չէր ի հարկէ։ Հօրեղբայրս ու իր կինը մեզ հաց չէին տալի դպրոց տանելու համար։ Վաղ վաղ զարթնելով, Ալէքսին ու ես հեշտաեռը պատրաստում էինք, մէկական բաժակ թէյի հետ մի մի բարակ շղարթ հաց կծոտում ու դպրոց գնում։ Դասատուութիւնը մինչև ժամի երեքը քաշում էր ու մենք սովում էինք։ Տեղացի աշակերտները բոլորն էլ հետները հաց ու պանիր էին բերում. դասամիջոցին մեզ էլ էին խնդրում իրենց նախաճաշիկին մասնակցել։ «Աղքատ ու հպարտ»ի պէս նրանց էլ էի մերժում ու սոված մնում, մինչդեռ Ալէքսին ընդունում էր նրանց հրաւէրը։

Մեր ռուսերէնի ուսուցիչը մեծ աշակերտներիս երբեմն կէս օրերից յետոյ էլ հաւաքում էր դպրոց և հետները զրոյց անում։ Լաւ տպաւորութիւն էին թողնում մեզ վրայ էդ զրոյցները։ Մի քանի անգամ էնպէս պատահեց, որ նշանակուած ժամին աշակերտներս հաւաքում էինք, բայց ուսուցիչը չէր գալի ու մենք ստիպուած էինք լինում սովորականից շուտ ցրուելու։ Ահա էդ միջոցներին Ալէքսին ու ես անակնկալ տուն վերադառնալով՝ տեսնում էինք որ խեղճ հօրեղբայրս ու իր խեղճ կինը, երկրորդ անգամ սուփրէն փռած՝ խորոված, տապակած ձուկ կամ ձւածեղ շինած, առջևնին դրած անուշ վայելում են։—Մինչդեռ մեր ճաշը եղած էր կաժ պաստա աւելուկի սրպաս, կամ ամենալաւ դէպքում մի գդալ իւղով եփած ձաւարի «գդալէ սպաս»։ Ի-հարկէ էդ միջոցներին շատ անյարմար զրուխիւն էր ստեղծում փոխադարձաբար։ Եւ ամաչելուց՝ մեր ներս մտնելն ու ետ դուրս ծլկելը մին էր լինում։

Մեր նորընծայ ուսուցիչները, ի միջի այլոց, իմ դասընկեր Ղահրամանին ու ինձ շարականների եղանակները էին սովորեցնում։ Եւ եկեղեցում միշտ երգում էինք ու երկուսս էլ լաւ երգիչների հռչակ էինք ստացել։ Մի անգամ մեր հ. տեսուչը հրաւիրեց մեզ իր հիւրերի մօտ երգելու, մի անգամ էլ հօրեղբայրս տարաւ երգելու իր ճաշի մեծարքին, որ տալիս էր մի այգում ի պատիւ հաստարար դատաւորի։

Սակայն մի անգամ անաջողութիւն կրեցինք, որը երբէք չեմ մոռանում։ Մի կիրակի առաւօտ եկեղեցում «աբի տէր»ը պէտք է երգէինք առաջին անգամ։ Հակառակի պէս երկուսս էլ քնով էինք ընկել-ուշացել. էնպէս որ, կարծես խօսքումին արած, հևիհև վազելով հէնց էն մոմենտին մտանք ժամը, որ ահա սկսելու էր «աբի տէր»ը։ Սկսեցինք, բայց սկզբի երկու բառը դեռ չաւարտած՝ շունչներս կտրեց. վիզերնիս շատ ձգեցինք—չեղաւ, բան չը դուրս եկաւ։ Տիրացուները չարախնդում ծիծաղեցին, ժողովրդի մէջ շշուկ ընկաւ։ Մեր նորընծայ ուսուցիչները ստիպուած, իրենք երգեցին։

Մեր դպրոցի դասագրքերը շատ հաւանեցի։ Առաջ էդպիսի դասագրքեր չէի տեսել ես։ Հիմի թէ լաւ լաւ

հնչեցրով առաջ ռուսերէն դասագրքերը, թէ մեր պաշտեցեալ Ղազարոս Աղայեանի և ուրիշների՝ մեր սրտերին հարազատ դասագրքերը ուղղակի խաղ ու պար էին շինել դաս սովորելը։ Դասերից ազատ միջոցներին անգամ Աղայեանի դասագրքերից կտորներ էինք կրկնում անգիր։ Իրար ասում էինք—«ասա ծիա»—«ուտես մախոխ» ու ծիծաղներիս տոպրակի դունչը բաց անում։ կամ—

«Ո՞վ պատռեց վագրի բերան,
Արմիկ պատռեց վագրի բերան,
Վագրի բերան ահա այքան.
Ժանիքները մի մի գերան»։

Երգում էինք ու հետն էլ ծուլ ըլլում—թռչկոտում։ կամ նրա «Արեգնազանը», «Տորգ անգեղ»ը, «Գիւլնազ տատի» ու միւս հէքեաթներն էինք կարդում հիացմունքով։

Մեր հայերէնի ուսուցիչը երբեմն ազգային ոտանաւորներ էր տալի մեզ արձակի վերածելու։ Պէտք է ասած, որ ուսուցչի միտքը միմիայն ես էի ըմբռնում մասամբ, թէև միշտ ինձ էլ չէր աջողւում նրա խիստ պահանջներին գոհացում տալու։ Միայն յիշում եմ, որ բաւարար կատարեցի ես Պէշիկթաշլեանի «Ի բիւր ձայնից բնութեան շքեղ» բանաստեղծութեան արձակի վերածելը։—ուսուցիչս հաւանում էր։ Ես տենչում էի մեծ բանաստեղծ կամ հռչակաւոր վիպասան դառնալ։ Էդ ուղղութեամբ սիրուն մտապատկերներ ու երազներ ստեղծելով, քնած թէ արթնի, յարատև գուրգուրում ու փայփայում էի իմ անուշ ցնորքները։ Երբեմն էլ ոտանաւորներ էի խզբզում...

Զատկին նորընծայ Տէր-Գրիգորի հետ անօրհնէք ման եկայ։ Ես անգամ, որ բաւական խոշոր գումար էի հաւաքել, բոլորը հօրեղբօրս չտուի.—այլ չորս ռուբլու չափ մի գումար թագցրի։ Զատկի հետևեալ օրը, մի ռուբլի և ութսուն կոպէքով մի լաւ գառը գնեցի ու հօրեղբօրիցս ծածուկ մեր հ. տեսչի համար ընծայ տարայ։ Ինքը տէրտէրը մեռելոցի առթիւ՝ գերեզմանատանն էր. ինքս էլ էատեղից ուղղակի գերեզմանատուն գնացի։ Ինչպէս պատահեց, որ ծխականներից մէկը հ. տեսչին իր տուն հրաւիրեց որպէս զի տէրտէրը նրա տանը պահուղ ս. աւետարանը թափորով վերբերի։ Բարեբախտաբար տէրտէրը ինձ էլ տարաւ իրենց հետ։ Ոչ տէրտէրը լաւ ձէն ունէր և ոչ իր տիրացուն։ Աբի տես, որ ուխտաւորների մէջ էր և Նազլուն, որովհետև էդ ծխատիրոջ տունը նրանց տանից շատ մօտիկ էր։ Տիրացուի պաշտօնը ես էի կատարում երգելու մէջ, ինքը տիրացուն միայն բուռ-բառ էր անում։ «Ապաւինեցաք ի խաչ քո Սրբարիչ յաւիտենից» շարականը էնպիսի մի ոգեշունչ խանդով ու զգացած երգեցի, որ բոլոր ներկայ եղողները արտասւեցին։ Նազլուն առջևս կանգնած, իր հմայիչ հայեացքը դէմքիս սևեռած,—մինն երկու էր շինել իմ մէջ ու չըգիտէի թէ ինչպէս գերազանցեմ ինքս ինձ։ Մանաւանդ հետն էլ ափաշկարայ նկատում էի, որ նա իր հասակակից պատանեկուհիների մօտ պարծենում էր ինձանով։

Յետոյ մի մաղալու բան դուրս եկաւ։ Մեր հ. տեսուչը մի խումբ մարդկանց մօտ հօրեղբօրս շնորհակալութիւն էր յայտնել գառի մասին,—ի հարկէ նա չգիտէր որ ես հօրեղբօրիցս ծածուկ էի տարել։ Հօրեղբայրս ծաղը համարելով սաստիկ վրդովւեցել ու վիրաւորւել էր տէրտէրից, սակայն ներկայ եղողներից քաշւելով, ոչինչ չէր պատասխանել։ Իսկ տուն գալով, սկսեց տէր հօր հասցէին խիստ կծու խօսքեր ուղղել։ «Ախ, ասում էր, ափսոս որ մօտներս մարդիկ կային, թէ չէ մի թունդ քէաբուռ կանէի էտ ցիգանին»։ Ի հարկէ ինձ համար շատ պարզ էր ամեն բան, բայց լռեցի և մինչև էսօր էտ գաղտնիքը ոչ ոք չգիտի։

Վաղուց ցանկութիւն ունէի ես մի հրազէն ձեռք բերելու։ Ի հարկէ թէ փողի սակաւութեան պատճառով և թէ պահելու անյարմարութեան տեսակէտից հրացան

առնել չէի կարող և երկար մտածելուց յետոյ՝ տեղական գինագործներից մէկին մի պիստօնաւոր փշտով շինել տալ։ Վառօդի, գնդակների ու պիստօնների պաշար էլ գնելով, բոլորը միասին ծածուկ պահ տալ մեր տանտիրոջ մօրը։

Մայիս ամսին մի օր, մեր հ. տեսուչը յայտնեց, որ իրենք ուսուցիչները միաք են յղացել, որ մի կիրակի օր՝ աշակերտներիս տանեն հանդը — զբօսանքի։ Բոլոր աշակերտներս լիասիրտ հրճւանքով ընդունեցինք էտ գեղեցիկ առաջարկը։ Եւ տեղն ու տեղը որոշուեց, որ ամենքս քսանական կոպէք փող պէտք է բերէինք երկու ոչխար գնելու, միւս մթերքը տներից էինք վերցնելու։ Միւս օրն ևեթ փողերը գանձուեց, որը յանձնեցին իմ դասընկեր Զոբեանեան Գրիգորին ու ինձ։ Եւ շաբաթ օրը, գնացինք մերձակայ եաթաղներից երկու չաղ ոչխար գըննեցինք-բերինք։

Էքսը, կիրակի օրը բոլոր աշակերտներս վաղ-վաղ հաւաքուեցինք դպրոց։ Պաշարեղէնի խուրջինները մի աւանակի բարձած ու ոչխարներն էլ էշի ետևից առաջ արած՝ քշեցին տարան մեծ աշակերտներից երկուսը։ Ու մենք ուսուցիչների առաջնորդութեամբ դուրս եկանք գիւղից, չափաւոր քայլուածքով ու երգելով։

Ես կարողացայ պաշարեղէնի խուրջինում թագցնել փշտովս իր պարագաներով։

Գլ. 19

Լևոնը կրակում է փշտովից։ Նաալբանտակը։ Լևոնի ընկերները։ Հ. տեսուչը Լևոնից խլում է փշտովը։ Լևոնը խռովում է։ Աշակերտները ծնեփակ են քաղում։ Ալէքսուն ու Լևոնին հրեղայրը պատժում է։ Դպրոցական քննութիւններից յետոյ բոլորը գնում են գիւղը։ Լևոնի մեծ փեսի մահը։ Հօրեղբայրը ու Լևոնը գըննում են Ջալալօղլի։

Գարնան մի խշխշան ու չքնաղ առաւօտ էր։ Սիրուն արշալոյսը երփներանգ գոյներով ներկել էր լեռների սիդաւէտ կատարները։ Նոր բացւած թարմ վարդի ու քնքուշ մանուշակի անուշ բոյրը տարածւել էր ամբրոսային եթերքում։ Կանաչափթիթ պարտէզներն ու այգինները, ծաղկալից մարգագետինները, աշխուժ ճախրող և ուրախ ուրախ ծլվլացող թռչունները, կարկաչուն վտակները, բոլորը-բոլորը բնութեան էտ կենսալից արտայայտիչները վսեմ սիրոյ և ուրախ կեանքի անուշ ու քնքուշ զգացմունքներ էին ներշնչում արար-աշխարհին։

Առաւօտեայ դուրեկան հովը շնկշնկալով իր օգեղէն թևերը երեսներիս քսելով՝ սահում-անցնում էր։ Մենք էլ մեր հրճւանքը խառնած բնութեան սքանչելիքներին, ինքներս էլ էն անհոգս թռչունների, պաղպաղուն վտակների ու ալեան ալեան ծաղիկների մի մասնիկը կազմելով կամ նրանց լրացնելով, թռթռալով ու ոստոստելով՝ թիթեռնիկների պէս տարածւել էինք կանաչ դաշտերի երեսնիվեր։ Կանաչ խոտից և ծաղիկներից գլխարկները շինած, գլուխներս զարդարած, երգելով, հանաքներ ու լախրդու*) անելով առաջ էինք գնում դէպի անտառի խորքը։ Արևը բաւական բարձրացել էր, որ հասանք «բլբլան»

*) լախրդու անել — խօսպտել։

կոչտող սառն ու համով աղբիւրի մօտ։ Հասնելուն պէս, երեսներս սառը ջրով ճոփճոփ լացինք, քիչ հանգստանալուց յետոյ էլ, մի կուշտ խմեցինք, սիրտներս հովացրինք ու տարածւեցինք լեռնային անտառի մէջ։

Մինչև ոչխարները կմորթէին-կը քերթէին, բողբաշն ու խորովածը կը պատրաստէին,—մենք մեր չարաճճիութիւններով անսահման հաճոյք էինք ստանում բնութեան ազատ ու հարազատ գրկում։ Սիրուն-սիրուն թիթեռնների եռանից էինք վազվզում, որսում էինք, ետ բաց թողնում. մագլցելով ծառերի կատարներն էինք բարձրանում, ծաղիկներ էինք քաղում, փնջում և ուրիշ շատ գժութիւններ։ Փշտովս իր պարագաներով ձեռքիս էր. սրտատրոփ աջող մոմենտի էի սպասում որ կրակեմ։ Հէնց էդ մտքով մի քանի ինձ մօտիկ ընկերների հետ բազմութիւնից բաւական հեռացել էինք։—Մելքոն էր, Մովսէսեան և Զոքանեան Գրիգորներն էին, Ղահրամանն էր ևն.։ Երբ արդէն մեզ ապահով էինք զգում, սկսեցինք ծառերի վրայ եղած թռչուններին հերթով կրակել։ Շատ գնդակներ փչացրինք ապարդիւն։ Մոռացել էի, որ թռչուն որսալու համար կոտորակ էր հարկաւոր։ Ինչևիցէ։ Մին էլ երբ փշտովս լցրած պատրաստ էր, յանկարծ թփի տակից մի նապաստակ դուրս պրծաւ և առաջներովս փախաւ։ Հէնց ուզում էի կրակել, Մելքոն վրայ ընկաւ, որ փշտովը ձեռքիցս խլի։ Սակայն համ ինձ խանգարեց, համ էլ ինքը չկարողացաւ կրակել։ «Նապաստակի ոտատ գալը չար բան է գուշակում, լաւ կը լինէր եթէ ազէս էր պատահելը», ասացին ընկերներս։

Արդէն ճաշը պատրաստ էր և կենդրոնից բարձր ձէնով աշակերտներին կանչում էին։

Նախ քան տեղ հասնելը, փշտովս մօտիկ ծառերից մէկի տակ պահեցի։ Դու մի՛ ասիլ, կրակելու ձէնը լսել էին ուսուցիչները։ Հ. տեսուչը խիստ զայրացած տօնով ասաց, որ եթէ չասենք ով էր կրակողը կամ ո՞ւմն է հրացէնը, ամենքիս էլ սաստիկ կը պատժի։ Մելքոն ուսուցիչներից թաքուն՝ ձեռքը շրթունքին դրած նշաններ էր ցոյց տալի մեր միւս ընկերներին, որ գաղտնիքը բաց չանէին։ Բայց հ. տեսուչը անդրդուելի էր, իր սպառնալիքը կրկնեց աւելի թունդ շեշտով։ Էլ չկարողացայ համբերել, մանաւանդ ընկերներիս անձնւիրութիւնից ազդւած, որ չէին ուզում ինձ մատնած լինել,—առաջ գնացի և խոստովանեցի որ՝ թէ փշտովն է իմը և թէ կրակողը միայն ես էի ու ներողութիւն խնդրեցի։ Հ. տեսուչը կծու կատաղութիւն արաւ ինձ և հրամայեց փշտովը իսկոյն իրեն յանձնել։ Ի՞նչ ասել կուզի, որ հրամանը կատարեցի ու փոր-փոշման տեղ բռնեցի ճաշի սփռոցի շուրջը։ Սակայն խռովել էի, ճաշ չկերայ։ Կողքերիս նստած ընկերներս շատ խնդրեցին, շատ աղաչեցին,—չկարողացան համոզել։ Քանի նրանք աղաչում էին, ես եքսան*) էի փքւում։ Մին ու մին խպռնել էի, մզուր չէի գալի ու սուած փորով էլ վերկացայ ճաշի վրից։

Վերադարձին աշակերտներս ցաքուտներից ծնեփակ էինք քաղում մեր ուսուցիչների համար։ Ես միայն մի երկուսը պոկեցի ու էլ չէի ճարում, մինչդեռ միւսները ահագին կապոցներ էին շինել արդէն։ Էն տեղերում, որտեղ որոնելով ես ոչինչ չէի գտնում, մին էլ տեսնես, մէկը կամ միւսը լխտիկ-լխտիկ ծնեփակներ էին պոկում։ Էսպէս ասած, «հանդաքաղի» մէջ անշնորք էի ես։ Մեծ բաւականութիւն ստացանք մենք էն օրւայ զբօսանքից։ Երկար ժամանակ հրճւանքով ու հաճոյքով էինք հաղորդում իրար մեր ստացած տպաւորութիւնները։

Իմ ընկերակից Ալէքսին, ինչպէս յայտնի է, մի ծայր աստիճան ցելք պատանի էր, ինձ հանգիստ չէր թողնում և շատ անգամ դասերս էր խանգարում։ Ես էլ էի վերին աստիճանի աշխուժ և մասամբ էլ ցելք. խաղալու համար

*) եքսան—աւելի։

էլ թէև հոգի էի տալի, բայց դաս սովորելու ժամանակ խաղի մասին իսկի չէի մտածում։ Հօրեղբօրս տան բոլոր գործերը համարեա Ալէքսին ու ես էինք կատարում։ Մի իրիկու խաղով էնպէս էինք տարւել մենք, որ տան համար ջուր կրելը մոռացել էինք։ Երբ վերջապէս տունը մխաքներս եկաւ, արդէն շատ ուշ էր։ Մեր՝ խաղատեղից վերադառնալուց անմիջապէս յետոյ, տուն եկաւ դատարանից նաև հօրեղբայրս։ Կինը իսկոյն լուր տւեց ամուսնուն, որ մենք խաղատեղից նոր ենք վերադարձել ու տանը մի կաթիլ ջուր չկայ։ Հօրեղբայրս կատաղած վերցրեց ձեռնափէտն ու տուր թէ կտաս՝ մին Ալէքսուն, մին ինձ, մին նրան, մին ինձ, զորս դու պատւիրեցիր մի լաւ քօթկեց ու հրամայեց իսկոյն ջուր բերել։ Իլլաջնեբըս ինչ, ահեղ հրամանը կատարեցինք ամենայն հլու հնազանդութեամբ։

Քննութիւնների ժամանակը մօտենում էր, որին սըրտատրոփ սպասում էի ես և էն հեռանկարը որ աշող քննութիւն էի տալու, շոյում էր իմ ինքնասիրութիւնը։ «Արի տէր»ը երգելում, որ սկզբում անաջողութիւն կրեցինք, հիմի շատ լաւ երգում էինք ես ու Ղահրամանը։ Միշտ երևակայում էի, որ մեր գիւղը գնացած ժամանակ երբ եկեղեցում կերգէի, ամենքն էլ կը հիանային, մանաւանդ իմ նախկին ուսուցիչ ու մեր փեսայ Միսակը։ Սակայն սիրտս ինչ որ խաւար մշուշով պատել էր ու մեր տանեցոց մասին խառնիխուռն երազներ էի տեսնում։ Երազում նեղ նեղ տեղեր էի ընկնում, ատամս էին հանում ունելիքով, որի ցաւից վեր էի թռչում։ Կամ ինչ որ գառը դառը հեղուկ էին խմացնում։ Մեր փեսայ Միսակի խանութի շէնքն էր քանդւում իբրև ևն. ևն.։ Երբեմն էլ ծածուկ լաց էի լինում արթնի, ինքս էլ չհասկանալով պատճառը։ Ի հարկէ սուտ բան է երազը, բայց վատ երազների գուշակութիւնը գրեթէ միշտ էլ կատարւում է, —սուտ է միայն լաւ երազը, որը երբէք իրականութիւն

չի դառնում։

Վերջին ժամանակները նազլուն ուշ ուշ էր երևում, ուստի անչափ կարօտել էի նրան։ Սպասում էի որ ահա կյայտնւի նա և իր կենսաթոքիս ժպիտով հովութիւն կտայ պապակ հոգուս, բայց չկար ու չկար։

Մայիսի վերջին մեր քննութիւնները վերջացան,— ես աջող քննութիւն տւի։ Վերջացաւ նաև իմ դասընթացը։ Ուսուցիչները միաբերան խորհուրդ էին տալի աշունքին գնալ Թիֆլիս ուսումս շարունակելու։

Սարսափելի շոգ էր։ Շուլաւէրի վտակի ջուրը տաքացել էր ու ծարաւ չէր կոտրում։ Շաբաթական մի երկու անգամ ծածուկ գնում էի փոսի աղբիւրից սիրտս հովացնում։ Մի երկու անգամ էլ, էն աղբիւրի մօտ Նազլուին տեսայ։

Ցունիսի սկզբներին ճամփա ընկանք դէպի մեր գիւղը. էնտեղից էլ գնալու էինք Ջալալօղլի, որտեղ նոյն ատեան լինելու էր հաշտարար դատարանի պաշտօնատեղին։ Համարեա կէս գիշեր էր, որ ժամանեցինք մեր գիւղը։ Թէև հօրեղբայրս առաջարկում էր ինձ իր աներանց տանը գիշերել, բայց ես չլսեցի։ Մէրս տանը չէր, նշանւած քոյրս էլ հարինքով հիւանդ էր, որին պահպանում էր հօրեղբօրս կինը։ Մօրս բացակայութիւնը կասկած գցեց սիրտս, կարծեցի թէ մեռած էր ու սկսեցի հոնգուր հոնգուր լաց լինել։ Մերոնք իմ լաց ու շիւանի վրայ հաւաքւելով մի կերպ համոզեցին որ մէրս կենդանի է, միայն Արդւի գիւղումն է հիմի։ Էքսի օրը վաղ վաղ ուղևորւեցի դէպի Արդւի և մօրս կենդանի տեսնելով, անսահման ուրախացայ։

Դժբախտաբար Շուլաւէրում տեսածս չարագուշակ եզնները և իմ տխրաբեր նախազգացումները կատարւած էին.—վախճանւել էր իմ երիտասարդ փեսայ Միսակը։ Միշտ էն բանն է պատահում, ինչին որ չես սպասում։ Փեսաի մահւան գոյժը, մանաւանդ իմ գեռատի քրոջ ծանր

վիշտը շատ արտասուքներ քամեցին իմ աչքերից։ Իմ էն խոկումներն ու երջանկաբեր երևակայութիւնները, որ իրեն «արի տէրը» մեր եկեղեցում երգելով զարմացնելու էի իմ նախկին ուսուցչին,—ի դերև եկան։

Էս անգամ Յանուարին տեսնել չկարողացայ, որովհետև նա սարումն էր, իսկ իմ մերը սարը գնալու սիրտ չունէր։

Էսպէս, հարազատներիս շրջանում մի քանի տխուր ու դարդոտ օրեր անցկացնելուց յետոյ, մի օր հօրեղբայրս ու ես ուղևորուեցինք դէպի Զալալօղլի։ Ալէքսին ինաց գիւղում։

Գլ. 20.

Լևոնը Զալալօղլում 2րդ անգամ։ Ձամփին ուղեկիցներ են պատահում։ Ջ.-ցի մի պատանու հետ երգում են։ Լևոնը դարձեալ խոտարար։ «Նօտեր» է սովորում։ Փաստաբան Х-ը։ Միքայել աղէն և Հայդարբէկցի Ալոն։

Հօրեղբայրս ձիով էր, իսկ ես ձիու տէրերի հետ հաւասակ։ Գիւղից շատ ուշ դուրս եկանք։ Հօրեղբայրս մեզանից չոկւեց-գնաց, իսկ մենք կէս գիշերից մօտ էր որ տեղ հասանք։ Ձամփին մեզ հետ միացան՝ և մի դամբիլ ծախող գիւղացի և Զալալօղլեցի մի հատևակ պատանի։ Ջերմ աստղազարդ գիշեր էր։ Ես ու միւս պատանին երգելով էինք գնում։ Մի քանի ժողովրդական նոր երգեր սովորեցի նրանից։ Մէկն էլ ես սովորեցրի նրան, որը մեր գիւղում նոր էր լոյս ընկել. ահա էն՝

Էն քօբերա վանքերը.—Սօնի կեռ կեռ ունքերը
Էն քօբերա քաջքերը,—Սօնի սև սև աչքերը.
Էն քօբերա ղշերը,—Սօնի սիրուն թշերը.

Էն քօբերա կռնկներն,—Սօնի բարակ պռնկներն.
Էն քօբերա ծառերը,—Սօնի շամամ ծծերը. Եվն։

Ուշ լինելու պատճառով դատարանի պատշգամբում գիշերեցինք։ Էքսը մեզ համար դատարանի դահլիճի կողքի փոքրիկ սենեակը սարքեցինք։ Դատարանի շինութեան առջև մի ընդարձակ պարտէզ կար առանց ծառերի, բայց ծաղիկներով ու կանաչ մախմուրէ խոտերով հարուստ։ Էտեղ էլ խոհանոց չունէինք, պարտիզի մի անկիւնում գետնի մէջ փոս էի փորել ես ու էտ հողէ օջախի մէջ խուշուբներից կրակ էի անում—կերակուր եփում։ Գիւղից բերած պաշարը հատնելուց յետոյ մեր դրութիւնը դժւարացաւ։ Մեր խնամոնք երբեմն մածուն ու լաւաշ էին ուղարկում մեզ համար։ Եօլա գնալու խաթեր հօրեղբայրս մածունը երկու երեք օրով պահում էր. ամառւայ օր՝ անքամիլ մածուն,—թթւում էր ու սկսում պրճպճալ։ Մածունն ուտելուց յետոյ սիրտս աւելի էր մզւում ու երբէք չէի կշտանում։

Պապիս մահից յետոյ, մերոնք ցանկութիւն ունէին նրան յաջորդող մի քահանայ ունենալ մեր օջախում։ Դեռ նրա կենդանութեան օրով գիւղի աւագ հօրեղբայրս էր նրա յաջորդը, որը ուրարակիր տիրացու էր, բայց երբ նրա կինը վախճանւեց, նրա թեկնածութիւնն էլ մէջտեղից վերացաւ։ Էնպէս որ ամենքի յոյսը ինձ վրայ էր դրւած, մանաւանդ որ, ինչպէս ասում էին, համ ես էի պապիս նման, համ ձէնս էր նրա ձէնի նման։

Էն ժամանակներում Գէորգ դ. կաթողիկոսի հրամանով ձայնագրութեան միատեսակութեան սիստեմը նոր էր մուծւած մեր եկեղեցիներում։ Էնպէս որ տիրացու և սարկաւագ, տէրտէր ու վարդապետ իրար կողքի նստած «նօտեր» էին սովորում։ Զալալօղլեցի Տէր-Մկրտիչ նորընծան, էլմիածնում «նօտեր»ն աւարտելով, վերադարձել էր ու իր ծննդավայրում «նօտեր»ի դպրոց բաց արել։ Մեր գիւղացի նորընծայ Տէր-Գեղամն էլ էր նրա մօտ «նօ-

տեր» սովորում։ Հ. Տէր-Գեղամը չուտ չուտ հօրեղբօրս այցելութեան էր գալիս։ Մի իրիկուն էլ «նօտեր»ի մասին խօսակցութիւն բացւելով, հօրեղբայրս որոշեց ինձ էլ տալ Տէր-Մկրտչին «նօտեր» սովորելու։ Եւ էքսն ևեթ հօրեղբօրս առաջարկութեամբ գնացի «նօտեր»ի դպրոցը։ Վճարը ամսական երկու ռուբլի էր։

Աշակերտների թւում կային բացի մեր գիւղացի նորընծայից, մի չահիլ վարդապետ, երկու սարկաւագ, մի քանի հասակն առած, ամուսնացած տիրացուներ և տեղացի ինձ պէս մի պատանի։ Էդ պատանին ամենքից լաւ էր սովորում և հիանալի ձէն ուներ։ Մեծերը շատ էին տանջւում. մի բթամիտ տիրացու աւելի շատ էր տանջւում. ուսուցիչը մի անգամ խիստ յանդիմանեց նրան։ «Գլուխս ձր քարին տամ տէրտէր չան, պատասխանեց տիրացուն, էն Աստւածը գիտենայ, որ քշերս մի սազ կարտոփի մոմ եմ էրել, դէ որ ըլում չի»։ Շուտով ես էլ ըմբռնեցի գաղտնիքն ու հասակաւորներին աւի անցայ։

Ամեն ամսի քսանին հօրեղբայրս Թիֆլիս էր գնում գանձարանից ռոճիկներն ստանալու։ Մինչև նրա վերադարձը գիշերները ես մենակ էի քնում։ Թէև դատարանը ծառայ ունէր, բայց գիշերները միշտ կորած էր լինում։ Գնալուց առաջ հօրեղբայրս չայ-շաքարը սնդուկի մէջ փակում էր. էնպէս որ մինչև իր ետ գալը ես թէյ չէի խմում։ Մի անգամ էլ նրա Թիֆլիսում եղած միջոցին, գիշերը քնած էի, որ յանկարծ դուռը ամուր ծեծեցին։

—Кто тамъ? հարցրի ես ռուսերէն։

—Ես եմ Լև՛ոն, բաց արա՛ դուռը։ Ձէնից իսկոյն ճանաչեցի որ փաստաբան Х-ն է։ Ըստ երևութին հետն ուրիշ մարդ էլ կար։ Դուռը բաց չարի։ Սկզբում նա շատ աղաչեց, համոզելով որ իմ աչքի առջև միմիայն մի գործի կը նայի ու կերթայ. սակայն երբ կարականապէս մերժեցի, սկսեց սպառնալիքներ տալ։ Էն էլ չօգնեց։ Ապա ճգնեցին դուռը զօրով բաց անել, բայց հէնց ես հանդի-

պակաց լուսամուխից բարձր ձէնով օգնութեան կանչեցի քէ չէ, իսկոյն անհետացան։

Հաշտարար դատարանին մօտ էր տեղացի յայտնի Միքայէլ աղի տունը։ Դատարան եկող գիւղացիների մեծ մասը, մեղուների պէս անդադար և ու մուտ էին անում Մ.-աղի մօտ։ Հայդարբէգցի Ալօն հօ համարեա շաբթէնը մի անգամ մի գիւղացու ձեռքում մի գլուխ շաքար կամ մի գառը դրած, աղի համար «փէշքէշ» էր բերում։ Նա փողրաթով գիւղական կլեատուզնի գործեր էր վերցնում և աղի շնորհիւ իր մուշտարիների օգտին վճռել տալով, մէջը փող էր վաստակում։ Փէշքէշ բերող գիւղացուն թողնում էր դուրսն ու ինքը գառը կամ շաքարի գլուխը ուղղակի աղի խոհանոցն էր տանում։ Յոհարաբի զեկուցմից յետոյ, Ալօն արժանանում էր աղի բարեհաճ ունկնդրութեան։ Ալօն նախ տրեխները հանելով, դնում էր պատշգամբի մի անկիւնում, փափախն էլ մօտը վայր դնում ու վախվխելով ներս մտնում։ Դուռը՝ գող կատւի պէս ուսլուբով բաց էր անում, աղին խոնարհ գլուխ տալի և հէնց դռան եռևում տեղն ու տեղը կուչ գալիս։ Մի անգամ էլ երբ ներս մտաւ Ալօն, Մ. աղէն հարցրեց՝

—Հը, Ալիբէգ, խէր ըլի մի փորացաւ կունենաս։

—Հրաման քէ, աղէն ապրած կենայ, էն Ուռուտեցի Գալօն իր դրկեցի հետ մնուի դաւի ունի, խնդրում եմ որ գործը Գալօի օգտին դրստես։

—Լաւ ես հրամայում Ալիբէգ քեօխւայ, համա գառով ու շաքարով եթաբը պտակ չի գնալ. դու էն ասա, ծէրին սիկկա կայ. ցուցամատն ու բութը իրար քսելով— ասաց աղէն։

—Մենձ աղի գլուխն ըլի սազ, բաս առանց սիկկի քան կլի, խորամանկօրէն ժպտալով ու քիչ էլ վստահ ոտնով ասաց Ալօն և ծոցից մի կեղտոտ թաշկինակ հանեց, որի մէջ խնամքով փաթաթած էին թաշկինակի նմանի կեղտոտ ու քրտնքակօլոլ թղթադրամները։

—Ես ինչ է, Ալիբէգ, պաս ուտեմ պաս, էն էլ թանէ սպաս։

—Արխային կաց աղա չան, դու խու լաւ գիտես որ ես ոչ մի հետ հրամանոցդ խաբած չեմ, համիկս էլ էդ գործը դրստի ու ետով մի քրդի կանանչ ու կարմիր կարպետը*) իմ պարտքն ըլի։

Կարճատև բանակցութիւնը վերջանալուց յետոյ Ալօն աղի մօտից սուերի պէս դուրս եկաւ և ըստ սովորականին մտաւ խոհանոց։ Ծոհարարը ըստ աղի պատւէրի, նախաճաշ հրամցրեց Ալօին օղիով ու գինով։ Մինչդեռ Ալօն ծանրածփիկ ուտում-խմում էր, նրա ընկերակից գիւղացին դուրսն սպասելուց ձանձրանալով, մաքի մէջ յիշոցներ էր ուղղում Ալօին։ Վերջապէս Ալօն դուրս եկաւ և ստերով արդարացրեց իր ուշանալու պատճառը։

—Մուխէլի աղի քէֆը ըսօր շատ քեօք էր. այ մարդ, ասա ըսկի Թողնում էր կշտիցը հեռանամ։ Քանի ալաս արի որ վեկենամ, փեշիցս բռնեց նստացրուց։ «Ալիբէգ քեօխւայ, ասըմա, քու զրիցը շատ եմ հաղ անում, ասըմա, նստի այ մարդ, ինչ ես խոտտում, կաց, մը խէլի էլ մասլահաթ ու խորաթա անենք»։ Էն ա, սարից քօլից էն զադա զրից արինք, որ էլ ինչ ասեմ, վերջն էլ կողքին նոտացրուց, իրար հետ կերանք-խմեցինք. մի զօռ քէֆ արինք։ Կենացս խմելիս էլ ասաւ՝ «Ալիբէգ քեօխւայ, թէ որ գեղըցիք ամենն էլ քի նման խելօք ու հասկացող մարդիկ ըլին էշ,—համաշա լաւ կապրինն»։

—Այ կերածդ քթովդ դուս գայ հա,—լեզուդ կը պապանձւէր որ ասել էիր թէ դռանը ընկեր ունիմ, կատակով ասաց միւս գիւղացին ու աւելացրեց, —էնա քու խասիաթը ըթէնց ա ըլի, պարոն Ալօ, հարու տւանի քամակին ես կայնում, քացի տւանի աղաքին։

*) քրդի կանաչ ու կարմիր կարպետը—ծիածանագոյն հարիւրանոց թղթադրամը։

Գլ. 21.

Լևոնը Նազլուի վրայ խաղ է կապում։ Ջալալօղլեցի պատանու ընկերակցութիւնը։ Դատարանը տեղափոխւում է Շուլաւէր։ Լևոնն ու հօրեղբայրը իրենց գիւղն են գնում։ Հօրեղբայրը իր պաշտօնատեղին է գնում, իսկ Լևոնը մնում է գիւղում։ Ուսումը շարունակելու մասին դարդ է անում։ Ներսիսեան դպրոցի սան Աղասին ու նա գնում են Սեդվու ս. Նշանը. մատուռում ժամ են ասում։ Լևոնին իր մէրը տանում է Թիֆլիս դպրոց տալու։

Թէ Յանուարին, թէ Շուլաւէրի դպրոցական ընկերներիս և թէ մանաւանդ Նազլուին անչափ կարօտել էի։ Ջալալօղլու դպրոցական նախկին ընկերներից շատերը չկային, որոնք էլ հիմի ինձ չէին ճանաչում։ Բայց էն պատանին, որը մեր գիւղից գալիս ուղեկցում էր մեզ, շուտ շուտ այցելում էր ինձ։ Իրիկնապահերին նրա հետ գնում էինք ձորի գետում լողանում և ժողովրդական երգեր երգելով վերադառնում։ Էս միջոցներին Նազլուի վրայ մի երգ էի հնարել ես ժողովրդական բարբառով։ Ի միջի այլոց և իմ նոր հնարած երգն էինք երգում։ Մենակութեանս ժամերին հո միշտ իմ երգն էի մռմռում ու դէպի Նազլուն կարօտով տենչում։

Արի արի Նազլու չան,
Ջահիլ չանս քի դուրբան.
Դռանդ դուլը ես եմ
Բաղչիդ բլբուլը ես եմ
Ծօսք ես տւել կատարի
Քու սիրած եարը ես եմ, ևն.։

Էս անգամ Ջալալօղլում էլ ուրիշ ուշադրութեան արժանի բան չպատահեց։ «Նօտեր»ը թէև ես լաւ էի ստ-

վորում, բայց ժամանակի կարճութեան պատճառով ա-
ւարտել չկարողացայ։ Օգոստոսի երկրորդ կէսին դատա-
րանը տեղափոխեցին Շուլաւէր։ Հօրեղբայրս ու ես գը-
նացինք մեր գիւղը. նա անմիջապէս մեկնեց իր պաշ-
տօնատեղին, հետը տանելով և Ալէքսուն, իսկ ես ինձ
տանը։ Մնացի, որովհետև Շուլաւէրի ծխական դպրոցը
արդէն աւարտել էի ու շարունակելու համար միջոց չը-
կար։ Սակայն ես չէի կարողանում հաշտուել էն մտքի
հետ, որ առանց ուսումի ինձի. մէրս էլ համամիտ էր
ինձ հետ։

Ի միջի այլոց իմ մանկական յիշողութիւնների մէջ,
մի առանձին տեղ է գրաւել մի անցք, որը միշտ սիրով
եմ վերյիշում, Ջալալօղլուց վերադառնալուց յետոյ էր։
Մեր բարեկամուհի Քէթևան ձալօն մատաղ ունէր խոս-
տացած Սեդվու ս. Նշան ուխտավայրին։ Եւ ահա մի շա-
բաթ առաւօտ, ինքը Ք. ձալօն, իր փոքրիկ դուստրը և
իրենց ծխատէր քահանայի որդի Աղասին, սայլակով ե-
կան մեր գիւղը։ Էտ տեղից էլ Քէթևան ձալօի հրաւի-
րանօք, մէրս, քոյրս ու ես նրանց սայլակում նստելով,
ճամփայ ընկանք դէպի ուխտատեղին։ Որովհետև Աղասին
Ներսիսեան դպրոցի աշակերտ էր ու ինձ հասակակից,
նրա ընկերակցութիւնը ինձ մեծ հաճոյք էր պատճառում։

Սեդվու ս. Նշանի մատուռը գտնւում է Լալւար սա-
րի հարաւային կողմի ստորոտում մի անտառապատ ու
քարձրավանդակ տեղ։ Մատուռի կողքի փոսով է հոսում
«Սէդվաչայ» վտակը։ Անձրևային եղանակներին սաս-
տիկ կատաղել գիտէ էտ փոքրիկ վտակը։ Կատաղի են
մանաւանդ նրա ջրվէժները, որոնք գահավիժւում են
սարերի թեք լանջերից ու բարձրադիրք ժայռերից։

Մեր գիւղից երեք վերստաչափ գեղատեսիլ հովիտ-
ներով գնալով իջանք Հագվի գիւղի ձորակը՝ որի ան-
դունդներն ու քերծերը, բլուրներն ու անտառները նոյն-
քան գեղեցիկ են ու նկարչագրական, ինչպէս Լալւարն

ու իր ստորոտի անտառապարդ մանը լեռները։ Աղասին
ու ես ձորաբաշը հասնելուն պէս սայլակից իջանք ու
մինչև ս. Նշանի մատուռի գաւիթը ոտքով գնացինք, մեծ
հաճոյք զգալով բնութեան սքանչելիքներից։ Բնութեան
էն ապատ ու հարազատ գրկում մեզ էնպէս էինք զգում,
ինչպէս ձուկը ջրում, կամ թռչունը օդի մէջ։

Իրիկնապահին սայլը տեղ հասաւ։ Աղասին ու ես
նախօրօք պայմանաւորուել էինք ս. Նշանի մատուռում
ժամ ասել։ Երկուսս էլ նոր ու հին եղանակները գի-
տէինք և լաւ ձէն ունէինք։ Էնից էտ մտքով էլ, ժամա-
գիրքս վերցրել էի հետս։ Բացի մեզանից՝ ոչ ոք չկար.—
ժամասացները մենք էինք, ժամաւորները մերոնք։ Մեզ
շատ ազատ էինք զգում։ Իրիկնաժամին՝ «սուրբ Աստ-
ւածն ու «սուրբ ես տէր»ը «Նոտեր»ով շատ լաւ երգե-
ցինք։ Մեզ եօթներորդ երկնքում էինք զգում։ Հրաշալի
էր մանաւանդ գիշերը։ Մատուռի գաւթում մի թէյ կը-
րակ վառեցինք։ Աստղազարդ չքնաղ երկնքի տակ, մեր
էտ մի գիշերւայ բացօթեայ ժամանցը մի ամբողջ կեանք
արժէր։ Մատաղը իրիկունն ևեթ մորթեցինք ու մատաղի
համով խորովածով ընթրեցինք։ Ապա մինչև քնելը մերթ
մեր բարի սայլապանն էր հետաքրքիր հեքեաթներ ու զը-
ւարճալի առակներ պատմում, մերթ Աղասին ու ես էինք
երգում։ Էքսի առաւօտն էլ պատարագի ամբողջ արարո-
ղութիւնը կատարեցինք։ Էտ օրը մերձակայ գիւղերից
ուրիշ ուխտաւորներ էլ էին եկել։ Ապա մատաղի ճա-
ցորդը եփեցինք որը կերանք, որը բաժանեցինք ու վե-
րադարձանք գիւղը։

Ուխտավայրի թէ բակում, թէ շրջականերում, տխլի,
տանձի, խնձորի, ու դամբլի շատ ծառեր կային պտուղ
բռնած, որոնցից օգտւում էինք մենք։ Մեր գիւղացիք
անտառի կատաղի թշնամիներ են։ Ծերերը պատմում են
որ դէնն ու դէնն աւելի կուսական ու խիտ ծմակներ
են եղել շրջապատած մեր գիւղերին։ Բայց գիւղացիք

տեղի ու անտեղի անտառի ծառերը կտրատելով, ջնջում են Աստծու շնորհած էտ աննման բարիքը։ Նրանք չեն հասկանում, որ էգպիսով զրկւում են նաև առատ ջրերից ու առողջարար կլիմայից։ Շատ ժամանակ ծառեր են կտրում հէնց էնպէս, փորձի խաթեր թէ՝ ումի կացինն է լաւ սուր, կամ ով է աւելի զոչաղ։ Կամ տանձ ու խնձոր քաղելիս՝ ծառին բարձրանալը ալարները գալիս է, ու կացնով ծառերը կտրում վայր են գցում. ապա պտուղները քաղում։ Բացի էտ, ծառազուրկ լեռները չկարողանալով ձիւնի կամ անձրևի ջրերը ծծել, հեղեղը գալիս է դէպի գիւղի հանդերն ու նոյնիսկ գիւղը և ահագին վնասներ է տալիս։

Մի քանի օրից յետոյ Աղասին գնաց Թիֆլիս ուսումը շարունակելու։ Նրա գնալուց յետոյ աւելի թունդ բռնկւեց իմ մէջ ուսում առնելու տենչը։ Էտ միջոցին հակառակի պէս, մօտ երկու շաբաթ շարունակ, անթափանցելի մառախուղը պատել էր սար ու ձոր և սառը կոթաշաղը թքոտում էր մարգուս երեսին։ Երկինքն էլ էր արտասուում ինձ համար...։

Մենք միջոց չունէինք, բայց Թիֆլիսում հարուստ ազգականներ ունէինք։ Մէրս անընդհատ մտածելով, վերջապէս էն եզրակացութեան եկաւ, որ մենք մի կերպ դիմենք մեր Թիֆլիսու ազգականներին, գուցէ թէ նրանք ինձ դպրոց տային էնտեղ։ Էտ մտքով էլ նա շատ էժան գնով ծախեց մեր մի հատիկ կովը։ Ստացած փողերը մասամբ ճամփի ծախս անելով, մասամբ էլ մեր Թիֆլիսու ազգականների համար ընծաները իրար գցելով, քեռուս ձիով աշնան մի մառախլապատ օր ճամփա ընկանք։ Թիֆլիս գնալու համար մէրս երկու նպատակ ունէը.— մինը ինձ դպրոց տալն էր, մինն էլ քրոջս համար օժիտ գնելը։

Որովհետև մինչև Շուլաւէրը մեր ճամփէն միալար սարերով, ձորերով ու անտառներով էր տանում, բեռնած ձիուն հեծնել չէր կարելի։ Բայց և էնպէս ճամփի համեմատաբար հարթ տեղերը իմ բարի քեռին մօրս ու ինձ հերթով նստեցնում էր ձիուն։ Առաջին օրը Շուլաւէրը հասնելով, գիշերեցինք քարտուղար հօրեղբօրս բնակարանում ու. էքսը գեռ լոյսը չը բացւած ճամփա ընկանք։ Թէև Շ.-ից մինչև Թիֆլիս ճամփի մեծ մասը հարթ է, բայց մեր բախտից էն ամբողջ օրը անընդհատ հեղեղ տեղաց ու սարսափելի ցեխ գոյացրեց։ Խեղճ մէրս տռնտամանները հանեց և բոբլիկ ոտքով ամբողջ օրը ցեխ ճմռելով ճամփա կտրեց, որպէս զի ձիուն միշտ ես լինէի հեծած։

Պինդ մութն էր որ հասանք Թիֆլիս։

Երբ Թելեթի սարի գլխից առաջին անգամ քաղաքն աչքովս ընկաւ իր՝ աստղերի պէս անթիւ ու անհամար վառւած ճրագներով, ամբողջ մարմնովս սարսուռ անցաւ։ Ինձ թւաց թէ աշխարհը շուռ եկաւ և քաղաքը՝ ինքն աստղալից երկինքն է։

Ուշ լինելու պատճառով գիշերը մնացինք Թաւլում։

Գլ. 22.

Լևոնը Թիֆլիսում 1-ին անգամ։ Թաւլէն։ Գնում են հօրեղբօր տունը։ Աշակերտական մարմնամարզական խաղերը։ Լևոնը կարդում է «Հիւսիսափայլը»։ Տեղափոխում են Լևոնի քահանայ հօրեղբօր տունը։ Լևոնի ամուրի հօրեղբայրը։ Նոր կաստիւմը։ «Եօթն իմաստասիրաց պատմութիւնը»։ Առաջնորդարանի դուռը դրսից կողպում է։ Զինուորական մարզանքները։ Լևոնն ու մէրը վերադառնում են իրենց գիւղը։ Լևոնի ձէնը փչանում է։

Թաւլա մի՛ ասիլ,—դժոխք ասա։—Մի խորը, նեղ ու երկայն գոմ էր մի կարգ ախոռներով։ Ախոռների առջև ձիաներն էին շարքով կապոտած, որոնք ղռնդացնելով ուտում էին դարմանախառն գարին։ Ձիաների աղբակոյտից բարձրացող կծու ժահահոտը աչքներս ծակոտում էր ու շունչներս կտրեցնում։ Պակասը լրացնում էր նաւթի ճրագների արձակած մրահոտը, որոնց՝ առանց էն էլ աղօտ լոյսը հանգչելու չափ նսեմանում էր ապականած մթնոլորտից։ Ձիաների մսուրի վերևից ամբողջ երկարութեամբ վերնայարկ էր շինուած տախտակներից, որը օթևանի տեղ էր ծառայում մարդկանց համար։ Մի նեղ, կէսաստիճ ու խարխուլ սանդուղքով վեր ելանք, տեղ բռնեցինք էն վերնայարկ—տախտի վրայ։ Տէր իմ Աստուած. էն ինչ բան էր։—Առաստաղից գրեթէ կապած մի կեղտոտ կայան՝ առանց լուսամուտների։ Առաստաղը էնքան ցածր էր, որ էտ տախտի վրայ քնաւ չէր կարելի կանգնել. նստած ժամանակ էլ, հասակաւորները ստիպուած էին մէջքները կորացնել, որպէսզի գլուխները առաստաղին չդիպցնէին։ Նաւթի ճրագների մուրը գո-

լորշու հետ խառնուելով, մի տեսակ սև թանձր հեղուկ էր գոյացնում ու ցօղի պէս կաթկթում առաստաղից։ Հետն էլ տեսակ տեսակ զզւելի միջատներ ու ճիճուներ էին թափւում։ Լւաններին ու էն զզւելի բաղնիչներին հօ հաշիւ չկար. բաղնիչների մասին գիւղում մենք գաղափար չունէինք։ Գլուխս պտտ էր գալի ու քիչ էր ճնում փսխէի։ Մի կերպ լուսացրինք։ Մեծ պասից երկար էր էտ գիշերը։ Երբ առաւօտը լոյս աշխարհ դուրս եկանք, կարծես դժոխքից դրախտն ընկանք։ Երևակայում էի, որ բանտը հազար վտառով լաւն է էտ թաւլից։

Փողոցների շարժուձևն ու շուկայի ժխորը շշմեցնում էին ինձ,—մարդիկ շտապ շտապ ետ ու առաջ էին վազվզում։ Կռիւ կայ ինչ է, մտածում էի ես, որ սրանք էսպէս մրջիւնի նման վազվզում են։ Ահա զանգուլակները ծլնգացնելով էշերի կարաւանն է անցնում ականջներիցը հետ բարձած կանաչեղէնի կողովներով, ահա ջրկիր թուլուխչիքը ձիաներին ջրով լիքը տակերը բարձած կուր գետից ջուր են կրում տները, ահա մրգեղէնով լիք թաբախը գլխին կինտօն է բարձրաձէն կանչում՝ «լաւ խաղող, լաւ դեղձ»։ Յանուէթպանները հօ անցորդների զահլէն տանում էին իրենց «էստի համեցէք, էստի համեցէք»-ներով։ Կին, տղամարդ խառը, մէկը գամբիւղը կռանը գցած շտապում էր դէպի խանութ կամ շուկայ, միւսը մաւի թաշկինակում մթերքեղէնը կապած՝ արդէն տուն էր վերադառնում։ Կառքերի ականջ խլացնող դղրդոց, սայլերի ճռնչոց, ձէն, աղմուկ ու աղաղակ, հարահրոց։ Սրընթաց սլացող կառքերի եռևից երբեմն ինձ նման կամ աւելի փոքր երեխաներ կպած՝ հետը սլանում էին։ Մի տեղ ապրանքի գովասանք, մի ուրիշ տեղ գնորդի ու վաճառողի միջև կագ ու կռիւ, յիշոցներ, տուր ու դմբոց։ Շշկլւել էի ես ու չգիտէի ո՛ր կողմը նայել, կամ ինչ բանի վրայ ուշք դարձնել։

Քեռիս, մէրս ու ես գնում էինք հօրեղբայրներիս

մէկի բնակարանը, որը թաւլից էնքան էլ հեռու չէր։ Բնակարանը գտանք, բայց հօրեղբայրս տանը չէր. տանն էին միայն նրա կինն ու զոքանչը։ Ընդունելութիւնը աչքի ընկնելու չափ սառն էր։ Երևի քաղաքի ազաթը էսպէս է, մտածեցի ես. ի հարկէ նրանք ինչպէս քաղաքացի,—քաղաքավարի են վարուում։ Մեզ պէս գիւղացի հօ չեն, որ երբ իրենք են մեզ մօտ գալի, մենք շաշի պէս սրտանց ուրախանում ենք։ Քեռիս մեզ թողեց ու գնաց բերը բերեց։ Բերը ատացելուն պէս, հօրեղբօրս կնոջ ու իր մօր աչք ու յօնքը քիչ բացւեցին։

Նրանց բակում մի մանաւոր դպրոց կար։ Աշակերտները պայուսակները մէջքներին կապած՝ արդէն դպրոց էին գալի։ Պատշգամբի վրայ կանգնած՝ հաճոյքով նրանց էի մտիկ տալի։ Երևակայում էի, որ շուտով ինքս էլ եմ խառնւելու նրանց խմբերին։ Նրանց ծառայի ձեռքով մէրս իր բերած ընծաները բաժանեց մեր ազգականներին։ Ծառայի հետ ես էլ էի ամեն տեղ գնում ու մեր ազգականների տներն ու խանութները և փողոցներն էի սովորում։ Քանի մէրս մի նոր բաժին էր ուղարկում, նկատում էի, որ հօրեղբօրս զոքանչը հետզհետէ նօթերը կլիտում էր։ Իրիկունը հօրեղբայրս խանութից տուն եկաւ և սա համեմատաբար աւելի ուրախ դիմաւորեց մեզ, սակայն ոչ էնպէս սրտալի, ինչպէս գիւղը եկած միջոցներին։ Փոքր ինչ յետոյ ականջիս հասաւ, որ զոքանչը գանգատւում էր ասելով՝—«ինքը մեզ մօտ է համեցէք էլի, բերը կի դիպ ուրիշներուն բաժնեց»։ Մի շաբաթ ճաշելուց նրանց տանը մեզ համար առանց մի գործ շինելու։ Իմ օգուտն էն եղաւ, որ հօրեղբայրս «Հիւսիսափայլ» թերթի մի կազմած գիրք ունէր՝ սկզբից մինչև վերջը կարդացի, մեծ բաւականութիւն ստանալով,—մանաւանդ կոմս Էմմանուէլի գրւածքներից։ Շատ հետաքրքրական էին ինձ համար նրանց բակի մանաւոր դպրոցի աշակերտական մարմնամարզական խաղերը։ Սրտանց ուզում

էի նրանց մարզանքներին մասնակցել,—աչքս ուտում էր, որ ես գերազանց կը կատարէի ամենադժւար համարները։

Մէրս ի հարկէ պատմեց իր նպատակները, որ ինձ բերել է դպրոց տալու և քրոջս համար բաժինք առնելու։ Հօրեղբայրս խորհուրդ էր տալի մեր հարուստ ազգականներին դիմել։ Եւ մի օր չէեցինք քաղաքի մի այլ հեռաւոր թաղ,—քահանայ հօրեղբօրս տունը։ Նրանց մօտ աւելի լաւ ընդունելութիւն գտանք։ Տիրուհին հիւանդ էր ու մէրս օգնում էր նրանց տնային գործերին,—ահա թէ ինչումն էր լաւ ընդունելութեան գաղտնիքը։ Երկու թէ երեք շաբաթ էլ էնտեղ մնացինք. շատ չար ու բարի անցաւ մեր գլխովը էտ մի քանի շաբթւայ ընթացքում։ Թէ նրանց և թէ իրենց տուն եկած մեր ամեն մի ազգականին աշուղի խաղի նման մէրս պատմում էր իր քաղաք գալու բուն նպատակները։ Տակաւին ոչ օրից դրական մի խօսք կամ խորհուրդ չէինք լսում և օրերը համարելով քարշ էինք գալի։

Մի օր՝ կէս օրից առաջ, մօրս պատւէրով գնացի իմ ամուրի հօրեղբօր խանութը, որին երեք-չորս տարեկան ժամանակս էի տեսել միայն։ Խանութի դուռը հասայ ու կանգնեցի,—երեսս չէր բռնում, որ ներս մտնէի։ Համբերեցի ամբողջ օրը սուված ծարաւ դուրսը կանգած էլ։ Էս անիծւած ձեռքերս հօ մի անատանելի ցաւ էին դարձել, չգիտեի թէ ո՞րտեղ պահեմ։ Հազիս մի պարուսինէ բլուզ կար, թևքերը կարճ-կարճ, գրպաններ չունէին, որ գոնէ ձեռքերս գրպաններս դնէի։ Արևակէզ ու անճոռնի ձեռքեր՝—էնքան էին խանգարում ու խլալ տալի, որ եթէ հնար էր եղել, կը թողնէի տանը։ Հազիւ հազ իրիկնադէմին ներսից մի ուրիշ պարոն ինձ նկատելով՝ հօրեղբօրս ինչ որ ասաց իմ մասին։ Հօրեղբայրս խանութի դուռը բանալով, հէնց չէմքից վրացերէն բղաւեց վրէս՝ «գադի մօշորդի» (գնա կորի), երևի մուրացկանի տեղ դրեց։

ես տեղից չշարժեցի ու առանց խօսելու լացակնքեցի։ Նա մին էլ բարկացաւ վրէս.—բայց էս անգամ կարողացայ կերկերուա ձէնով ասել, որ ես՝—իրեն եղբօր որդին եմ։

— Լևոնն ջա, մեղմացած ձնով հարցրեց ու էլ ոչինչ չխօսեց։ Ներս մտաւ դլխարկը ծածկեց ու ետ դուրս գալով, առանց բարևելու ինձ կանչեց—տարաւ իր բնակարանը։ Սենեակը կողպէքով փակած էր. բաց արեց ու ներս մտանք։ Նոր նոր գրկեց ինձ, համբուրեց ու մինչև անգամ աչքերը թաց արաւ։ Մօրս ու իմ գալու նպատակները իմանալով խոստացաւ առաջիկայ կիրակի օրը մեզ մօտ գալ։ Մի ձեռք էլ իր հին «կաստիւմ»-ներից վերցրեց ու մերձակայ դերձակին տւեց, որ քանդի ու ինձ համար նորից կարի։

Տէրտէրենց տանը, բազմաթիւ գրքերի շարքում կար և «եօթ իմաստասիրաց պատմութիւն» անունով գիրքը։ Մեծ աշխուժով ու հետաքրքրութեամբ էի կարդում ես էտ գիրքը, գրեթէ նրա մէջի բոլոր առասպելներն ու հէքեաթները բերան էի արել։

Մի կիրակի օր զբօսնելով գնացի Վանքի տաճարը։ Հանդիսաւոր պատարագ կար էտ օրը։ Վանքի գաւթում Շուլաւէրի դպրոցական ընկերներից շատերին պատահեցի, որոնց թւում և իմ հայրենակից Աղասուն։ Աղասին շատ ուրախացաւ ու սրտով ցանկանում էր, որ ես էլ մտնէի Ներսիսեան դպրոցը։ Պատարագի վերջում ս. առաջնորդ Գ. Այվազեանը եկեղեցու հասարակութեանը առաջնորդարան հրաւիրեց ինչ որ կարևոր խորհրդակցութեան համար։ Ես էլ խալխին խառնւած ուզում էի անպատճառ ներս մտնել, բայց դռների մօտ կանգնած թարս ժամկոչը չթողեց։ Վրդովւած ետ դարձայ, փոքր ինչ Վանքի բակում անց ու դարձ արի ու նորից քայլերս ուղղեցի դէպի առաջնորդարան։ Ոչ ոք չկար ու դուռը ներսից փակած էր։ Հին ձևի զոգա կար կպցրած դռների

արտաքին կողմից, վերցրի ու զոգայով կողպեցի, կողպեցի ու սանդուխներից կամաց կամաց իջնելով, փողոցին հասնելուն պէս քայլերս արագացրի ու պռկի,—ծըլկեցի։ Սակայն դեռ կէս-ճամփին էի, որ արարմունքս սկեց ինձ մտատանջել։ Կէս ճամփից ետ դարձայ ու վախվախելով վերև բարձրանալով զգուշութեամբ զոգէն ետ գցեցի։ Բարեբախտաբար տակաւին չէր բացւել իմ էն տգեղ արարքը։

Հէնց նոյն կիրակի օրը ամուրի հօրեղբայրս ճաշին տէրտէրենց տուն եկաւ։ Ճաշից յետոյ թեր ու դեմ շատ խօսեցին ինձ դպրոց տալու մասին, բայց ոչ մի եզրակացութեան չեկան։ Թէև ամուրի հօրեղբայրս խոստանում էր իմ բոլոր ծախսերը հոգալ, բայց ոչ ոք յանձնառու չեղաւ ինձ պահելու։ Բայց և էնպէս մենք դարձեալ յոյս էինք տածում իմ դպրոց մտնելու գործը աջողեցնել։ Եւ էտ մտքով մէրս ու ես դիմումները արինք մեր էս ու էն ազգականին ու հարուստ ծանօթներին։ Դժբախտաբար ամենքից էլ մերժուաց ստացանք զանազան պատրւակներով։

Երբեմն կէս օրերից առաջ տանից դուրս էի գալի և մինչև ճաշ քաղաքի փողոցներում թափառում։ Առաւօտից հաւլաբարի զօրանոցների մօտ կատարւող զօրախաղերն էի դիտում, ապա գնում էի և էս դպրոցի առջև ցցւում, էն դպրոցի մօտով անցնում։ Երբ աշակերտ աշակերտուհիները գրոհ տալով լցւում էին դպրոցի բակը և ուրախ ուրախ թռչկոտելով խաղում,—խելքիս ծէրը կուլ էր գնում։

Մենք մի հարուստ ազգական ամուսիններ ունէինք, զրանց մի անպտուղ որդին գիմնազիայից յաճախ դուրս էր պրծնում և փչացած տղաների հետ կորչում քէֆի որջերը։ Անբախտ ծնողները զզւել էին նրան էս դպրոցից էն դպրոցը տեղափոխելով ու նրա քէֆերի ծախսերը վճարելով։ Մտքումս ասում էի՝—«ախ ինչ անեմ, Աստւած փլաւն ձեմ է տւել, ախորժակն ում»։

Ազգականներս թէև ինձ դպրոց տալը մերժեցին, բայց ամենքն էլ քրոջս բաժնքի համար մի մի իրեղէն գնեցին։ Էսպէս, չորս—հինգ շաբաթ քաղաքում դեգերելուց յետոյ, փոր-փոշման վերադարձանք մեր գիւղը։

Ուղևորելու առաւօտը դեռ թէյը պատրաստ չէր ու մենք՝ տէրտէրանց տանից ծոմ բերանով դուրս եկանք։ Ճամփին մի բուբլիկ ծախող պատահեց, մէրս մի կոպէկով մինն առաւ ինձ տւեց, առարկելով որ ինքը սոված չի իբրև։ Սակայն բանից դուրս եկաւ, որ մի կոպէկից աւել փող չի ունեցել խեղճը, բացի մի հատ երեք ռուբլիանոցից, որ մեր վարձած ձիու քրեհը պէտք է տար։ Տաս կոպէկ փող էլ ես ունէի, ուզեցի մօրս համար բուբլիկ առնեմ, բայց ես նայելով, տեսայ, որ բուբլիկ ծախողը արդէն չքացել էր։ Շատ տխուր էր մէրս և էն ամբողջ օրը ծոմ պահեց։ Որովհետև մենք մեծ մասը ոտքով էինք գնում ու թաւլից էլ ուշ էինք դուրս եկել, իրիկնապահին հազիւ հասանք կոզա գիւղը։

Էնտեղ էլ իմ ձեռքի տասը կոպէկով մի բաժին ձաւարով եփած լոբի ու հաց առայ, ձիանների գոմում ընթրեցինք և տեղն ու տեղը գիշերեցինք։ Էքսը դեռ օր կար, որ հասանք Շուլաւէր ու էն գիշերն էլ ճաշցինք քարտուղար հօրեղբօրս տանը։ Մեր գիւղից հիւր էր եկած հօրեղբօրս քահանայ աները, որը միւս օրը մեզ ուղեկից ընկաւ ու միասին ճամփա ընկանք։ Մի գիշեր էլ Ծուժոռնի գիւղում ճալով, չորրորդ օրը միայն հասանք մեր գիւղը։

Սառնամանիքը արդէն զգալ էր տալի իրեն։ Եղեամը իր սպիտակ նօսր շղարշով ծածկել էր չոր բոյսերն ու անտառի ծառերի կատարները։ Մեր խնամի տէրտէրի խնդրանօք, ամբողջ ճամփէն ես երգելով էի գնում։ Բերանս սառը սազախի *) հանդէպ բաց ու խուփ անելով, աւի ձէնիս տունը քանդեցի։ Ձէնս բոլորովին փչացաւ, որ սակայն ես ուշ հասկացայ։

*) Սազախ—ցուրտ, քամի։

Գլ. 23

Լևոնը նորից իրենց գիւղում։ Փէտ է կրում։ Կարօտով Թիֆլիսի դպրոցներն ու աշակերտ-աշակերտուհիներին է յիշում։ Դպրոց է բաց անում։ Իր աշակերտներին մարմնամարզութիւն ու գինավարժութիւն է սովորեցնում։ Իր ծննդավայրի նկարագրութիւնը։ Ս. Նշանի ուխտը։ Նահատակ աղջկայ աւանդութիւնը։

Ռանչպարի կալի ու ցանքի գործերը վերջացել էին արդէն, մնում էր միայն ձմեռւայ վառելափէտի ու ալիւրի պատրաստութիւն տեսնելը։ Իմ միջնակ հօրեղբօրն օգնելով, նրա լծկանով էնքան փէտ կրեցինք անտառից, որ ամբողջ ձմեռը հերիք էր մեզ։ Նաև ցորենի և ճաճարի «աղուն» *) արեցինք, սայլով ջրաղացը տարանք, ցորենը աղալով ալիւր շինեցինք, իսկ ճաճարից էլ ձաւար։ Էլ ուրիշ գործ չկար. ճնացել էի մոլորւած։ Օր ու գիշեր անդադար մտորում էի ու սաստիկ վշտանում, ուսումից զրկւելուս համար։ Անձկալի կարօտով էի յիշում Թիֆլիսի դպրոցներն ու աշակերտ-աշակերտուհիներին, երբեմնակի՝ ինչպէս խաւարի միջից յանկարծակի առփալող լոյս՝ մի յոյս գալիս էր անցնում մտքերիս միջովը մի օր իբրև աղօղելու էր ինձ ուսում առնելու իղձս իրականացած տեսնել։

Մի անգամ էլ գլխովս կայծակի պէս մի միտք անցաւ, որ մեր գիւղում դպրոց բաց անէի։ Սկսեցի մրցումս ծրագիրներ կազմել ու մի օր մօրս յայտնեցի։ Նրա հաւանութիւնը ստանալով, ամուսնացածս քրոջ հիւրերի սենեակը դպրոց շինեցի։ Մեր ազգականների ու հարևանների տղաներին հաւաքելով սկեցի պարապել։

*) Աղուն—հացահատիկների ցորացնելը։

Նիւթականի կողմից դրութիւնս միանգամայն անհանձելի էր, որովհետև ոչ ոք դասապին չէր վճարում ինձ համար էնքան էլ գեալի չէր էտ պակասը, քանի որ ես ինձ գոնէ բարոյապէս ու մտաւորապէս վարձատրւած էի համարում մասամբ։ Աւետարանում էլ ասւած է թէ՝ «ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլև բանիւն Աստուծոյ»։

Սովորական դասերից զատ՝ կէս օրերից յետոյ երկու կալում աշակերտներիս մարմնամարզութիւն ու զինավարժութիւն էի սովորեցնում, որոնց ինքս սովորել էի Թիֆլիսում։ Էտ բանը իբրև նորութիւն՝ չափազանց շահագրգռում էր թէ աշակերտներին և թէ գիւղացիներին, որոնք խումբ-խումբ թամաշա էին գալի։ Զինավարժութեան համար փէտէ հրացաններ ու սրեր էի շինել աշակերտներիս համար։ Շաբաթ օրերով էլ, եթէ եղանակը լաւն էր լինում, աշակերտներիս հանդերն էի տանում զբօսանքի։ Ինքս էլ նրանց խաղերին մասնակցում էի միշտ։ Բնութիւնը լաւ ազդեցութիւն էր անում նրանց վրայ։ Շաբաթական մի օր էլ, որոշ ժամեր էին նշանակւած հէքեաթներ պատմելու համար։ Ես ինքս լաւ-լաւ հէքեաթներ շատ գիտէի, պատմում էի և հետևեալ հերթին արդէն աշակերտներն էին կրկնում։ Իրենք էլ իրենց գիտեած հէքեաթներն էին պատմում աշխուժով։

Սանդրօ անունով 10 տարեկան աշակերտս մի առոյգ ու թմփլիկ երեխայ էր, սա զինավարժութեան մէջ շատ էր խիզախ ու ընդունակ։ Էտ առաջադիմութեան համար ենթասպայի աստիճան էի տւել նրան։ Ոսկեզոյն թղթից կարզօնի վրայ ուսադիրներ էի շինել—կպցրել ուսերքին ու զինավարժութեան միջոցներին կանգնեցնում էի զօրքի աջ թևի առջև իմ կողքին։ Եթէ մինը իմ հրամանը ճշտութեամբ չէր կատարում, Սանդրօն իսկոյն մօտենալով ուղղում էր։ Մի խօսքով նա իր պաշտօնով շատ էր հպարտանում ու ընկերների նախանձը շարժում։ Էն ժամանակ մեր երկրում զինւորակոչը դեռ մուտք չէր գործել։ Մեր զինավարժութիւնը գիւղի ծերերին դուր չէր գալի,—նրանք կծու յանդիմանութիւն էին անում ինձ էտ մասին, առարկելով որ թագաւորը կիմանայ ու զինւոր կը տանի։

Աշակերտներիս ֆիզիքապէս պատժել չգիտէի ես. աշխատում էի բարոյապէս ազդել ու աւելի էր աջողւում։ Շատ շատ երբեմն մի ժամի չափ առանց ճաշի էի թողնում. էն էլ փոքրերին միայն։ Սրա մասին աշակերտներս ինձ շատ էին հաւանում։ Սակայն գիւղացիք սրբտրնջում էին։ «Մոնթին որ ծեծես ոչ, մարդ կը դառնայ», ասում էին նրանք։

Մեր գիւղը, որ հնում Օձուն, իսկ հիմի Ուզունլար է կոչւում, ունի բարեխառը կլիմայ և առողջարար ու սառն ազբիւրներ։ Շրջապատւած է անտառներով, տաւարաքանակ լեռներով, դաշտերով ու ձորերով։ Անտառները փէտի արտահանութեան, սարերը անասուններ պահելու, իսկ դաշտ ու հովիտները վարի, ցանքի ու խոտհարքների համար և ջրառատ ձոր ու ճալաններ այգեգործութեան ու բանջարաբուծութեան համար, իրարից կպած։ Եթէ էս տեսակ բնութեան հրաշալի ներդաշնակութեամբ օժտւած վայրում եսասէր գերմանացիները լինէին բնակւելիս, ուղղակի դրախտ կը շինէին մեր գիւղը։ Սակայն մեր հայ գիւղացիք իրենց ազնիւ զգացմունքներով, լէն բարեսրտութեամբ, հիւրասիրութեամբ ու օտարասիրութեամբ հանդերձ, շատ են ետ ճնացել։ Բնութիւնից օգտւելու եղանակները չգիտեն, ուսած մի զարմանալի տօկունութեամբ ու անտանելի չարքաշ կեանքով են իրենց ողորմելի գոյութիւնը քարշ տալի։

Օձուն գիւղի ձորում, ս. Նշան անունով ուխտավայր կայ, որի ուխտագնացութեան տօնը կատարւում է Գիւտ խաչի տօնին։ Ս. Նշանի մատուռը երկու մասից է բաղկացած, երկուսն էլ բեմերով։ Առաջին բաժանմունքում արևմտեան պատի մէջ ուշադրութեան արժանի մի սի-

րուն խաչքար կայ։ Հոկտեմբերի վերջից մօտ էր. դեռ շաբաթ օրից հեռաւոր տեղերի ուխտաւորները խումբ խումբ գալիս էին, ձիաներով, ֆուրգօններով, սայլերով ու ոտքով։ Եղանակը սաստիկ ցուրտ էր ու մառախլապատ։ Ուխտաւորները մատուռի կողքի էրերում պատըսպարւած, թէժ կրակներ էին վառել ու շատերը հէնց իրիկունն էի մատաղները մորթել։ Կեր, խում, քէֆ, զուռնա ու գարմօն, խաղ ու պար իրար էին խառնել։

Էքռի օրը արևի ծագելու հետ մառախուղը չքացաւ և աշնանային մի սիրուն եղանակ արեց։ Ուխտաւորների տրամադրութիւնը մէկէն լաւացաւ։ Նորից սկսեցին մատաղներ մորթել, եփել ու խորովել։ Պատարագը աւարտւելուց յետոյ, նորից սկսեցին քէֆերը,—ամեն երկրի ժողովուրդ քէֆ էր անում ըստ իր սովորութեան։ Մի տեղ տաքարիւն գիւմրեցիք էին իրենց ճակատներին ոսկի շարած կանանց հետ նազանեմ ու սքանչելի տակտով եալլի գնում զուռնա դհոլի նւագակցութեամբ, էնտեղ զգացմունքաւոր ջալալօղլեցիք և թղթախաղով տարւած գառգառեցիք էին գարմոն նւագում ու իրենց մօդայամոլ կանանց պար ածում, էստեղ բարեսիրտ ու անտաշ ձորեցիքն էին մէյդան արել, հարա հրոցով քէֆ անում ու զուռնա դհոլով անճոռնի-անճոռնի, ոտքերնին պինդ պինդ թմփթմփացնելով պարում։ Իսկ իրենց կարմրաթուշիկ ու մեծ ոտքերով հարսները մի անկիւնում կուչ եկած, քուշուշքն աչքներին, դնչկալը քթի տակից հետ կապած, թամաշա էին անում։ Մի ուրիշ տեղ էլ փամբակու լըջմիտ ու անսրտաբաց դարաքլիսեցիք սուս ու փուս իրենց մատաղներն էին վայելում առանց զուռնա դհոլի և առանց գինի-արաղի։ Տեղ-տեղ էլ աշուղների խմբերն էին գետնին աղլուխ փռել ու սազներին անդադար վեր էին հառում։ Սրանց ըռխին էնքան էլ մարդ աւող չկար, անցորդների հարիւրից մէկը գրպանը պորտեելով, մի սև կոպէկանոց էր հանում շպրտում դէպի փռած թաշկինակն ու անցնում գնում։ Ձորի նեղ ու դիք մուռը, ներքևի ծէրից մինչև վերևի ծէրը բռնւած էր երթևեկ խառնիճաղանճ ուխտաւորներով։

Ս. Նշանի ուխտավայրից դէպի ներքև ցածրանալով առաջն է գալի «Թնդոց» կոչւող աղբիւրը էրի մէջ, որը քարէ առաստաղից կաթկաթելով, տակը մի փոքրիկ լճակ է գոյացնում անուշահամ ու սառնորակ ջրով։ Էրի առջև, լճակից հոսող առւակի վրայ քարէ փոքրիկ կամուրջ է դրւած, դրա տակից ուշ ոտնըլող մանուկներին երեք անգամ անց են կացնում, որ ոտները բաց լինին։ Էնտեղից բաւական վերև, մեծ քարափի սաորոտում մի փոքրիկ էր կայ,—որը «Ճգնաւորի էր» է կոչւում։ Ասում են, իբրև թէ, վերջին ժամանակներս էնտեղ մի մարդ է եղել ճգնւելիս։

Ս. Նշանի մատուռից վերև արևմտեան ու հարաւային կողմերում անմատչելի քարափի մէջ առջներից պատեր շարած էրեր կան. դրանցից մինը յունաց վասիլ իշխանի անունով է յիշւում, իսկ միւսը երկու բաժանմունքից է բաղկացած ու ներսի բաժանմունքում մի թոնիր կայ շինւած։ Ասում են լեզգիների և Հասան խանի յարձակումների ժամանակ մարդիկ են եղել պատըսպարւելիս էս անմատչելի տեղերում։ Ս. Նշանի հարաւային կողմում մի փոքրիկ մատուռ կայ ս. Կարապետ անունով, որի պատերից մոմեան են քերում ու անբուժելի հիւանդներին խմեցնում։

Մի բոլորովին փոքրիկ մատուռ էլ ուխտավայրի գրաւանդից ներքև կայ, որին «Նահատակ աղջկայ մատուռ» անունն են տալի։ Դրա մասին աւանդութիւնը էսպէս է ասում՝ որ լեզգիների ու Հասան խանի ասպատակութիւնների օրերում անթիւ որբ երեխաներ էին մնացել դուռնէդուռն ընկած, որոնց ծնողներն ու հասակն առած տերերը թշնամուց կոտորւած էին։ Էս որբերին ժողովուրդը իր մէջ բաժանելով, իր խնամատարութեան տակ

էր առել։ Ահ ու փախն ու արհաւիրքը դեռ շարունակւում էր, որ էտ որբերը արդէն երիտասարդութեան հասակին էին հասել։ Եւ ահա էտ որբերից մի երիտասարդ տղա՝ նշանւում է մի որբ աղջկայ հետ։ Նրանց պսակը նշանակւում է ս. Նշանի մատուռից մօտիկ գտնւող ս. Աստուածածնայ անունով եկեղեցում։ Էտ եկեղեցին հիմի էլ կայ, որը տանիք չունի։

Պսակի ծէսը կատարելու մինչոցին մի անսպասելի հրաշք է պատահում.—յանկարծ եկեղեցու տանիքը պոկւելով՝ ընկնում է ներքև ու առանց փուլ գալու տեղն ու տեղը կանգնելով իրենից մի փոքրիկ մատուռ է գոյացնում։ Էն՝ որը հիմի նահատակ աղջկայ մատուռ է կոչւում։

Պսակ կատարող քահանան իսկոյն պսակի արարողութիւնը դադարեցնում է, որպէս զի իմանայ թէ՝ ինչ է գուշակում էս պատահած հրաշքը։ Եւ իրօք՝ երկար ու մանրազննին քննութիւնից պարզւում է, որ նշանւած տղէն ու աղջիկը հարազատ քոյր ու եղբայր են եղել։ Տղէն ու աղջիկը խոստովանելով՝ մեղայ են գալի և էտ անցքից յետոյ շարունակում են ապրել ինչպէս քոյր ու եղբայր։ Բայց թէ ինչու եկեղեցու պոկւած տանիքը նահատակ աղջկայ անունով է կոչւում, էդտեղ արդէն ածանդութեան թեզը կարւում է։

Գլ. 24.

Ս. Նշանի ուխտագնացութեան շարունակութիւնը։ Գիւղացիների կուռը։ Իգիթ Գէվօն ու իգիթ Սամանը։ Նրանց սխրագործութիւնները։ Զոփուրով աւազակ եղբայրները։ Երկու իգիթների եղերական մահը։

Ճշմարիտն ասած, ուխտագնացութեան սովորութիւնը գիւղական ծէսերից ամենալաւն է, ոչ թէ կրօնական տեսակէտից, այլ առողջապահական ու հոգեկան կողմերից։ Ջէ՞ որ գեղկուհին վանդակում բանտարկած թռչունի կեանք է վարում տարին ի բուն։ Ուրեմն միայնաւեթ ուխտագնացութեան գեղեցիկ սովորութիւնն է, որ գոնէ երբեմն առիթ է տալի գերի գեղկուհուն ազատութիւն ստանալ և ուխտագնացութեան պատրւակի տակ բնութեան ազատ ծոցում թարմ օդ շնչելով ֆիզիքապէս կազդուրւել և հոգեպէս հրճւել։ Էն հանգամանքներն էլ մեծ հաճոյք են տալի գեղկուհուն, որ ուրիշ երկրի կանանց հանդիպելով, նրանց հագուստի տարազին է տարւում կամ ուրիշ երկրում գտնւող իր հարազատներին, մերձաւորներին ու մանկութեան ընկերուհիներին է տեսնում,—կարօտն առնում։

Մի բան միայն երբեմն տգեղացնում է ուխտագնացութեան հանդէսը,— էդ էն է, որ տղամարդիկ հարբելով, կռիւներ են սարքում, որը շատ անգամ տխուր հետեւանքներ է ունենում։ Մի սարսափելի կռիւ էլ էտ օրը պատահեց։ Իրար հետ կռւում էին Օձնեցիք ու Դսեղեցիք։ Ուրիշ անգամներ Օձնեցիների առաջ ոչ ոք դէմ չէր կենում, բայց Դսեղեցիք էլ շատ քաջ էին, ուստի կռիւը ահաւոր ու կատաղի կերպարանք ստացաւ և ամենքը

սարսափով էին սպասում, որ հիմի որտեղ որ է՝ մարդ կը սպանի։ Մի քանի տասնեակ հուժկու տղամարդիկ, խելքները կորցրածի պէս իրար քիթ ու պռունկ էին արիւնլայ անում և գլուխները ջարդում։ Կանանց ու երեխաների լաց ու շիւանն էլ մի կողմից էր պակասը լրացնում։ Ուխտաւորները իրար հրելով փախչում էին դէպի ձորի գլուխը։

Էս միջոցին Դաւղեցի իգիթ Օսմանը մի էրում էր քէֆ անում իր խմբով, Օձնեցի իգիթ Գէվոն էլ մի քամանդի վրայ էր քէֆ անում իր խմբով։ Կուռղների տեղը որ նեղացաւ, ամեն մինը իմաց տւեց իր իգիթին։ Մէկ էլ տեսանք հրէս երկու աժդրհա տղամարդիկ երկու հակառակ կողմերից կատաղած վագրերի նման փրփրած երախներով, մերկ դաշոյնները ձեռքներին պարտեզով ու մռնչալով դէպի կուռղներն են վազում։ Ինչպէս լճի գորտերը նեռած քարից իսկոյն տազ են անում, էնպէս էլ կուռղները իգիթներին տեսնելուն պէս դադար աւին կուին ու ճամփա բաց արին իգիթների համար։ Դու մի ասիլ, մեր իգիթները վաղուցայ ծանօթ ու մտերիմ ընկերներ են եղել։—Եւ իրար հասնելուն պէս, դաշոյնները մի կողմը շպրտեցին, գրկւեցին ու ջերմաջերմ համբուրւեցին։

Ապա կուռղներին յանդիմանեցին ու միանալով, շարունակեցին կիսատ թողած քէֆը։ Կեր ու խումի ժամանակ թուրքերէն բայաթի էին կանչում Օսմանն ու Գէվոն։ Երկուսի ձէնն էլ լաւն էր։ Մի քառեակ մինն էր երգում ու մի քառեակով էլ միւսն էր պատասխանում։ Երբ բոլոր ուխտաւորները քարի գլուխը բարձրացան, մեր իգիթներն էլ իրենց զուռնա դհոլի դաստաններով ու արբանեակներով տեղափոխւեցին նոյնպէս ձորի գլուխը։ Օսմանն ու Գէվոն հերթով «եալլիբաշի» էին կանգնում ու աջ ձեռքերին կարմիր բաղդադին թուռացնելով, ձեռքերը օդի մէջ տարածելով ուրախ ու զարթ գովի էին տալի։ Բոլոր ուխտաւորները Հոռոմայրի կիսաւեր մա-

տուռի լէն տափարակը բռնած՝ մեր իգիթների քէֆով զարճանում էին։

Օսմանը միջահասակ էր լէն կրծքով ու թիկունքով, սև սև սուր ու լուրջ աչքերով, խիտ յօնքերով և համակրելի թուխ դէմքով։ Գէվոն բարձրահասակ էր, վայելչակազմ, նոյնպէս լէն կրծքով ու թիկունքով, խոշոր ու խաժ աչքերով, աղեղնաձև յօնքերով ու սպիտակագոյն գեղեցիկ ժպտուն դէմքով։ Երկուսի առնական բեխերն էլ սիրուն ոլորած էին։

Ժողովուրդը միմիայն արտաքինով քաջ ու անձնւէր մարդկանց է «իգիթ» կոչմանն արժանացնում։ Թէ Գէվոն և թէ Օսմանը քաջութիւններ շատ էին արել։ Հօսենցիների ուրթերը Գէվոյի ծննդավայրում Բորչալուի թուրքերի, իսկ Օսմանի բնավայրում Ղազախու թուրքերի «եայլաղ»-ներին հարևան էին։ Յայտնի է, որ մանաւանդ հնումը՝ թուրք տարրը աւազակաբարոյ մարդկանց մեծ տոկօս էր արտադրում։ Թուրք գինւած աւազակները իրենց ամբողջ գործնէութիւնը հայկական շրջաններում էին կատարում։ Եւ մեծ մասամբ անզէն հայ գիւղացին գինւած թուրքից երկիւղ կրելով, չէր վտահանում զօրին հետապնդելու։ Ահա էսպիսի դէպքերում էր, որ Օսմանն ու Գէվոն, ամեն մինը իր բնավայրում հրացանը վերցնելով մէն մէնակ հետապնդում էին թուրք աւազակներին ու աւարը ետ խլելով, դիւցազնօրէն տիրոջը յանձնում առանց որևէ շահատիրութեան։

Թուրքերը իգիթներին լաւ էին ճանաչում, որովհետև սկզբներում դիմադրութեան դէպքեր էին պատահել, որի ժամանակ Օսմանն ու Գէվոն ցոյց էին տւել իրենց քաջագործների գերազանց ուժն ու իրենց անվեհեր հոգու կորովը։ Եւ յետոյ, բաւական էր, որ մեր իգիթների գլուխը տեսնէին, խոնարհ ու հեզ, այլ և ներողութիւն խնդրելով էին ետ դարձնում աւարը։ Կամ սարերում թուրք ու հայ հովիւների մէջ կռիւ կը ծագէր,—որքան

էլ թուրքերը գերակշիռ թիւ լինէին կազմելիս ու հայերին յաղթելիս,—բաւական էր, որ մեր իգիթները վրայ հասնէին, էն մոմենտին կշռի նժարը կը հակւէր,—հայերը թուրքերին թունդ չարդ կը տային: Իսկ էսպիսի դէպքերը շատ էին պատահել նրանց կեանքի ընթացքում և իրաւամբ մեր հերոսներին արժանացրել «իգիթ» կոչմանը:

Դժբախտաբար երկու իգիթներն էլ եղերական վախճան ունեցան տակաւին երիտասարդ հասակում: Գէվոն բացի իր ոչխարի հօտից, սարերում պահում էր նաև մի հարուստ առևտրականի մացու տաւարը: Մի գիշերը քնած պահին, նամարդ թշնամու գնդակը վերջ էր տւել իգիթի ջահել ջիվան կեանքին:

Իսկ Օսմանը գոհ գնաց ժամանակակից աւազակախումբ Զուխուրով եղբայրների տմարդի գնդակին: Զուխուրոյների աւազակութիւնների էն թունդ ժամանակն էր, երբ գնդապետ Զաւշաւադզէն մի գունդ կազակներով աւազակներին էր հետապնդում: Բայց աւազակները մի տոկ Օսմանից աւելի շատ էին երկիւղ կրում քան թէ մի ամբողջ յաղթական գնդից:

Օսմանը Զուխուրոյների մի շարք տմարդի և անգութ արարքների ու մարդասպանութիւնների մասին սուր լեզուով քննադատութիւն էր արել: Ծարար բզիկի մինը էտ լուրը՝ մինը տասը շինելով աւազակներին էր հասցրել: Եւ երբ մի օր Օսմանը մի կացին ձեռքին, մի լուծ եզն առաջին, անտառն է գնում վառելափէտ բերելու, աւազակները բոլորովին անպատելի՝ առաջը կտրում են: Ներանք, որոնք հեռու, որոնք մօտիկ կանդնելով՝ սկսում են Օսմանին հարցաքննել իրենց լսած լուրի մասին:

— Դրուստ ա, սառնասրտօրէն պատասխանում է Օսմանը, ասել եմ—էլի եմ ասում, որ դուք նամարդ էք, թուրքը իր թուրք տեղովը ձեզ պէս նամարդութիւն չի անիլ, թէկուզ հլէ դաչաղ էլ ըլի:

—Դրուստ:

—Դրուստ:

—Օ՛սման, ասում է աւազակների երէց եղբայրը, չունքի դու մի իգիթ մարդ ես, չեմ զմշում որ սպանեմ, արի դու մի հետ «մեղայ Աստուծ» ասա ու պրծի:

—Ադա, դուք ուժ շունն էք, որ ես ձեր ըղաքին մեղայ գամ:

—Չէ՞:

—Չէ:

—Ադա պատրոնը տեղը դիր, հրամայում է աւազակապետ եղբայրը. կրտսեր աւազակներից մէկը փամփուշտը տեղն է դնում ու հրացանի փողը ուղղում Օսմանի կրծքին:

—Օ՛սման, չէ:

—Չէ ու չէ: Ապա աւազակները Օսմանին առաջարկում են որ եթէ ասելիք ունի, թող ասի, որովհետև մի րոպէից յետոյ ինքը սպանուած կը լինի արդէն:

—Ասելու ոչինչ չունեմ, մենակ եղնիքս բաց թողէք արածեն, մեղք են. մին էլ մերոնց իմաց տւէք—գան մէյդիս տանեն, պատասխանում է Օսմանը անվրդով և բոլորովին պաղարիւնութեամբ ու բաց աչքերով կուրծքը դէմ է տալի գնդակին...

Բացւում է հրացանը ու իգիթի անշնչացած դին գետին է տապալւում: Աւազակները սաստիկ ազդւելուց՝ արտասւելով փախուստի են դիմում և առաջին պատահած տաւարած պատանիներին պատուիրում են, որ գիւղին հասւար տան:

Երկու իգիթների մասին էլ ժողովրդական երգիչները թուրքերէն խաղեր էին յօրինել ու աշուղները երգում էին,—գովելով նրանց քաջութիւնները և ողբալով նրանց կենսաղրաւ ջահել-ջիւան կեանքը, նրանց վիզը ծուռ ձգացած եարերի, անտէր ու որբ երեխաների դառը վիճակը:

Գլ. 25.

Լևոնը վիճում է կազակների հետ։ Եկեղեցում երգում է. իր աշակերտներին արգելում է տարեմուտին ընծայ բերել։ Ջոյրը պսակւում է, հարսանիքի համառօտ նկարագրութիւնը։ Ուզում են Լևոնին նշանել Յանուսմի հետ։ Լևոնը աշակերտներին արձակում է։ Գործակատարի պաշտօնով գնում է Ջալալօղլի։

Իմ ընկերուհի Յանուսը մեծացել-փարթամացել էր։ Ըստ գիւղական սովորութեան նա արդէն նշանուելու աղջիկ էր դարձել։ Էլ առաջւայ պէս մենք իրաւունք չունէինք ազատօրէն խօսակցել կամ իրար մօտենալ, ուստի արդէն խորթացել էինք իրարից։ Խորթացել էինք յակամայից ի հարկէ, որովհետև եթէ շարունակէինք առաջւայ պէս աչքի ընկնելու չափ մտերիմ լինել, ահագին բամբասանքի տեղիք կը տայինք բամբասասէր գեղչկուհիներին։ Երբ պատահմամբ ես ու Յանուսը հանդիպում էինք իրար, նա գլուխը քարշ գցած էր անցնում մօտովս։ Պէտք է խոստովանած, որ ես էլ աւելի Նազլուին էի կարօտել։ Հանապազ նրա խաղն էի երգում թաքուն-աշկար։

Մի օր լուր բերին թէ կազակները Յանուսենց հաւը մորթել են ու կանանց հետ կռիւ սարքել։ Հօտու պըրիսատւից երկու կազակ էին գիւղն եկել, որոնց Յանուսենց տանը հիւր էր տւել տանուտէրը։ Կանայք հաւի մասին ահագին ազմուկ էին բարձրացրել։ Ես դեռ Յանուսի մօրը յանդիմանեցի, որ նա մի հաւի խաթեր կռիւ էր սարքել, քանի որ իր բարոյական պարտքն էր Աստուծոյ հիւրերին պատւասիրել։ Բայց երբ տեղեկացայ, որ նա դեռ տասը ձւաններից ձւածեղ էր արել կազակների համար ու նրանք ձւածեղը ես հրելով, ինքնագլուխ հաւն մորթել կերել ու ձւածեղն էլ վերնադիր անուշ արել —սրա մասին կազակներին քաղաքավարի նկատողութիւն արի։

Սակայն կազակները սաստիկ բորբոքւեցին, ասելով թէ՝—ես ով եմ, որ համարձակւում եմ պետական պաշտօնեաներին նկատողութիւն անել։ Իսկ ես աւելի թունդ սպառնացի, որ գրաւոր բողոք կուղարկեմ համ իրենց մեծին համ նահանգապետին, էսպիսի ապօրինի վարմունքի համար։ Ինձ օգնութեան հասաւ իմ խաղընկեր Աւետիքը, նա էլ զորս դու պատւիրեցեր, կազակներին բուռը հաւաքեց։ Էս աղմուկի վրայ հաւաքւել էին վատ տեսարանի սիրահար գիւղացիք, եկել էր ի միջի այլոց և Յանուսի եղբայրը։ Կազակները խոնարհւեցին և հաւի գինը վճարեցին. սակայն Յանուսի եղբայրը ես զարձրեց նրանց վրան ու բոլորս էլ հաշւեցրինք։ Էս խաբարը տարածելով, լուն ուղտ էին շինել ու ինձ օրւայ հերոս հռչակել, կարծես մի մեծ քաջութիւն ու ասպետութիւն լինէի կատարած։

Մի շաբաթ օր, իրիկւայ ժամասացութեան միջոցին հ. տէր-Գեղամը առաջարկեց «սուրբ Աստւած»ն ու «սուրբ ես տէր»ը «նոտեր»ով երգել։ «Սուրբ Աստւած»ը շատ աղող երգեցինք։ Բայց կասկածելով որ «սուրբ ես տէր»ը մինչև վերջը չկարողանայի անգիր երգել, անմիջապէս տուն վազեցի «նոտեր»ով զրածս տետրակը բերելու։ Մեր տունը էնքան էլ մօտիկ չէր.—հև ի հև էն պահին վերադարձայ, որ հ. տէր-Գեղամը «սուրբ ես տէր»ի սկզբի տունը վերջացնում էր։ Թէպէտ շատ զիլ եղանակով էր ակսւած ու վազելուց համ սիրտս բաբախում էր, համ հազում էի, բայց և էնպէս ես էլ իմ հերթին շարունակեցի երկրորդ տունը։ «Երկնայինն զծրւթիւնք»... էսքանը երգեցի միայն ու ձէնս կարւեց։ Թէև հ. տէր-Սիմոնը միւս դասից օգնութեան եկաւ, բայց ես զրեթէ էլ չը կարողացայ շարունակել։ Եւ էն օրից դէսը առաջւայ

պէս լաւ երգել չէի կարողանում, ձէնս խանգարւեց։ Գլխաւոր պատճառը էն էր, որ Շուլաւէրից գալիս՝ սառը քամու հանդէպ երգելով, ձէնս փչացրել էի։ Հէնց էն օրից էլ պարբերաբար հազում էի։

Դեկտեմբերի վերջին՝ եկող նոր տարու առթիւ աշակերտներիս արձակուրդ տալով, խոստւ պատւիրեցի, որ ոչ ոք նոր տարուն ինձ համար *մազա**) չը բերի, ինչպէս սովորաբար տարեմուտին ու զատկին ուսուցիչների համար ընծաներ էին տանում։ Բայց մեր տանեցիք էտ մասին քիչ յանդիմանեցին ինձ,—որ ես համ ուսման վճար չեմ տանում, համ էլ չեմ թողնում որ գոնէ տարեմուտափայ բերեն։

Բարեկենդաններին նշանւած քրոջս պսակեցինք։ Պսակից մի քանի օր առաջ խնամիքը «բարգակարէք» եկան։ Մենք էլ մեր ազգականներից մի երկուսին հրաւիրելով իրիկնահացին պատիւ տւինք։ Ընթրիքը վերջանալուց անմիջապէս յետոյ, սկսւեց «բարգակարէք»ի սակարկութիւնը։ Մերոնք խնամիներից որոշ քանակութեամբ գինի, օղի և մսացու ոչխարներ պահանջեցին։ Խնամիքը՝ պահանջը շատ համարեցին։ Վերջը՝ հիւրերի միջամտութեան շնորհիւ համաձայնութիւն կայացաւ և խնամոնք խոստացան հարսանիքի ծախսերի համար ուղարկել մեզ՝ քսան թունդի գինի, երկու թունդի արաղ և մի չաղ մսացու ոչխար։

Հարսանիքի օրը խնամոնք եկան քսան ձիաւորով և զուռնա-դհոլով։ Երեխաներս խնամոնց ձիանները մի քիչ ման ածինք ու թաքուն հեծնելով «ջիրիդ» խաղացինք, ապա մեր ազգականների գոմերում կապոտեցինք։ Երբ նորահարսը զուգւած պատրաստ էր, խաչեղբօրը ներս հրաւիրեցին, որը նորահարսի գլուխը կապող կնոջը «գլուխկապէք» ասւող վարձը տւեց, ապա հարսն ու թագաւորը, մակարները և եկած ձիաւորները զուռնա-դհոլի

*)*մազա*—մրգեղէն ընծայ

նւագակցութեամբ գնացին եկեղեցի։ Պսակը կատարւելուց յետոյ նոյն կարգով վերադարձան տուն և իսկոյն մինը միւսի ետևից «ուսպանդ»-ները պար ածելով, թագաւորի վիզն ու կուրծքը ալեան-ալեան բաղդադիներով զուգեցին։ Ապա խաչեղբայրը թագաւորի թախտ սարքող երիտասարդներին տուրք տալուց յետոյ, իրաւունք տւացան գահին բռնմելու։

Եկեղեցուց վերադառնալիս՝ ճամփի վրայ բնակւող մեր ազգականները սինով հաց ու ձւածեղ էին դուրս բերում թագաւորի առաջը, իբրև «ղսմաթ». սինու կողքերին էլ մոմեր վառած ու մէջը խունկ ծխած։ Ջահել փահլւաններն էլ՝ կռիւ էին բռնում ու մինը միւսին նորապսակների առջև գետին գլորում—հանաքուց։ Խաչեղբայրը հանում էր—յաղթող փահլւաններին՝ մէկին սպիտակ փող բաշխում, միւսին տանձ ու խնձոր, երրորդին կանֆէտ թաւազա անում ու էտպիսով ճամփէն բաց անում։

Ընթրիքից յետոյ երբ հասակաւոր մեծարքաւորները ցրւեցին, ջահելները զուռին ու պարը սկսեցին, որը տեւեց մինչև լուսաբաց։

Առաւօտը վաղ վաղ նախաճաշ անելուց յետոյ, ճամփա ընկանք դէպի խնամոնց գիւղը։ Իրբև հարսնեղբայր՝ մի ձիաւոր էլ ես էի։ Պճնւել էի Թիֆլիսից բերած նոր կաստիւմով։ Գիւղից դուրս գալուն պէս զուռնաչին վեր քաշեց «քեօռօղլու» ձիարշաւի եղանակն ու ձիաւորներս սկսեցինք ձի խաղացնել—արշաւել։ Ճմեռն էր. սարեր ձորեր ու դաշտեր ծածկւած էին ձիւնի սպիտակ սաւանով. օրը պարզ էր ու արևի փայլուն ճառագայթները հուրհրատին էին տալի ձիւնի երեսին ու աչքներս ծակում։ Կէս օրից յետոյ եղանակը փոխւեց, ամպերը ծածկեցին արևի երեսը և սկսեց թիփիախառը ձիւն բրդել։ Բոլոր հարսանիքաւորները գինի-արաղով տաքացել էին իսկ քոյրս ու ես ձիանների վրայ սառել էինք։ Բարեբախտաբար ասեմ թէ դժբախտաբար, կէս ճամփին

խնամոնց տանից ձիաները լծած սահնակ եկաւ առաջները։ Նորապսակներն ու ես տեղափոխուեցինք սահնակը. սկզբում լաւ էր, տաքացանք, բայց անսովոր լինելուց՝ իմ ու քրոջս գլուխները պտրտուեց ու էլ չդիմանալով սաիպուած էինք կրկին ձիաներին հեծնել։

Իրիկնապահին տեղ հասանք։ Բոլորիս էլ դուրսը կանգնեցրին, զուռնաչի Սաքոն նորահարսի գլխի վրայ մի մատուցարան դնելով՝ կոչ արաւ հասարակութեանը։ Հրաւիրուած մարդիկ սկսեցին թղթադրամներ ածել մատուցարանի մէջ—հարսանիքի խալաթ*)։ Ապա թէ իրաւունք ստացանք ներս մտնել։ Յնամոնց տան քէֆը աւելի թունդ էր։ Մանաւանդ հիանալի էր նրանց պարն ու եալլին։ Երբ տղամարդ ու կին կռնաբռնուկ արած խառը եալլի էին գնում,—կարծես անտակ ծովն է առաջդ պըտրտւում, մարմանդ, ահեղ, խորն ու շնորհալի։ Էտ կողմից Զորեցիքս նրանցից շատ ենք ետ մնացել։ Բայց մի ուրիշ բանով էլ մենք ենք նրանցից բարձր։ Էտ էն է, որ նրանց տղամարդիկ մի ամբողջ օր ու գիշեր փողով կատաղի թուղթ էին խաղում, իսկ մեզանում չկար էտ կործանիչ մոլութիւնը։

«Թագավերէք»ի միւս օրը վերադարձայ մեր գիւղը։

Դպրոցիս գործը միապաղաղ առաջ էր գնում թէև, բայց իմ ապագան շատ էր անորոշ։ Էտ միջոցներում մի անգամ լինչ որ փոփոխուկ հասաւ ականջիս, որ իբր մերոնք ուզում են Յանումի հետ նշանել ինձ։ Աւ հա քեզ տրաքոց։ Լսեցի նաև, որ իբրև ուրիշ ուզողներ էլ կան Յանումին, բայց նա միալար լաց է լինում, ոչ ոքի չի ուզում։ Ասում էին նա իր մաերիմ մի հարսի հարցրել էր թէ՝ «քիրա ջան, ում որ ես սրտով չսիրեմ, խոմ զօրով տալ չեն»։ Իսկ հարսն ասել էր՝—«աղջի, որ քի Լևոնին տան՝ կուզես»։ Յանումը ուրախ-ուրախ պատասխանել էր էապէս՝—«լինչ ասեմ. թէ որ սիրտդ կպաւ՝—չորան

*) խալաթ—նվեր

էլ ըլի լաւ ա, թէ որ չէ խում, թագաւորի տղէն էլ հէչ»։ Բայց ես ուրիշ տեսակ էի,—էտ համբաւը լսելով, ընդհակառակը ուրբաթ կտրեցի։ Թէև տասնուչորս տարեկան էի ես, բայց ամուսնական կեանքի մասին արդէն գաղափար ունէի։ Եւ որովհետև Յանումը իմ մաքուր մանկական ընկերուհին էր, որին սիրել ու հիմի էլ սիրում էի հարազատ քրոջ պէս, բարոյական զգացմունքներս սաստիկ վիրաւորուում էին, որ նա իմ կինը լինէր։ Բարեբախտաբար մերոնք էլ զգացին էս բանը և փոփոխեցին վերջ տուին։ Դրանից յետոյ Յանումին հանդիպելիս, ինքս աւելի շատ էի ամաչում նրանից ու փախսահարում*)։

Արդէն մայիսն էինք մտել ու աշակերտներիս մեծ մասը ցրւել էր արդէն։ Մնացողների հետ պարապում էի դեռ։ Մի օր Զալալօղլեցի Պօղոս աղէն դպրոց գալով, հետս բաւական զրուցեց։ Յետոյ նա իմ հօրեղբօրն ասել էր, որ ինձ հաւանել է և իր խանութի համար ուզում է գործակատար ընդունել։ Սկզբում ես չէի յօժարուում, բայց հօրեղբայրս շատ յորդորեց, նկատում էի որ մէրս էլ էր ցանկանում էտ բանը։ Ինքս էլ տասնուհինգ տարեկան հասակս էի մտել արդէն և լաւ էի գիտակցում, որ մեր տան հոգս քաշողը ես պէտք է լինէի, ու՝ ճարահատեալ յօժարեցի։

1877 թւի մայիսեան մի հրաշալի առաւօտ, Պողոս աղի ընտանիքի հետ, նրանց սայլակով ճամփա ընկանք և իրիկնապահին հասանք Զալալօղլի։

*) փախսահարել—խուսափել։

Գլ. 26

Լևոնը Ջալալօղլում 3-րդ անգամ. նա խանութի աշակերտ։ Մեծ գործակատարը։ Լևոնը խոտհարքում։ Սկսւում է ռուս-թուրքական պատերազմը։ Մեծ գործակատարը ծածուկ փախչում է պատերազմի դաշտը։ Խանութը յանձնւում է Լևոնին։ Պօղոս աղէն էլ է պատերազմ գնում փոդրաթի գործով։ Լևոնը աղակնոջ համար հէքեաթներ է պատմում։ Աւազակապետ Մեհրալին։

Արդէն աղենց տանն էի. սիրտս մի տեսակ փակւած էր. համ տխուր էի որ հեռացել էի մերոնցից, համ էլ մտքումս յոյսեր էի տալի ինձ, որ գործի լինելով կը կարողանայի գոնէ նիւթական օգնութիւն հասցնել անօգնական մօրս։ Ընթրիք չկերայ, իսկի ախորժակ չունէի, քունս էլ սաստիկ տանում էր։ Ըստ երևոյթին աղակինը բարեսիրտ կին էր, իսկոյն ծառային հրամայեց ինձ համար անկողին պատրաստել նախասենեակում։ Պօղոս աղի տունը բազմաթիւ սենեակներից բաղկացած երկյարկանի մեծ շինութիւն էր։ Ներքևի յարկի մի բաժանմունքը վարձով էր տրւած, իսկ միւսը շտեմարանի տեղ էր ծառայում։ Վերևի յարկի մի բաժանմունքում աղէն էր ապրում իր ընտանիքով, իսկ միւսում տեղական հեռագրատունն էր տեղաւորւած։ Ես դեռ հեռագրատուն էլ չէի տեսած, որը Ջալալօղլում ընդամենը մի քանի տարի էր ինչ սկսել իր գործել։

Էքսը աղէն՝ ծառային հետ ինձ իր խանութն ուղարկեց։ Մեծ քթանի գործակատարը շատ դժկամութեամբ ընդունեց ինձ։ Մինչև անգամ բարևիս չպատասխանեց։ Միայն ծառային ասաց՝ — «ինչ անեմ թէ աղէն ա ղարկել, թող դռանը կանգնի»։ Աղէն եկաւ ու ինձ ներս

կանչելով՝ գործակատարին յանձնարարեց, որ ինձ առուտուր սովորեցնի։ Մի անգրիլ մատեան էլ ձեռքս տալով՝ պատւիրեց որ խանութի ցուցակագրած ապրանքի մատեանը կամաց կամաց արտագրեմ։

Աղի գնալուց յետոյ, գործակատարը մատեանները առաջիցս դէն շպրտեց ու բեխերը կրծոտելով հրամայեց աղբիւրից ջուր կրել, խանութի յատակն ու առջևի փոկոցը սրսկել ու աւլել։ Հրամանը ամենայն հլու հնազանդութեամբ կատարեցի։ Էլ հէնց նատում էի գրելու թէ չէ, բեխերը կրծոտելով մի մի բան մահանա էր անում ու գործիցս հեռացնում։ Մուշտարի եկած միջոցներին էլ, դիտմամբ դէս դէն էր ուղարկում ինձ, որպէս զի բան չսովորէի։ Հէնց նա սկսում էր բեխերը կրծոտել թէ չէ, իսկոյն զգում էի որ բարկանալու էր վրէս։ Սակայն աղին բան չէի ասում գործակատարի վարմունքի մասին։ Միայն՝ հոգի ունիմ ասելու, ուտել խմելու մէջ գործակատարը շատ լաւ էր պահում ինձ։ Իսպէս երկու ամսի չափ, վանդակում փակւած թռչունի պէս տանջւեցի։

Բարեբախտաբար, երբ հասաւ խոտ վերտալու) ժամանակը, ինձ համար նոր պաշտօն բացւեց։ Մեր աղէն ընդարձակ տարածութեամբ խոտհարք ունէր վերցրած կապալով։ Ամեն առաւօտ վաղ, ձիուն մթերք էի բարձում, ինքս էլ հեծնում ու գնում հանդը։ Էնտեղ համ հընձող ու հաւաքող մշակներին էի հսկում, համ նրանց ճաշն էի պատրաստում։ Նորից ընութեան ազատ գիրկն ընկնելով, անչափ ուրախացել էի։ Էն ամբողջ ամառը անցկացրի ես անհոգ թռչունի պէս, տանից հանդը, հանդից տուն ճախրելով։*

Աշունքին սկսւեց ռուս-թուրքական պատերազմը։ Աղէն զօրքին կաղամբ մատակարելու կապալով սահմանը պէտք է գնար, բայց խանութի գործակատարը նրան կանխեց։ Սա խաղէնից ծածուկ ուրիշ ընկերների հետ

*) վերտալ—հնձել գերանդիով։

պատերազմի դաշտն էր դնացել զօրքերին միս մատակարարելու գործով։ Էնպէս որ աղէն խանութը ինձ յանձնեց և ինքը գնաց իր գործին։ Գնալուց առաջ էնպէս էր կարգադրել, որ տան ծառան գիշերները գալիս էր խանութի եանի սենեակում քնում, իսկ ես գնում էի տանը քնում։

Աղակինը տեղեկանալով, որ ես հէքեաթներ գիտեմ, միշտ անկողին մտնելիս, ինձ իր մահճակալի առջև նըստեցնում—հէքեաթներ էր պատմել տալի։ Եւ միշտ հէքեաթը տակաւին չաւարտած, նրա քունը տանում էր։ Ես էլ էի պառկում քնում և հետևեալ գիշերը կիսատ թողած հէքեաթն էի լրացնում—և էնպէս շարունակ։

Աղակինը գրեթէ ինձ իր որդիներից չէր զոկում։ Մի մեծ տախտի վրայ փոքը երեխաներն էին քնում, մի ուրիշ փոքը տախտի վրայ էլ մի վերմակի տակ՝ ինքը, իր 10-11 տարեկան անդրանիկ որդին արանքներումս ու ես էինք քնում։

Էս միջոցներին, մի անգամ աղակնոջ ձեռքից մի հատ 20 կոպէքանոց փող էր ընկել յատակի տակ։ Նա ծառային ստիպել էր յատակի տախտակը պոկել, ու տեղ էին տախտակը կոտրել, իսկ քսան կոպէկանոցն էն կորչելն էր, ինչ կորել էր։ Հիւսն կանչեցի և երկու ռուբլի վճարելով, կոտրած տախտակի տեղ մի նորը մեխել տւի։ Աղակինը փողերն անտրտունջ վճարեց ու մի գլուխ ափսոսալով ասում էր՝ «երկու մանէթը գլուխ-քարը, մայինձ*) էն անտէր աբասին էլ ա գտնւել էր»։

Անթիւ ու անհամար զօրքեր էին գալի անցնում դէպի Ալէքսանդրապոլ։ Զօրքերի շնորհիւ՝ Ջալալօղլում մեծ առևտուր էր բացւել, սակայն մեր խանութի ապրանքը գրեթէ հատել էր, չեղուտ չկար իսկի։ Աղէն իր կաղամբի գործը վերջացնելով՝ վերադարձաւ և մի փոքւած գործակատար վարձեց։ Գործակատարը գնաց Թիֆլիս և

*) մայինձ—գոնէ։

էնտեղից շատ ապրանք ուղարկեց։ Խանութը ապրանքով լցւեց և մի չտեսնւած առևտուր սկսւեց։

Պատերազմի դաշտից աննպաստ լուրեր էին գալիս։ սկզբներում ռուսների գործը անաջող էր գնում։ Մի գիշեր էլ հաւար գցեցին թէ աւազակապետ Մեհրալին իր խմբով Ալէքսանդրապոլի քամակից անցել է և ուղղակի Ջալալօղլու վրայ է գալի։—Մեհրալին էն ժամանակ յայտնի ռուսահպատակ աւազակապետ էր, որը պատերազմը սկսւելիս՝ անցել էր Տաճկաստան և ասում էին հինգհարիւր մարդուց աւազակախումբ կազմած, յարձակումներ ու կողոպուտներ էր կատարում խաղաղ բնակչութեան մէջ...։ «Տարան, տարան»ի աղաղակներ էին լսւում աւանի հանդից։ Տղամարդիկ փողոցներ ընկած, հրացաններ էին գցում ամեն ուղղութեամբ,—ճոթ հա ճոթ, ճռ հա ճռ։ Կին ու երեխայ, մի քանի ընտանիքներ ի մի խմբւած, լաց ու շիւանը խառնել էին հրացանների ճարճաթիւնին։ Պատերազմից վերադարձած ու տեղական զօրանոցներում տեղաւորած վիրաւոր հիւանդ զինւորները, ում ոտքը որ բռնել էր, հրացաններ վերցրած դուրս էին եկել ու ընդհանուր քաոսի մէջ շշկլւած, չգիտէին թէ ինչ ուղղութեամբ արձակեն։ Վերջապէս,—թէև ուշ,—պարզւեց որ աւանի վրայ ոչ մի տեղից յարձակում չէր կար, այլ նախրապանները տաւարը կորցնելով, կարծել էին թէ հարամին է քշել-տարել ու հաւար էին գցել։ Կորած տաւարը յետոյ գտնւել էր։

Բայց և այնպէս տեղական պրիստաւի վրայ հեռագիր կար, որ Մեհրալին իր խմբով իրօք Ալէքսանդրապոլի քամակից պատ տալով, սահմանն անցել էր ու դէպի մեր երկիրն արշաւել։ Հետևեալ օրը պրիստաւի կարգադրութեամբ շրջակայ գիւղերից ու Ջալալօղլուց ձիաւոր ու հետևակ զինւած խմբեր գնացին դէպի էն լեռները, որտեղից Մեհրալին կարող էր մեր երկիրը խուժել։ Մի քանի օր էսպէս շարունակ սարերը պահեցին, մինչև հա-

ասած աղբիւրից տեղեկութիւն ստացուեց, որ Մեհրալին՝ երևի էդ բանը տեսնելով, Ղարախաչի սարերից կրնկի վրայ ետ է դարձել ու կրկին Ալեքսանդրապոլի քամակով անցել է տաճկաց սահմանը։

Գլ. 27

Արդահանի, ապա Ղարսի առումը։ Հայերի հըրճւանքը։ Լևոնի արկածները։ Պօղոս աղէն հրաւէրք է անում։ Միքայէլ աղէն մեծարըքաւոր։ Թառի ազդեցութիւնը Լևոնի վրայ։ Աղակնոջ կին հիւրերի համար Լևոնը ալուբալ է առնում։

Երբ ռուսաց յաղթական զօրքը Արդահանը առաւ, նոր նոր ժողովուրդը յուսադրուեց, որ սրանից յետոյ, վերջնական յաղթութիւնն էլ ռուսներինն է։ Եւ իրօք՝ Ղարսի անառիկ բերդն էլ առնուեց։ Մինչև անդամ Ջալալօղլու լեռների գլխից լսւում էր թնդանօթների որոտը։ Հայ հասարակութեան ոգևորութիւնը չափ ու սահման չունէր։ Ամեն մի ուրախութեան, հարսանիքի, նշանադրութեան ու սոսկ կեր ու խումի միջոցներին, գինու առաջին բաժակը առաջարկւում էր Ալեքսանդր II կայսեր, երկրորդը գրաֆ Լօռու-Մելիքեանի, երրորդը Լազարևի, Տէր-Ղուկասովի, Շեօլկովնիկովի ու չորրորդ բաժակը ռուսաց քաջարի զօրքի կենացները։ «Տէր-Աստուած դու նրանց թուրը կորուկ անես»—ասում էին ու որոտընդոստ ուռաներով օդը թնդացնում։ Ամեն մի հայի տան ազիզ զարդերն էին կազմում ազատարար կայսրի, նրա զգօն զօրավար Լօռու Մելիքեանի և միւս հռչակաւոր գեներալների պատկերները։ Սակայն, հայի հացումը աղ չկայ. միշտ էլ հայերը թէ իրենց ջանով, թէ փողով ու հացով խանդավառութեամբ օգնութեան են հասել ռուսաց զօրքերին և տրիտուրը ռուսական ապերախտ կառավարութեան կողմից ու նրա խսւիզան արբանեակներից յարատև հալածանքի ու ճնշման են ենթարկւել...։

Իմ խազէյինը գարուս մեծ պաշար էր ամբարում իր շտեմարանները, որովհետև հաստատ աղբիւրներից լուրեր էին գալի, որ պատերազմը վերջանալուց յետոյ, բազմաթիւ հեծելազօրք էր գալու մեր երկիրը։ Նա էտ պատճառով մի քանի նոր գործակատարներ էր վարձել։ Մի օր նրա մի գործակատարը ձիով ուղեւորւեց դէպի շրջակայ գիւղերը գարի առնելու։ Նրա հետանալուց յետոյ, աղէն ինձ հրամայեց՝ գործակատարի ետևից հասնել ու ասել, որ Ուռուտեցի տէրտերը շատ գարի ունի, թող գնայ առնի։ Մինչև ես ձորի գլուխը կը հասնէի, նա իջաւ ձորը, կանչեցի—չլսեց, նորից վազեցի, բայց չկարողացայ հասնել։ Կարծելով որ նա դէպի Վարանցովկայ է գնում, միալար ես էլ էն ուղղութեամբ էի վազում։ Ժանգարքաբերան Վարանցովկայ հասնելով, մտայ Ջալալօղլեցի հայերի խանութը և բոլորովին հիասթափւեցի, երբ իմացայ որ գործակատարը չի եկել։

Պինդ մուրթը կոխեց, շատ էլ ցուրտ էր, իսկ ես թեթև հագնւած լոնելով՝ մրսում էի. մի կողմից էլ ուտելու և հանգստանալու կարիք էի զգում։ Ոչ փող ունէի ոչ ծանօթ։ Հայերի խանութում մի ժամի չափ նստեցի թէև, բայց հետս իսկի չխօսեցին. դէմքերից էլ պարզ կարդացւում էր, որ կարծես ասելիս լինէին՝—«դէ գնա ոտդ եղիր, ինչ ես երեսդ դէմ արել-նստել»։

Ճարահատեալ դուրս եկայ փողոց ու սկսեցի աննպատակ դէս ու դէնման գալ,—անհիւրընկալ մալականների մօտ հօ, օթևան գտնելու յոյս չկար բնաւին։ Մէկ էլ, կէս գիշերին մօտ էր, որ գիւղի միջով դատարկ սայլերի մի երկայն շարան էր անցնում։ Մօտենալով տեսայ որ Ջալալօղլու սայլեր էին, որոնք պատերազմական պիտոյքների կոտ էին եղել տարած ու հիմի վերադառնում

էին։ Անչափ ուրախացայ ու մի սայլի վրայ նստելով, հետները ճամփա ընկայ։ Թունդ պարզիկայ էր, փառաւոր ցուրտ կերանք։ Մի տեղ էլ ճամփէն շշկլւելով շեղուեցինք ու ընկանք դար ու փոսերի մէջ։ Բաւական չարչարւելով ու տանջւելով՝ լուսադէմին տեղ հասանք։ Որովհետև մեր խանութը դեռ փակ էր, ուստի տուն գնացի և խոհանոցում պառսպարւեցի մինչև լոյս։ Առաւօտը աղէն ինձ տեսնելով, համ ուրախացաւ, համ շատ յանդիմանեց երեխայութեանս համար։ Յետոյ երկար ժամանակ սրան նրան պատմում էր ու վրէս կուշտ կուշտ ծիծաղում էին։

Գարունքին՝ վիրաւորւած լինելու պատճառով, պատերազմի դաշտից վերադարձել էր մեր աղակնոջ սպայ հօրեղբայրը։ Նրան պատւելու համար, խազէյինս մի օր ճաշկերոյթ սարքեց և մի քանի յայտնի մարդկանց էլ հրաւիրեց։ Հրաւէրքը դուռ տղամարդկանցից էր լինելու։ Նախօրեակին շրջեցի ես բոլոր էն մարդկանց տները, որոնց աղէն հրաւիրում էր։ Վիրաւոր սպայից զատ հրաւիրւած էին տեղական պրիստաւը, որ մի վրացի քէֆ սիրող մարդ էր ու հիանալի թառ էր ածում, երկու-երեք յայտնի վաճառականները ու Միքայել աղէն։ Երբ վերջինիս հրաւիրեցի, կինը մօտը նստած էր, հարցրեց ինձ թէ՝ մենակ իրե՞ն է հրաւիրում Պօղոս աղէն թէ խանումին էլ հետն է հրաւիրում։

—Ի հարկէ խանումին էլ է հրաւիրում, երկուսիդ էլ խնդրում է որ էքուց անպատճառ շնորք բերէք, ամաչելուցս ստեցի ես, սակայն խիղճս տանջւում էր։ Էքսը, ճաշի ժամանակ, խազէյինս ու իր կինը պատշգամբից տեսնում են որ հրէս Մ. աղէն ու իր կինը կռնաբռնուկ արած, գալիս են։

—Լե՛ռն, Լե՛ռն, էս ինչ է տօ, մէթէ Մ. աղի կնոջն էլ ես հրաւիրել, հարցրեց խազէյինս։ Ետ նայեցի տեսայ որ Մ. աղէն մի տեղահան եղած մատուռի նման, կամ

ինչպէս քառանկիւնի կաղնի հաստ քեօթուկ, թմփթմփալով գալիս է, կինն էլ մարդու թևից բռնած, քամուց գըլորւող կօլօլ փշի պէս հետը։

—Ո՛չ աղա, ես մենակ իրեն եմ մեծրել, ինչպէս որ դուք պատւիրել էիք, կրկին անգամ ստեցի ես։

—Ախր գիտէի որ նա առանց կնոջ տեղ չի գնում էլ, իր կնոջը դառնալով ասաց խազէյինս ու աւելացրեց,— դէ ինչ անենք հիմի, մեծ ամօթ է, որ տղամարդկանց շրջանում մինակ մի կին լինի, դէ Լևոն, վազի ու բոլոր մեծրած տղամարդկանց կանանցն էլ մեծրի։

Ճաշը մօտիկ էր ու էս անախորժ անակընկալի հեղինակը ես էի,—սկսեցի վազվզել։ Որոնք մօտիկ անձնաւորութիւններ էին, գործի հանգամանքը պարզ պատմեցի, իսկ որոնք հեռու էին, քաղաքականութիւն գործ դրի։ Օրինակ՝ վիրաւոր սպայի կնոջն ասացի, որ մեղաւորը ես եմ, թէև աղէն ու խանումը իրեն էլ էին խնդրել, բայց ես սխալմամբ միայն ամուսնուն էի մեծրել, ներողութիւն խնդրեցի և շատ աղաչանք արի, որ գոնէ աղի բարկութիւնից ինձ խնայելով, չմերժի-գայ։ Բայց նա մի հպարտ անպիտան կին էր, չեկաւ։ Իմ բախտից միւսները բոլորն էլ եկան. բացի պրիստաւի կնոջից ի հարկէ, որովհետև պրիստաւը այրի էր։ Կերան-խմեցին, մի լաւ քէֆ արին։ Քէֆին փայլ տւողը մի կողմից պրիստաւն էր իր թառով, միւս կողմից Մ. աղէն, իր ուսերէն լեզուով արտասանած կրակոտ ու խելացի ճառերով։

Թառը ես շատ սիրեցի։ Զուգադիպօրէն պրիստաւի բնակարանը մեր տան հանդէպն էր։ Երբ իրիկուները նա թառ էր ածում, դուրս էի գալի պատշգամբ ու մի առանձին հաճոյքով ականջ դնում, շատ ժամանակ էլ լաց գալիս էր ու վերջում քունս տանում։ Ինպէս որ մէկել առաւօտը զարթնելով, տեսնում էի, որ հէնց էնպէս, առանց անկողնի մտացել եմ բացօթեայ։

Մի անգամ կէս օրից յետոյ, մի քանի տիկիններ էին եկել աղակինոջ մօտ հիւր։ Նա ծառայի բացակայութեան պատճառով ինձ ուղարկեց հիւրերի համար ալուրը առնելու։ Ինձ յայտնի էր որ մեր աղակինը տանը կշիռ ունի ու շուկայից առած մթերքը միշտ ստուգում է։ Փորձելու խաթեր, դիտմամբ իմ փողով մի գրանքայ էլ աւել առայ։ Բայց աղակինը, որ պակսորդի համար միշտ ծառայի հետ դալմաղալ էր սարքում, հիմի ոչինչ չասաց։ Դրանից յետոյ, երբ մի անգամ էլ շուկայից բան էր հարկաւոր, նա դարձեալ ինձ էր ուղում ուղարկել առնելու, բայց որովհետև ես գործով զբաղւած էի, աղէն չթողեց։ «Ախր ծառան միշտ պակաս է բերում, համա Լևոնը թամամ է բերում է,» առարկում էր աղակինը...

Գլ. 28.

Հեծելազնդերի ժամանումը։ Պօղոս աղէն գարու և խոտի կապալառու։ Աղակինը գողանում է շաքարի գլուխը, Լևոնը Նազլուին նմանուող պատկերի հետ զրուցում է։ Հարևանենց ուսս օրիորդը։ Լևոնը պարապում է ընթերցանութեամբ. էտ մասին խազէյինը անպատում է նրան։ Խանութը ձլաս է անում։ Մեծ գործակատարը արտաքսում է։ Լևոնը գարու և խոտի գործակատար։

1878 թւի աշունքին պատերազմը վերջացաւ և մի ամբողջ դիվիզիա հեծելազօրք՝—դրագուններ, կազակներ և թնդանօթաձիգ գնդեր. լցրին Ջալալօղլին իր մերձակայ գիւղերով։ Մի չտեսնուած առուտուր բացւեց Լօռու վիճակում, մեծ իրարանցում ու շարժում առաջ եկաւ։ Փողը ջրի պէս էր հոսում վաճառականից սկսած՝ մինչև

ետին գիւղացին։ Բոլոր հեծելազնդերի գարու և խոտի մատակարարման կապալը իմ խազէյինն էր վերցրել։ Տեղական առուտուրականներից ամենահարուստը նա էր։ Նրա խանութում բացի մանուֆակտուրային ապրանքից, ամեն բան կար.—կռունկի պանիր էլ եթէ ուզէիր՝ կը ճարւէր։ Մեծ գործակատարը միալար Թիֆլիսում նստած հազիւ էր ապրանք հասցնում։ Երկաթուղի չկար. ֆուրգոններով, սայլերով, ձիաներով կամ ուղտերով էին ապրանքը փոխադրում։ Խանութում մենակ ես էի ու մի փոքրիկ աշկերտ։ Օրական հազարների էր հասնում մեր մուտքը։ Մանաւանդ որ խազէյինիս պատւէրով յայտնի ապրանքները շատ էժան դներով էինք ծախում։ Էնից էտ պատճառով էլ, տեղական միւս խանութպաններից շատերը, ստիպւած փակեցին իրենց խանութները։ Երբ էնպէս էժան ծախելու համար խազէյինիս նկատողութիւն էին անում, նա ասում էր, որ ուրիշներին ձլասելու համար է էտպէս վարւում,—միևնոյն է ինքը գարու և խոտի մէջ էլ բաւական վաստակ ունի։ «Ես իմ մի հատ աչքը կհանեմ, թաք հարևանիս երկու աչքն էլ դուս գայ», ասում էր աղէն։

Որպէս զի ինքն անձամբ կարողանայ խանութի գործերին էլ վերահասու լինել, խազէյինս խանութը շուկայից տեղափոխեց իր տան ներքին յարկի էն բաժանմունքը, որը առաջ շտեմարանի տեղ էր ծառայում։ Իսկ գարու համար իր ընդարձակ բակում վաղուց արդէն շտեմարաններ էր կառուցել։ Ամեն օր գինուորները գալիս էին և ֆուրգոններով գարի տանում իրենց ձիանների համար։ Գարի պահ տուողը մի ուրիշ գործակատար էր ու մի քանի գործակատարներ էլ գաւառներից գարի ուխտ էին ուղարկում։ Էն միջոցներին, երբ կարճլիկ գործակատարը զօրամասերին գարի էր մատակարարում, խանութի եահի լուսամտից ես նախանձով էի նայում դէպի

շեմարանը։ Զը նայելով որ մեր խանութը Աստծու աբ-
ւած ամեն բարիքներով լիքն էր, բայց և էնպէս խանութ
աստծդ միանգամայն ատելի էր ինձ համար.—բանտար-
կւած կեանքը բնաւ չէի սիրում։ Ես սրտով էի ցանկա-
նում փոշոտ գարու և փշոտ խոտի գործակատար լինել,
քան թէ դօշի, զուրգեալի, խաւեարի ու տեսակ տեսակ
կանֆէտների։

Մեր աղակինը առհասարակ շատ կեղտոտ էր հագնւում։ Մի անգամ սպանները դուրսը նրան տեսնելով,խա-
նութից ինձ դուրս կանչեցին և հետաքրքրութեամբ հար-
ցրին նրա ով լինելը։ Ամաչելուցս ստեցի, ասելով որ դա
աղախինն է։ Եւ դրանից մի քանի օրից յետոյ երբ բա-
կում երևաց մեր կենդրի նորատի կինը, որը մաքուր
հագնւած մի սիրունիկ տիկին էր, նոյն սպաներին ասա-
ցի որ նա էր իբրև խազէյինիս կինը։

Ցաճախ էր պատահում, որ շուկայում միս չէր ճարւում. արդէն ծառան գիտէր իր անելիքը,—իսկոյն գոմի դուռը բաց կանէր, որպէս զի հարևանների հաւերը ներս մտնէին։ Մի երկուսը կը բռնէր և գողունի կը տանէր խոհանոց աղի համար ճաշ շինելու։ Հաւից կամ մսից պատրաստած ճաշը միայն իրենք էին վայելում։ Գործակատարներիս ու ծառաներին ցամաք հաց, կամ շատ-շատ պանիր ու հաց էին տալի, էն էլ ոչ կշտանալու չափ։ Միսը եփելիս՝ աղակինը խոհանոցի ծառայի մօտ կտորները համարում էր ու էնպէս էր կաթսան ածում։ Իսկ ծառան եփած մսի կտորները մէկ մէկ հանում կիսում էր, կէսն ուտում ու միւս կէսը ետ պղինձը գցում։ Երբ աղակինը էտ մասին նկատողութիւն էր անում ծառային, ծառան պնդում էր որ մսի կտորները եփելուց են փոքրացել...

Մի իրիկու աղակինը կամենալով գլխիս օյին խաղալ, ծառայի մորթէ գլխարկը ծածկած, եափնջին վրէն գցած, էն պահին է մտնում խանութի նախասենեակը,

երբ ես էնտեղ շաքարի նոր բացած տակառը թողած, ներսը յաճախորդների հետ առուտուր եմ եղել անելիս։ Նա՝ մի գլուխ շաքար է վերցնում և եափնջու տակ պահած, դուրս գալի բակը։ Յանկարծ մեր կենդրի կինը հաւար կանչեց թէ՝ «գողը շաքարի գլուխը տարաւ»։

—Բայց խօսքը մեր մէջը ճնայ, տիկինը կանխապէս ծածուկ յայտնեց ինձ գաղտնիքը։ Իսկոյն եաևից վազելով հասայ ու բռունցքով էնպիսի ուժգին հարւած հասցրի թիկունքին, որ գողս ամբողջ հասակով փուեց գետնին։ Շաքարի գլուխը մի կողմն ընկաւ, փափախը միւս կողմն ու՝ տակից երևացին կանացի հիւսեր...

—Վա՛, խանում դու ես, զարմացած ձևանալով հարցրի ես, մեղայ Աստու, մեղայ Աստու, բաս ինչի չըխօսեցիր ։

—Ի՞ր երեսդ սև ըլի ա տղա, մէջքս կոտրեցիր, մթամ ասի դաք անեմ քի, չունքի շաքարը անտէր իր թողել, ասաց խանումը ամենևին չնեղանալով։

Մեր ռուս հարևաններք մի 13—14 տարեկան գեղեցիկ ոսկեհեր աղջիկ ունէին։ Հիմի էլ սիրտս էտ աղջկանից էր կպել. բայց լաւ էր որ առուտուրի ձեռքից իսկի ժամանակ չէի ճարում նրանով զբաղւելու։ Մեր խանութում մի սիրուն աղջկայ պատկեր կար, որը մի թուրքունի գործարանից էինք ստացել։ Էտ պատկերը զարմանալի նմանութիւն ուներ Նազլուին,—մազերը ոսկեգոյն, աչքերը նախշուն, ձեռքերը նազիկ։ Հէնց երբ ազատ մէջոց էի ճարում, հայեացքս էտ պատկերի վրայ էի գցում ու կարօտով Նազլուին յիշում։ Գիշերներն էլ խանութը փակելուց յետոյ կանգնում էի էտ պատկերի առջև ու հեառ զրուցում։

—Ա՛խ, Նազլու ջան, շատ եմ կարօտել քեզ, շատ-շատ, ջիլիզ*) շատ. երաք դու էլ ինձ կարօտել ես, թէ չէ։

—Ո՞նց չեմ կարօտել Լևոն ջան, էնպէս եմ կարօ-

*) ջիլիզ—չափից դուրս

տել, որ օպկէս կպել ա, ասում եմ, ախ, ծիտ դառնամ Թռչեմ ու Լևոնի ուսին վեր գամ,— իբրև Թէ Նազլուն էր պատասխանում։

Ինքան գործի հետ, գիշերւայ ժամը համարեայ 2-ին խանութը փակելուց յետոյ, էլի մի երկու ժամ ընթերցանութեամբ էի պարապում։ Գրքերն ստանում էի Թիֆլիսի կենդրոնական գրավաճառանոցից, որտեղ ծառայում էր իմ Շուլաւերի դպրոցական ընկերներիցս մէկը։ Հաճառակի պէս, մի անգամ խազէյինս ձեռքն էր ընկել էն ընկերոջս նամակն ու կարդալով, տեղեկացել էր, որ ինձ համար գրքեր են ուղարկւած։ Մի գիշեր էլ, ըստ սովորականին կարդալով տարւած լինելով, չէի իմացել Թէ ինչպէս խազէյինս խանութի եաևի դուռը զգուշութեամբ բանալով ներս էր եկել։ Յանկարծ աղմուկ ցցւեց։ Շատ կեղտոտ խօսքեր ասաց, շատ անպատւեց ու անարգեց, որ ես իբրև փչացած տղա եմ, որովհետև ուշքս «սարսաղ մարսաղ» գրքերին տալով, փչացնում եմ իր գործը ևն, ևն.։ Նրա գնալուց յետոյ ես երկար լաց եղայ ու քնեցի։ Մի անգամ էլ պատահմամբ իմ յօրինած «Նազլուի խաղը» ոտանաւորը ձեռքն ընկաւ, կրկին խաղք ու խայտառակ արեց։ Սիրտս էնպէս կոտրւեց, որ էլ գրաննից յետոյ, ոչ կարդում էի, ոչ գրում։ Յետոյ, բոլոր գրքերս, որ մի քանի հատորներ էին կազմում՝ բաշխեցի սրան-նրան։

Զը նայելով էն սելաւի նման առուտուրին, երբ մեծ գործակատարի Թիֆլիսից վերադառնալուց յետոյ խանութի ապրանքը հաշւեցինք, փոխանակ սպասւած հազարաւոր շահի, վնաս երևաց։ Ոչ ոք չհասկացաւ պատճառը։ Աղէն գործակատարին էր մեղադրում, գործակատարը՝ աղին։ Սակայն բանը չպարզւեց և խեղճ գործակատարը, որը մի ազնիւ ու մաքուր մարդու համբաւ ունէր, դառարկաձեռն ու անարգւած արտաքսւեց։

Աղէն ինձ էլ էր մեղադրում, ասելով որ գուցէ մօրս

համար առանց մատեան մուծելու շատ բաներ եմ ուղարկել ևն.։ Բայց որովհետև ես արդար էի, լաց էի լինում օրտաճաքի պէս։ Նա ուզում էր խանութը ինձ յանձնի, բայց ես չյօժարւեցի,— խանութը կարծես գայլ էր դարձել և ուտում էր ինձ։ Ես, որ խազէյինիս մօտ խոնարհ հարսի պէս էի միշտ, էս անգամ ըմբոստացայ և սուբ կերպով յայտնեցի որ՝ կամ շուտով մի ուրիշ մարդի յանձնի իր խանութն ու ինձ արձակի, կամ Թէ չէ երեսի վրայ կը Թողնեմ— կը փախչեմ։

Խազէյինս շուտով խանութի համար ուրիշ գործակատար վարձեց և ինձ ոչ Թէ արձակեց, այլ խոտի ու գարու վրայ գործակատար նշանակեց։

Գլ. 29

Պօղոս աղէն Լևոնին սոխ[illegible] է գիղացիներին խաբել։ Լևոնը գիշերում է գարու շտեմարանում։ Ձմեռը ճամփէն կորցնում է։ Մալական հարսանիքաւոր աղջիկները։ Լևոնը մալականների հետ կրօնական վէճի է բռնւում։ Ռուսների հարսանիքաւորը։

Ինձ համար գործունէութեան նոր ասպարէզ բացւեց։ Դրագունների մի ամբողջ գունդ, որ տեղաւորւած էր վարանցովկայ և ռուսների Պրեվոյնի գիւղերում, ինձ յանձնւեց։ Էս գնդին մատակարարելիք խոտն ու գարին ես էի առնում ու պահ տալի։ Կարիք եղած դէպքում ուրիշ զօրամասերի համար էլ էի գարի ու վարսակ ուղարկում Ջալալօղլի ու միւս գիւղերը։

Մի հանգամանք, սակայն, բարոյապէս շատ էր ճնշում ինձ։— Խազէյինս պահանջում էր, որ ամսական առ-

նւազը գոնէ մի հազար փութ գարի աւելացնէի իմ ձեռքի տակ գտնուող շտեմարանում. ուրիշ խօսքով ստիպում էր ինձ կշռի մէջ գողանալ գարի ծախող գիւղացիներից: Կարծես էն հերիք չէր, որքան մեծաւորների հետ մի տեղ ձեռնաքաշողութիւն էին անում: Վերջ ի վերջոյ ստիպուած՝ սովորեցի ես գիւղացիներին շահագործել ու էտալոնով՝ խազէյինս պահանջներին լի ու լի գոհացումն տալ: Զգում էի որ արածս աններելի վատ բան էր, խիղճս աստիճ տանջւում էր, երբ միամիտ գիւղացիների հետ ի չարն էի գործ գնում, բայց ինչ արած: Խազէյինիս ազդեցութիւնը շատ էր զօրեղ, աւելի նրա չար դերդուճներն էի կատարում ես, քան թէ իմ ներքին ձէնը լսում:

Խազէյինս իրաւունք չէր տալի իմ ու ձիուն վերաբերեալ ապրուստի համար որև է ծախք անել գիւղերում: Գարի առնելու գործով եթէ հայ գիւղերն էի գնացած լինում, ձրի հիւրասիրւում էինք թէ ես, թէ ձիս. Պրիվոյլնի գիւղում էլ ռոճիկիս հաշւից մանաւանդ ծախսեր անելով մի կերպ եօլա էի գնում: Սակայն դրութիւնս միանգամայն անտանելի էր Վարանցովկայ գիւղում.— էնտեղ ոչ ձրի, ոչ էլ քիչ փողով՝ ապրիլ չէր կարելի. գոնէ պէտք է կարողանայիր առանձին սենեակ վարձել: Իսկ ես էն ժամանակ տարեկան հարիւր ռուբլի ռոճիկ էի ստանում: Մինչդեռ նոյն գործը կատարող նախկին գործակատարը հարիւր հիսուն ռուբլի էր ստանում ամսականս...: Վարանցովկայում ցերեկները ձիս դուրսն էր կապած լինում, իսկ գիշերները գարու շտեմարանն էի քաշում և ինքս էլ գարու կիսաուկի վրայ պառկելով, թողած պարկերով ծածկւած՝ մինչև լուսաբաց ցրտից սրթսրթում էի: Զարքաշ օրերը շատ էի կրում ես, բայց և այնպէս միշտ ուրախ էի և զւարթ:

Մի անգամ Վարանցովկայից դատարկ պարկեր պէտք է տանէի հայ-կաթոլիկների փոքր Ղարաքիլիսայ գիւղը,

գարի ածելու համար: Հարիւր հատ պարկ ձիուն բարձելով՝ ճամփա ընկայ: Թէև գիշերը էր, երկինքն էլ ամպամած, բայց դաշտերը ծածկւած էին բարակ ձիւնի սպիտակ շղարշով, որը փոքր ինչ օգնում էր ինձ ճամփա հանելու: Սակայն քիչ յետոյ թանձր մառախուղը ծածկեց ամբողջ տարածութիւնը և ես ճամփէն կորցրի: Շատ դէս ու դէն ընկայ, մի տեղ մինչև անգամ փարախների կըտուրները բարձրացայ. փարախի տանիքը ձիու ամբակի տակ փուլ եկաւ, ոչխարի շները յարձակւեցին, քիւրդ հովիւները դուրս եկան, ազատեցին ու ճամփէն ցոյց տւին: Բայց ես նորէն կորցրի ճամփէն ու ետ դէպի Վարանցովկի հանդը վերադարձայ: Մի կողմից էլ թիփի-բորանն էր շշկլացնում: Վերջապէս, ստիպւած՝ քամու հակառակ կողմից մի մեծ խոտի դէզի մօտենալով, ձիու բերը ցած գլորեցի, ձիուն խոտի վրայ արեցի ու ինքս էլ մի խոռոչ բաց անելով մէջը պատրաստւեցի մինչև լոյս: Էքսպռեսսը երբ գիւղը հասայ, սառել էի բոլորովին: Սրա նման շատ դէպքեր ու արկածներ են պատահել ինձ հետ, բայց որ մինն ասեմ.— ասածս էլ եղածի կէսը չի դեռ: Էս ամենը տեսնելով հանդերձ, խազէյինս երբէք շնորհակալ չէր մնում, այլ ընդհակառակը դեռ անտեղի առիթներ էր որոնում միշտ դժգոհութիւն յայտնելու: Դա էլ իր տեսակի մի խորամանկ քաղաքականութիւն էր, որ նա անխտիր գործ էր դնում իր բոլոր գործակատարների դէմ: Բացի էտ, նա միշտ աշխատում էր գործակատարներիս իրար դէմ լարել որպէս զի մէկ մէկու գաղտնիք բաց անէինք: Էտ բանը մենք լաւ էինք ըմբռնել ու իրեն ներկայութեամբ միշտ իրար հասցէի վիրաւորական նկատողութիւններ էինք ուղղում և շատ անգամ նոյն իսկ վիճում ու կռւում էինք դիտմամբ:

Վարանցովկի փողոցով անցնելիս, մի օր մի տան երկրորդ յարկի լուսամուտը քանիցս անգամ ներսից ծեծեցին. նայեցի որ մի խումբ աղջիկներ լուսամուտի առ-

չև կանգնած ինձ էին կանչում։ Օրւայ էն ժամն էր, որ տանը տղամարդ չկար։ Սիրտ արի ու ներս մտայ։ Մի խումբ մալականի աղջիկներ էին, որոնք տան տիրոջ նշանւած աղջկայ բաժինքն էին պատրաստում։ Անչափ ուրախացան, հանաքներ արին ու ինձ «ձկնայրն ողջոյն»ով պատւեցին։ Յատակի վրայ երեսնիվայր պառկում էին ու ձկների պէս խլպլտում։ Յետոյ, տեղներիցը կանգնելով, սեմսեաչվի փող էին խնդրում։ Մի քանի կապէկ նւէրներ տւեցի ու հեռացայ գոհ սրտով։

Յաճախ աղանդաւոր մալականների հետ կրօնական վէճերի էինք բռնւում, Ջահէլներին գրեթէ միշտ յաղթում էի. բայց մի անգամ ծերերի ժողովում խիստ նեղը դրին ինձ։ Ուրիշ հանդամանքներում ես միշտ էլ յարգանքով էի վերաբերւում դէպի ծեր մարդիկ առհասարակ. սակայն կրօնական վէճերի ժամանակ անչափ դիւրագրգիռ էի։ Մինչև անգամ ատրճանակ հանեցի և ուզում էի կրակել մի ցինիկ ծեր մալականի վրայ, որը մեր քրիստոնէական եկեղեցու սրբազան ծէսերն էր ծաղրում։ Ի հարկէ միւսները չթողին ու ես այդ դէպքից յետոյ՝ էլ կրօնական վէճերի մէջ չէի մտնում նրանց հետ։ Բայց և էնպէս մի անգամ մալականները միջնորդ էին ուղարկել մօտս, որպէս զի ես կրօնափոխ լինելով՝ մալական դառնայի, որի տրիտուրը հասարակութեամբ խոստանում էին ինձ տալ մի սիրուն աղջիկ-կնութեան, ոչ շատ չափով հողամաս, եզներ, կով և ն. ն.։

Պրիվոյնի գիւղում մի անգամ շնորհիւ իմ տան տիրոջ խաբէութեան, անգիտակցօրէն մի ռսի հարսանիքատուն ընկայ։ Մի շիշ գինի, գինու բաժակ ու կանգեա մի մատուցարանի մէջ, նորապսակները բռնած՝ դիմաւորեցին ինձ։ Առաջարկեցին խմել, թէև գինի չէի խմում, բայց ամաչացրին։ Տանտէրս սովորեցրեց ու ես մի ումպ խմելով, ասացի դառն է, նորահարսը մօտեցաւ հետս համբուրելու, բայց ես ամաչելուց՝ գլուխս ետ թեքեցի։

Շատ ծիծաղեցին իմ միամտութեան վրայ։ Յետոյ իրենք նորապսակները համբուրեցին։ Հանդիսականներից մէկը դիմեց ինձ հետևեալ ճառով՝

—Պարոն երիտասարդ, ասաց, դուք պէտք է գիտենաք, որ մեր նորահարսը ինչպէս նոր տանտիկին, կարիք ունի շատ իրերի, թեկի, ասեղի, կարի, կարկատանի և ն. և ն., էնպէս որ ձեր բարեհաճ կամքով, շնորհեցէք դրան մի չնչին նւէր։

Նորապսակների ձեռքի մատուցարանի վրայ մի հինգ ռուբլիանոց թղթադրամ դրեցի։ Նորապսակներն իրենց խորին շնորհակալիքն արտայայտեցին, իսկ հարսնիքաւորներն էլ կենացս խմեցին։

Գլ. 30.

Լևոնը գիշերով ճամփորդում է։ Գոյլը հիւանդանում է։ Մի շարք արկածներ. ուզում են Լևոնի հրացանը խլել։ Բուք, թիփի, ճամփէն կորցնում է։ Շները յարձակւում են։ Հրացանը տրաքում է։ Եղջերուն։ Սէգվու ս. նշանի մատուռը։ Լևոնը ուզում է ջրաղացում գիշերել, նրան աւազակի տեղ դնելով ուզում են վրէն հրացան արձակել։ Խանումի ամուսնութիւնը։

Թէև տակաւին նոյեմբերը ամիսը չէր վերջացել, բայց արդէն ձմեռը սկսւել էր։ Մի օր մեր գիւղից լուր իմացայ, որ մեծ գոյլս հիւանդ է և սրտով իմ տեսութիւնն է ուզում։ Ինքս էլ գնալ էի ուզում, բայց խաղէյինս չթողեց. մաքսումս վճռեցի գոնէ ծածուկ գնալ։ Գործս էնպէս կարգաւորեցի, որ նախ վարանցովկի ապա Պրեվոյնու գօրամասերին տան օրւայ գարի ու խոտ յատակարարելով, մի իրիկնապահի ճամփայ ընկայ դէպի

մեր գիւղը։ Շուտ հասնելու խաթեր, ուղիղ ճամփէն թողած, լեռներով գնացի։ Իմ դժւարը մինչև Լալւար լեռան ուսին հասնելն էր, իսկ էնտեղից դէնը արդէն ճամփէն ծանօթ էր ինձ։ Բայց երկու աննպաստ հանգամանքներ կային, որոնց ես հաշւի չառայ. մէկը ձմեռւայ դառնաշունչ եղանակն էր, միւսը ձիուս վտիտութիւնը։

Ցամենայն դէպս տանջաիրոլս «պիբոդի» հրացանը բան ուզեցի։ Բայց նա պատկանեալ փամփուշտ չունենալով հրացանի հետ, «բերդանի» փամփուշտներ տւեց։ Հետո էլ պատւիրեց հրացանի մէջ վաղօրօք փամփուշտ չդնել, «վտանգաւոր է» ասաց։ Գնալիս մօտեցայ գիւղական խանութին ու հէնց ձիու վրից խանութպանից երկու փաթեթ պապիրոսներ պահանջեցի։ Խանութպանից առաջ մի գաղտնի ոստիկան դուրս եկաւ։ Նա մի յաղթանդամ յոյն էր՝ կողքից էրծաթապատ թուրը կախ տւած։ Ձիուս սանձը բռնեց ու «պիբոդի» հրացանի իրաւունքաթուղթ պահանջեց։ Բացատական պատասխան ստանալով, հրամայեց հրացանը իսկոյն յանձնել իրեն։ Բայց ես անմիջապէս փամփուշտը հրացանի մէջ դնելով, նրա կրծքին ուղղեցի սպառնալով՝ «բաց թող ասացի, ապա թէ ոչ տեղդ ու տեղդ կսպանեմ»։ Թէև ոպրդնեց նա երկիւղից, բայց երևի աննպաստութիւն համարելով տանևեօթ տարեկան պատանուս առջև կուչ գալ, թուրը պատեանից դուրս քաշեց։ Բարեբախտաբար հէնց էն մօմենտին վրայ հասաւ խանութպանը և միջամտելով վերջ տւեց էս անախորժ միջադէպին։ Բայց մոռացայ փամփուշտը հրացանից ետ հանել։

Ձիուս անխնայ մտրակելով քշում էի, որպէսզի կակարողանայի լուսապէծով Լալւարին հասնել։ Բայց մութը արդէն վրայ հասաւ, իսկ Լալւարը դեռ շատ հեռու էր։ Հակառակի պէս, որտեղից որտեղ, յանկարծ թիփի բոբան բարձրացաւ և հետն էլ ձիւն բրդեց։ Էն կածանը որով գնում էի, ձիւնի հատ շերտով ծածկւեց։ Ձիս բո-

լորովին բեզարեց ու կանգ առաւ. ստիպւած էի ձիուց իջնել։ Եափնջին գլուխս քաշեցի ու ձիու առջև կուչ եկայ. խեղճ անասունն էլ թիփուց ու բուքից նեղւելով դունչը եափնջուս տակը կոխեց։ Մի քանի րոպէ էտպէս մնացինք. բայց յանկարծ զգացի, որ ձիւնի ծանրութեան տակ ճնշւում եմ։ Իսկոյն օձի կծածի պէս տեղիցս ծըլունգ ելայ։ Իսկապէս եափնջուս վերջերքի վրայ ահագին ձիւն էր կիտւել թիփուց ու եթէ դարձեալ մի քանի րոպէ շարունակել էինք էդպէս մնալ, ձիւնի տակ կը թաղւէինք...

Առանց ճամփա գտնելու, ձիս եաևիցս քաշելով, վերընկինելով, վերկենալով գնում էի, ինքս էլ չէի հասկանում թէ ուր եմ գնում։ Երկար ժամանակից յետոյ միայն, մըրիկը դադարեց, թիփին ու բուքը վերջացան և երկնակամարի վրայ երևաց մանգաղի նման կեռ լուսինը։ Լուսնակի լոյսը խառնւելով ձիւնի սպիտակութեան հետ, սար ու ձոր ողողեց կաթնանման լուսով։ Նոր նրկատեցի, որ ահագին տարածութիւն ճամփից շեղւած եմ եղել։

Հազիւ հազ Լալւարի ուսին հասնելով, վերջապէս ծանօթ ճամփէն ընկայ ու կամաց կամաց ցածրացայ դէպի Աքորեցոնց «չափռելաձոր» կոչւող գոմահանդը։ Էս կողմերում ձիւն չկար։ Շներից երկիւղ էի կրում ու հակառակին՝ միակ ճամփէն գոմերի արանքով էր տանում։ Գոմերին մօտեցել էի արդէն, որ յանկարծ եաևիցս ոտքերի ձէն հասաւ ականջիս, ետ մտիկ տւի—տեսնեմ՝ չոմբաքան ուսին մի հովիւ է վազում դէպի ինձ։ Իսկոյն կանգ առայ և հրացանը ուսիցս վայր բերի։ Նա նոյնպէս տեղն ու տեղը կանգնեց մի դարաւանդի վրայ ու հարցրեց՝ «էյ, ըշտօ». ասացի՝ «փշտ-փշտօ»։ Էլ ոչինչ չխօսեց ու արձանի պէս տեղն ու տեղը մնաց կանգնած։

Շուռ եկայ ու էնպիսի զգուշութեամբ ու հանդարտ անցայ գոմերի արանքով, որ շները չիմացան։ Սակայն

դոմերից հազիւ էի մի քանի քայլ հեռացել, որ մէկ էլ յանկարծ շներին հիս տւին վրէս։ Երևի էն անպիտան ռուսախօս հովիւն էր։ Մի պահ ազազել շները շշկլացրին ինձ, բայց շուտով Սէդվու ձորակին հասնելով, էնտեղ մի հաստաբուն կաղնի ծառին մէջքս դէմ տւի ու սկսեցի հրացանով պաշտպանւել։ Շները որ տեղներս շատ նեղեցին,—ձիուս սանձը թևս գցելով, մէկէն ձորն ընկայ, ձիուն էլ եռևից զօռով քարշ տալով։Շները քիչ էլ ձիուս պոչից ձգձգեցին, սրունքները կրծեցին ու բաց թողին։ Հողի, աւազի, քար ու գլի վրով սողալով հասանք «Սէդվաչայ» վտակի ափն ու սկսեցինք հոսանքի ուղղութեամբ առաջ գնալ։ Տեղ-տեղ հէնց ջրի միջով էինք գնում, ափերը կամ չհնդով ու գոնջերով լցած լինելու պատճառով։ Շները սիրտ չէին անում ձորն իջնել. ձորաբաշից հաջելով՝ մեզ հասւէ հաս առաջ էին գալի։ Գոմերից էլ միալար հաւար էին կանչում ու շներին հիս տալի։ Շները կենտ կենտ ետ ճռալով, բոլորն էլ ետ կորան։ Ես էլ ձիս քաշելով ձորակից դուրս եկայ ճամփէն ու մի ազատ շունչ քաշեցի։

Դժբախտաբար հանգստութիւնս երկար չտևեց. յանկարծ թփերի միջից մի ահագին կենդանի դուրս պրծաւ ու դէպի իմ կողմը վազեց։ Կարծելով թէ արջ է վրէս յարձակւում, իսկոյն հրացանը ուսիցս հանեցի որ կրակեմ։ Հրացանի անճռռնի կոթը ամուր դիպաւ ձիուս գլխին, միաժամանակ էլ հրացանի մի ահեղ որոտ լսւեց ու ձիս վայր ընկաւ։ Անմիջապէս մի ծառի ետևում դիրք մտայ ու հէնց էն մոմենտին, կենդանին առաջովս սլացաւ—փախաւ։ Ետևից աչքովս ընկան կենդանու ոսոտաշատ եղջիւրները։ Արջի տեղ դրածս՝ եղջերուի ցուլ էր։ Էն րոպէին տեղը չէր ի հարկէ էտ մասին մտածելու, որովհետև ինձ թւաց թէ գոմերի կողմից հովիւները՝ ետևի ինձ աւազակի տեղ դնելով, հետապնդում են։ Ուզեցի ինքս էլ հրացան արձակելով հակահարւած տալ, գոնէ

վախցնելու նպատակով,—բայց երբ հրացանիս շնիկը քաշեցի, չրթաց ու չորաքեց։ Մազերս բիզ բիզ կանգնեցին։ Շնիկը վեր քաշեցի, որ գոնէ փամփուշտը դուրս շպրտւէր,—դուրս չեկաւ։ Մի քանի րոպէ մտածելուց յետոյ, հրացանի շիշը միտքս ընկաւ։ Շշով խփեցի, փամփուշտը դուրս պրծաւ. տեսնեմ՝ դատարկ հրախողովակը և միաժամանակ նկատեցի հրացանի փողից ելնող ծուխը...։ Բանից դուրս եկաւ, որ տրաքողը իմ հրացանն է եղել։ Սպանւած կարծւած ձիս էլ, արդէն ոտքի էր կանգել։

Մի որոշ տարածութիւն առաջ գնալով՝ լուսնի շնորհիւ մի տեղ չրջապատը ծանօթ թւաց ինձ.—չորս կողմում ծառերի միջից աչքովս ընկաւ Սէդուս. Նշանի մատուռը։ Իսկոյն երես խաչակնքեցի ու ամբողջ մարմնովս սառսուռ անցաւ, կարծես մէջքովս մրջիւնները վազվզեցին։ Եւ միաժամանակ քաղցր բերկրանքով վերյիշեցի էն ժամանակը, երբ Քէթհան ձալօն մատաղ էր բերել և ես ու իմ ընկերը Աղասին մատուռում ժամ էինք ասում։ Մէկ էլ գլխովս մի միտք անցաւ, որ գնամ ու էդ մատուռում գիշերեմ։ Ու հէնց էդ դատարկ մտքիցը սարսափելով ձիուս ասպանդակեցի։

Զարմանալի բան.—մանկութիւնից ի վեր անմիտ նախապաշարումները-հրէշաւոր առասպելների, դևերի, սատանաների, հրէշների, հրեշտակների ու յարութիւն առած մեռելների մասին, էնպիսի խոր արմատներ են գրցում մարդուս սրտի մէջ, որ հասակն առնելով ու խելքին հասնելով անգամ, էդ առասպելների ազդեցութիւնից չի կարողանում ազատւել։ Օրինակ, հէնց ես ինքս, շատ լաւ էի ըմբռնում, որ էն մատուռում ոչինչ չկար ամենևին, բայց ես ուրախութեամբ գիշերը մնացի անատուռում ու չօլում, քան թէ մատուռի կամ մի գերեզմանատան մէջ։

Կամաց կամաց առաջ գնալով, մտայ Սէդվու փոսը, էնտեղ մի ջրաղաց կար. իսկոյն մտքովս անցաւ գիշեր

ձեալ էդ չըաղացում։ Մերձենալով դռան տախտակների արանքից նկատեցի ճրագի լոյսը, բայց մինչև տեղ հասնելիս ճրագը հանգցրին։ Դուռը ծեծեցի, կանչեցի, ձէնս ծպտուն հանող չեղաւ.—երևի աւազակի տեղ դրին։ Ճարահատեալ նորից շարունակեցի իմ ճամփէն։ Շարունակ անտառներով ու ելևէջներով էի գնում։ Ձիս էլ բեզարել էր բոլորովին, ուստի շատ դանդաղ էր քայլում։

Երբ Հազւի գիւղից բարձրանում էի դէպի մեր գիւղի սահմանները, արդէն լինէ ապահով գգալով, ձիս բոլորովին իր կամքին թողի, որը աւելի ևս դանդաղեցրեց քայլերը։ Մէկ էլ յանկարծ հանդիպակած կողմից ձիու ոտնաձէն լսեցի ու միաժամանակ անտառի ծէրի թմբի գլխին երկու ձիաւորների սիլուէտներ երևացին աչքիս։ Ըստ երևոյթին նրանք էլ լինէ նկատեցին, որովհետև ձիս սպիտակ էր,—ու մինը իսկոյն ևեթ ձիու սանձը քաշեց կանգնեցրեց, իսկ միւսը հրացանը ուսից վայր բերելով արշաւեց դէպի լինէ։ Մօտեցաւ և հրացանի փողը կրծքիս դէմ տալով թուրքերէն բղաւեց՝«քիմ սան,թարփանմա»(ով ես, մի՛ շարժւիր)։ Մի ակնթարթում նրա հրացանի փողից պինդ բռնելն ու ձեռքից խլելն մին արի. միաժամանակ լինքն էլ ձիուց ցած գլորւեց։ Իսկոյն ես էլ իջայ և մի ծառի ետևում դիրք բռնելով ու իրեն հրացանը վրէն ուղղելով՝ նոյնպէս թուրքերէն հրամայեցի տեղից չը շարժւել և ասել՝—ով է լինքը։ Թիմբի գլխի միւս ձիաւորը երևի ձէնիցս ճանաչելով «Լևոն» կանչեց ու դէպի մեզ արշաւեց.ես էլ իրեն ճանաչեցի,—մեր երկրացի կալւածատէր Պավլէն էր։ Բարևեցինք իրար ու շատ ծիծաղեցինք։ Նրանք ուղևորւեցին դէպի Հազւի, իսկ ես շարունակեցի իմ ճամփէն։

Անտառից դուրս գալով,երբ հասա մեր գիւղի վարելահողերի սիրուն դուրան տափաստանը, մեր հինաւուրց եկեղեցու բարձր գմբէթը աչքովս ընկաւ։ Երեսս խաչակնքեցի, փառք տւի Աստծուն, որ էնքան փորձանքներից փրկեց լինէ ու սկսեցի խաղ կանչել։ Գիւղից արդէն լսւում էին շների հաչոցը, աքաղաղների կանչը և զուռնա-դհոլի ձէնը։—Ըստ երևոյթին հարսանիք կար։

Կէս գիշերից շատ էր անցել, որ տուն հասայ։ Մերոնք խոր քնով քնած էին։ Պապիրոսներիս մի փաթեթը դեռ ճնում էր, դռան վառելափէտի տակ պահեցի,որպէսզի մէրս չտեսնէր։ Յետոյ դուռը ծեծեցի, մէրս զարթնեց ճրագ-կրակ արեց ու ձիս գոմը քաշեցինք։

—Ես էլ հլէ նոր ի քնել, ասաց մէրս։

—Ինչո՞ւ։

—Հարսանիքատանից նոր ի եկել։

—Ի՞նչ հարսանիքատուն։

—Բա գիտես ո՞չ,—ըսօր Յանուամին պսակեցին ու էգուց տանում են Բարինջ։

—Վա՜, բացակէտեցի ես ու մի րոպէ ճնացի բերանաբաց կանգնած։ Զնայելով որ Յանուամին ես քրոջ պէս էի սիրում, բայց և էնպէս նրա պսակւելու լուրը շանթահար արեց լինէ։

Էքսի առաւօտը գնացի հիւանդ քրոջս տեսութեան, որը ուրախութիւնից իսկոյն հագնւեց և անկողնից դուրս եկաւ,—առողջացաւ։ Միայն էն անպիտան պապիրոսների հետ մի անախորժ դէպք պատահեց։Հօրեղբայրս առաւօտը փէտ չարդելիս՝ գտել էր պապիրոսներիս փաթեթը։ Մէրըս էդ մասին շատ հանդիմանեց լինէ։ Բայց երբ համոզեցի որ ճամփի տաղտկութիւնը վանելու համար էի պապիրոսներ վերցրել և ազնիւ խօսք տւի որ էլ երբէք չեմ ծխելու, մեղմացաւ։

Էն օրը, երբ Յանուամենց դռանը զուռնէն փչեց «տարան հա հա» եղանակը, ես էլ ուրիշների պէս մեր տան կտուրը բարձրացայ թամաշի։ Յանուամը նստած էր ձիուն, երկայն թափանցիկ քօղով դէմքը ծածկած։ Աչքերից գըլտուր-գլտուր արտասուքներ էին թափւում, Շատ նայեցի

որ գուցէ թէ նա ինձ տեսնէր, բայց նա ոչ մի կողմէ վրայ էլ չէր նայում իսկի։ Մէկ էլ յանկարծ սիրտս պըտրտաց ու գլուխս պտիտ եկաւ։ Ինքան կարողացայ պըսպել ինձ, որ մի կերպ տուն ընկայ ու գլուխս մութաքի մէջ թաղեցի...

Իսպէս մի օր ու գիշեր մեր տանը ճնալուց յետոյ, ուցևորւեցի Ջալալօղլի իբրև թէ ուղղակի գործի վրիցն էլ գնում։

Գլ. 31.

Լևոնը ճաշակւում է ընկեր—գործակատար Մոսնի հետ։ Զատիկը։ Ռուս աղջիկները երգում են։ Լևոնի ժամացոյցը։ Լևոնը խաղաղնդակով խփում է իր սիրած ռուս աղջկան։ Լևոնն ու Մոսին քար են կրում։ Գործակատար Մելքոնը։ Լևոնը կազակից խլում է իրենց եղները։

Էս մի ձմեռն էլ անցաւ գնաց խառնւեց իր նախնիքներին։ Իմ գլխով անցած արկածների նման, ուրիշ շատ արկածների ենթարկւեցի ես և էս ձմեռւայ ընթացքում։ Գարունը բացւեց, եկաւ զատիկը։ Շրջակայ գիւղերի գործերս վերջացնելով, վաղօրօք վերադարձայ Ջալալօղլի տօների առթիւ։ Ճրագալոյցի շաբաթ իրկունը ճաշակւելու էի։ Իմ ընկեր-գործակատար Մօսին էլ պէտք է ճաշակւէր։ Մոսին մի համեստ բնաւորութեան տէր ու անձնւէր երիտասարդ էր. ես ու նա շատ էինք մտերիմ իրար հետ։ Զատկութեան երկուսն էլ նոր նոր շորեր էինք կարել տւել միատեսակ։ Ու էտ նոր հագուստներով պրճնւած՝ ճրագալոյց իրիկունը միասին ժամ գնացինք։ Տեղացի երիտասարդները նոյնպէս խումբ խումբ ժամ էին գալի ճաշակւելու. նրանք գրեթէ նոյն տեսակ հագուստներով էին։ ինչպէս և մենք։ Միայն նրանք էրծաթէ գօտիներ ունէին կապած ու վղներովը պատ տւած էրծաթէ երկայն շղթաներով ժամացոյցեր։ Իսկ իմ ու Մոսնի գօտիները հասարակ կաշւից էին ու ժամացոյցերնիս շղթաները կարճ տեսակից։ Էն էլ մեր խազէյինիցը ծածուկ էինք բանեցնում։ Բայց զատկի օրը երբ Մոսին ու ես մտանք եկեղեցի, ճնացինք ապշած, որովհետև էս անգամ պատկերը փոխւել էր,—Ջալալօղլու երիտասարդութիւնը բոլորովին նոր տարազով էր հագնւած։ Հիմի գունաւոր ֆայեա և ատլասէ խաս կտորներից արխալուղներ էին հագել ու համապատասխան կտորներից էլ նոր մահուդ ու կաստեօր չուխաների աստառներն էին։ Իսկ մեր հագին, նոյն համեստ հագուստն էր։

Պատարագը աւարտւելուց յետոյ, քահանաներն ու տիրացուները թափօրով դուրս եկան եկեղեցու գաւիթն ու անդաստան կատարեցին, խաչահամբոյր ժողովեցին։ Իսկ անուշաբոյր ու համեղ ախառը մի քանի մեծ կաթսաներով էնտեղևեթ եփած պատրաստ էր։ Ներկայ բազմութեանը լաւաշների մէջ փաթաթած ախառի միս բաժանեցին։ Մի կողմից էլ տներից էին գալի և քափքօթաններով միս ու խաշու տանում։ Իսկ և իսկ զատկին վայել պայծառ-արևոտ օր էր։ Հանդերը կանաչ, ծառերը ծաղկած։ Թեթև ու կենսացիր օդի մէջ անգամ ցընծութիւն ու հրճւանք էր տիրում։ Մարդկանց դէմքերին տօնական ուրախութիւն էր փայլում։

Եկեղեցուց արդէն տուն էինք վերադարձել, որ մի խումբ ռուս աղջիկներ եկան մեր զատիկը շնորհաւորելու։ Նրանց մէջ էր և մեր հարևանենց ոսկեհեր աղջիկը, որի վրայ սիրահարւածի պէս էի ես։ Ամենքս պատշգամբումն էինք։ Նրանք նախ՝ խմբովին երգեցին տօնին պատշաճ մի քանի քառեակներ ու վերջում խօսքերով շնորհաւորեցին մեր զատիկը։ Ապա աչքեր դէպի մեր խազէյինը յառած՝ սպասողական դիրք բռնեցին։ Սակայն դու

ոչ մեռնես.—խաղէյինը իսկի չէր էլ մտածում ձեռքը գըրպանը տանելու—։ Ստիպւած մի սպիտակ տասը կոպէկանոց հանեցի ու նէիրեցի իմ հաւանած աղջկան։ Բայց աղէն շատ նեղացաւ ինձանից.—«Ուրեմն պարոն, երեւում է որ դու ինձանից հարուստ ես էլի», ասաց ու ներս մտաւ։ Շատ չանցած ես դուրս եկաւ և ինձ ու Մոսնին հրամայեց, որ ձիանները գոմից դուրս քաշենք և մի լաւ թիմարենք-մաքրենք։ Էտպէս էր նրա բնաւորութիւնը,—որորհետև թազա շորեր էինք հագել, ջիգրը գալիս էր, ուզում էր անպատճառ կեղտոտել ու պատառոտել տար մեր շորերը։ Հակառակի պէս ժամացոյցս մոռացել էի-անդուկիս մէջ պահել, այլ շղթան էլ հետը գըրել էի լանջիս վրի փոքրիկ դրպանը, ու՝ ձիուն դաշաուքսելիս, ժամացոյցիս շղթան յանկարծ դուրս պրծաւ։ Ծաղէյինս պատշգամբից նկատելով ասաց՝ «Ի հարկէ, ասի աղջկերանցը էրծաթ փող բաշխողը անպատճառ էրծաթ էլ սհաթ պէտք է ունենայ»։

Էքսը, մեռելոցի երկուշաբթի օրը երկսեռ բազմութիւնը շարէ շար դէպի գերեզմանատունն էր դիմում։ Տէրտէրների բախտից, օրը քիչ թխպոտ էր ու եղանակն էլ ցուրտ։ Տէրտէրները գերեզմաններն էին օրհնում. ժողովուրդն էլ կեր ու խումով էր զբաղւած մեռելատէրերի բերած խաշլամաներով, կարմիր ձւաններով ու գինի ապրաղով։ Իսկ երիտասարդներիս խմբերը փոքր ինչ հեռու ուրախ ու զւարթ զբօսնում էինք կանաչ դաշտերում։ Կէս օրի մօտերքին ամպը դուռաց և յորդ անձրև տեղաց, հետն էլ բանջարափատուկ խառը։ Բոլորս ցրւեցինք.—ով վրայ հասցրեց՝ տուն փախաւ, ով որ չէ՝ մօտակայ տներում պատսպարւեց։ Բայց իրիկնադէմ եղանակը նորից բացւեց, մի կարճ միջոց արևը նորից փայլեց ու մէր մտաւ։

Երեքշաբթի օրը, զատկի օրւայ պէս մի հրաշալի ու քաղցր եղանակ էր։ Արևի փայլուն ճառագայթները ուրախ ուրախ խաղում էին աւանի տների ապակիների,

դաշտի ծաղիկների ու կանաչ խոտերի հետ։ Առաւօտւայ թէյն ու նախաճաշիկը վայելելուց յետոյ, տեղացի հայ և ռուս պատանիներն ու երիտասարդները՝ մի խումբ ռուս օրիորդների հետ աւտնի հարաւային կողմի դաշտն էինդուրս եկել զբօսանքի։ Ռուս աղջիկները իրենց տօնական խայտաբղետ հագուստներով՝ դաշտի կտնաչ թաւիշէ ֆոնի վրայ, գոյնզգոյն ծաղիկների հետ խիստ լաւ իրաց էին ընկել։ Հայ աղջիկ չկար—էն ժամանակ հայ աղջիկները տակաւին ազատութիւն չունէին տղաների հետ միասին զբօսնելու։ Շուտով հեղինակաւոր երիտասարդների նախաձեռնութեամբ ընդհանուր խաղեր սկսւեցին։ Ինձ գոնէ առաջին անգամն էր վիճակւում շատուր աղջիկների հետ խաղալը, ուստի սիրտս անսահման բերկրութեամբ լցւել էր ու ես ուղղակի օդի մէջ էի սլանում։ Մանաւանդ որ խաղին մասնակցում էր և իմ հաւանած աղջիկը—Տանիան,—էտպէս էր նրա անունը։ Նա խաղացողներիս հակառակ բանակի մէջ էր։ Գնդակ խաղալիս հօ ինքս ինձ գերազասեցի։ Ռուս պատանիները միալար կանչում էին «молодецъ Ваня»։ Էտպէս էին կոչում ինձ նրանք։ Գնդակ խաղալիս մի մազալու դէպք պատահեց։—Երբ ի միջի այլոց, մի անգամ էլ ուզում էի գնդակ խփել հակառակ բանակի անդամներից մէկին ու մէկին, պատահմամբ Տանիան առջևս ընկաւ ու գնդակը նետեցի։ Գնդակը դիպաւ նրա մէջքին ու ինքն էլ միաժամանակ վայր ընկաւ մի բոյսերով լցւած փոսի մէջ։ Ինքս էլ չկարողացայ նալով արագ վազելուս թափը կանգնեցնել, նոյն փոսն ընկայ ու Տանիայի հետ խոզապարկուկ եղանք։ Քրքիջ բարձրացաւ ու «молодецъ Ваня» կանչեցին։ Մենք տեղներիցս վեր կացանք սաստիկ կարմրատակած։ Մի հաճախ ռուս պատանի էլ սկսեց երգել՝

—Въ маломъ селѣ Ванька жилъ
Ванька Таньку полюбилъ.

Բայց ետ շուտով վերսկսեց մեր խաղն ու էտ փոքրիկ միջադէպը մոռացւեց։

Մայիսի վերջին հեծելազնդերի ձիանները արօտանեբում բաց թողին, ուստի ընդհատւեց մեր՝ գարու և խոտի մատակարարման գործը։ Գործակատարներս ճնացել էինք պարապ։ Բայց մեր խազէյինը էն մարդկանցից չէր, որ մեզ պարապ թողնէր, ու մի գեղեցիկ օր՝ ինձ ու Մոսնին հրամայեց, որ ծառաների հետ միասին քար կրենք։ Սկսւեց տաժանակիր աշխատանքը։ Զորս ծառայ և երկու գործակատարներս օրն ի բուն նիգերով քար էինք հանում և կրում։ Էլ ոչ հագներիս շոր էր ճնացել, ոչ ոտքերնուս կօշիկ։ Եթէ մատներս քարի տակ պլոկւում կամ ջարդւում էր, ասում էինք՝ «էտ ոչինչ, կրկին կլաւանայ, միայն թէ շորերնիս չպատռւէր»։ որ գոնէ կարկանդ չունէինք։ Աղակնոջից տրեխացու կաշի ուզեցի ինձ համար, չտւեց—առարկելով որ ես գործակատար եմ հո հասարակ նոքար չեմ... Էս բոլորը ջհաննամը,—գոնէ մի կուշտ փորով հաց տայիր։ Կերակուրի կամ պանրի համ հո չէինք տեսնում, էն Աստծու պարգևած ցամաք հացն էլ է էնքան չէին տալի, որ աչքներս մի բան տեսնէր։

Ի դէպս յիշում եմ, որ մի անգամ մեր խազէյինը իր խանութի գործակատար Մելքոնին ինչ որ չնչին պատճառով շատ անարգեց։ Մելքոնը դեռ լռեց-լռեց, ապա տաբաւ բերեց ու թէ՝ «ձդա, ասաց, ինչ շատ կբրդես, ահա երկու տարի է, որ քեզ ծառայում եմ ու մին մեծ զատկին եմ կշտացել քո տանը, մին էլ պտի զատկին—»։ Եւ իսկապէս շատ տեղին էր Մելքոնի նկատողութիւնը բոլոր գործակատարներիս վերաբերութեամբ էլ։ Առհասարակ մեր խազէյինը չնչին առիթներով ամենքիս հետ էլ շուտ շուտ կռւում էր ու փողոցային յիշողներով անպատւում, չնայելով որ դրագէտ ու աշխարհ տեսած մարդ էր,

նաև նախկին ասպիճանաւոր։ Զարմանալի բան.—էն օրը, որ նա յատկապէս ինձ հետ էր կռւելու լինում, դրա նախընթաց գիշերը երազում վրէս շուն էր հաչում և նայելով կուի թունդ կամ թոյլ տեսակին, շունն էլ՝ թոյլ կամ թունդ էր յարձակւում բայց և այնպէս մենք միշտ ուրախ էինք ու զւարթ։Քաղցած փորով քար հանելու և կրելու ծանր աշխատանքի միջոցին անգամ, երգում էինք, զւարճախօսում, կատակներ անում ու անհոգ կըրկչում-ծիծաղում։

Կիրակի օրերը միայն լծկանի հանգստանալու խաթեր գործին դադար էինք տալի։ Ծառաները տան զանազան գործերով էին զբաղւում էտ օրերը, իսկ ես ու Մոսին յերթով լծկանն էինք արածացնում։ Տեղական պօլիցիական կազակների խոտհարքը մեր հանդին սնռակից էր, —պահում էր որ մեր եզներից նրանց խոտհարքներն էին գնում ու կազակները բռնում-բանտարկում էին։Մոսին ու ես մեր զրպանից էինք տուգանքը վճարում ու եզները ազատում։

Մի օր էլ իմ հերթին մեր մի լուծ եզը ընկել էր կազակների ղօղուղը։ Էն պահին հասայ, որ մի կազակ մերկ ձիուն հեծած հրէս մեր կորած եզները քշում է, որ տուն անի։ «Ձեմ լեակ չան, զասպադին կազակ, պօժօլուստա, բեր էս մի հետը խնայի, քեասիբ մարդ եմ, մեղք եմ»։ Բան չունէս «убирайся вонъ» ասաց ու եզները հետ ածեց։ Առանց երկար մտածելու վազեցի ու ձեռքիս լխտիկ ճիպոտով տուր թէ կտաս սրա ձիու գլխին ու գլխին։ Զէ ձին ետ փախաւ-կորաւ, իսկ ես եզները վազէ վազ քշելով անվտանգ տուն հասցրի։

Գլ. 32

Լևոնն ու Մոսին խազէյինի խոտհարքներում։ Էնտեղի դէպքերն ու արկածները։ Մոսին ու Լևոնը գնում են Վարանցովկայ զբօսանքի։ Նազլուն ամուսնացած է Վարանցովկայ ամարանոց եկած։

Էն տարին մեր խազէյինը երկու տեղ ընդարձակ խոտհարքներ ունէը վերցրած։ Յուլիսի սկզբներում Զալալօղլու մերձակայ «սպիտակ ջուր» կոչւող խոտհարքի խոտն սկսեցինք հնձել։ Իսկ միւս խոտհարքը «Ղարախաչ» լեռների ստորոտում մի ընդարձակ հովիտ էր, որտեղի խոտը տակաւին խակ էր, Փառք Աստուծոյ քար կրելուց պրծանք։ Թէև խոտհարքում էլ բանում էինք մենք, բայց էնտեղ հազար անգամ աւելի երջանիկ էինք զգում մեզ։ Մոսին հէնց միալար բանում էր, իսկ ես մինչև կէս օր մշակների համար կերակուր էի պատրաստում ու կէս օրերից յետոյ եղանն ու փոցխը վերցնելով, հնձած խոտն էի հաւաքում։ Խոտհարքում գոնէ մշակների շնորհիւ փորներս միշտ կուշտ էր լինում։ Բացի էտ՝ գիշեր-ցերեկ քնութեան ազատ ու հարազատ ծոցում լինելով, մեզ շատ երջանիկ էինք զգում։ Կէս օրւայ բանթողի միջոցին մօտակայ անտառն էինք մտնում մոռ ու ղարաղաթ քաղում ուտում։ Ընդարձակ տարածութեամբ մոռուտ ու ղարաղաթի թփեր կային պտուղներով ծանրաբեռնուած։ Արևի փայլուն ճառագայթների տակ ալ ու մուգ կարմիր գոյներով շողշողին էին տալի մոռն ու ղարաղաթը։ Աւելի ուրախ ու զւարթ էր լինում մեր կենցաղը իրիկնա բանթողից յետոյ։ Ամենքս տարածւում էինք «Սպիտակ ջուր» կոչւող լեռնային վճիտ վտակի ափերն ի վեր ու սառնորակ անուշ ջրով ծարաւնիս յագեցնում, երեսներս ճոփ ճոփ

անում հովանում, ապա թևքերնիս վեր կշտելով, սկսում էինք ձեռքերով ձուկ որսալ։ Սպիտակ վտակի մէջ մանր կարմրախայտ համեղ ձկներ շատ կային։ Ձկների փորը ճղելով, աղ էինք անում ու հէնց էնպէս կրակի շեղջի վրայ խորովում էինք—ուտում։

Մշակների մէջ զուռնա ածողներ էլ կային, որոնք եղէգնից պրկու էին շինել ու միշտ ընթրիքից յետոյ նըւագում էին. մէկն էլ կերակուրի պղնձէ լագանը թմբուկի տեղ բռնած՝ եղանակի տակտով զարկում էր։ Միւսները շուրջպար բռնած՝ եալլի էին տալի ու հետն էլ թուրքերէն երգում։ Երգիչները Աբարանցիք ու Փամբակեցիք էին. նրանք հերթով էին երգում, ամեն մէկը իր բնադաւառի բնորոշ առոգանութեամբ։ Օրինակ Փամբակեցին երգում էր՝

Կղլար կեալն կեօրն մալուլ մուշկիւլ հալըմի.
Եանտի կեարամ սալտի մանի պու տարտա».

Եւ Աբարանցին կրկնում էր՝

«Հայ-հայ,—խղլար գեալն գեօրն մալուլ մուշքիւլ
խալըմի,
Եանդի Քեարամ սալդի մանի բու դարդա»։

Հարիւրի չափ բանուորներ ունէիք մենք՝ Փամբակեցի, Աբարանցի, Լօռեցի ու Ղազախեցի։

Յետոյ շատերը քնում էին, իսկ որոնց քունը չէր տանում, նստում էին հէքեաթներ, առասպելներ պատմում, անեկդոտներ ասում, հանաքներ անում, սրախօսում և երբեմն էլ կռիւ բռնում։

Մի խօսքով էն մի հրաշալի և անմոռանալի կեանք էր։

Մի անգամ մի Աբարանցի և մի Ղազախեցի փահլևաններ լուրջ մարջ եկան ու կռիւ բռնեցին։ Իսկապէս, երկուսն էլ աչքի ընկնող ուժեր էին ու գրեթէ հաւասար։ Երկար քաշքշեցին իրար, բայց ոչ մէկը չէր յաղթում։ Մին էլ յանկարծ Ղազախեցու ոտքը սոթ պրծաւ.—Աբարանցին դէպքից օգտւելով իսկոյն նրա միւս ոտքին խը-

փեց ու վայրգցեց։ Սակայն Ղազախեցին մի ակնթարթում ետ վերկացաւ, ձեռքը Աբարանցու օձիքից առանց բաց թողնելու։ Աբարանցի մշակները անմիջապէս վրայ թափւեցին ու փահլեւաններին իրարից բաժանեցին։ Ղազախեցին միալար պնդում էր որ՝ «թաւը չի» որովհետև իր մէջքը թոզոտ չէր եղել ու հետևապէս ինքը յաղթւած չէր։ Իսկ Աբարանցիք հակառակն էին պնդում։ Քանի գընաց, կռիւը տաքացաւ։ Բանւորները երկու բանակի բաժանւեցին, Ղազախեցիք ու Լօռեցիք մի կողմից, Աբարանցիք ու Փամբակեցիք միւս։ Քիչ էր մնում սուր-սուր գերանդիներով իրար վիզ թոցնէին։ Էլ նոր սառը մտածելու տեղը չէր, մի ակնթարթում կուռղների արանքը նետւեցի ու ճչացի.—Ձեզ մատաղ, իմ գլուխը թոցրէք ու էս մարդասպան կուին վերջ տւէք»։ Բոլորը միատեղ գերանդիները ցած դրին ու ծիացին ապուշ կտրւած։ Իսկոյն Մոսին էլ միջամտեց ու փահլեաններին ստիպեցինք համբուրւելու։

Երազում Նազլուին շուտ շուտ տեսնում էի, բայց միշտ ազօտ ու կիսատ-պռատ։ Մի գիշեր էլ երազում տեսնում էի՝ իբրև ես Շուլաւէրի դպրոցի աշակերտ եմ. այգեքաղի ժամանակն էր։ Նազլուն ու ես, իմ բաղչում միասին խաղող էինք քաղում։ Վճիտ առւակը կարկաչելով հոսում էր մեր մօտով։ Ասում էի՝ «ախ Նազլու ջան, երազումս իբրև թէ մենք իրարից բաժանւել էինք ու երկար ժամանակով հեռացել, ու՝ ես քեզ շատ կարօտել էի, լաւ է որ երազ էր, արագոլի չէր»։ Նա ոչինչ չէր պատասխանում, այլ լուռ նայում էր ինձ ժպտալով։ Մին էլ յանկարծ նրան կանչեցին։ «Վրէյ մերոնք են», ասաց նա ու սլացաւ դէպի այգու խորքը։ Ին գնալն էր ինչ գնաց, էլ ետ չեկաւ։ Սկսեցի որոնել նրան ամեն տեղ, բայց չկար ու չկար։ Սարսափելի վրդովմունքից ուզեցի ճչալ, բայց լեզուս կապւած էր, չը կարողացայ... Վերջ ի վերջոյ զարթնեցի։ «Ահա թէ ո՞րն էր իսկական երազը»—մտքումս ասացի ես։

Սպիտակ Ջրի խոտի հունձը վերջանալուն մօտ էր, որ սկսւեց «Ղարախաչի» խոտհարքի հունձը։ Մոսին գնաց վերև, իսկ ես առայժմ մնացի ներքև։ Մի քանի օրից յետոյ Սպիտակ Ջրի գործը բոլորովին աւարտելով, ինքս էլ գնացի միացայ Մոսնին։

«Ղարախաչ» լեռների ստորոտում էլ լաւ էր, թէև էնտեղ անտառ չկար։ Դրա փոխարէն էլ էնտեղի վտակը Սպիտակ Ջրից անհամեմատ վարար էր. էնպէս որ իրիկւայ բանթողից յետոյ գնում էինք վտակում լողանում։ Էնտեղի մեր բանւորները բոլոր դրագուն գինւորներ էին։ Վարանցովկի մալականների խոտհարքին կից էր մեր խոտհարքը։ Նրանց բանւոր աղջիկները քաղցր երգեր էին երգում, մեզ մեծ հաճոյք պատճառելով։ Որովհետև շաբաթ իրիկունները թէ՛ բոլոր մալականները և թէ գինւոր մշակները չէում էին գիւղն ու երկուշաբթի առաւօտն էին վերադառնում, Մոսին ու ես մենակ մնալով, կիրակի օրերը սաստիկ տաղտկանում էինք։

Մի կիրակի օր էլ խօսքումին արինք ու մեր պովոզկէն խոտով լցնելով, եղները լծեցինք, փառաւորապէս նստեցինք ու ճամփայ ընկանք դէպի Վարանցովկայ—զբօսանքի։ Տեղ հասնելով՝ սայլը մի բակում բաց թողինք ու մենք գիւղի փողոցն ընկանք,—դէս գնացինք, դէն գնացինք, մալականների ժողովարանները մտանք, նրանց կրօնական երգեցողութիւնները լսեցինք ևն. ևն.։

Էնտեղ յանկարծ մի անակընկալ պատահեց.—Վարանցովկի փողոցում հանդիպեցի Շուլաւէրի դպրոցական ընկերներիցս մի քանիսին. կարօտով փարւեցինք իրար։ Նրանք ամարանոց էին եկել ու ինձ աւետեցին, որ «իմ» Նազլուն էլ է ամառանոց եկել իր ամուսնու հետ...։

—?? Տեղս ու տեղս հարցական կտրւեցի։

—Ի՞նչ ես արմացքատար ըլում. քո Նազլուին ձըմեռս պսակեցին մեր գիւղացի մի երիտասարդի հետ ու

հիմի միասին ամարանոց են եկել, բացատրեցին նրանք և ցույց տվին Նազլուի բնակարանը։

Համ կարծես ուրախացայ, համ կարծես սիրտս սուր սլաքներով ծակոտեցին։ Ցետոյ ընկերներիս պատուիրեցի որ ես Նազլուի բնակարանի առջևով կանցնեմ, ասացի, ու թող նրանցից մեկն ու մեկը էտ մոմենտին բարձր ձէնով ինձ կանչի։ Գուցե թէ անունս լսելով Նազլուն դուրս գար պատշգամբ և ես կարողանայի տեսնել նրան։ Մի քանի անգամ անց ու դարձ արի, ընկերներս կանչեցին ինձ, բայց Նազլուն դուրս չեկաւ։ Ոմանք կարծում էին որ երևի չը լսեց, ոմանք էլ ասում էին գուցէ ամուսինը տանն է։ Մինչև իրիկնապահ ով գիտի դարձեալ հարիւր անգամ անց ու դարձ արի նրանց բնակարանի առջևով, բայց տարաբախտաբար Նազլուի սուերն անգամ չերևաց...

Կապարի պէս մի ծանր բան ճնշում էր սիրտս, մարած կրակը նորից բռնկւել էր...

Դէպի խոտհարքը վերադառնալիս՝ անձրև էր մաղում։ Տաղտկութիւնից լացս գալիս էր. դանակ էիր խփել՝ արիւն չէր կաթիլ։

Խոտհարքի գործերը վերջացան և ես առաջւայ պէս վերստանձնեցի իմ պաշտօնը—խոտի ու գարու մատակարարման գործը։

Եղանակները ամարային էին դեռ ու զօրքերը տակաւին բանակ էին դրած Ջալալօղլուց մօտիկ մի ընդարձակ դաշտում։ Ուշ աշունքին միայն չէեցին իրենց նախկին տեղերը։

Գլ. 33

Ջալալօղլեցիների քէֆը։ Լևոնը լրագրական թղթակից։ Ինչպէս են վարւում գաւառական թղթակցի հետ։ Ջ... երկսեռ դպրոցի բացումը։ Պօղոս ագի մեծ գործակատարի հարստանիքը։ Լևոնը պարում է։ Լևոնի քառեակներից երգում են. նրա հիմնադրութիւնը։ Լևոնը ոտանաւորներ է գրում. փորձում է վէպ գրել. նրա համակիւղացի Շողերի ու Գրիգորի սէրը։

Ռուս-թուրքական պատերազմից մօտաւորապէս երեք տարուց յետոյ էր։

Ինչպէս առաջ էլ ասել եմ, Ջալալօղլու բնակիչները բոլորն էլ առևտուրով էին պարապում, ուստի պատերազմի ժամանակ Ղարսի շրջանից փողը չէալներով էին բերել-տները լցրել, Տները փողով լցրել էին ու իրենք նրէիրւել ցոփ կեանքին։—Ուտիլ, խմել, քէֆ, սազանդար,—ահա էս էր նրանց բանն ու գործը։ Մի օր Իվան Նիկիտիչի տանն էր մեծածախս խնջոյք, միւս օրը Սէրգէյ Իվանիչի և էսպէս շարունակ։ Կանայք նոյնպէս ետ չէին ճնում իրենց ամուսիններից, նրանք էլ էին հերթով պիկնիկ սարքում ու սազանդարով քէֆ անում-ժամանակ անցկացնում։ Լիմոնադչի Իլիկոյի ապրանքի մեծ պահանջ կար կանանց խնջոյքներում։ «Լատօ»ն էլ՝ նոր էր մուտք գործել դրանց մէջ և բոլոր կանայք սիրահարւած էին թէ լատօի և թէ սազանդարների խմբի թուրք երիտասարդ երգչի վրայ։ Դա էլ իր տեսակում մօդա էր։ Առհասարակ ամեն մի նորամուծութիւն Թիֆլիսում լոյս ընկնելն և եթ՝ Ջալալօղլում արձագանք էր գտնում։

Ջ...ն շնորհիւ զօրքերի, իր շրջակայ գիւղերից մեծ առաւելութիւն ունէր առևտուրի կողմից, գրեթէ ամեն

տուն մի մի խանութ կամ կրպակ ունէր բացած։ Բացի էտ՝ շրջակայ գիւղերի բնակիչներն էլ էդտեղ էին կատարում իրենց առևտուրը։ Մի խօսքով Զ...ն մի կենդրոն էր Լօռու վիճակի յիսնաչափ գիւղերի համար։ Զալալօղլու ամբողջ հասարակութիւնից միայն երեք թէ չորս մարդ կային, որոնք հայերէն և ռուսերէն լրագիր էին ստանում.—Ճեացողներին ուտել խմելուց դէնը էլ ոչ մի բարօյական կամ մտաւոր կեանք չէր զբաղեցնում։

Ներանց խնջոյքների հէնց թունդ ժամանակներումն էր, որ մի հայ լրագրում մի երկար յօդուած լոյս տեսաւ «Ամօթ Զալալօղլեցիներին» վերտառութեամբ։ Էտ յօդուածում ի միջի այլոց գրած էր որ՝ «Զալալօղլին իբրև Լօռու կենդրոնական մի գիւղաքաղաք, մինչդեռ շրջակայ բոլոր գիւղերի համար բարօյական օրինակ պէտք է լինէր,—ընդհակառակը քայքայիչ ներգործութիւն ունի նա։ Գիւղացիք իրենց նահապետական պարզ կեանքը թողած՝ հետևում են Զ...ցիներին շռայլ ուտել խմելու և շռայլ հագնելու մէջ։ Զալալօղլեցին իր օրը միմիայն անմիտ ու անբարօյական քէֆերի մէջ է անցկացնում, գինու ազդեցութեան տակ բոլորովին բթացել է նրա խիղճն ու միտքը և ուրիշ ձգտում դէպի վսեմն ու գեղեցիկը՝ նրան չի գրաւում։ Զ...ն երկու հարիւրից մօտիկ ծուխ ունի և գրեթէ ամենքն էլ հարուստ են ռուս-թուրքական պատերազմի շնորհիւ, բայց իրենց մատաղ սերնդի համար մի ծխական դպրոց չունեն ևն.»։

Էս յօդուածը հասարակութեան մէջ սաստիկ իրարանցում առաջ բերեց։ Լրագրի էն համարը, որի մէջ էտ չարաբաստիկ յօդուածն էր տպուած, խանութից խանութ, տանից տուն էնքան էին ման ածել, որ մաշել էր։ «Արդեօք ո՞վ կլինի յօդուածի գրողը»—էս հարցն էին տալի իրար, բայց պատասխան չկար։ Վերջապէս կարծիքները գցեցին Տիգրան Վարժապետի վրայ, որը ստանում էր նոյն լրագիրը։ Աւանի առաջաւորներից մի քանի մարդ

դիմեցին Տ. Վարժապետին և առանց ոչ մի բացատրութիւն պահանջելու, էլ յիշոցներ ու անպատկառ խօսքեր չմնաց, որ խեղճի գլխին չթափէին։ Տ. Վարժապետը ճնաշել էր ապշած ու չէր հասկանում ինչին վերագրել աղաների էտ անտեղի յարձակումը։

—Եղբայր, ինչ է պատահել աքր, ես ինչ մեղք ունիմ, որ էտպէս անբարեխղճօրէն անպատուում էք ինձ, վերջապէս կարողացաւ հարցնել նա։

—Ձգիտես հա, տօ անիրաւ, համ մեր թիքովը մարդ ես դառել, համ էլ կազէթումը մեր սաղ օբչեստին *ասկարբիտ* ես անում։ Տ. Վարժապետը նոր գլխի ընկաւ թէ բանն ինչումն էր։ Նա դեռ մի քանի յանդիմանական խօսքեր ասելուց յետոյ,—որ էտպէս անմտօրէն և ի զուր տեղը շօշափել էին իր պատիւը,—երդումներով ու համոզեցուցիչ խօսքերով հաւատացրեց, որ յօդուածի հեղինակը ինքը չէր։ Բայց թէ ո՞վ էր էտ համարձակ արարածը, ոչ ոքի մտքով չանցաւ անգամ նրա վրայ կասկած տանելու։ Ո՞վ կը կարծէր ի հարկէ, որ թէ՝ էտ յօդուածի, թէ՝ մի քանի ուրիշ մանր լուրերի ու յօդուածների հեղինակը կարող էր մի աննշան գործակատար Լևոնը լինել։

Զալալօղլու տանուտէր Իսայի Ներսիսաֆորիչը, որ մի կրակոտ անձնաւորութիւն էր, ամենից աւելի էր զրգռուած յօդուածագրի դէմ, ուստի մի կիրակի օր հասարակական ժողով գումարեց եկեղեցու գաւթում և ի լուր ամենքին մի ճառ արտասանեց։ Ճառի միտքը էն էր, որ պարոն տանուտէրը թէ՝ իր և թէ՝ ամբողջ հասարակութեան պատիւը շօշափած էր համարում էն յօդուածի առիթով, ուստի առաջարկում էր նոյն լրագրում մի ազդու պատասխան գրել ու խմբագրին էլ սաստել, որ անփոփոխ տալի, հակառակ դէպքում՝ въ судъ притащи его, —«ըվ սուդ պրիտաշչիտ եւո»։

Ամբոխը հաւանութիւն տւեց տանուտէրի ճառին, էս տեղից էնտեղից սկսեցին խմբովին աղաղակել՝ «բրաւօ

ատարշինա, բրաւօ, մալադեց»։ Դեռ աղաղակները շարունակւում էին, որ ամբոխի միջից առաջ եկաւ ճուղուր Սարիբէգը։ Դա՝ քառասունին մօտ մի յաղթանդամ տղամարդ էր մեծ մեծ ահարկու խաժ աչքերով, լէն ճակատով ու ոսկեթել թանձր, երկայն բեխերով։ Նրա առաջ գալու հետ ամբոխը լռեց, ճիշտ էնպէս, ինչպէս լճի միջի կըռկըռացող գորտերին քար նետես։ Սարիբէգը աղայական թայֆային չէր պատկանում. նա հասարակ դասակարգիցն էր ու էտ խաւի իսկական ներկայացուցիչը՝ իր անվեհերութեամբ ու շիտակութեամբ։ Ուստի նոյն էտ աղայական թայֆայի վրայ ճնշող ազդեցութիւն ունէր. աղանէրը նրան տեսով տատում էին, իսկ տանուտէրը հօ նրա արիւնն էր խմում։Սակայն չքաւոր դասը ճուղուր Սարիբէգին յարգում և սրտանց սիրում էր։ Սարիբէգի երեւալովը տանուտէր Իսայի Խրիստաֆորիչը ձեռքը թափ տուեց և իր բռնած դիրքից ետ քաշուեց։

—Մ՛յ էլլիգ, խնդրեմ անգալ դրէք, մի երկու խօսք էլ ես ասեմ, հուժկու ձէնով ասաց ճուղուրը Սարիբէգը։ Ամբոխն աւելի ևս շունչն իրեն քաշեց ու սպասողական դիրք բռնեց։

—Թէ կազէթն ո՛վ ա գրել, ով չի գրել, դա ինչ մեր բանն ա, որ ըտուր խաթրու էս խալխին զուր գլխացաւանք են տալի։ Դուք էն ասէք, գրածը դրուստ ա թէ սուտ,— ես ու իմ Աստծը, որ բոլորն էլ դրուստ ա։ Սարիբէգը հազաց, կոկորդը մաքրեց ու նորից շարունակեց։

—Ասէք տեսնեմ, ո՞րը չի դրուստ. մենք հմի ինչի՞ չունենք ըշկոլ համ տղերանց համ աղջկերանց համար։ Պարոն աղէք, որ անուշիերդ «աղա» էք դրել, չունքի մահուդ չուխա էք հագնում, հալա մի ասէք՝ ձեր ինչն ա աւել ուսուտեցի գեղըցուց։ Բա սուտ ա գրել կազէթը՞, Քանս թէ վճռում էք, որ նոր նրա պատասխանը գրէք ու խայտառակէք, հազիր մեր ողջ օրչեստը էստեղ ա, եկէք

մի օրչի պրիգավոր շինենք,ամենքս մեր կարողութիւնն ի գեօրա վող վեր գանք ու մեր բեխանց համար ըշկոլ բաց անենք։ Ըսէնցով համ մեր զաւակնին ուսում կառնուն, լիզու կը սովորեն-մարդ կը դառնան, համ էլ մի լաւ ասնում կը բարձրացնենք։—Ըհը՛, ես իմ քեասիբ տեղս էսքանը տալիս եմ», ասաց Սարիբէգն ու գրպանից մի ծիածանագոյն հարիւրանոց թղթադրամ հանեց։

Ամբոխը ցնցւեց, միաժանակ բոլորի սրտի մէջ ինչ որ հեղաշրջում տեղի ունեցաւ։ Ջալալօղլեցի աղաները, որ ամեն անգամ հակաճառում էին ճուղուր Սարիբէգին ու միշտ նրա՝ յօգուտ հասարակութեան արած առաջարկութիւնները խափանում,—էս անգամ դեռ սկզբից թէև լոկ մեքենաբար համաձայնւեցին նրա հետ, բայց շուտով գիտակցութեան գալով, հէնց իրենք գործի գլուխն անցան։ Նոյն ժողովում համախօսական թերթ կազմւեց և երեք պատւաւոր մարդ ընտրելով, թերթն իրենց յանձնեց պատկառելի տանուտէրին։ Էնց նոյն ժամին էլ նշանակեցին ժողովարարութիւն սկսելու։ Էնց նոյն ժամին էլ հասարակութիւնը թերթն ստորագրելով, գումարը հաւաքելով, պատկառելի տանուտէրին ցրեց պատկառելի տանուտէրնց հազարին։ Յետոյ թերթը տուն տուն ման ածելով, կանանց էլ ստորագրել տուին. էնպէս որ երեք օրւայ ընթացքում, ընդհանուր գումարը քսան հազարից անցաւ։ Լրագիրներն էլ խօսեցին, գովեցին. շուտով մինչև լրագրում լոյս տեսաւ մի գովասանական յօդուած Ջալալօղլու հասարակութեան վերաբերութեամբ։

Մի քանի օրից յետոյ, կրկին ժողով գումարելով, ասանի առաջաւորներից չորս մարդ ընտրեցին իրրև հաւատարմատարներ ու ապագայ հոգաբարձութեան թեկնածուներ. որոնք հարկաւոր վաւերաթղթերն ստանալով մեկնեցին Թիֆլիս։ Դրանցից մէկը Պօղոս աղէն էր։ Հոգաբարձութեան թեկնածուները երկսեռ դպրոցի իրաւունքը ձեռք բերելուց յետոյ, իրենք էլ հաստատեցին հոգաբարձութեան պաշտօնում ու նոյն թւականի աշունքին երկսեռ դպրոցը բացւեց շքեղ հանդիսով։

Ջալալօղլու երկսեռ դպրոցի քարէ շինութիւնը գըտնուում էր մի ընդարձակ հողաբաժնում: Ջնայելով որ աշունք էր, բայց դպրոցի ընդարձակ բակը տակաւին հարուստ էր մախմուրէ կանաչ խոտերով: Տերևախիտ վիթխարի լորի ծառերը աւելի ևս գեղեցկութիւն էին տալի դպրոցի բակին: Մի արևոտ հիանալի օր՝ դպրոցի բակում, լորենիների տաւերների տակ, մեծ տարածութեամբ սեղաններ էին շարուած սպիտակ սփռոցներով: Սեղանների վրայ առատ ուտելեղէն ու զօրքի պէս շարուած դանագան խմիչքեղէնի ու գինու շշերն էին դարսած: Շուտով հաւաքուեցին նորընտիր հոգաբարձուները, ուսուցիչ ուսուցչուհիները և աւանի յայտնի վաճառականները. եկաւ նաև տեղական պօլիցիական պրիստաւը: Նւագում էր տեղական զօրագնդերից մէկի երաժշտական խումբը: Իսկ աւանի երիտասարդութիւնն ու պատանիները, սեղանից հեռու խումբ խումբ կանգնած թամաշա էին անում:

Քէֆը սկսուեց, Պրիստաւը սեղանի կառավարիչ ընտրուեց. Նա շամպանիայի փրփրուն գինու առաջին բաժակը առաջարկեց Ալէքսանդր II ազատարար կայսրի կենացը: Ամենքը մէկէն ոտքի ելան: կենացը ընդունուեց որոտընդոստ ուռաներով. երգեցին Боже царя храни ռուսական հիմնը. նոյնը նւագեց գինուորական երաժշտական խումբը: Ապա մէկը միւսի ետևից խմեցին կովկասի փոխարքայ ժողովրդասէր Միխայէլ Նիկոլաևիչի, ամենայն հայոց Գէորգ դ. ուսուցչասէր կաթողիկոսի, թեմակալ Գ. Այվազեան գիտնական եպիսկոպոսի, աչալուրջ ու արի պրիստաւի, ժրաջան հոգաբարձուների, աղա վաճառականների, աշխատասէր ուսուցիչ-ուսուցչուհիների, Ջալալօղլու ամբողջ երկսեռ հասարակութեան կենացները ևն. ևն.:—Էսպէս մի փառահեղ քէֆ անելուց յետոյ, ուրախ և գործի տրամադրութեան տակ ցրուեցին:

Խազէյինիս մեծ գործակատարը, որը պատերազմի սկզբում հեռացել էր, հիմի նորից նոյն պաշտօնով Պօղոս աղի մօտ էր: Դա նշանակած էր տեղացի մի օրիորդի վրայ, որոնց հարսանիքը տեղի ունեցաւ էս ձմեռ: Հարսանիքին հրաւիրուած էր և Պօղոս աղէն: Իսկ ես՝ իմ պաշտօնակից մեծ գործակատարի հարսանիքում սպասաւորի դեր էի կատարում: Ընթրիքը վերջանալուց յետոյ սկսեցին պարերը. սկզբում աղջիկ ու տղա հերթով կենտապար էին պարում: Խազէյինս ինձ էլ առաջարկեց պարել. ուղղակի սրտից ջուր խմեց: Երեխայ ժամանակս մեր գիւղում աչքի ընկնող պարող էի ես և հիմի զուռնա դըհօլի ձէնը ոսկոռներս էր ընկել: Իսկոյն մէջ ընկայ և եօթը պարի է ածում, իսկ ես շշկլտելուցս «Ջիրիդ» եմ գնում: Էստեղից էնտեղից ձէն տւին, «կամաց, կամաց»: Մինչև գլխումս մտաւ ու պարս յամրացրի, զուռնաչին արդէն արագացրել էր նւագելու եղանակը: Ընդհանուր ծիծաղի տակ ասպարէզից դուրս եկայ սաստիկ ամօթահար: Յետոյ սկսեցին եալլին: Տղա աղջիկ մին ու մէջ կռնաբռնուկ արած ծովի պէս ծփալով սօրօլ էին տալի, սկզբում նազաճեմ, ապա աստիճանաբար արագացնելով: Ծաբում նազաճեմ, ապա աստիճանաբար արագացնելով: Ծանրը պարելու միջոցին, հետն էլ ժողովրդական քառեակներ էին երգում: Ի միջի այլոց՝ ականջովս ընկան իմ հնարած Նազլուի խաղից կտորները՝

«Թել-թել շէկլիկ մազերդ,
Նախշուն ծով ծով աչքերդ,
Ինձ անդանակ մորթել են,
Առանց թոկի կապել են:
Մթնի՝ դուրս արի բաղչէս,
Սիրով էրած եարիդ տես. ևն. ևն.:

Սիրտս թունդ ելաւ, անսահման ուրախութիւնից էլ չկարողացայ տեղս հանգիստ նստել: Պարը վերջանալուն պէս, երգող օրիորդներից մէկին դիմելով հարցրի թէ՝

«Էն ինչ քառեակները որտեղից է լսել»։ Անհամբեր սպասում էի որ հիմի ժպտալով կպատասխանի, թէ՝ ի հարկէ իրեն քաջ յայտնի է որ դրանք Լևոնիս բանաստեղծութիւններից են։ Սակայն որքան եղաւ զարմանքս ու հիասթափութիւնս երբ օրիորդը բոլորովին սառն ու անտարբեր պատասխանեց՝ «Էհ, ժողովրդական կտորներ են Էլի»։

Երբեմն երբեմն սիրահարական ոտանաւորներ էի գըրում։ Մի անգամ էլ միտք յղացայ մի վէպ գրել։ Նիւթը մեր գիւղացի Շողերի ու Գրիգորի սէրն էր։ Էս անցքը իմ մանկութեան օրերում էր տեղի ունեցել։ Շողերի յօրինած երկար երգը մեր գիւղի հարսն ու աղջիկը միշտ էլ երգում էին։ Ես ինքս էլ էի յաճախ երգում զգացած ու էրւելով։ Մի քանի ձևերով սկսեցի շարայարել էդ վէպը. քանի քանի էջեր էլ մրոտեցի, բայց բոլորն էլ կիսպը. քանի քանի էջեր էլ մրոտեցի, բայց բոլորն էլ կիսատ մնացին,—բան չդարձաւ։ Բովանդակութիւնը էս էր՝

Մեր գիւղացի 15–16 տարեկան Շողերը սիրում է եղել իրենց հարևան՝ երիտասարդ բայց քեռոփը Գրիգորին։ Սակայն ծնողները աղջկայ կամքին հակառակ, նրան նշանում են Համամլեցի մի հարուստ, բայց հասակաւոր տղամարդու հետ։ Դրանից զզուած՝ Շողերը երգ է յօրինում։

Համամլեցիք վայ են բերել, վայ են բերել,
Փայ չեն բերել վայ են բերել, Գրիգոր Ջան.
Մի պլոկած հաւ են բերել, հաւ են բերել,
Հաւ չեն բերել ցաւ են բերել Գրիգոր Ջան ևն.։

Շողերին բռնի ամուսնացնում են Համամլեցու հետ։ Երեք ամիս հարս մնալով, նա քանիցս անգամ փորձում է ետ փախչել, բայց ետևից հասնում են ու ծեծելով ետ տանում։ Վերջ ի վերջոյ մի անգամ էլ իր ամուսնու շորերը հագնելով, ծպտած, աղողեցնում է և գիշերով մենակ փախչում Փամբակի և Լօռու վիթխարի սարերով ու անտառոտ ձորերով։ Էդ ճանապարհորդութիւնը մի քանի գիշերներ է տևում... որովհետև ցերեկները թաղ-

նելիս է եղել։ Ասում են նրան աղողած է եղել իր կուսութիւնը անարատ պահել։ Ծննդավայրը վերադառնալով, լրացնում է իր յօրինած երգի շարունակութիւնը։

Երեք ամիս հարս եմ կացել, հարս եմ կացել,
Բարգեդանքին պաս եմ կացել Գրիգոր Ջան,
Սար ու ձորեր անց եմ կացել, անց եմ կացել
Ետ եմ եկել ղլիս դուռը, Գրիգոր Ջան. ևն.։

Գլ. 34.

Ջալալօղլու դպրոցի դահլիճում հասարակական դասախօսութիւններ են սկսում։ Լևոնը ծածուկ յաճախում է դասախօսութիւններին։ Դասախօսութիւնները դադարում են։ Դ. գիւղի քահանայի որդի Սուրէնը Ջ...ի դպրոցի աշակերտ։ Ուսուցչուհի օր. Հեղինէն։ Լևոնը մտերմանում է Սուրէնի հետ։ Սուրէնի հակիրճ տոհմաբանութիւնը։ Բագրատն ու իր խանութը։

Ջալալօղլու երկսեռ դպրոցի բացելուց մի կարճ ժամանակից յետոյ, տեսչի նախաձեռնութեամբ հիմք դրեց կիրակնօրեայ հասարակական դասախօսութիւններին։ Մուտքը, որ բոլոր տեղերի համար մի ռուբլի էր նշանակած,—յօգուտ դպրոցի էր։ Դասախօսութիւնները տեղի ունէին կիրակի իրիկունները դպրոցի դահլիճում։ Սկզբի իրիկունը իմ խազէյինը ինձ էլ իր հետ տարաւ, որպէսզի էնտեղից ուշ վերադարձին ուղեկցեմ իրենն։ Նա պատւիրեց ինձ պատշգամբում սպասել մինչև իր դուրս գալը։ Բայց ես նրա ներս մտնելուց յետոյ մի ռուբլի վճարելով, ինքս էլ ներս մտայ ու ետևի շարքերում բազմութեանը խառնուելով, էնպիսի մի տեղ բռնեցի, որ խազէյինս ինձ տեսնել չկարողանար։ Հասարակութիւնը էնքան էր լցրել դահլիճը, որ ինչպէս ասում են ասեղ գցե-

լու տեղ չկար։

Առաջինը խօսեց տեսուչը. նա հակիրճ և ազդու խօսքերով բացատրեց ուսման մեծ նշանակութիւնը։ Յետոյ ուսուցիչներն ու ուսուցչուհիները հերթով կարդացին մեր ազգային նշանաւոր գրողներից ոգեշունչ բանաստեղծութիւնները և ընտիր արձակ յօդուածներ։ Իսպէս բան, իմ կեանքում առաջին անգամն էի տեսնում։ Տեսչի հմայիչ ու ոգևորիչ խօսքերը, ազգային բանաստեղծութիւնների վսեմ ազդեցութիւնը, մէջ բերած ընտիր հատուածների ի մաստալից դարձուածքները զգացմունքներս տակն ու վրայ արին ու ինձ սկզբին տարան մի վերացական աշխարհ։ Դրանից յետոյ, որտեղ էլ որ լինում էի, կիրակի իրիկուները միշտ մի կերպ ինձ զգում էի Ջալալօղլի որպէսզի խազէյինս չիմանար, ձին ուրիշ տեղ պահ էի տալի ու ինքս գնում դասախօսութիւն լսելու։

Դժբախտաբար դասախօսութիւններին յաճախող հասարակութիւնը հետզհետէ նւազում էր. էնպէս որ, մի իրիկու էլ գնացի տեսայ դահլիճը փակած, ճրագները մարած,—դասախօսութիւն չկար։ Հետևեալ օրը դիմեցի պ. տեսչին պատճառն իմանալու։ «Ցաւօք սրտի պէտք է ասեմ, որ այլևս դասախօսութիւններ չեն լինելու, որովհետև հասարակութիւնը չէ յաճախում»,—հակիրճ պատասխանեց նա։

Արդէն միջօրէի դասամիջոցն էր և աշակերտ-աշակերտուհի դպրոցի ընդարձակ պարտիզում խաղում էինք։ Նրանց միջից մի պատանի աչքիս ընկաւ, որը իր ուրոյն արտակարգ գեղեցկութեամբ գրաւեց իմ ուշքը։ Էնտեղ ուրիշ գեղեցիկ պատանիներ էլ շատ կային, բայց նա ոչ մէկի նմանը չէր։ Որ նա Ջալալօղլեցի չէր, էտ ինձ համար շատ պարզ էր և եթէ Ջ...ու պէս մի աւանում նրա նման մի ուրիշը չկար, հապա գիւղերում ինչպէս կարող էր լինել, էսպէս մտածեցի ես։ Նրա դէմքի արտայայտութիւնը, որը էր տուել, որ 11-12 տարեկանից աւելի

չէր նա, բայց վայելչակազմ հասակը անհամեմատ բարձր էր։ Նրա մշտաժպիտ նուրբ գեղեցիկ դէմքը, բարեսիրտ աշխուժութեամբ ու կենսալից սևորակ աչքերով, հասակի հետ ներդաշնակող արծաթի քիթը, ազնուութիւն արտայայտող սպիտակ ճակատը, պսակւած թուխ ու գանգուր մազերով—կհմայէր ամեն մի նայողի։ Սակայն ինձ գրաւողը լոկ նրա ֆիզիքական գեղեցկութիւնը չէր։ Էդ պատանուն մէջ մի ինչ որ հոգեկան գերազանցօրէն դիւթիչ բան կար, որը իմ ուշքը էնպէս գրաւեց և, որի արտայայտելը շատ դժւար է։ Դպրոցից հեռացայ, բայց էն պատանին իր ամբողջ էութեամբ մտքիցս չէր հեռանում։ Նա ինձ վրայ մի առասպելական գեղանի, պարզ ու վեհ արքայազնի տպաւորութիւն թողեց։ Էն րոպէից ես բուռն ցանկութիւն զգացի անպատճառ նրա ով լինելն իմանալու։

Ջալալօղլու դպրոցի ուսուցչուհիներից մէկը, Հեղինէ անունով մի օրիորդ էր, որին դեռ մի տարի առաջ իմ խազէյինն էր բերել Թիֆլիսից տնային դաստիարակչուհու պաշտօնով—իր զաւակների համար։ Դպրոցում ուսուցչուհի ընդունելուց յետոյ էլ, օրիորդը ապրում էր իմ խազէյինի տանը, որի փոխարէն պարապում էր նրա որդիների հետ և տանը։ Իմ խազէյինը էն տեսակ մարդ էր, որ իր ձեռքի տակի բոլոր մարդկանց նայում էր զուտ առևտրական տեսակէտից։ Օրինակ, Հեղինէն իր պաշտօնից դուրս չէր նում տնային էն բոլոր գործերը, ինչ որ միմիայն աղախնին էր վայել։ Էդ դեռ ոչինչ, աղէն իր տւած մի կտոր հացի փոխարէն նրանից պահանջում էր ամեն բան։ Նա իր գործակատարներին էլ, որոնց թւում և ինձ, իր ստորին ծառաներից չէր զանազանում։ Բայց թէ Հեղինէն, թէ ես, փափկակեաց չէինք, մենք՝ կոպիտ ու կեղտոտ գործեր շինելուց չէինք խորշում, միայն թէ մեզ հետ մարդավայել վարւէին, մեր մարդկային արժանապատւութեան զգացմունքները չվիրաւորէին, ոտնակոխ չանէին։—Ահա էս հանգամանքները իմ ու Հեղինէի

մէջ մի խուլ բողոք էին ծնեցրել դէպի մեր աղէն ու մեզ փոխադարձաբար մօտեցրել իրար։ Ես իմ մէջ ափսոսում էի, որ նրա պատիւը ոտնակոխ էին անում. իսկ նա էլ իմ մասին էր ափսոսում ու ցաւում միևնոյն բանի համար։ Ի հարկէ մենք իրար չէինք ասում էս բանը, բայց հասկանում ու զգում էինք միմիանց։ Մենք երկուսով աղի միւս ծառաների ու աղախինների վրայ էինք ցաւում, որոնք անքան գրասիրից էլ սուր նշանակութիւն ունէին նրա աչքում։

Դպրոցից վերադառնալով՝ ես անհամբեր սպասում էի Հեղինէին որև նրա տուն հասնելուն պէս, հարցրի էն ուսանող պատանու մասին, որը գրաւել էր իմ ուշքը։ Էնպէս ճշգրիտ նկարագրեցի, որ Հեղինէն իսկոյն հասկացաւ։

—Սուրէնը,—նա Դ.գիւղի քահանայի որդին է, ասաց, բայց գիտեմ Լևոն, նա մի վերին աստիճանի ազնիւ ըզգացմունքների տէր պատանի է ու մեր դպրոցի ամենաառաջադէմ աշակերտը։

—Դ. գիւղի քահանայի որդին,—ես Սուրէնի հօրը լաւ եմ ճանաչում, յայտնի օջախ են նրանք ու Հեղինէին կարճ պատմեցի նրանց տոհմի պատմութիւնը, որքան ինձ յայտնի էր։

Որ նրանք, ըստ աւանդութեան, Վարդան Մամիկոնեանի պատմական տոհմից են սերուած, որ Սուրէնի հօր պապը յայտնի քաջ Յովակիմն էր, որի ազգօգուտ քաջագործութիւնները յաւերժացրել է Ե. Աբովեանը իր անմահ «Վերք Հայաստանի» գրքում, որ Սուրէնի պապն էլ նշանաւոր քաջութիւններ է եղել արած, որի համար արժանացել է Ռուսաց Կայսրից աստիճան ու ազնուական տիտղոս ստանալու։ Իսկ Սուրէնի հայրը,—որի հետ մօտիկ ծանօթ եմ,—չնայելով որ քահանայ է, բայց մի վերին աստիճանի անշահասէր, բարի, մարդասէր, հիւրասէր, հացով ու սրտաբաց մարդ է։ Թէև ինքը հարուստ չի, բայց

հակառակ մեր քահանաների մեծամասնութեանը, նա իր չքաւոր ժողովրդից երբէք տուրք չի վերցնում. դեռ բոլորովին անճարներին էլ՝ իր գրպանից է օգնում։ Ինչպէս ինքը իր ժողովրդին է սիրում, էնպէս էլ իր ժողովուրդն է նրան սիրում ու յարգում։

Ի դէպս, Հեղինէին խնդրիցի որ աչք ունենայ Սուրէնի վրայ, որպէսզի ծնողներից հեռու լինելով, օտարութիւն չքաշի։

—Միամիտ ճնճ, ասաց նա, մինչև հիմա ես նրան նայում էի ինչպէս լաւ աշակերտի, իսկ այսուհետև կը նայեմ իբրև հարազատ եղբօր վրայ։

Մի քանի շաբաթից յետոյ, Սուրէնն ու ես պատահմամբ հանդիպեցինք հօրեղբօրս աներոջ որդի Բագրատի խանութում. էնտեղ նա գրիչներ էր առնում, իսկ ես ըստ սովորականին գնացել էի զրից անելու։ Բագրատին բարևելուց յետոյ, առանց որ և է ձևականութեան ողջունեցի նաև Սուրէնին։

—Ախր ես քո հօր հետ լաւ ծանօթ եմ, ասացի, դու ինձ բարև էլ չես տալի։ Բագրատը պատմեց իմ ով լինելը։

—Մինչև հիմա չգիտէի, իսկ այսուհետև կճանաչեմ իբրև հօրս լաւ ծանօթի, ասաց Սուրէնը, կարծես ուրախանալով որ ես իր հօր ծանօթն էի։

Դրանից յետոյ, Ջալալօղլում եղածս մէջոցներին երբ խազէյինս ինձ մի տեղ բանի էր ուղարկում, միշտ դպրոցի մօտովն էի անցնում։ Եւ եթէ դասամիջոցների ժամանակն էր լինում, կանգնում էի աշակերտներին ու ակերտուհիներին նայելու, որոնց մէջ էր լինում իհարկէ և Սուրէնը։

Մի անգամ էլ երբ Սուրէնին պատահեցի Բագրատի խանութում, նկատեցի որ նրա առոյգ դէմքը գալկացած ու աչքերի տակը բաց է կարուած։ Էս հանգամանքը սաստիկ շփոթեցրեց ինձ. մտքովս զանազան աննպաստ նեթաղրութիւններ անցան. բայց շուտով մի որոշ եզրա-

կացութեան գալով, կատակի ձևով հարցրի թէ՝ արդեօք սիրահարւած հօ չի նա։ Սուրէնը դեռ ցնցւեց, ապա կարմրեց ու իր մշտական ուրոյն ժպիտը դէմքին հարցրեց՝ թէ ինչից գիտեմ ես էտ բանը։

—Էտ բանը ես դէմքիցդ եմ նկատում, ասացի ծիծաղելով ու իսկոյն խօսքս փոխեցի, որպէսզի պաշտօնական խնամատարի տպաւորութիւն չթողնէի նրա վրայ։

Էստեղ ուզում եմ դեռ Սուրէնին թողնել ու մի քանի խօսք ասել Բագրատը կամ ինչ բան նրա խանութը։

Գլ. 35.

Բագրատն ու իր խանութը։ Սուրէնի սիրահարութիւնը և նրա հետ պատահած դէպքը։ Սուրէնի գրած ոտանաւոր-նամակը։ Ուսուցչուհի օր. Հեղինէն ու Լևոնը։ Պօղոս աղի ու Լևոնի մէջ երկպառակութիւն է ծագում։ Լևոնը ընդմիշտ հեռանում է խալէյինից։ Լևոնը որոշում է ուսում առնել ու բանաստեղծ դառնալ։ Ջալալօղլու դպրոցը փակւում է։

Բագրատին Լօռու բոլոր գիւղացիք լաւ էին ճանաչում, որովհետև նրա խանութը մի տեսակ կենդրոնավայր էր ամենքի համար։ Նրան ճանաչող բոլոր գիւղացիք պըբիստաւի մօտ գանգատի կամ ուրիշ գործով եկած միջոցին, նրա խանութումն էին իջնում։ Նրա մօտ էին հաւաքւում իրար տեսնելու կամ զանազան գործեր կատարելու համար.—զրօրբինակ՝ խնդրագիր, պայմանաթղթեր գրելու կամ որևէ վէճ Բագրատի միջնորդութեամբ վերջացնելու են.։ Որովհետև ամբողջ Լօռու վիճակում միայն Ջալալօղլում կար պոստ ու հեռագրատուն, ուստի միւս գիւղերում ապրող մարդիկ, որոնք պոստի հետ գործ ունէին, Բագրատն էր դրանց կորրեսպոնդենտն ու միջոր-

դը,—նա էր ստանում և անկորուստ տէրերին հասցնում ամեն բան։ Նմանապէս ամեն մի ծանօթից ու անծանօթից անդամ պատւէրներ էր ընդունում ու կատարում,—մէկի համար կօշիկներ էր կարել տալի, միւսի համար հարսանիքի առուտուր էր անում ևն. ևն.։

Ջալալօղլում գտնւող գաւառացի գործակատարների մի խմբակ, որոնց թւում և ես, մեր գիշերւայ ազատ ժամերը նոյնպէս Բագրատի խանութումն էինք անցկացնում։ Մեր օրւայ կրած ֆիզիքական ու բարոյական զրկանքների փոխարէն, էնտեղ էինք մխիթարութիւն գտնում։ Նրստում էինք երկար ու բարակ զրից անում, հէքեաթներ, առասպելներ պատմում, առակներ ու անեկդոտներ ասում, մի խօսքով իսկական Լօռըցու քէֆ անում, առանց ուտել-խմելու, և ուրախ տրամադրութեան տակ ցրւում։ Յաճախ էր պատահում որ գաւառացի գործակատարներս փողի սուր կարիք էինք զգում, էտ դէպքերում էլ միշտ մեր բարի բարեկամ Բագրատն էր մեզ ձեռք բռնում։ Ջալալօղլու դպրոցի բացւելովը, Բագրատի համար մի նոր պաշտօն էլ աւելացաւ,—էտ էն էր, որ շրջակայ գիւղերից եկած դպրոցական աշակերտների հոգսը նա էր քաշում, դասական պիտոյքների, ուսման վճարի, հագուստի մասին ևն.։ Ի հարկէ էտ ծախքերը իրենց տէրերի հաշւին էր անում։

Բագրատի խանութում Սուրէնի հետ երկրորդ անգամ տեսնւելուց յետոյ տուն վերադառնալով, նրա սիրահարութեան մասին իմ ունեցած կասկածը հաղորդեցի Հեղինէին։ Նա, ըստ երևութին նշանակութիւն չտւեց իմ խօսքերին, ուսերքը վեր քաշեց ու ոչ մի բառ չասաց։ Սակայն մի քանի օրից յետոյ, մի անգամ էլ երբ դպրոցից եկաւ, զարմանալով պատմեց թէ ինչպէս ճիշտ դուրս եկաւ իմ գուշակութիւնը։ Սուրէնի սիրահարութեան մասին, «որը յայտնւեց մի անախորժ դէպքով», աւելացրեց նա։ Ես՝ համբերութիւնից դուրս գալով, սոխպեցի նը-

բան շուտ պատմել պատահած դէպքի մասին։ Եւ ահա բանից լինչ դուրս եկաւ։

Դու մի ասիլ Սուրէնը սիրահարւած է եղել մի դպրոցական աշակերտուհու վրայ, որի հետ սիրային նամակագրութիւններ են ունեցել։ Դժբախտաբար տեսուչը էտ բանը իմացած լինելով, երեք աշակերտի Սուրէնի վրայ լըրտես է կարգած լինում։ Դրանք Սուրէնին բռնում են «յանցագործութեան» տեղը։ Իսկ էտ «յանձագործութիւնը» էն է եղել, որ Սուրէնը դասամիջոցին առանձնացած է եղել դպրոցի պարտէզի խորքերն ու մի ծառի տակ նստած, իր սիրած օրիորդի վրայ նամակ գրելիս։ Եւ Հեղինէն գրպանից հանեց Սուրէնի գրածը, որ հետևեալն էր.

«Հոգոյս հատոր,
Սրտիս կտոր,
Դասիս համար
Դու մի հոգար։
Թէ կան դասեր.
Կայ նաև սէր,
Եւ ինչ զարմանք
Իմ աղաւնեակ՝
Որ կենդանի
Մի պատանի,
Սէրը սրտում
Դաս է սերտում։

Մինչև անգամ տեսուչը ուզել է, որ Սուրէնին ոտգով ծեծի, բայց Հեղինէի միջամտութիւնը մեղմացրել էր նրա բարկութիւնն ու Սուրէնին փրկել։

—Բայց ես զարմանում եմ թէ ինչպէս տասներկու տարեկան մի պատանի կարող է սիրահարւել, աւելացրեց Հեղինէն։

—Զարմանալու ինչ կայ որ, ասացի ես կարկամելով։

—Ի՞նչպէս թէ՝ «ինչ կայ», բայց նա երեխայ է, էտ հասակում միմիայն մանկական խաղերը պէտք է գրաւեն նրան և ոչ թէ սիրային արկածները։

—Թէ ինչպէս պէտք է լինի, ես վիճել չեմ կարող իհարկէ, միայն թէ... ասում եմ, որ միանգամայն հաւանական է,—մանկական խաղերից մէկն էլ թող էտ լինի, ինչ կայ որ։ Հեղինէն ծիծաղը զսպեց։

—Ուրեմն ինչպէս երևում է փոքր ժամանակդ դու էլ ես եղել սիրահարւած, ասաց Հեղինէն ու աւելացրեց՝ բայց մի ուրիշ զարմանալու բան էլ ասեմ,—ինչպէս նկատում եմ Սուրէնը միաժամանակ ուրիշ իրեն հասակակից աշակերտուհիների վրայ էլ է սիրահարւած։

—Դրանում էլ զարմանալու ոչինչ չեմ տեսնում։

—Ի՞նչպէս։

—Գիտեմ ինչպէս, բայց ասում եմ որ էտ էլ կարող է պատահել։

—Օհօ, ա՛յ քեզ նոր բան. իսկ դու ոտանաւոր չե՞ս գրում, ծիծաղելով հարցրեց Հեղինէն։

—Ոչ, պատասխանեցի ես։ Թէպէտ բաւականաչափ ոտանաւոր գրւածքներ ունէի ես, բայց համոզւած լինելով, որ դրանք գրական արժէքից զուրկ բաներ էին,—թաղցրի։

—Ո՛չ, երևի ինձ խաբում ես. մանկական հասակում միմիայն յայտնի բանաստեղծներն են սիրահարւել և գրել սիրոյ բաներ, օրինակ ինչպէս՝ Հէյնէ, Շէքսպիր, Լերմոնտով, Պուշկին ևն.։

—Ուրեմն Սուրէնը բանաստեղծ է, նրա խօքն ընդհատելով հարցրի ես։

—Որ գնայ ուսում առնի-զարգանայ, կարող է յայտնի բանաստեղծ դառնալ։

Հեղինէի խօսքերն ինձ միանգամայն ցնցեցին ու սաստիկ յուզեցին։ Ես էլ ոչինչ չխօսեցի. բայց իմ ու Սուրէնի միջև նմանութիւն տեսնելով, մտքովս անցաւ, որ ուրեմն եթէ ես էլ կարողանամ ուսում առնել, գուցէ ես էլ բանաստեղծ դառնամ։ Եթէ Հէյնէ, Լերմոնտով ու

միւսները մանկական հասակում սիրահարւել են, ես էլ եմ էտ հասակում սիրահարւել, եթէ նրանք ոտանաւորներ են գրել, ես էլ եմ գրել. հապա ինչո՞ւ ուսում չառնել ու բանաստեղծ դառնալ։

Սակայն մոռանում էի, որ Սուրէնը տասներկու տարեկան էր, իսկ ես տասնևութ։

Ու էն օրից դէնը միալար էն էի մտածում էթ ինչպէս անեմ, որ կարողանամ ուսում առնել։

Դարձեալ ուշքս ուսման տալով, սկսեցի իմ պաշտօնն առել ու գիշեր ցերեկ ուսման վրայ մտածել։ Ես հանգամանքը իմ կասկածամիտ խազէյինի աչքից չվրիպեց ի հարկէ. որի պատճառով երկպառակութիւն ծագեց մեր մէջ ու ես վերջ'ի վերջոյ ընդմիշտ հեռացայ նրանից։

Ջալալօղլուց մինչև իմ բոլորովին հեռանալը, Սուրէնի հետ շատ անգամներ էինք պատահել Բագրատի խանութում։ Նրա՝ դէպի ինձ տածած վստահութիւնը փոխւել էր սրտակից համակրանքի և մենք փոխադարձաբար մտերմացել էինք։

Իսկ Ջալալօղլուց մեկնելուցս մի քանի ամսից յետոյ լսեցի, որ էնտեղի դպրոցը փակւել է, փողերը հատնելու պատճառով։ Բայց թէ ինչ եղաւ կամ ուր գնաց Սուրէնը —ինձ յայտնի չէր ոչինչ։

ՎԵՐՋ

ՎԵՐՋԱԲԱՆ

Գրքոյկիս շարադրը արդէն աւարտելուն մօտ էր, որ գարնան աւետաբեր ծիծեռնակի նման հիւսիսից մեզ հասաւ ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան ըղձալի լուրը. որին՝ աւելի կարօտով սպասում էր հայոց հալածւած, ճնշւած, յօշոտւած, ու արիւնլայ ժողովուրդը։ Իհարկէ սա գրւած լինելով Ռոմանովների գահակալութեան հայատեաց ու հայակուլ օրերում, ցենզօրի ահից չէը կարելի աւելի ազատ լեզու գործածել։

Եւ եթէ էս գրքոյկը շատ ու քիչ ընդունելութիւն կը գտնի ընթերցողների ջրջանում և պ. պ. քննադատների ուշադրութեանն էլ կարժանանայ—թէկուզ բացասական կողմից—, գուցէ մենք սրա երկրորդ հատորն էլ կը կարողանանք ի լոյս ընծայել, օգտւելով քննադատութեան ցուցմունքներից։

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԸ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՍՅԱՍՆԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Պատկերներ գիւղական կեանքից 1906 . . . . 80 կ.
2. Լևոնի հեքիաթը (Մանկական յիշողութիւնները) . . . . . 1 ռ. —50 կ.

ԳԻՆՆ Է 1 Ռ. 50 կ.

16793